



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### **Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:


- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### **About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

A

965,995









Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Տ Ո Ի Թ Ի Ի Ն



BIBLIOGRAPHIE ARMÉNIENNE

Հայաստանի գրականություն 483

ՀԱՅԿԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Դ. Հ. Կ. շարք Եւրոպայի:

20466

ԱՅՐՈՒԲԵՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ  
 ՏԳԱԳՐՈՒԹԵԱՆ ԳԻՒՏԷՆ ՄԻՆՁԵՒ ԱՌ ՄԵՋ ԵՂԱՅ  
 ՀԱՅԵՐԷՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆՑ

733 p.

ՎԵՆԵՏԻԿ

ՄԻԻԹԱՐԵԱՆ ՏԳԱՐԱՆ

1883

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

GRAD

ERENI

457

BUMR

GRAD  
EREN  
457  
02/19/98

1565 — 1883

Տպագրութեան մեծ և օգտակար գիւտին՝ հայկական տառից կերպարանքով նախկին ընծայումնն կ'ակնարկէ տարէթիւն առաջին. իսկ երկրորդն, ինչպէս յայտնի է, անոր երեքհարիւր ութևտասն տարիներու յարատև կեանքն ու դործունէութիւնը — Սյր կենաց և դործունեայ ազդեցութեան՝ այբուբենական պարզ ու անպաճոյճ ցուցակն է մեր այս հրատարակութիւնը:

Կը սիրենք ենթադրել թէ ազգային բանասիրութեան համար՝ ոչ անհաճոյ պիտի ըլլայ մեր դուզնաքեայ, բայց իր տեսակին մէջ առաջին ու բաւական դժուարին երկասիրութիւնն: Կը փափաքինք որ ըլլայ անարուեստ ու անտաշ արձան մը՝ յուշարար փառաց և արդեանց այն անզուգական Անձին՝ որ մեծ ոգւով և անդուլ ճգամբք՝ ծանօթացուց յազգիս այս հրաշալի արուեստին գիւտը. — Արգարու Եւդոկիացոյ, -- որուն անուան և յիշատակին կը նուիրենք այս գրուածքը, և կը համարինք թէ ախորժ հաճութեամբ պիտի ընդունի՝ դարերու մոռացութիւնը դարմանելու փափաքսնօք և սրտով ընծայուած այս մեծարանաց յիշատակը, իր նախկին գործը՝ արտադրած արդեամբքը, իրեն նուիրելով: 1883 թուականին հայկական տպագրութեանց յա-

ուսնադիմութիւնն ու բարգաւաճանք՝ հարկ է որ արթնցընէ մեր սրտին մէջ՝ երախտագիտութեան իրաւացի զգացմունք մը. լսելի ընէ շնորհակալութեան ձայն մը Անոր՝ որ 1568ին Սաղմոսարան մը, — թուականաւ և ժամանակաւ մեզի ծանօթ, — առաջին հայկական տպագրութիւնն ընծայեց:

Այդ պատուական ընծայն, ազնիւ սրտի ու ճարտար ձեռքի արդիւնք, հարկաւ կը դարձընէ մեր մը տաղրութիւնը զայն նուիրող անձին և իր ժամանակին վրայ:

\* \* \*

Մեր ազգային պատմութեանց վերջին տխուր էջերուն վրայ ակնարկ մը ելեթ՝ բաւական է միայն հասկըցընելու թէ այն աղիտից և սգիտութեան դարերու մէջ որպիսի էր և կրնար ըլլալ մեր հայրենեաց վիճակը: — Իշխանական դաւազանն ջախջախած փշրած, բռնութիւն և ոյժ՝ երկաթի ձեռքերով ծանրացած, հուր, սուր՝ աւերիչ և սպառիչ տարերք իրենց անդիմադարձ և անտեղիտալի ուժով՝ ամէն տեղ արեան գետեր կը վազցընէին. շէն բարգաւաճ քաղաքներ՝ հրատապ աճիւնով ծածկուած, ու արգասաբեր զուարթ դաշտերու վրայ մահուան արհաւիրք տարածուած: Այս էր Հայաստանի վիճակը, զոր կը ներկայացընէ մեզ ստուգախօս պատմութիւնն:

Ի՞նչ զարմանք՝ եթէ այդպիսի աւերման մը առջև, տազնապալից երկարատև ճգնաժամի մը ատեն՝ տապալին իյնան, մոռցուին ու անտես ըլլան, ու ինչուսն նաև արհամարհուին դպրութիւնք: Մանաւանդ թէ քանի՛ շնորհակալեաց արժանաւոր պէտք է սեպուին այն մեծանձն և վսեմախոհ մտքեր՝ որ

համաժառանգ վասնզի մը առջև՝ իրենց տկար ու անբաւական ջանքն ալ՝ անմոռանալի և օրինակ առնելու անձնանուիրութեամբ ուզեցին գործածել ՚ի փրկութիւն և ՚ի պահպանութիւն մեզի համար պատուական ու ամենակարևոր դպրութեանց: Բեկորք ևեթ մնացին իրենց պաշտպանող արիական ձեռաց մէջ. բայց վտանգին և տպառնակեաց մեծութեան առջև՝ ոչ միայն մեծ էր իրենց քաջութիւնը, այլ նաև այն պարգևը՝ զոր յաճախ իրենց արեան հետ խառնած՝ կը մատուցանէին ՚ի վայելս և ՚ի գիտութիւն յաջորդ սերնդոց:

\* \* \*

Վանականութիւնը, — հարկ է խոստովանիլ, — մեր հայրենեաց համար բազմարդիւն և բարերար նախախնամութիւն մը եղած է միշտ. և ինչպէս հին՝ ասանկ ալ նոր մատենագրութեան մէջ՝ իրեն կարևոր և անհակառակելի տեղը բռնած բազմապատիկ արդեամբք:

Սաղախի կրօնական մեծ հաստատութեան մը պարտրկան ենք՝ նաև տպագրութեան մեր մէջ երևնալուն պարգևը:

Հայաստանի հայրապետական Թոռոյն վրայ կը նստէր այն աստեններն Միքայէլ Գ կաթողիկոս:

Տպագրութեան արուեստին արդեանց և օգուտներու լուրը՝ հեռաւօր Եւրոպայէն մինչև ՚ի Հայաստան ժամաներ էր, դժուարին ու անանց կարծուած ճամբաներէ, ու ազգին բարւոյն սիրով տոչորող հայրապետին ականջը: Սակայն որչափ գիւտն և անոր արդիւնքն հրապուրիչ և փափաքելի էին, բայց զայն մինչև ՚ի Հայաստան մտցընելու դժուարութեանն ալ անձանօթ չէր:



Հարկ էր ձեռներէց, ճարտար ու հանճարեղ անձ մը գտնել, ու անոր ձեռքով փորձել այդ սիրելի պարզ և բարձր հայրենեաց ընելու դիտաւորութեան հնարաւորութիւնը:

Բարեբաատ գտնուեցաւ Միքայէլ, այդպիսի անձի մը հանդիպելով. և էր, ինչպէս պատմութիւնը կ'աւանդէ, Եւդոկիացին Արգար:

\* \* \*

Ո՞վ էր Արգար:

Բանաւք պատմութեանց էջերը, ու համառօտախօս քանի մը յիշատակարանք: Դժբաղդարար՝ ինչպէս ուրիշ շատ մեզի համար հետաքննական նիւթերու, հոս ալ խիստ թերակատար ու անբաւական կը գտնենք անոնց աւանդածը:

Պատմութիւնը երկու գլխաւոր բան կը յիշատակէ Արգարու վերայ. նախ զինքը մեր թագաւորական ցեղէ սերեալ, և յետոյ պատգամաւոր և դեսպան հայրապետական 'ի Հռովմ: Առջինն իր տոհմին ազնուականութիւնն կը յայտնէ. իսկ երկրորդն՝ մտաց, սրտի և հանճարոյ ազնուագոյն յատկութիւններ ենթադրել կու տայ իրաւամբ, և արժանաւոր այնպիսի նուիրական անձի մը վստահութեան: Ստեփանոս Ռոչքեան իր Յիշատակարանաց մէջ կ'ըսէ. « Պարոն Սէֆէր Արգարեանց, 'ի զարմէ թագաւորացն Հայոց, եկեալ 'ի Հռոմ դեսպան Հայաստանեայց »: Իսկ իր Սուլթանշա որդին՝ Մաղաքիա դրպիր իր ժամանակագրութեան մէջ քազազարձ կը կոչէ. և 1583 թուականին 'ի Հռոմ գտնուող հայկազունք ալ « Մեր Հայոց իշխան արքայաւիզն 'ի Հակայ պարոն Սուլտանշան » . և քիչ մը ետքը արքայազոռն մակդիրը կու տան անոր:

Այսպիսի նշանաւոր անձի մը, ու իր եկեղեցական մեծ դիրքով բարձրաստիճան հայրապետի մը յանձնարարութեամբ եղած պատգամաւորութիւն կամ դեսպանութիւն 'ի Հռովմ, պիտի ունենար հարկաւ իր մեծ կարեւորութիւնն, թէպէտև պատմութիւն խորհրդաւոր և խորհրդական լռութիւն մը ուզած է պահել անոր նկատմամբ:

\* \*

Սակայն նոյն իսկ լռութիւնն ունի անշուշտ իր քաղաքագիտական նշանակութիւնն:

Ռուբինեան թագաւորք՝ և իրենց անկմանէն ետքը՝ հայրապետական աթոռոյն վրայ բազմող կաթողիկոսունք՝ վերահաս անկման մը սպառնալեաց և ստուգութեան առջև, ահաբեկք անոր հետևանք յանհրաժեշտ և 'ի սրտատոչոր աղիտից, սովոր էին դարձնել իրենց արտասուալից աչքը, և հեռաւոր հառաչանաց ձայն մը լսելի ընել քրիստոնեայ Եւրոպայի. սերունդէ սերունդ անցած աւանդութեամբ՝ հոն կը դառնային իրենց սրտից յոյս և իղձք, հոն՝ օգնականութիւն և ձեռնտուութիւն հայցող աղանաց թուղթեր կ'ուղղուէին:

Միջին դարուց մէջ՝ Հռովմայ քահանայապետաց ձայնն ունէր իր զօրաւոր ազդեցութիւնն եւրոպական քրիստոնեայ արքունեաց վրայ. և կը վկայէ պատմութիւն՝ թէ ինչպէս իրենց ձայնն ու կամքը՝ յաճախ մեծարուած հրաման մըն էր, ու մերթ նաև աստուածախրախոյս յաղթութեան առհաւատ չեայ մը:

Մերք ալ շատ անգամ հոն դիմելու սովորութիւնն ունեցան՝ իրենց աղիտից ու տառապանաց մէջ: Առ դէն Ստեփանոս կաթողիկոս քիչ տարի յառաջ

զնացեր էր 'ի Հռովմ՝ յուխտ արդոյն Պետրոսի, և անշուշտ իր բուն գոյներովը ստորագրած Հայաստանի վիճակն ու ձեռնտուութեան կարօտութիւնը: Իր յաղորդն Միքայէլ՝ նոյնպիսի դիտում մը ունեցած պիտի ըլլայ Աբգարու դեսպանութեամբ: Կու տար իր ձեռքը յանձնարարական և գովութեանց թղթեր, և Հռովմայ արքունեաց կ'իմացընէր թէ ինչպէս իր լիութի վստահութեանն և համարման արժանաւոր անձն էր:

Հասաւ Աբգար իր ուղեկցօքը. ու սիրալիր և մեծամեծար ընդունելութենէ մը ետքը՝ ներկայացուց ազգին քաղաքական ու եկեղեցական վիճակը:

Ոչ Միքայէլի գորովով լի սիրտը և ոչ Աբգար՝ չկրցան իրենց վախճանին և նպատակին հասնիլ: Բայց պատգամաւոր դեսպանն՝ եթէ ոչ արևմտեան օգնականութեամբ, գէթ անոր ուսմական յառաջադիմութեան մէկ տարերբ ուղեց օժտել և ճոխացընել իր աղքատ ու կարօտեալ ազգը: Ետևէ եղաւ, ինչպէս Միքայէլ կաթողիկոսին ալ կամքն էր, տըպագրութեան արուեստին հմտանալ և ծանօթացընել ազգին: Գտաւ իրեն պաշտպաններ ու ձեռնտուք՝ նաև քահանայապետին ամենէն աւելի մերձաւոր ծիրանաւորաց մէջ. եկաւ 'ի Վենետիկ, աշխատեցաւ, աղաչեց ու թախանձեց, ու քաղաքին ամենաբարձր քաղաքական իշխանութենէն, տոժէն, հրաման և արտունութիւն ընդունելով՝ 1565ին տպագրեց հոն Ստրնոսարան մը:

\* \* \*

Աւելորդ կը սեպենք յերկարել մեր խօսքը՝ տպագրութեան ազգերնուս մէջ սկզբնաւորելուն և յառաջադիմութեան պատմութիւնն ընելով, որ արդէն

Ժանօթ է բանասիրաց այլ և այլ գրուածներով, և ուր կը խրկենք զխնդրոյս և զփափաքոյս : Միայն յառաջաբան տեղեկութենէս ետքը՝ կը ներկայացընենք 1565էն մինչև ՚ի 1800 տպագրուած ու հրատարակուած ու մեզի ծանօթ գրոց ժամանակագրական համառօտ ցուցակ մը: Տարակոյս չկայ որ ոչ այնչափ ճօխ և արգասալիր, ինչպէս կրնայ յուսալ կամ փափաքիլ բանասիրութիւնը. — թէ նիւթով և թէ թուով աղքատ ցուցակ մը. — բայց անոր հետ հարկ է տեսնել ամենամեծ եռանդ մը ու յառաջադիմութեան գովելի փոյթ, զոր թերեւս ուրիշ մեզմէս ելի բազմաթիւ, հարուստ ու իրենց քաղաքական դիրքով բարդաւած ազգաց մէջ դժուարին ըլլայ գտնել՝ տպագրութեան նախնական և սկզբնական փորձերուն մէջ. մանաւանդ եթէ աչքի առջև ունենանաք այն բազմաթիւ դժուարութիւններն՝ որոնք ելեր են դիմացնին, և որոց յաղթեր են արիսրար: Իրաւամբ կը զարմացընեն զմեզ, և մեծ երախտագիտութեան պարտք մը կը դնեն վրանիս Արգար մը, Սուլթանշահ, Տէրզնցի, Ոսկան, Ծարեցի, Վանանդեցի, Մխիթար, Կոլոտ, Արղութեանց, և իրենց նմանիք. և որոնց ամենուն վրայ հաւասար կը նկատենք մեծ ոգւոյ մը ամէն յատկութիւններն:

\* \*

Այս դժուարութեանց մեծագոյնն՝ իրենց հայրենեաց քաղաքական վիճակին և դրից նուազութիւնն էր: Յաճախ տեսնուեր են յաշխարհի՝ մեծ գործե-

\* Չամչեան, պատմ. Հայոց, Հատ. Գ, 656:

Յուշիկք հայրենեաց, Հատ. Ա, 519:

Պատմ. հայերէն դպրութեանց, Հատ. Բ, 274:

Փոք, գրականական հանգէս, 1881:

րու ձեռք զարնող և յաջողող անձինք: Բայց իրենց զօրաւոր կամքին և ջանից իրականութիւն տուողը՝ մերթ արքունական գաւազանի մը նեցուկը, իշխանական ազդեցութեանց առատատուր ու քաջալերիչ վարձատրութիւնն, և շատ անգամ իրենց վրայ զարմացող և զիրենք մեծարող ժողովուրդ մը եղած է:

Ո՛րչափ տարբեր էր Հայաստանի վիճակը. և քանի իրաւամբք այդ վերը յիշուած ամէն անձինք, պարտուց դժնդակ բեռան տակ ընկճուած ու հատուցանելու անկարող դիրքի մէջ, իրենցմէ հազար և աւելի տարիներ յառաջագոյն՝ արտասուօք ու սրտի լքմամբ զուրցուած խօսքերը կրնային և կրցեր են դժբաղդարար հառաչանօք երկրորդել. « Ո՛վ յարգեսցէ զմեր ուսումն և զջան ... ո՛վ՛ի ձէնջ թռչակս վասն մեր »:

\* \* \*

Տպագրութեան գիւտին գլխաւոր շարժառիթը՝ նոյնն եղած է և առ. մեզ, ինչ որ յառաջագոյն եւրոպական ազգաց քով: Չեռագիրք ժամանակաւ կը հիննային ու կը մաշէին, ու պատերազմաց և ազիտից պատճառաւ կ'անհետանային. արուեստագէտ գրիչք՝ ուսմանց և գրոց յարզը չգիտցողներուն և կամ իրենց դժուարին ու երկար աշխատանքը վարձատրողք շունենալնուն կը թուլնային, ու ձեռագրաց փոխագրութեան հետ կը նուագէր նաև արուեստը: Ասոնց ամենուն բնական հետեւանք էր՝ գրչագրաց սակաւագիւտ ըլլալը, և անոնց գնոյն բարձրանալով՝ դժուարամատչելի դառնալը:

Սակայն գրչաց նուագութիւնն ու գրոց թանկութիւնն ա՛լ աւելի զգալի կ'ընէր անոնց պէտքը: Ու-

չափ ալ բռնադատուած ըլլային այդ ժանր հարկին համակերպիլ, սակայն վարդապետական և եկեղեցական գրոց կարևորութիւնն անհրաժեշտ էր եկեղեցեաց բարեկարգութեան և աստուածային պաշտամանց բարգաւաճանաց համար. որոց անչքութիւնը՝ ծանր ու ամենադառն էր ազգի մը համար, որ ստիպուած էր իր միակ մխիթարութիւնն այդ սրբավայրից մէջ՝ փնտռել, և հոն թափած արցունքով սփռփուել՝ անկէ դուրս առատաբար թափուած արտասուքաց և աղիտից մէջ:

Ասիկայ եղած է գլխաւորաբար, ինչպէս յԵրոսպ, ասանկ ալ մեր ազգին մէջ՝ տպագրութեան նախնական գիւտին և կիրառութեան պատճառը: Սորք գիրք՝ Կութթէմպէրկի գիւտին առաջին արտադրութիւնը. Սադունք՝ Աբգարու երկար և դժուարին ճգանց՝ երախայրիք:

\* \* \*

Երկրորդական նպատակ մ'ալ շահադիտութիւնն էր, և որուն արգասիք՝ ինչպէս քիչ առաջ ըսինք, մեր առաջին տպագրողաց քով պակսեցաւ, և որ իրենց յաջորդացն ալ ընդհանրապէս տխուր ժառանգութիւն մը եղաւ: Գրեթէ ամէնքն ալ պարտքի տակ ընկան և հեծեցին: Սակայն կարծես թէ այդ անձինք՝ դժուարութեանց առջև չքանելու ուխտ մը դրած էին. և իրենց վաստակոց արդիւնք զայն բարձրաձայն կը հռչակեն: Ո՛վ է որ Ոսկանայ, Ծարեցւոյն, Վանանդեցւոյն հրատարակած տպագրութեանց վրայ նայած ատեն՝ չզարմանայ արուեստին կատարելութեան վրայ, յոր յաջողեցան հասնիլ: Դեռ երկու տարի յառաջ՝ աշխարհագրական ժողովոյն պատճառաւ՝ ի Վենետիկ գումարուող ամէն

ազգի իմաստունք և աշխարհագէտք՝ սքանչացան  
 Համատարած աշխարհացոյց տախտակին վերայ ,  
 զոր 'ի 1695 հրատարակեց յԱմսդերտամ Թովմաս  
 Գողթնեաց եպիսկոպոսը . և շէին երկմտեր ըսել թէ  
 նոյն ատեններն փորագրուող աշխարհացոյց տախ-  
 տակաց մէջ ամենէն նշանաւորներէն մէկն կրնայ  
 սեպուիլ : Ո՛վ Համադասպեան Թադէի երիցու 'ի  
 Վենետիկ հրատարակել տուած ճշտոց գրքին տպա-  
 գրութեանն ազնուութեան և արուեստին փրայ չը-  
 զարմանար , կամ Մխիթարայ արքայի պատկերա-  
 զարդ Ատոռածաշունչ գրոց , և շսեպեր զայն ջանից  
 յարատուութեան , ճաշակի ընտրութեան և արուես-  
 տի կատարելութեան յաւերժական յիշատակ մը :



Ասոնք և իրենց նմանիք սկսան , կատարելագոր-  
 ծեցին և ինչուան առ մեզ հասուցին տպագրութեան  
 արուեստը : Տարակոյս չկայ որ գտան իրենց արժա-  
 նաւոր հետեւողքն ալ , որով հայկական տպագրու-  
 թիւնն հասաւ այն աստիճանի կատարելութեան՝ որ  
 զանազան աշխարհահանդիսից մէջ 'ի Լոնտոն , 'ի  
 Փարիզ , 'ի Վիէննա և այլուր՝ ոչ լոկ գովութեամբ  
 մեծարուեցաւ , այլ ինչուան մրցանակի և արժաթի  
 մետալաց արժանաւորք դատուեցան : Մխիթարեան  
 ուխտին կրկին տպարաններն 'ի Վենետիկ և 'ի  
 Վիէննա , Արամեանն 'ի Փարիզ , 'ի Մարսէյլ և 'ի  
 Պոլիս , Միւհէնտիսեան , Քիւրքճեան , Պոյաճեան՝  
 նոյն քաղաքին մէջ , Լազարեան 'ի Մոսկուա , Խա-  
 լիպեանն 'ի Թէոդոսիա , Մարտիրոսեան և ուրիշներ  
 'ի Թիֆլիզ՝ իրաւամբք արժանաւոր տեղի մը գրա-  
 ւած են և պիտի գրուեն հայկական տպագրու-  
 թեանց պատմութեան մէջ :



Երկու խօսք ալ մեր այս գրուածին վրայ :

Մեզմէ շատ տարի յուսալ՝ ուսումնական արդեանքն և եկեղեցական բարձր աստիճանաւ ազգին արդէն ծանօթ՝ սրբազան և պատկառելի անձ մը, Գեր. Իգնատիոս Փափազեան, մանր ու համբերող երկայնմտութեամբ հաւաքեր էր հայկական տպագրութեանց ցուցակ մը, հասցընելով մինչև դարուս սկիզբը :

Իր ձեռագիր երկասիրութեանց մէջ հանդիպելով այս օգտակար և հետաքննական հաւաքմանն, ուղեցինք կատարելագործել իր պակասը, և լրացրնել՝ հասցընելով զայն մինչև մեր օրերը :

Մեր դիտած նպատակին հասնելու համար՝ քիչ չեղան դիմացնիս ելած դժուարութիւններն : Որչափ ալ քովերնիս դռնուած հայկական տպագրութեանց հաւաքումը ճոխ, և թերեւս գլխաւորներէն սեպուի ազգին մէջ, սակայն և այնպէս ունի շատ պակասներ ալ, և որուն գլխաւոր պատճառը՝ ի հայրենեաց հեռի ըլլալնիս է :

Մտադիր ընթերցողը պիտի տեսնէ թէ մեր կողմանէ բաւական ջանք եղած է՝ կարելի եղածին չափ կատարեալ երկասիրութիւն մը ընծայելու : — Չենք կրնար հրապարակաւ շայտնել մեր շնորհակալութիւնն այն հեռաւոր ազգայնոց որ ազնուութեամբ սրտի օժանդակեցին մեզ՝ ի դիրել մեր աշխատանքը, և որով մեծապէս օգտուեցանք : Բայց անով հանդերձ չենք քաշուիր անկեղծ խոստովանութիւն մ'ալ՝ աւելցընել, որ յաճախ թերի կը մնայ այս երկասիրութիւնը, և զոր կը յուսանք կատարելագոյն կերպարանօք ընծայել ազգերնու՝ երկրորդ և աւելի



ճախ տպագրութեամբ, եթէ մեր այս գործը ընդու-  
նելի և հաճոյ ըլլայ բանասիրաց : Այս պատճառաւ  
ալ շուգեցինք Յաւելոսաճ մը ընել նորագոյն հրատա-  
րակութեանց, և կամ գրչէ ու քննութենէ վրիպող  
գրոց : Այսպիսի ակամայ ու գրեթէ անհրաժեշտ  
զանցառութեանց համար՝ ընթերցողաց ներողա-  
մտութիւնը խնդրելնիս հիմակուրնէ կը յայտնենք :

\* \* \*

Ծանօթ է ազգայնոց շատին՝ Մ. Մ. Միանսա-  
րեանց, ազգասէր և բանիրուն անձին, Bibliotheca  
Transcaucasica պատուական աշխատասիրութիւնը,  
որ հեղինակին տարածամ մահուամբը անկատար  
մնացած է, և միայն առաջին հատորն հրատարա-  
կուած 'ի Փեթրպուրկ (1874-76) : Իր գործը՝ որչափ  
ալ հմուտ և հետաքննական, սակայն ինչպէս նպա-  
տակաւ՝ ասանկ ալ գործադրութեամբ մեղրինէն  
բոլորովին կը տարբերի :

Հ. ԳԱՐ. Զ.

1565 — 1800

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՑՊԱՐԱՆ	
—	—	—	Աղթարք :
—	—	—	Կիպրիանոս :
1563	Վենետիկ	Արգարու	Սաղմոս :
1566	—	—	Ճամազիբք :
1584	Հռովմ	Ուրբանեան	Տոմար Գրիգորեան :
1587	Վենետիկ	Յ. Տերզնցի	Սաղմոս :
1616	Իլլով	Քարմատան .	Սաղմոս :
1623	Հռովմ	Ուրբանեան	Կոնդակ Եզգիմ . Դ :
—	»	»	Այբբենարան :
1624	Միլան	Ամբր. վրժրն	Քերական . Հռիփսյայ :
1630	Հռովմ	Ուրբանեան	Առաւել պարզարան :
1633	Փարիզ	Արքունական	Բառք. Հռիվ. Հայ-լատ :
1640	Ջուղա	Ամենափրկիչ	Հարանց վարք . Ա :
1642	Հռովմ	Ուրբանեան	Դաւան . Հաւատ . Ա :
—	»	»	Խորհրդատետար . Ա :
—	Ջուղա	Ամենափրկիչ	Ճամազիբք ատենի , Ա :
—	Վենետիկ	Յ. Անկիւրացի	Սաղմոս :
1643	»	»	Յիսուս որդի , Ա :
—	Լիվոնոյ	Յ. Վ. Ջուղ .	Սաղմոս :
1645	Հռովմ	Ուրբանեան	Քերակ . Գալանոսի :
1650	»	»	Պատմ. Գալանոսի , Ա :
1658	»	»	Գալանոս . Ա մասն :
1660	Վենետիկ	Պովիտ	Յիսուս որդի , Ա :
—	Ամսդերտամ	Յ. Մարեցի	Յիսուս որդի , Բ :
1661	Հռովմ	Ուրբանեան	Գալանոս , մասն Բ :
—	Ամսդերք .	Աւետիս	Ճամազիբք Համառօտ :
—	»	»	Սաղմոս :
1662	Ամսդերտամ	Աւետիս	Ճամազիբք մեծ , Ա .
1664	»	Ոսկան	Շարական , Ա .
—	»	Կարապետ	Սաղմոս :
1666	»	Ոսկան	Այբբենարան :

ԱՄ — ՔԱՂԱՔ — ՏՊԱՐԱՆ

1666	Ամադերտամ	Ոսկան	Աստուածաշունչ, Ա :
—	»	»	Քերականութիւն :
—	»	»	Քրիստոնէական :
1667	»	»	Ժամագիրք մեծ, Բ :
—	»	»	Մաշտոց, Ա :
—	»	»	Քրիստոնէակ. Հայ-լատ :
1668	»	»	Աղուէսադ. և աշխ. Խոր :
—	»	»	Նոր կտակարան, Ա :
—	»	»	Տօմար, Ա, Բ :
1669	»	»	Առաքել պատմիչ :
—	»	»	Ջայնքադ :
1670	Լիվոնոյ	Ոսկան	Պարտէզ, Ա :
—	»	»	Քրիստոնէական :
1671	Հռովմ	Ուրբանեան	Ջեռքածութիւն, Ա :
1673	Մարտիրէա	Ոսկան	Գրքուկ կարեոր, Ա :
—	»	»	Ժամագիրք ատենի, Բ :
—	»	»	Նարեկ (անկատար) :
1674	Հռովմ	Ուրբանեան	Գեմլացի, Ա :
—	»	»	Պօղոս Փիրոմալ :
—	»	»	Ջառի Հայկաբանութեան :
—	Մարտիրէա	այլ . Էլմիածնի	Ճարտասանութիւն :
1675	Հռովմ	Ուրբանեան	Նորադոյն ծաղիկ :
—	»	»	Ջառի Հայկաբ. Հայ-լատ :
—	»	»	Քերականութիւն Հայ-լատ :
—	Մարտիրէա	Ոսկան	Այբբենարան :
—	»	»	Արհեստ Համարողութիւն :
—	»	»	Պարզատօմար :
1676	Մարտիրէա	Ոսկան	Գրքուկ կարեոր, Բ :
—	»	Ոսկան և ընկ.	Մաշտոց :
—	»	»	Նուագարան կուսին :
1677	Հռովմ	Ուրբանեան	Սպասաւորութիւն պատ :
—	»	»	Խորհրդատեար :
—	Մարտիրէա	Ոսկան և ընկ.	Սաղմոս :
—	Պօլիս	—	Երեմիա շէլէպի :
1678	Հռովմ	Ուրբանեան	Դաւանութիւն Հաւատոյ, Բ :
—	Վենետիկ	—	Տօմար, Գ :
—	Պօլիս	—	Տնօրինականք :
1680	Հռովմ	Ուրբանեան	Քրիստոնէական :
—	Վենետիկ	Պառպօն	Աւետարան, Ա : :
—	»	»	Հայեցի ճշմարտութիւն :

ԱՄ — ՔԱՂԱՔ — ՏՊԱՐԱՆ

1680	Լիփտա	—	Անդրեաս Աքոլութոս:
1681	Հասովժ	Ուրբանեան	Մանսականներ:
—	Վենետիկ	Պապոսն	Ժամադիրք համառօտեալ:
—	Զուլա	Ամնափրկիչ	Գիրք ժողովածոյ:
1682	Վենետիկ	Պապոսն	Սաղմոս:
1683	Մարսիէա	Ոսկան	Ակն հոգեկան:
—	»	»	Պարտէզ, Բ:
1684	Վենետիկ	—	Դպրութեան գիրք:
—	»	—	Սաղմոս:
1685	»	Պապոսն	Աւետարան, Բ:
—	»	»	Բուրաստան, Ա:
—	»	»	Նորագոյն ծաղիկ, Բ:
—	Ամսգերատմ	Վանանդեցի	Շարական, Բ:
1686	Վենետիկ	Թագէոս երէց	Խորհրդատետր:
—	»	»	Ճաշոց:
—	Ամսգերատմ	Վանանդեցի	Ժամագիրք մեծ:
—	Մարսիէա	Սողոմոն	Ժամագիրք:
1687	Վենետիկ	Սահրատեան	Խոկունք քրիստոն. Ա:
—	»	Մռեթթի	Պատասխանատրութիւնք:
—	»	Նահապետ	Պարզաբանութի սաղմոսաց:
—	Զուլա	Ամնափրկիչ	Աղեքսանդր վարդապետ:
1688	Ամսգերատմ	Վանանդեցի	Ժամագիրք մեծ:
—	Զուլա	Ամնափրկիչ	Մքրուզ, Ա:
1690	Հասովժ	Ուրբանեան	Պատմ. Գալանտի, Բ:
—	»	»	ԱՄԼ տպ. Լեկ հայերէն:
—	Վենետիկ	—	Դպրութեան գիրք:
—	»	Պարպոսն	Խորհրդատետր:
—	Պատուա	Գառնուկ	Թուղթ դաշանց:
—	»	»	Հաւատով խոստովանիմ:
1691	Լիփտանոյ	—	Քերականութի խաչատրոյ:
1692	»	—	Շարական, Գ:
1693	Հասովժ	Ուրբանեան	Բառգիրք հայ-լատ:
—	Վենետիկ	Պօթթօլի	Դաշանց թուղթ:
—	»	»	ԱՄԼ տպ. հայ և իտալ:
1696	»	»	Տօմար, Գ:
—	Ամսգերատմ	Վանանդեցի	Բանալի համատարած:
—	»	»	Գեմբացի, Բ:
—	Լիփտանոյ	—	Պատմ. Փոնցիանոսի, Ա:
1698	Ամսգերատմ	Վանանդեցի	Նոր կտակարան, Բ:
—	»	»	Համաձայնութիւն:

ԱՄ — ՔԱՂԱՔ — ՏՊԱՐԱՆ

1698	Պօլէս	—	Դպրութեան գիրք :
—	»	—	Գիրք Խոստովանութեանց :
—	»	Գրիգորի	Տաղարան :
—	Լիվոնոյ	—	Բառգիրք Երեմիայ Վ : Աշխարհագր . Խորենաց :
1699	Ամսդերտամ	Վանանդեցի	Ազուեսագիրք :
—	»	»	Դուռն իմաստութեան :
—	Պօլէս	—	Գանձ չափոյ : Տօմար , Ե :
1700	Ամսդերտամ	—	Տօմար , Զ :
—	Պօլէս	—	Գործք առաքելոց :
—	»	—	Մեկն . Երգոց երգոյն :
—	»	—	Մեկն . Յայտնութեան :
—	»	Աստուածատր .	Նարեկ :
—	»	Էջմիածնի	Այբբենարան :
—	»	—	Գեմբացի , Գ :
1701	Պօլէս	Էջմիածնի	Այբբենարան :
—	»	Աստուածատր .	Ժամագիրք մեծ :
—	»	»	Խոստովանարան :
—	»	»	Տաղարան :
—	»	Սարգսի	Տօնացոյց , Ա :
—	»	»	Բանալի Ներմեռանդակ :
—	Լիվոնոյ	—	Թէոփիլոս :
—	»	—	Պարզատոմար Հռոմայեց :
1702	Ամսդերտամ	Վանանդեցի	Բնաբանութիւն :
—	»	»	Շարական , Գ :
—	Վենետիկ	Պօռթօլի	Դուռն ողորմունք Աստուծ :
—	»	»	Յիսուս որդի , Գ :
1703	Պօլէս	Աստուածատր .	Կտակգիրք :
—	»	»	Հայելի վարուց :
—	»	Սարգսի	Ժամագիրք մեծ :
1704	Ամսդերտամ	Վանանդեցի	Պաշտօն աստուածային :
—	»	»	Սահմանաց գիրք :
—	Վենետիկ	Պօռթօլի	Պարտէզ , Պ :
—	»	»	Գարոզգիրք :
—	Պօլէս	—	Եփրեմի Ճառ , Ա :
—	»	սոյ . Պէյօղլուի	Բուրաստան , Բ :
—	»	—	Լուսաշաւիղ :
—	»	Աստուածատր .	Գործք առաքելոց , Խո :
1705	Հոլով	Ուրբանեան	Գեմբացի , Գ :
—	Ամսդերտամ	Վանանդեցոյ .	Զեռաբանութիւն , Բ :

16

ԱՄ	ՔԱՂԱՔ	ՏՊԱՐԱՆ	
1705	Պօլես	'ի տպ. Պէյօղլ.	Աստուածաշունչ, Բ:
—	"	—	Վարուց խոկունն:
1706	Վենետիկ	Պօսթօլի	Ժամագ. Աստուածածն. Ա:
—	"	"	Ժամագիրք Լուսաւորչի:
—	Պօլես	Գրիգորի	Խորհրդատետր:
—	"	"	Յայնմաւուրք, Ա:
1707	Վենետիկ	Պօսթօլի	Բուրաստան, Գ:
1708	"	"	Ժամագ. Աստուած., Բ:
—	Մարսիլես	—	Բանալի ջերմեռանդ., Բ:
—	"	—	Ժամագիրք Աստուած., Գ:
—	Պօլես	Գրիգորի	Ազաթանգեղոս:
—	"	Սարգսի	Պշնձէ քաղաք:
—	"	'ի տպ. Պէյօղլ.	Տօմար, Է:
1709	Հոռփ	Ուրբանեան	Կրթութի թրիստոնէակ.:
—	Վենետիկ	—	Ժամագիրք ննջեցելոց:
—	"	Պօսթօլի	Աստուածաբ. բարոյական:
1710	"	"	Աւետարան, Գ:
—	"	"	Լուցկիք հոգևորք:
—	"	"	Քարոզգիրք:
—	"	"	Եր կտակարան, Գ:
—	"	"	Քրիստոնէական:
—	Մարսիլես	—	Սաղմոս:
—	Պօլես	—	Ճառ Եփրեմի, Բ:
—	"	—	Ժողովածու գիրք:
—	"	—	Կտակգիրք, Բ:
—	"	—	Աւետարան:
1711	Հոռփ	Ուրբանեան	Մեկն. դաւան. հաւատոյ:
—	Ամսգերտամ	—	Գանձ արամեան:
—	"	—	Քերական. Յովհ. Զուղ.:
—	Վենետիկ	Պօսթօլի	Կրթութիւն համարելոյ:
—	"	"	Բովանդակութի ուսմանց:
1712	"	"	Սաղմոս:
—	Պօլես	Պէյօղլու	Մեծ ժամագիրք, կրկին:
—	"	Սարգսի	Այլ տպ.
1713	Ամսգերտամ	—	Հայ. աստուածաշունչ գր:
—	"	Վանանգեցւոյ	Սաղմոս:
—	Վենետիկ	Պօսթօլի	Ճարտասանութիւն:
—	"	"	Պատմ. կաթուղ. և այլն:
—	Պօլես	Գրիգորի	Մբքուղ, Բ:
—	"	Աստուածատր.	Մբքուղ, Գ. Մրկանոց:

ԱՄ — ՔԱՂԱՔ — ՏՊԱՐԱՆ

1714	Հռոմ	Ուրբանեան	Բառգիրք լատին հայ:
—	»	»	Մեկնիչ արբ. աւետարան:
—	»	»	Չորք խոկմունք:
—	Ամսդերտամ	Վանանդեցւոյն	Սողմոս:
—	Վենետիկ	Պօռթօլի	Պրէվիար:
—	Պօլիս	Աստուածատր.	Մաշտոց:
—	»	—	Օրհներդութիւն:
—	»	—	Մեկն. աւետար. խորհրդ:
1715	Վենետիկ	Պօռթօլի	Քրիստոնէական:
—	»	»	Ալլերս:
1716	Ամսդերտամ	Վանանդեցւոյն	Պատկերաւեր:
1717	»	»	Ժամ. կարճառօս:
—	Պօլիս	—	Համառ. հաւաքումն իրաց:
—	»	Սարգսեանց	Արճիշեցի, Ա:
—	»	Գրիգորի	Ոսկեբերան:
—	»	Աստուածատր.	Պարապմանց:
1718	Վենետիկ	Պօռթօլի	Կրթութիւն աղօթից, Ա:
—	»	—	Ճշմարիտ իմաստութիւն:
—	»	—	Շարական, Ե:
1719	Վենետիկ	Ճ. Պաշօի	Խոկումն քրիստոնէակ. Բ:
—	»	»	Պարտեզ, Դ:
—	Պօլիս	Գրիգորի	Զենոբ:
—	»	—	Ժամագիրք տոննի:
1720	Վենետիկ	Պօռթօլի	Մոլութեանց գիրք, Ա:
—	»	»	Նոր կտակարան:
1721	»	»	Առաքինութեանց գիրք, Ա:
—	Պօլիս	Աստուածատր.	Աղամգիրք:
—	»	»	Աղօթագիրք:
—	»	»	Մեծ ժամագիրք:
—	»	Սարգսի	Ժամագիրք:
—	»	Աստուածատր.	Հարանց վարք, Բ:
—	»	»	Փոնցիանոսի պատմ:
1722	Վենետիկ	Պօռթօլի	Աղբիւր բարի:
—	Պօլիս	Աստուածատր.	Այբբենարան:
—	»	—	Կտակգիրք, Բ:
—	»	Սարգսեանց	Ճառքնտիր համառօս:
—	»	Աստուածատր.	Տօնացոյց, Բ:
1723	Վենետիկ	Պօռթօլի	Հոգևորական պատերազմ:
—	Պօլիս	Գրիգորի	Տօմար, Ե:
1724	Վենետիկ	Պօռթօլի	Վարք Յօհ. Աստուծոյ:

ԱՄ — ՔԱՂԱՔ — ՏՊԱՐԱՆ

1724	Վենետիկ	Պօռթօլի	Պատմագիրք Հոգևոց:
—	Պօլիս	—	Արարածք:
—	»	Սարգսեանց	Հանելուկք:
—	»	Աստուածատր .	Յիսուս որդի, Գ:
—	»	Սարգսեանց	Նորագոյն ծաղիկ, Գ:
—	»	—	Պատմ. Գրամ. մանուկի:
1725	Հռոմ	Ուրբանեան	Յորբելեան:
—	»	»	Նորագոյն ուղեկցութիւն:
—	Վենետիկ	Պօռթօլի	Գրիստ. Միս. արք. գր:
—	Պօլիս	Աստուածատր .	Մեծ ժամագիրք:
—	»	—	Տօմար, Ը:
—	»	Աստուածատր .	Տօնացոյց, Գ:
—	»	Սարգսեանց	Քերակ. Միմ. Զուլայեց:
1726	»	Գրիգորի	Նարեկ:
1727	Վենետիկ	Պօռթօլի	Դաշտիկ ծաղկալի:
—	»	»	Ժամք կարգի, և սլին:
—	»	»	Խթան զղման:
—	»	»	Խոստով. Ս. Թովմայի:
—	»	»	Դուռն քերակ. աշխ. լեզ:
—	»	»	Գրիստ. Միմիթ. արք. Ա:
—	Պօլիս	Սարգսեանց	Կոչումն ընծայութեան:
—	»	Աստուածատր .	Շարական, Զ:
1728	Հռոմ	Ուրբանեան	Միսալ:
—	Վենետիկ	Պօռթօլի	Ակն Հոգևոյ:
—	Պօլիս	—	Տրամար. Միմ. Զուլ:
—	»	—	Մեծ ժամագիրք:
—	»	—	Բաագիրք Երեմիայ:
1729	Վենետիկ	Պօռթօլի	Աստուածաբան. Խաչ. Վ:
—	»	Ալպոիցի	Դրախտ Հոգևոյ:
—	Պօլիս	—	Գիրք Հարցմանց:
—	»	Սարգսեանց	Մեծ ժամագիրք:
1730	Վենետիկ	—	Հարցումն քերթողակ. Ա:
—	»	Ալպոիցի	Քերակ. Միմիթ. արք. Ա:
—	Պօլիս	—	Բուզանդ:
—	»	Գրիգորի	Յայսմաւուրք, Բ:
—	»	—	Ժողովածու գիրք, Բ:
1731	Վենետիկ	Պօռթօլի	Յարացոյց:
—	»	—	Հանդերձեալ կենաց:
—	Պօլիս	Աստուածատր .	Պղնձէ քաղաք, Բ:
—	»	—	Սահմանաց:



ԱՄ — ԳԱՂԱՔ — ՏՊԱՐԱՆ

1752	Վենետիկ	Պօռթօլի	Աւետարան, Գ :
—	»	»	Խոկունք քր. Գ :
—	»	»	Քրիստ. Մխիթ :
—	Պօլիս	Սարգսեանց	Ճաշոց :
1753	Վենետիկ	Պօռթօլի	Ներածումն առ քրիստ :
—	»	»	Աստուածաշունչ, Գ :
—	»	»	Առական գիրք :
—	»	»	Սաղմոս :
—	»	»	Տօմար :
—	Պօլիս	—	Վիճար. Մխիչյիմի, Ա :
—	»	—	Մեծ ժամագիրք, կրկին :
—	»	Աստուածատր. ԱՅԼ տպ :	
—	»	»	Վէճ Հաւատոյ :
1754	Վենետիկ	Պօռթօլի	Աստուածար. Խաչ. Մ. Բ :
—	Պօլիս	Սարգսի	Եփրեմի աղօթք, Ա :
—	»	Աստուածատր.	Հաննա վարդապետ :
—	»	Գրիգորի	Ներք. Լուս. յոսկ :
—	»	—	Տաղարանք Պաղտ :
—	»	—	Տաղ. աշակ. Կոլոտի :
—	»	—	Պտուղ զրաջանութեան :
—	»	—	Աղօթք վարդ. Մարաթ :
—	»	—	Վարդարանի աղօթք, Ա :
1755	Վենետիկ	—	
—	Պօլիս	Աստուածատր.	Իգնատիոս :
—	»	»	Դրախտ ցանկալի :
—	»	—	Ազգարան. Թագաւորաց :
—	»	—	Վիճար. Մխիչյիմի, Բ :
1756	Վենետիկ	Պօռթօլի	Բովանդակ. աստուածար :
—	»	»	Մեկնութիւն Ժողովողի :
—	Պօլիս	Բարսղի	Էջր ընդ եղբարան :
—	»	»	Շարական, Ե :
—	»	Աստուածատր.	Քերական. Պաղտ :
—	»	Բարսղի	Խրատ Հոգեկան :
—	Լոնտրա	—	Խորենացի Հայ Լատ :
1757	Վենետիկ	Պօռթօլի	Անտոն Բոնուկեան :
—	»	»	Գեմբացի, Ե :
—	»	»	Մեկն. Մատթէի :
—	»	»	Ջերմեռանդ. առ Տիր :
—	»	»	Քրիստ. Ի խաղ քաւարնի :
—	Պօլիս	Աստուածատր.	Երզարան Ղազարու :
—	»	Աքրահամու	Մարտոյ երեց, Ա :

ԱՄ — ՔԱՂԱՔ — ՏՊԱՐԱՆ

1737	Պօլես	Աստուածատր .	Յաճախապատու՞ :
—	»	»	Քրիստ . Նալեան :
1738	վենետիկ	Պօսթօլի	Մարկոս Աւրելիոս :
—	»	»	Պարտէզ , Ե :
—	Պօլես	Աստուածատր .	Մեծ Ժամագիրք :
—	»	»	Սաղմոս :
—	»	—	Դպրութեան գիրք :
1739	վենետիկ	Պօսթօլի	Վարժու՞ն կտակ :
—	Պօլես	—	Գանձարան :
1740	վենետիկ	Պօսթօլի	Քա՛հ . համբակ :
—	»	»	Նոր կտակ . Ե :
—	Պօլես	Աստուածատր .	Այբբենարան :
—	»	—	Պատմ . Փոնցիան . Գ :
—	»	Աստուածատր .	Տաղարան :
—	»	»	Տօմար , Թ :
—	»	»	Տօնացոյց , Դ :
1741	վենետիկ	Պօսթօլի	Բուրաստան , Դ :
—	»	»	Խորհրդատետր :
—	»	»	Ռասրիկվեց , Ա մասն :
—	Պօլես	—	Քարոզք Տաթև :
1742	վենետիկ	Պօսթօլի	Փոքր ժամագիրք , Ա :
—	»	»	Ռոտրիկվեց , մասն Բ և Գ :
—	»	»	Սաղմոս :
—	Պօլես	Աստուածատր .	Շարական , Ը :
—	»	»	Գ . Սկեւացի :
1743	»	»	Զայնքաղ , Բ :
—	»	Աբրահամու	Սարգիս մեկնիչ :
1744	վենետիկ	Պօսթօլի	Սկզբունք քրիստ . կենաց :
—	Պօլես	Աբրահամու	Աստուածադէրս :
1745	»	Գաբրիելի	Մեկն . Նարեկի :
—	»	Աստուածատր .	Սաղմոս :
1746	»	Աստուածատր .	Հոգեշահ :
—	»	Աբրահամու	Ոսկեփորիկ :
—	»	Աստուածատր .	Յիսուս որդի , Ե :
—	»	—	Ա՛յլ տղ :
—	»	—	Տաղք Մագիստրոսի :
1747	»	—	Աղօթագիրք հաւար :
—	»	—	Եփրեմ , Բ :
—	»	Աստուածատր .	Ժողովածու , Գ :
—	»	Սարգսի և Միք . Քրիստ . Նալեան , Բ :	

ԱՄ — ԲԱՂԱՔ — ՅՊԱՐԱՆ

1748	Վենետիկ	Պօռթօլի	Էֆիմերտէ, Ա:
—	»	»	Նախատահանութիւն:
—	»	»	Ուղղեւորութիւն:
—	»	»	Սարգսացի:
—	»	—	Տօմար:
—	»	Պօռթօլի	Անն Հոգույ, Ա:
—	»	»	Ներող. բարւոք մեռ:
—	»	»	Սաղմոս:
—	Պօլիս	Սարգսեանց	Խորհրդատետր:
1749	Վենետիկ	Պօռթօլի	Մեկն. թղթ. Յակ:
—	»	»	Բառգիրք, Հատ. Ա:
—	»	»	Վարք Լուսաւորչի:
—	Պօլիս	—	Ատենաբ. Լամբ. Ա:
—	»	—	Վկայ. Մակէյիմի, Բ:
1750	Վենետիկ	Պօռթօլի	Ճշմարտ. յաւիտ:
—	»	»	Օրինակաց և Եման:
—	»	»	Ծառ. կենաց, Ա:
—	»	Որլանտեան	Կշիւ. ժամանակի:
—	»	»	Քրիստ. Միթի:
—	Պօլիս	Պ. Ստեփ.	Գաւազան կրկնազօր:
—	»	Ատուածատր.	Եւազր:
—	»	»	Կրթ. քրիստ:
—	»	—	Ճշմարտ. նշ. կթղ:
—	»	Ատուածատր.	Շահաւետ:
1751	Վենետիկ	Պօռթօլի	Կրթ. ապաշխարողի:
—	»	»	Նոր կտակ. Ջ:
—	»	—	Գործք առաքելոց:
—	»	Որլանտեան	Փիլիսոփ. կօզնոյ:
1752	»	Պօռթօլի	Էֆիմերտէ, Բ:
—	»	—	Խորենացի:
—	»	»	Վարք Ոսկեր:
—	»	Որլանտեան	Նոր կտակ. Է:
—	»	»	Պարտեզ, Ջ:
—	»	»	Ժամագիրք փոքր:
—	Պօլիս	Ատուածատր.	Գրգուկ եռամսան:
—	»	»	Ժամագիրք մեծ:
—	»	»	Դպրութեան գիրք:
—	»	Սարգսեանց	Երգարան:
—	»	Ատուածատր.	Չեւնագրութեան գիրք:
—	»	—	Պօղոս Տարօնացի:

ԱՄ — ՔԱՂԱՔ — ՏՊԱՐԱՆ

1752	Պօլիս	Մարտիրոսի	Տաղարան :
1753	Վենետիկ	Որլանտեան	Դժոխք բացեալ :
—	»	»	Խոկուսն վարուց :
—	»	»	Ձայն Գրիստոսի :
—	»	»	Վարդարանի աղօթք , Բ :
—	Պօլիս	—	Ցանկզիրք :
1755	Հառվճ	Ուրբանեան .	Բենեգիկոս . ԺԻ . Թուղթ :
—	Վենետիկ	Պօռթօլի	Սաղմոս :
—	»	»	Տօմար :
—	Պօլիս	Բարոզի	Լուծիչ տարակուսանաց :
—	»	Աստուածատր .	Նարեկ :
—	»	»	Ստ . Ուսպելեանց :
1756	Հառվճ	Ուրբանեան	ՅԿ . Մծմնացի :
—	Պօլիս	Աստուածատր .	Ճրագ ճշմարտութեան :
—	»	»	Սաղմոս :
—	»	»	Տօմար , Ժ :
—	»	»	Երգարան Մանուէլի :
1757	»	»	Չէն հոգևոր :
—	»	»	Վիճ . Լամբր . Ընդ Յոյնս :
1758	»	»	Գանձարան ծանուցմանց :
1759	Վենետիկ	Պօռթօլի	Աղօթ . Ս . Յովնեփայ , Ա :
—	»	»	Աւետարան :
—	»	»	Հարցունք քերթողակ . Բ :
—	»	»	Մտած . չարչ . Գրիստ :
—	»	»	Սաղմոս :
—	Չմիւռնիա	Մարկոսի	Մեկն . Ժամակարգութե՛ն :
1760	Վենետիկ	Պօռթօլի	Արհեստ փրկութեան :
—	»	»	Կերակուր քահանայից :
—	Պօլիս	—	Ճառք կիրքի աղեքս :
—	»	Աստուածատր .	Հաց նեղելոց :
—	»	»	Աղօթ . Յակ . Նալեան :
—	»	»	Տօմար կիրքի :
—	»	»	Քերակ . Պաղտ . դպրի :
1761	Չմիւռնիա	Մարկոսի	Խորհրդատեար :
1762	Պօլիս	Աստուածատր .	Մեծ ժամագիրք :
—	Չմիւռնիա	Մարկոսի	Եզնիկ :
1763	Վենետիկ	Որլանտեան	Նարեկ պատկ . Ա :
—	Պօլիս	Աստուածատր .	Նարեկ :
1764	»	»	Եղիշէ , Ա :
1765	»	»	Սաղմոս :

ԱՄ — ՔԱՂԱՅ — ՏՊԱՐԱՆ

1766	Վենետիկ	Պօռթօլի	Փոքր ժամագիրք , Գ :
—	»	»	Նոր կտակարան , Ը :
1767	Պօլիս	Աստուածատր .	Եփրեմ , Գ :
1768	Վենետիկ	Պօռթօլի	Ժամագիրք Աստուած . Բ :
—	»	»	Քրիստ . Հայ . աճկ :
—	Պօլիս	—	Մեծ ժամագիրք :
—	»	Աստուածատր .	Հաննա վարդապետ , Բ :
—	»	»	Շարական , Բ :
—	»	»	Տաղարան Պաղտաս :
1769	Վենետիկ	Պօռթօլի	Բազիրք , Հատոր Բ :
—	Պօլիս	Աստուածատր .	Ծաղկոցիկ :
1770	Վենետիկ	Վաղվաղէանց	Ակն հոգւոյ , Բ :
—	»	Պօռթօլի	Սաղմոս :
—	»	»	Փերական . Մխիթ . Բ :
—	»	»	Քրիստ . աշխարհ :
1771	»	»	Խոկմունք քրիստ :
—	»	»	Քրիստ . Մխիթ . աշխ . :
—	»	»	Սաղմոս և Տօմար :
—	Պօլիս	Ստեփանոսի	Գործք առաքելոց :
1772	Վենետիկ	Պօռթօլի	Էֆիեբուե , Գ :
—	»	Դեմետրեայ	Առաքելութեանց , Գ .
—	»	»	Կրթութիւն աղօթից , Բ :
—	»	»	Հրաշեց գիրք :
—	»	—	Ներող . հոգեվարաց :
—	»	Դեմետրեայ	Պարտեզ , Է :
—	Պօլիս	Աստուածատր .	Երգարան Ղափանց :
—	Մատրաս	Շահմիրեան	Նոր տետրակ :
1773	Վենետիկ	Դեմետրեայ	Մոլութեանց , Բ :
—	Մատրաս	Շահմիրեան	Որոգայթ փառաց :
1774	Վենետիկ	Պօռթօլի	Փերակ . իտալ :
—	Պօլիս	Աստուածատր .	Նարեկ :
—	Վաղարշապ .	Էջմիածնի	Տօնաց . Սիմոն կաթող . Ա :
1775	Հռոմ	Ուրբանեան	Հանգամ . ուխտ . զեկեղ :
—	Վենետիկ	Դեմետրեայ	Խորհուրդ . աստուածապ :
—	»	»	Հիւսեակ բարեր :
—	»	»	Ճարտասանութիւն :
—	»	»	Քրիստ . ի խաղ քաւ . Բ :
—	Մատրաս	Շահմիրեան	Մետրովկ երեց , Բ :
1776	Վենետիկ	Դեմետրի	Նոր կտակ . Թ :
—	Թրեստ	Մխիթ .	Յորդորակ :

ԱՄ — ԳԱՂԱԿ — ՏՊԱՐԱՆ

1776	Թրեւոս	Մխիթ .	Քրիստ . աշխ . Բ :
—	»	»	Այբբենարան :
1777	Վենետիկ	Դեմետրեայ	Ժամագիրք փոքր, Դ :
—	Վաղարշապ .	Էջմիածին	Տաղ . Սիմ . կթղ . :
—	»	»	Կարգ թաղմ . քահ . :
1778	Թրեւոս	Մխիթ .	Տօնացոյց :
1779	Վենետիկ	Դեմետրեայ	Խրատ կատարելութեան :
—	»	»	Բերակ . Չամչեան :
—	Պօլիս	Աստուածատր .	Եփրեմ , Դ :
—	Վաղարշապ .	Էջմիածին	Պարտաժամար :
1780	Պօլիս	—	Ակնոց աւաց :
—	Լոնտրա	( 'ի մի տպ . )	Դաւանուի : Հաւատով :
—	Մատրաս	Շահմբեան	Պատմ . Դահմադի :
1781	Վենետիկ	Դեմետրեայ	Աղօթ . Ս . Յովսեփայ , Բ :
—	»	»	Թուաբանութիւն զբ :
—	»	»	Ծառ կենաց , Բ :
—	»	»	Վարդարանի աղօթք , Գ :
—	»	»	Բարոզգիրք :
—	Թրեւոս	Մխիթ .	Այբբենարան :
1782	Վենետիկ	Դեմետրեայ	Պարզատօմար :
—	»	»	Տօնացոյց , Ե :
—	Պօլիս	Ստեփանոսի	Ակն լուսատու :
—	»	»	Կրթ . քրիստ :
—	»	Աստուածատր .	Հաննա , Գ :
—	»	»	Նարեկ :
1783	»	»	Հինն ստուգութեան :
—	Թրեւոս	Մխիթ .	Թուղթք զՉինաց :
—	»	»	Բաղաբաժար . զիրք :
—	Փեթրպուրկ	—	Ժամագիրք մեծ :
1784	Հոռով	Ուրբանեան	Այբբենարան :
—	Վենետիկ	Վաղվազեան	Պատմ . Հայոց . Հատ . Ա :
—	Պօլիս	Պետր . Ստեփ .	Շարուկան , Ժ :
—	Թրեւոս	Մխիթ .	Եղորոսի առակք :
—	»	»	Ժամագիրք :
—	»	»	Պատր . պատարագի :
—	»	»	Վիպասան Ամբրիկ . Հ . Ա :
—	»	»	Տնօրէն . մարդ . կենաց :
1785	Վենետիկ	Վաղվազեան	Պատմ . Հայոց , Հատ . Բ :
—	»	»	Պարտեզ , Ը :
—	»	»	Սպաս . պատարագի :

ԱՄ	—	ՔԱՂԱՔ	—	ՏՊԱՐԱՆ	
1785	Վենետիկ	Վաղվազեան		Օգտագրիկ :	
—	»	»		Ակն հոգւոյ , Գ :	
—	Պօլեա	Աստուածատր .		Խորհրդատետր :	
—	»	»		Մաշտոց :	
—	Փեթրպօւրկ	Խալդարենց		Յիսուս որդի , է :	
—	»	»		Պատմ . սուրբ գրոց :	
1786	Վենետիկ	Փիացեան		Գեմբացի :	
—	»	—		Մեկն . պատկ . Ս . Գրիգ :	
—	»	Փիացեան		Պատմ . Հայոց , Հատ . Գ :	
—	»	»		Սաղմոս և Տօմար :	
—	Պօլեա	Աստուածատր .		Ժամագիրք ատենի :	
—	»	»		Ժամագիրք մեծ :	
—	Թրեաա	Մխիթ .		Սպաս . պատարագի :	
—	»	»		Վիպասան . Ամբ . Հ . Բ :	
—	»	»		Քաղաքավարութիւն :	
—	Փեթրպօւրկ	Խալդարենց		Աստուածադերս :	
—	»	»		Աւետ . Ճաշու :	
—	»	»		Վէմ գայթակղութեան :	
1787	Վենետիկ	Փիացեան		Լամբր . ատենար . Բ :	
—	Պօլեա	Աստուածատր .		Ճառ Մխլէյիմի :	
—	»	»		Քաղաքավարութիւն :	
—	Թրեաա	Մխիթ .		Ձեռնարկութեան գիրք :	
—	»	»		Պարտէզ , Թ :	
—	»	»		Սաղմոս :	
—	»	»		Վարդարանի աղօթք :	
—	Փեթրպօւրկ	Խալդարենց		Ժամագիրք կարճ :	
—	Վաղարշապ .	Էջմիածին		Յովսէպոս :	
1788	Վենետիկ	Փիացեան		Թուարան . աղիս :	
—	Պօլեա	—		Գանձարան :	
—	»	Աստուածատր .		Գործք առաքելոց :	
—	»	»		Եփրեմ , Ե :	
—	»	Ստեփ . Պետր .		Տաղարան :	
—	»	»		Օրինակք բարեագրոց :	
—	Թրեաա	Մխիթ .		Այբբենարան :	
—	»	»		Պատմ . Ճէնկիզի :	
—	»	»		Ակն հոգւոյ , Գ :	
—	Փեթրպօւրկ	Արղութեանց		Ընդհան . Ծնորհ :	
1789	Վենետիկ	Մխիթ .		Նարեկ . մեկն . Երգոց :	
—	»	»		Նարեկ :	
—	»	»		Նոր կտակ . , Ժ :	

ԱՄ — ՔԱՂԱՔ — ՏՊԱՐԱՆ

1789	Վենետիկ	Մխիթ .	Սաղմոս և Տօմար :
—	Պօլիս	Ստեփ . Պետր .	Տօմար , ժԱ :
—	Մատրաս	Շիրազեցւոյ	Մարիանեայ վարք :
1790	Վենետիկ	Մխիթ .	Մխիթ . Գոչ :
—	Պօլիս	Դպրատան	Հարեկ :
—	»	Ատուածատր .	Շարական , ժԱ :
—	Նախիջևեան	Արղութեանց	Ողբք և Հառաչանք :
—	»	»	Առաջին կանոն Սաղմ :
—	»	»	Գանձարան ուխտական :
1791	Վենետիկ	Մխիթ .	Աշխարհագր . համ :
—	Թրեստ	»	Հարերտ :
—	Նախիջևեան	Արղութեանց	Ժամագիրք :
—	»	»	Սաղմոս :
1792	Վենետիկ	Պօլթօրի	Քեր . խաւ :
—	Պօլիս	Դպրատան	Յուզ քահանայից :
—	Նախիջևեան	Արղութեանց	Դուռն ողորմ :
—	»	»	Վիպ . զերկ . մարմնոց :
—	Մատրաս	Շիրազեցւոյ	Յիսուս որդի :
1793	Վենետիկ	Մխիթ .	Աղօթ . ՚ի Լեզու Թրանսիլի :
—	»	»	Ժամագիրք :
—	»	»	Իմաստ . Թեսալոնսի :
—	»	»	Փարպեցի :
—	»	»	Սաղմոս :
—	Պօլիս	Դպրատան	Ճառ . ծննդեան :
—	»	»	Ճաշոց :
—	Նախիջևեան	Արղութեանց	Բժշկարան :
—	»	»	Թելամար :
1794	Վենետիկ	Մխիթ .	Ամարանոց :
—	»	»	Երկրաշափութիւն :
—	»	»	Հարեկ :
—	»	»	Պսակ կուսի :
—	»	»	Վարք Ս . Անտոնի :
—	Պօլիս	Դպրատան	Նուագարան :
—	Նախիջևեան	Արղութեանց	Խորհրդատուոր :
1796	Վենետիկ	Մխիթ .	Էֆիմէրուէ , Դ :
—	»	»	Պիտոյից :
—	Աժտերխան	Արղութեանց	Ատենար . Յ . Արղութ :
1797	Թրեստ	Մխիթ .	Նախապ . պատ . Բ :
—	»	»	Պատմ . դարձի Յովս :
—	Աժտերխան	Արղութեանց	Մեկն . Սաղմոսաց :



ԱՄ — ԳԱՂԱՔ — ՏՊԱՐԱՆ

1798	Թրեւս	Մխիթ.	Վարբեր. Կոմիտ. քահ. :
1799	Պօլիս	Մատթէի	Արճիշեցի Յովհ. Բ. :
—	»	Աստուածատր.	Տօնաց. Միմ. Կաթող. Բ. :
—	Թրեւս	Մխիթ.	Վարբ. Ս. Լուսիայ. :
1800	Վենետիկ	»	Ծաղիկ վարուց տօնեւ. :
—	»	»	Յաւեւ. վարուց Ս. Անտ. :
—	»	»	Պատմ. Պիոսի Զ. :
—	Պօլիս	Մատթէի	Սաղմ. Հ.Յ. և աճ. :
—	»	»	Օրօլօկիտն. :

ԾԱՆ. — Տպարանաց սիւնակիս մէջ — կը նշանակի անծանօթ: — Գրոց առջևը դրուած այբուբենի տառք՝ առաջին, երկրորդ ... տպագրութիւններն: — Վենետիկ Մխիթարեանց տպագրութիւնը 1716 թուականէն կը սկսին՝ քաղաքին տպարանաց մէջ. իսկ 'ի 1789 'ի կղզւոջ սրբոյն Ղազարոս:



Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն

## Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

Աստեղանկը՝ աշխարհիկ կամ գաշատական  
լեզուով գրուած ըլլալը կ'ակեարկեն:

Արգարու Թաւղթ: Տէս Լաբուրնիա:

Արդիաս հայերէն: Տէս Անդրէաս Աքո-  
լու Թաս:

\*Արովեան Գէորգ: Հանառոտորին Հայոց ազ-  
գի պատմութեան: Տփլիս, 1869, Ալադաթեան  
գրատուն:

— Նախաշաշիկ կրթութեան 'ի պետս ևորս,  
վարժից: Տփլիս, Ալադաթեան գրատուն:

— Պարսպ վախտի իսաղայիկ: Տփլիս,  
Գուլամբեանց գրատուն:

\*Արովեան Խաչատուր: Վերջ Հայաստանի,  
Ողբ հայրենասիրի. պատմական վէպ: Շարագրու-  
թիւն Խաչատուր Արովեանի: Տփլիս, 'ի տպարանի  
Ներսիսեան Հոգևոր գպրոցի, 1858:

Արահամ Աստապատցի (Վ.): Տէս Ներբա-  
ղեան սրբոյ էջմիածնի:

Արահամ կաթողիկոս Կրետացի:

Ա. Տպ. « Պատմութիւն անցից տեառն Արահամ մու սրբազան կաթողիկոսի Հայոց Թէքիրտաղցւոյ՝ առ Նատրշահ արքային Պարսից: Սրբագրեալ աստէն 'ի վաղեմի ձեռագիր օրինակէ ըստ յարմարագրութեան եւեթ, 'ի ձեռն մերայնեսոյ բանասիրի ուրումն»: Ի Կալկաթա, 1796:

Բ. Տպ. « Արահամ կաթողիկոսի Կրետացւոյ Պատմագրութիւն անցիցն իւրոց և Նատր-Շահին Պարսից. ԲՅԺԹ, 'ի տպարանի սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, 'ի վաղարշապատ: Նուէր առ մեծապատիւ և աղգասէր պարոն Մկրտիչ Սանասարեանց, 'ի հաւաստիս ջերմեռանդն զգացմանց և 'ի նշան երախտագիտութեան »:

Ազատանգեղոս, պատմագիր չորրորդ դարու:

X Ա. Տպ. « Գիրք վիպասանութեան որ կոչի հոմանունակի Ազատանգեղոս: Շարագրեալ զսա Ազատանգեղոսի մեծի խմաստասիրի, Ատենադպրի Տըրգատայ արքային Հայոց. յաղագս ծննդեան և սննդեան և վարուց և յաճախապատում քարոզութեան սրբոյն Գրիգորի մեծի Լուսաւորչին մերոյ, և Տըրգատայ Թագաւորին Հայոց: Յամի մարդեղութեան բանին կենաց ԲԵՃԹ. իսկ ըստ Հայոց ԲՃԾԸ, և յամենան մարտի մետասաներորդի: Ի յերրորդամի հովուապետութեան եկեղեցւոյն Քրիստոսի Տեառն Աղէքսանդր սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց սուրբ Էջմիածնի: Նորին հրամանաւ գաղափարեալ տպագրեցաւ քաղաքիս Կոստանդնուպոլսոյ, 'ի տպարանի և ձեռամբ Գրիգորի դպրի որդւոյ Մկրտչի Մարզուանեցւոյ »:

Հրատարակողն է Աղանի Աստուածատուր վարդապետ: « Յորժամ հրամանաւ (Աղէքսանդր հայրապետի), կ'ըսէ, գայի 'ի նուիրակութիւն 'ի մայրաքաղաքս Իւզանդիոն, ետ ինձ զգիրքս, զի բերեալ տացից մահտեսի Գրիգորի դպրին՝ որպէս զի տպեցէ. և ԲՃԾՁ Թուոյ, և յամենանն ապրիէլի եօթներորդի՝ ժամանեալ հասի 'ի Կոստանդնուպոլիս: Եւ տեսի զի խոովութիւնք յպովք յուզիւր 'ի քաղաքիս, որպէս ամենեցունցդ յայտ է. յաղագս որոյ

եղև խափանուամն իրողութեանս՝ մինչև 'ի Թիւն  
 ՌձԾԸ. և ըստ կենարարին մերոյ ՌէձԹ ամին, և յամ-  
 սեանն ապրիլի. վասն որոյ կամեղև զի անդրէն յետս  
 յղեցից զգիրքս առ վեհն՝ 'ի սուրբ Եջմիածին: Եւ  
 ապա ոմն երկիւղած յԱստուծոյ պարուն Քալուստ,  
 որգի խոճայ Մուրաթի Ագուլեցւոյ Գողթնեաց, և  
 յերկրէն Հայոց: Սա ... զմայլեալ շարժեցաւ 'ի սէր  
 աստուածային գանձիս՝ յանձն առնելով արդեամբք  
 տալ օգնութիւն վերոյդրեալ տպագրապետ Գրի-  
 գոր գպրին, զի տպեսցէ»: *Բջ ԴձԻԿ. 22X16*

Բ. Տպ. « Ագաթանգեղոս, յորում պարունակի  
 պատմութիւն Տրդատայ արքայի և սրբոյն Գրիգորի:  
 Եւ եւս աստուածախօս վարդապետութիւն նորին  
 սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ: ... Ի տիպ ար-  
 ձանացեալ յամի տեառն 1824, յ'Օրթագիւղ 'ի  
 տպարանի Պողոսի Արապեան »: Յառաջաբանն կ'ըսէ.  
 « Այս մատեան սքանչելի՝ Թէպէտև տպագրեալ էր  
 'ի Կոստանդնուպօլիս, յամի տեառն 1709, բայց  
 քանզի անցմամբ ժամանակաց մաշեալ և պակասեալ՝  
 գժուարագիւտ էր ընթերցասիրաց. սմին իրի հոգա-  
 ցաք այժմ՝ նորոգ սրբագրութեամբք սեղանաւորել  
 ամենեցուն, ըստ սրբագիր օրինակին՝ զոր բարեա-  
 ցապարտ պատուելի Գէորգ գպիրն Պալատական,  
 բաղգատութեամբ ընդ հնագիր ընտրելագոյն գաղա-  
 փարի՝ մաքրեալ էր 'ի վրինպակաց և յայլայլու-  
 թեանց մուծելոց յանհմտութենէ գրչաց, և յան-  
 հոգութենէ տպագրողաց. ուր նա ինքն իւրով գըր-  
 չաւ գրեալ էր յիշատակարան՝ այսու օրինակաւ.—  
 « Գիրքս այս որ կոչի Ագաթանգեղոս, 'ի բազում  
 պղտորեալ և մթացեալ իմացուածոցն իւրոց՝ պայ-  
 ծառացաւ. և 'ի շատ պակասութեանց և Թերու-  
 Թեանցն զերծեալ՝ լրացաւ. և իբրև միջօրեայ լու-  
 սաւորեալ՝ փայլեցաւ. և գեղեցկացեալ՝ բազմաց  
 հեշտընկալ և հասկանալի եղև. և այս եղև մեղուաջան  
 աշխատութեամբ որումն Գէորգայ գպրի Կոստանդ-  
 նուպօլսեցւոյ, հայելով 'ի ձեռագիր օրինակ ինչ վա-  
 ղեմի՝ որ Թէպէտ չունէր յայտնի ցոյց ամի գրչու-  
 Թեան իւրոյ Թուականաւ նշանակեալ, սակայն որ-  
 պէս ցուցանէր՝ արգեամբ յոյժ ընախ էր »:

Գ. Տպ. « Ագաթանգեղոս, Պատմութիւն Հայոց:

ի Վենետիկ, 'ի սուրբն Ղազար, ՌԲԶԴ» (1835) : Յառաջաբանը՝ հեղինակին անձին ու երկասիրութեան վրայ տուած հետաքննական տեղեկութիւններէն ետքը կը յաւելու. « Ձէոյակապ զայս և զոսկերչինիկ մասեան, աղարտեալ բազում ուրեք և անիմանալի յարգարեալ յանհմտութենէ տպագրողաց ցայժմ, կամ թէ մանաւանդ 'ի պակասելոյ ընտիր գրչագիր օրինակաց, առ անվթար 'ի լոյս ընծայել ըստ ընտրելագոյն ընթերցուածոյ ամենայն հաւատարմութեամբ, օժանդակեցին մեզ օրինակք եսթն .

« Ա. Փարիզեանն, որոյ այս է Յիշատակարանն . « Գրեալ 'ի Վարդանայ քահանայէ 'ի թուականիս Հայոց ԶԳ, 'ի քաղաքն Ռիմ, ընդ հովանեաւ սուրբ Տաճարին որ յանուն սուրբ աւետարանչացն Յովհաննու և Մատթէոսի, որ էր նա հոգետուն Հայոց » : Ըստ հնութեանն այնչափ է և ընտրութիւն օրինակիս (Թէպէտե քրչասխալք չպակտոնն 'ի նմա), լինչև առնաց սորա չէր մեզ մարթ անվթար 'ի լոյս ածել զԱգաթանգեղոս :

« Բ. Օրինակն ընտիր, գրչագիր հին գրեալ 'ի Դերլան . ԶԴԹ :

« Գ. Օր. գրչագիր գրեալ յԱմիթ քաղաքի, անթուական : Յօրինակէ աստի է վերջին տպ. Կոստանդնյամի տեառն 1824 :

« Դ. Օր. է առաջին տպ. Կոստ. յամի 1709 :

« Ե. Օր. է գրչագիր նոր, գրեալ 'ի թուիս Հայոց ՌձԻԶ :

« Զ. Օր. է նորագիր, անկատար, գրեալ 'ի Լեհաստան » :

Դ. Տպ. ի Վենետիկ, 'ի Ս. Ղազար. 1862 :

Տե՛ս Դաշանց Թուղթ :

Մասնական լատին թարգմանութիւն. Agathangeli Acta S. Gregorii Illum. (Bolland. Acta Sanctorum ; Sept., VIII, 321).

Agathange. Histoire du règne de Tiridate et de la prédication de S. Grégoire l'Illuminateur, traduite pour la première fois en français, avec suppressions des passages purement religieux, sur le texte arménien, accompagnée de la version grecque, par V. Langlois. Collection des historiens

anciens et modernes de l'Arménie. Paris, tom. 1, 99-194. Firmin-Didot, frères. Le pseudo-Agathange, histoire ancienne de l'Arménie, 195-200. — Texte grec avec une traduction latine, par les Bollandistes, dans « Acta Sanctorum ». Septembre 30. Tom. VIII, 321. Edition du P. Stilling. — Histoire et martyre de S. Grégoire, des SS. Hrhpsimé et Gaïané et de leurs compagnes, y compris la délivrance de l'Apôtre de l'Arménie; la doctrine de St. Grégoire; histoire de la Conversion de l'Arménie; recit du voyage du roi Tiridate et de St. Grégoire à Rome, et de leur visite à l'empereur Constantin-le-Grand et au pape St. Sylvestre. — Manuscrit de la traduction georgienne au mont Athos, couvent d'Iveron, Journal Asiatique, 1867. — Couvent Ibérien du mont Athos.

*Storia di Agatangelo*. Versione italiana, illustrata dai monaci armeni Mechitaristi, riveduta quanto allo stile da N. Tommaseo. Venezia, Tipografia Armena di S. Lazzaro, 1843.

*Agathangelos* et la doctrine de l'Eglise Arménienne au V. siècle. Thèse présentée à la faculté de théologie de l'Eglise libre du canton de Vaud, par Garabed Thoumajan candidat au diplôme de licencié en théologie. Lausanne, imprimerie Georges Bridel, 1879.

\*Ագաֆն (Մոլիերի) « զուարճալի կատակերգութիւն . Թարգմանեաց Տէգրան ԲարուԹիւն Տէտէեան: Զժիւռնիա, Տէտէեան տպարան », 1863:

\*Ագնէս, « կամ վինազար աղջիկը, վիպասանութիւն Շիա ԳրիսԹոֆի: Թարգմանեաց 'ի գաղղիականէ Լիւսի Պալասանեան: Զժիւռնիա, Տէտէեան տպարան », 1866:

Ագոնց (Գեր. Ստեփ. Գիւլէր). Տես

— Աշխարհագրութիւն:

— Հասարակախօսութիւն աշխարհագրութեան:

- Ճարտասանութիւն :
- Պատմութիւն վարուց Մխիթարայ արքայի :
- Տեսութիւն սուրբ գրոց հին կրտակարանի :
- Տեսութիւն սուրբ գրոց նոր կրտակարանի :
- Տես Սեթ (Չ. Եփրեմ վ.) :

\*Աղալա կամ երկու վայրենիներուն սէրը.  
« Շաթոպրիան գաղղիացւոյն վիպասանական երկասիրութիւնը : Թարգմանեց Ն. Տ. Սավայանեան, աշտկերտ Մեսրովպեան վարժարանին : Զմիւռնիա, 'ի տպարանի Մեսրովպեան վարժարանի », 1843 :

\* Ուրիշ թարգմանութիւն մ'ալ և տպագրութիւն 'ի Պօլիս, յաւելուածով նոյն հեղինակին Ռընէ վիպասանութեան. « Թարգմանեց Գարեգին Գ. Զափրասեան : Պօլիս, Միւհէնտիսեան տպարան », 1858 :

Թարգմանութիւն 'ի գրոց բարբառ, յաշակերտաց վարժարանին Իսկիւսարու : Կ. Պօլիս, Արամեան տպարան, 1880 :

Տես Ատալա, օրիորդն սիրագոհ :

\* Աղալա « կամ կղերին ագիտական մէկ զոհը : Ողբերգութիւն 'ի հինգ արարս. նմանաբար հեղինակութիւն Ա. Աճէմեան » : Կ. Պօլիս, 1874 :

X

Աղամգիրք. « Անցք Ադամոյ նախաստեղծին  
Դընին ի նմա և ցուցանին.  
Այնք որ սիրով լըսել կամին՝  
Մըտցեն ի սա և շահիցին :  
Շարագրեալ 'ի Տէր Առաքել վարդապետե » որ 'ի Ճակատ գրոցն Բաղիշեցի և Սիւնեաց եպիսկոպոս կը կոչուի. այլ յիշատակարանին մէջ կը յաւելու աւստպարողն. « Տեղեկացաք յետոյ որ ոչ է այս Բաղիշեցին, այլ Սիւնեցի, քեռորդի Տաթևացւոյն » : Եւ յիրաւի, Սիւնեցւոյն է, և ոչ տմբողջ տպագրուած, այլ միայն առաջին և երրորդ մասը, 'ի բաց թողով երկրորդը : Պօլիս, 'ի տպարանի Կարապետի որդւոյ Աստուածատրոյ, 1721 :

\*Աղամ ԵԼԱ. Կ. Պօլիս, Մարգարեան գրատուն,  
'ի Մէրճան :

\*Աղուղղի (Առ աՄենեսին) « Իտալերէն տետրին  
Թարգմանութիւնն . որ է Արեւելեան կաթոլիկ Հայոց  
իրաւանցը իրաւաբանական պաշտպանութիւնը » :  
Կ. Պօլիս, 1870 :

\*Ազատ երգեր, Տիգրան Մանուէլեանցի ?

Ազգաբանութիւն « Թագաւորացն Հայոց, յոր-  
գւոց որդի համառօտեալ 'ի Մովսիսէ Խորենացւոյ » :  
Յ'էջն 61, ուրիշ մակագրութեամբ . « Կարգ և պատ-  
մութիւն կայսերացն Հռովմայեցւոց, սկսեալ յՊաու-  
տոս կայսերէ » : Գրքին շարագրութեան թուականն  
կը յիշատակուի յ'էջն 164, « Ի Ռճրէ թուին շարա-  
գրեցաւ կարգ թագաւորացս և անցք աշխարհիս  
Հայոց 'ի Մինաս վարդապետէ Համթեցւոյ » : Իսկ  
տպագրութեան թուականն յ'էջ 178. « Տպեցաւ  
սա 'ի թուին Հայոց ՌճՁԳ, 'ի նոր և անկատար տպա-  
րանում 'ի Կոստանդնուպօլիս » :

Բ. Տպ. « Մինաս վարդապետի Համթեցւոյ՝ Աղ-  
գաբանութիւն Հայոց : Ի վաղարշապատ, 'ի տպա-  
րանի սրբոյ կաթողիկէ Էջմիածնի », 1870 :

\*Ազգային առաջարկութիւն մը. (Գրիգոր վ.  
Էնֆիէճեան Կ. Գ. Կ(Թ.) : Ի Կոստանդնուպօլիս, 'ի  
տպարանի Ճէրիտիյէի հավատիս, 1865 :

\*Ազգային դաստիարակութիւն, վարժապե-  
տական ժողովի մէջ խօսուած ճառեր. Մինաս Զէ-  
րազ : Կ. Պօլիս, տպարան Արամեան, 1879 :

\*Ազգային դիւցազնական աշխարհք, « Երկ-  
րորդ տարուայ ուսմունք և ընթերցմունք, աշխա-  
տասիրութեամբ Ս. Մանգինեանի : Թիֆլիզ, Կեդրո-  
նական գրաւաճառանոց », 1880 :

\*Ազգային եկեղեցական խնդրոյն վրայ՝ բեր-  
նուց սորվելու համառօտ խօսակցութիւն մը, հարց-  
մամբ պատասխանով : Կ. Պօլիս, 1869 :

X → Անզգ իմ և սուգ իմ ? ? ? էջ 31 11x16



\*Ազգային եկեղեցական խնդրոցն վրացոք հա-  
մառու խօսակցութեան մը համառու պատասխան :  
Գրեց Յ. Սարկաւադ Բուպեան : Կ. Պօլիս, 1869 :

Ազգային երգարան Հայոց. « Եօղկաբազ հին  
և նոր գործածական ամեն երգերու կամ ապերու-  
պարունակութեան, այբուբենի կարգով : Աշխատա-  
սիրեաց Գամառ-Քաթիպա : Ս. Պ. Բուրգ, Յօկոբ  
Եօնսոնի տպարանումը », 1857 :

\*Ազգային երգերու հաւաքածոյք մը : Տեո-  
Քնարի հայկական :

\*Ազգային ընտանեկան աշխարհք . « առաջին  
տարուայ ուսմունք և ընթերցմունք : Աշխատասի-  
րութեամբ Ս. Մանգինեանի, Թիֆլիզ, Կեդրոնական  
գրապատճառանոց », 1880 :

\*Ազգային կրթութիւն . « Հրատարակական ըն-  
թերցանութիւնք Եգուարդ Լարուէյի .

- I. Ինքնակրթութիւն :
- II. Ազգային կրթութիւն :
- III. Ազգային գրաստուններ :

Թարգմ. Մ. Տէր Գրիգորեանց : Փեթրպուրկ,  
Տպագր. Միքայել Մ. Միանսարեանց », 1867 :



\*Ազգային հանգանակութիւն . « Ատենախո-  
տութիւն, զոր յանուն Իիւանին խօսեցաւ Ռուսի-  
նեան Էֆէնտին, փոխանորդ ատենապետ ազգային  
Երեսփոխանաց ժողովին 1864 յուլիս 26ի նիստին  
մէջ 'ի Ղայաթիա » : Կոստանդնուպօլիս, Տպագր-  
ութեան Գրքարան, 1865. 1864 Յուլիս 5 2648  
17x12

\*Ազգային նահապետական եւ հայրենի աշ-  
խարհք . « Երրորդ տարուայ ուսմունք և ընթերց-  
մունք . աշխատասիրութեամբ Ս. Մանգինեանի .  
Թիֆլիզ, Կեդրոնական գրապատճառանոց », 1880 :

\*Ազգային պատմութեան դասագիրք, աշխա-  
տասիրեց Ստեփան Պ. Պ. Փափազեանց : Կ. Պօլիս,  
Միւհէնտիսեան տպարան, 1862 :



\*Ազդ. առ հոգեւորարձու քահանայն, «իւր պաշ-  
տօնին երեք պարտքերուն վրայ: Գրեց Ստեփան Վ.  
Մելքիսեդեկեան, Եպիսկոպոս Կարնոյ»: Կ. Պօլիս,  
1877.

Ազդարար, ամսօրեայ հրատարակութիւն 'ի Մազ-  
րաս շնորհաց, 'ի ձեռն Տէր Երուսթիւն քահանայի  
Շմաւօնեան (1794-1796). «Նկատելով, կ'ըսէ հրա-  
տարակողն, եթէ զօժանդակութիւն տպարանին, և  
եթէ բարեպէս յառաջ եկեալն ուսումնասիրաց,  
յարմար վարկայ նուիրել առաջի ձերումք ազգասի-  
րութեան զխոկմանս նարդենիս. այս ինքն տպեց-  
մամբ 'ի լոյս ածել զտարակ մի յամենայնում վերջ-  
նոց ամսոյ, անուանեալ Ազդ արարօզ. յորմէ իմա-  
ցումն լինելոց է ընթերցողաց, ծայրաքաղ անցքն  
նոյնոյ ամսոյ: Եթէ 'ի զանազան կաղեթաց, եթէ 'ի  
զանազան քարտիսաց, և եթէ այլոց զանազան գրոց-  
նակ բանք հարկաւորք և քաղցրալուրք, և 'ի վերջ-  
նումն տետրակիս՝ զօրացոյց մի հետեւեալ ամսոյ, պա-  
րունտկեալ 'ի նմա զտօնս սրբոց, և զաւուրս ծնըն-  
դեան և լրման լուսնոյ »:

Ազգարար Թիրայ ամսոյ, 1794, 'ի «հայրապետու-  
թեան տեառն Ղուկասու Սրբազան կոթողիկոսի ա-  
մենայն Հայոց 'ի Վաղարշապատ. և 'ի Թագաւորու-  
թեան օգոստափայլ Տեառն Երկրորդի Հերակլայ  
արքայի 'ի Թիֆլիզ. ընդ հովանեալ Սուրբ Աստուա-  
ծածնայ Եկեղեցւոյն որ 'ի Մազրաս, 'ի Տպարանի  
Տէր Երուսթիւն Շմաւօնեան Երազցւոյ »:

Աթանաս հայրապետ Աղեքսանդրու. «Սաղմո-  
սարանին սրբոյ Գաւթի երջանիկ մարգարէի հոգե-  
նուագ երգոյն իմաստից նախ յառաջաբանութիւն  
մեկնութեան, և զանազանութիւն իւրաքանչիւրոցն  
գիտաւորութեան: Արարեալ 'ի սրբոյն Աթանասէ  
Եպիսկոպոսապետէ Աղեքսանդրացւոյ: Ապա վերնա-  
գրացն մտաց մտահանգոյց մեկնութիւն, յԵպիփանէ  
սրբոյ Եպիսկոպոսէ Կիպրացւոյ: Եւ զկնի համառօտ  
իմն մեկնութիւն ևս 'ի Գաւթայ Անյաղթ փիլիսո-  
փայէն մերմէ սրբոյ: Եւ եւս ներբողեան ինչ 'ի սաղ-  
մոսն: Զորս արասանեալ 'ի սաղմոսարանէ վազեմ

*X* *Աղեքսանդր* *վե քա* *Ընչ* *հալու* *գաւթայ*  
*հալեթեան* *սրբոյն* *ի* *Սաղմոս* *արքայ* *Յուս*  
*Սաղմոս* *Յուս* *ի* *Սաղմոս* *արքայ* *Յուս* *Սաղմոս*  
*հալեթ* *մար* *Սաղմոս* *սրբոյն* *սրբոյն* *սրբոյն*  
1872 62 130 13 X 18

նականէ յօրինակելոյ 'ի ՊԵՆ Թռչականի մերում: Ի  
Կոստանդնուպօլիս, յամի փրկութեան մերոյ 1801:  
Իսկ 'ի մեր Թռականութեան ՌՄԾ. 'ի տպագրատան  
Մաթէոս դարի »):

Աթանաս վարդապետ Մերասեան կամ Տայի  
սիմոնեան. Ծառ կենաց. « Յորում նախ պարու-  
նակին սքանչելարար պարզաբանութիւնք սուրբ  
խորհրդոյ պատարագին: Ապա դեղեցիկ պատկերք  
հին և նոր կաակարանաց հանդերձ խորհրդաւոր ա-  
ղօթիւք: Եւ ապա պէսպէս հոգեզուարճ մազթանք  
'ի զանազան տեղեաց 'ի մի վայր բերեալք: Հաւա-  
քեալ 'ի բազում գրեանց Հատինացոց և Հնչոց 'ի  
Աթանաս վարդապետէ Կոստանդնուպօլսեցոյ Տա-  
յիսիմոնեան. ... Յամի Տեառն 1750 'ի յունվարի  
20: Ի Վենետիկ, 'ի տպարանի Անտոնի Պօլթոլի:

Բ. Տպ. Ի Վենետիկ, 'ի տպարանի Իեմետրեայ  
Թէոդոսեանց, 1781:

Աստուածաբանական և բարոյական մեկնոչիւն  
կարոշիկեայ գրոց երանելոշոյն Յակոբոշ Առաքելոյն.  
« Արարեալ և շարագրեալ 'ի Հ. Յրանչիսկոս Գու-  
նէլլեան Աստուածարան վարդապետէն 'ի կարգէն  
Յիսուսեան: Իսկ Թարգմանութեամբ և երկամբք  
աշխատանաց իտալիական լեզուէ 'ի լոյս ածեալ 'ի  
Աթանաս վարդապետէ Կոստանդնուպօլսեցոյ Տա-  
յիսիմոնեան. ... Յամի Փրէչին 1749. Ի Վենետիկ,  
'ի տպարանի Անտոնի Պօլթոլի:

Գրքին վերջը գրուած է. « Ժամանակագրութիւն  
Սրբազան՝ սուրբ Գրոց. ... Սկիզբն առնուն աղիւ-  
սակքս յԱդամայ, և ժամանեն յեօթանասներորդ  
ամն ծննդեանն Քրիստոսի »:

Քահանայ հավրակազոյն առ 'ի յօգուտ մնասնո-  
ղաց. « Կամ համառօտ կերպ, նկատուին և կրթու-  
թիւն առ 'ի զօրացուցանել զհոգեվարս, 'ի խրատ  
նորավարժ քահանայից: Արարեալ 'ի Հ. Յովսեփայ  
վանական կրօնաւորէ: Իսկ Թարգմանութեամբ 'ի  
լոյս ածեալ 'ի Աթանաս վարդապետէ Կոստանդնու-  
պօլսեցոյ Տայիսիմոնեան: Ի Վենետիկ, յամի Տեառն  
1748. 'ի տպարանի Անտոնի Պօլթոլի »:

Քերականոչիւն իտալերէն. « Համառօտ քերա-

\*Առաքինի եւ քաղաքակիրթ պատանի: կեսար Գանթու իտալացւոյն. Թարգմանեալ և տպագրեալ յաշխարհիկ բարբառ 'ի Վենետիկ 'ի Ս. Ղազար, 1864:

\*Առաքինութեան հարկաւորութիւնը, օգուտներն ու ծագումը. Ճառ բարոյական: կ. Պօլեա, 'ի տպ. Յ. Միւհէնտիսեան, 1848:

X

Առաքինութեան համբայն, կամ Մենտոր մանկանց և երիտասարդաց: Թարգմանեաց Տ. Տ. Թ. Սաւալանեանց: Երուսաղէմ, 'ի տպարանի սրբոց Յակովբեանց, 1867: կայ ծրարք Թ. Գ. Գ. 1972 հշ 236 17 Մ. 11

X

Առաքինութեանց գիրք ... «Նորուժ նախ ընձեռին զեօթանց առաքինութեանց. զՆաւատոյ, զՅուսոյ և զՍիրոյ. զԽոհեմութենէ, զՈղջատհոհութենէ, զԱրիութենէ և զԱրգարութենէ: Ապա զեօթանց պարգեւաց Ոգւոյ սրբոյ. և վերջապէս զերանութեանց աւետարանականաց: Անդրածեցեալ 'ի լատինականէն 'ի հայ բարբառ, 'ի գաւառն Նախիջեւանու, 'ի վաղնջուց ժամանակաց: Իսկ այժմ 'ի լոյս ածեցեալ աշխատասիրութեամբ և սրբագրութեամբ տեառն Մխիթարոյ վարդապետի Սեբաստացւոյ Աբբայ հայր կոչեցելոյ » ... Յամի տեառն 1721. Վենետիկ, 'ի տպ. Ա. Պուլտի: հգ 1674 13 x 10

Բ. Տպ. « ... Շարագրեալ 'ի Պետրոսէ արեղայե արագոնացւոյ, որ 'ի կարգէ Քարոզողաց սրբոյն 'ի օմնիկոսի: Թարգմանեալ 'ի լատինականէն 'ի հայ բարբառ, 'ի Յակոբայ ումեմնէ, 'ի գաւառն Նախչուանու, 'ի Թուին Քրիստոսի 1339: Ի լոյս ածեալ և տպագրեալ նախ աշխատասիրութեամբ տեառն Մխիթարոյ վարդապետի Սեբաստացւոյ Աբբահայր կոչեցելոյ: Եւ այժմ տպագրեալ երկրորդ անգամ զգուշագոյն սրբագրութեամբ: Արդեամբ և գուշիւք բարեպաշտօն և քաջատոհմիկ երկոցունց եզ

բարց հարազատաց՝ Բարադամեան պարոն Յովսէփին  
և պարոն Զաքարին » : ... Յամի տեառն 1772 ... 'ի  
տպարանի Դեմետրեայ Թէոդոսեանց :

\*Առաքինութիւնք Բամելայի. Գարլոյ Կոլտոնի  
իտալացւոյն կատակերգութիւն : Բնագրէն Թարգ-  
մանեց Պօղոս Գ. Պալգազարեան. Զմիւռնիա, 1866 :

Առաւել պարզաբանութիւն. « քրիստոնէա-  
կան վարդապետութեան, Թարգմանեալ 'ի Ֆրան-  
գսաց լեզուէ 'ի հայոց բառն, ձեռամբ տէր Պետրոս  
Պօղոսի Հայոց քահանային, և հրամանաւ սրբազան  
Փափին ութերորդ Որբանոսի, և սուրբ Ժողովոյն որ  
վասն հաստատութեան հաւատոյ կարգեալ է : Կազ-  
մեալ եղև 'ի ԹՎ. ծննդեանն Քրիստ. ՌՈՒ » : Հռովմ,  
'ի տպ. Ժողովոյն Տարածման հաւատոյ :

Նոյն հայ և լատին : Փարիզ, 1634 :

\*Առողջաբանութիւն. « Մանկութիւն, Պատա-  
նեկութիւն, Զափահասութիւն, Մերութիւն, Ժուժ-  
կալութիւն, խրատ ամենեցուն : Ոգելից ըմպելեաց  
և ծխախոտի վնասակարութիւն . հրատարակու-  
թեամբ Ատողֆ Րիոնի : Թարգմանեաց Նազարէթ  
Ս. Զամպազձեան » :

\*Առողջաբանութիւն : Զմիւռնիա, 'ի տպ. Տե-  
աէեան եղբարց :

Առողջաբանութիւն կամ Առողջ ապրելու մաս-  
նաւոր և ընդհանուր կանոններ : Տեար Ա. Բ. Գ :  
Շարադրեց Տոբթոր Ա. Կռձիկեան : Կ. Պօլիս, 1861 :

Առողջաբանութիւն ամուսնութեան, Ա. Տը-  
պէ գաղղիացւոյն : Թարգմանեց Գ. Ներշապուհ, Կ.  
Պօլիս, Արամեան տպ. 1876 :

X \*Առողջաբանութիւն ընդարձակ. « 'ի պէտս  
համայն հայազգի անձանց, արանց, կանանց, ծերոց,  
տղայոց, օրիորդաց և նորածին երախայից : Յօրի-  
նեաց Տօբթէօր Գ. Ճէրրահեան. Հատոր Ա. Տպա-



Քարոզգիրք.

Ասկերեան Յովհաննէս. Հատուեան քաղաք-  
կանութիւն: Տփլիս, 'ի տպարանի Գր. Մեկքումենց  
և Հ. Էնֆիաճեանց, 1869:

Ասողիկ . « Տիեզերական պատմութիւն Ստե-  
փաննոս վարդապետի Տարօնեցւոյ . 'ի լոյս ընծայեաց  
Հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ  
Շահնազարեանց՝ միաբան սրբոյ Էջմիածնի: (Փարիզ)  
ի Գործատան Կարապետ վ. Շահնազարեանց »:

« Տպագրութիւն մատենիս արարաւ համեմատու-  
թեամբ կրկին օրինակաց. յորոց մին ելեալ էր 'ի  
գրատանէ սրբոյն Յովհաննու Մկրտչի Ամլորդւոյ  
վանաց Բաղէշի. միւսն 'ի Տաթեւայ՝ մայրավանից  
Սիւնեաց նահանգի, զոր օրինակեալ էի յամի 1843...  
Աղբիւր երկոցունցն մի գոլով՝ տարբերութիւնքն  
չնչին իմն էին. այլ դժբաղդաբար յերկոսին եւս  
պակասէր մասն ինչ երկրորդ գլխոյ երրորդ գրոցն.  
որ թէ և չէր կարևորագոյն իմն, նախ՝ զի ոչ հայեր  
յազգային իրողութիւնս, երկրորդ՝ զի մարթ էր  
ընուզ զայն 'ի Թովմայէ Արծրունւոյ և 'ի Սեբէոսէ:  
Բայց յամենայնի կատարեալ կամելով առնել զառաջ-  
արկեալ զգործ մեր՝ խնդրեցի նամակաւ զպակասոր-  
դըն 'ի վանաց սրբոյն Վազարու, ուր գտանէր այլ  
մի եւս օրինակ այսր պատմութեան. և պատասխանի  
ընկալայ թէ 'ի նմա եւս պակասէր խնդրելին մեր:  
Ոչ եւս կամեցեալ այնուհետև սակս գոյզն ինչ թե-  
րութեան թողուլ 'ի խաւարի զկարևոր մատենանս  
այս՝ ընծայեմ ահա 'ի լոյս, 'ի փառս աղգի մերոյ և  
յօգուտ ուսումասէր մանկանց նորին »:

X \*Ասպարէզ ազգին Հայոց. Գրեց վ. Տ. Մ. Սե-  
բասացի, անգամ Անձնուէր ընկերութեան: Հա-  
տոր Ա. Կ. Պօլիս ք. Բ. Գրպարան 3. 1866 ԵԶ 91  
14716

Աստեղագիտական հրահանգք 'ի վերայ գի-  
սաւոր աստեղաց. 'ի Հ. Պօլոս վ. Յովհաննեան:  
Վիեննա, տպ. Միխիթարեանց, 1841:

Աստեղագիտական հրահանգք 'ի վերայ երկ-

X → Աստղ Միխիթարեանց. Գրպարան 3. 1866 ԵԶ 91  
Ի Պօլս 1459 յուտի 18 ԷԶ 158... 7716  
13x19



« Ի չափոյ իսկ գրոցս յայտ է, կ'ընէ Գեր. Հեղինակը, զի ոչ որպէս Աստուածաբանութիւն ճոխ և լիութի զսա 'ի լոյս ընծայեմ, առ որ բազմահատոր ստուարակարկատ մատենից պէտք էին, այլ որպէս համառօտութիւն իմն 'ի վարժս և 'ի նախակրթութիւն ուխտի մանկանց: Վասն որոյ մի ոք խնդրեսցէ 'ի սմա աւանդեալ երկարապատում զկարծիս և զհակաճառութիւնս այլևայլ կաճառաց աստուածաբանից, մանաւանդ զիրաց որ չեն 'ի հաւատոց ... Եւ ոչ զառարկութիւնս աղանգոց և հերձուածոց 'ի սմա համահաւաքեմ. այլ զսահմանս և եթ հաւատոյ, զհաստատութիւնս նոցին 'ի սուրբ Գրոց, յաւանդութենէ, 'ի Ժողովոց և 'ի Հարց. և զգլխաւորս եւեթ յառարկութեանց. որպէս զի գիւրին իցէ համբալաց առնուլ 'ի միա զամենայն, առանց ընտրելոյ և յապաւելոյ »:

Տես Ալպէրտ Խալատոշր վարդապետ. Ողևծոռժ. Հարերտ. Պիլոշարտ, և այլն:

Աստուածաճնի ժամագիրք: Տես Ժամագիրք Աստուածաճնի:

Աստուածադերս. « Գիրք աղօթից որ կոչի Աստուածադերս: Յարմարեալ 'ի Ղազարու ամենիմաստ հայրապետէ 'ի 1191 թուին. յաստուածակառոյց և 'ի տիեզերական աթոռն սուրբ Էջմիածին »: Թուի տպագրութիւն Պօլսոյ, « Ի գործարանի տրուպ Աբրահամու », որպէս ակնարկէ յիշատակարանն: (Մասկուայի Ղազարեան ճեմարանին մատենադարանին ցուցակը՝ Էջմիածնի տպագրութիւն կը համարի):

Բ. Տպ. Ի Պետրպուրգ. « ... Արարեալ տեառն Ղազարու հոգելոյս կաթողիկոսի սրբոյ աթոռոյն Էջմիածնի. և վերստին տպագրեալ 'ի վեցերորդում ամի հայրապետութեան լուսանկար մօրն մերոյ սրբոյ աթոռոյն Էջմիածնի տեառն Ղուկասու, ... Հրամանաւ իշխանադնեայ տեառն Յովսէփայ առաքելաշաւիղ արքեպիսկոպոսի և առաջնորդի ազգին Հայոց ողբ են ընդ տէրութեամբ Ռուստաց: Յամի տեառն 1786 ... Ժախիւք տեառն Յօհաննիսի Ծգնակիր և սրբակրօն վարդապետի նոր Զուղայեցւոյ 'ի

Սանկտ Բեարպուրի , 'ի տպարանի Խաչարեանց  
պարոն Գրիգորի : Հրամանաւ կառավարչացն բարե-  
կարգութեան » :

Գ. Տպ . « Գիրք աղօթից որ կոչի Աստուածազերս-  
արարեալ տեառն Ղազարու հոգեւոյս կաթուղիկոսի  
սրբոյ աթոռոյն Էջմիածնի Ի Նոր Նախիջեան » ,  
1793 :

X Աստուածամանուկներն , յօրինեալ երանել-  
ւոյն Պետրոսի եպիսկոպոսի Նախըռանցւոյ և աս-  
տուածաբան վարդապետի Հայաստանեայց : Կալի-  
թա , 1827 , յեղիւկոյ սուրբ Կիւրաբե Լաւրճաշարոյ  
Էջ 260 ՂՄԽԿ

Աստուածաշունչ սուրբ գիրք հին եւ նոր  
կտակարանաց .

Ա. Տպ . Ոսկանայ վարդապետի Երևանեցւոյ .  
« Աստուածաշունչ հնոց և նորոց կտակարանացներ-  
պարունակող , շարակարգութեամբ նախնեացն մե-  
րոց և շքմարտասիրաց Թարգմանչաց : Իսկ զինի հրա-  
մանաւ վեհափառին տեառն Յակօբայ Հայոց կաթու-  
ղիկոսի գլխակարգեալ և սնատեալ ըստ զաղմատա-  
ցւոցն , նաև զհամաձայնութիւն հանուրց գրոց աս-  
տուածաշնչից , ընդ իրեարս առընթեր կարգեալ ա-  
մենեցուն , նուաստի ումեմն բանի տեառն սպասա-  
ւորի Ոսկանի Երևանեցւոյ : ՅԱմսդերտամ , ներ-  
տպարանում սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի զօ-  
րավարի , 'ի Թուում փրկչին 1666 . Իսկ Հայոց  
ԲձԺԵ . նամսեանն մարտի մետասանի » :

Յիշատակարանն կ'ըսէ . « Գոհութիւն , պատիւ և  
գիւտք . . . զի ետ զկարողութիւն անարժանութեան  
իմում ձեռնտուութեամբ և օժանդակութեամբ ըն-  
կերակցութեան մարմնականօք գոյիւք պայազատա-  
փառաց , Ստեփաննոսի , Թէոդորոսի և Պետրոսի  
Չուղայեցւոց . քանզի աստուածասէրք և կորովքս  
այսոքիկ հայելով 'ի նուաղութիւն աստուածայնոց  
կտակարանաց որ 'ի մեջ ազգիս Հայոց , մանաւանդ  
վարդապետաց և վանականաց և գրոց աշակերտաց .  
վասն որոյ ջերմեանդ սիրով յօժարեալք յորգորե-  
ցին զմիմեանս , քաջալերելով և զիմս նուաստութիւն ,  
որ սակս գոյից վարանելի . ձեռնաուք եղեն ինձ ներ-



գործառնութեանս այսմիկ . տալով առատապէս զծախս գրամոյն ըստ որում և յորժամ պիտոյա- նայր :

« Քանզի ես իշխանութեամբ և հրամանաւ վեհա- փառի կաթուղիկոսի . . . տեառն Յակոբու՝ ներթը- ւոջ փրկչին հազարերորդի վեցհարիւրորդի վատանե- րորդի երկրորդի . իսկ ըստ Հայոց թուոյ հազարե- րորդի հարիւրորդի մետասաներորդի, սեպտեմբերի ի՛նչ . ելեալ յերկրէ և յազգէ իմէ գիմեցի 'ի կող- մանս Եւրոպոյ , յազադս տպման մատենիս այսորիկ աստուածայնոյ , և բազմաւ վշտիւ և տառապակրու- թեամբ եկեալ հասի 'ի սահմանս Խտալիոյ յերկիրն Թոսգանու , 'ի քաղաքն Իլիվունայ . ներնախնում նուագում զոչ ոք գտի ինձ զօժանդակ , սակա որոյ թողեալ գնացի 'ի Հոօմայ . գոնեա անդ գտցի յաջո- ղութիւն գործառնութեանս . և անդ ևս ոչ եղև ինչ միսթարուծիւն օգնականութեան գործոյս , վասն յոգունց պատճառաց ներհակականաց , թէ 'ի մե- րայնոց ազանց , և թէ ինքեանց կանոնաց և սահ- մանաց . . .

« Իսկ 'ի դառնալն իմում անդրէն յԻլիվունայ յետ բազմաց հակառակութեանց սուտակասպասից ա- րանց և փասքուսաց մերայնոց ազանց , որք ոչ զօ- գուտ ազգի և զարքոյ աթոռոյն , այլ զանձանց զցան- կութիւն , և կամաց զհաճութիւն կամէին ընուլ . որոց ընդգիմակայեալ , զոչ ինչ ետու հաւանութեան բանս . այլ ընդ երից հաւատարմագունից վերոգրե- ցելոց արանց և Քրիստոսասիրաց՝ յետ բազմաց քըն- նութեանց և հարցափորձութեանց միարանեցայ սի- րով , և դաշնագրականաւ գրով . զի սոքա երեքեանս ընդ իս հոգասցեն զամենայն զծախս վերոգրեցելոյ մատենին մինչև ցաւարտ , առ յօգուտ ազգիս և 'ի շահ սրբոյ աթոռոյն :

« Բայց այսպիսի եղև պայմանն . քանզի 'ի թուին ՔճԹ՝ փետրվարի Ի վերոգրեցեալ պարոն Ստեփան Նոսն , և պարոն Պեարոն խոստացան զաւելեալ շահ . սըն որ 'ի վաճառմանէ Աստուածաշնչոյն լինիցի տալ սուրբ Էջմիածնի . նոյնպէս և պարոն Թէոգորոսն զիւր բաժնի շահոյ զկէսն խոստացաւ սուրբ Երու- սաղեմի , և զկէսն յուշոյվանից սրբոյն Սարգսի զօ-

րավարի: Այսու պայմանաւ ես եւս չու արարեալ  
հասի 'ի կողմանս հիւսիսայնոյ յերկիրս Բելգիկոյ.  
որ այժմ ասի Հոլանտիոյ. 'ի քաղաքս յԱմսթէլ-  
տամի 'ի տպարան սրբոյ Էլմիածնի և սրբոյն Սարգսի  
զօրավարի. ուրանօր և սկիզբն արարի տպել գրովքն  
զորս Աւետիքն էր յօրինեալ. զի գիրք Մատթէոսին  
յոյժ խոշորք էին և անյարմարք. նաև զի ոչ գոյր  
գիր վասն համաձայնութեան և խորագրութեան  
հարկեցայ առնել զնօտր գիրդ իմով գոյիւ. զոր  
վասն փորձի եգեալ եմ'ներ վերջնում շարակնոցին.  
նաև այսու բոլորգրիւ որ յԱւետէն էր յօրինեալ՝  
որովք գրովք զսկիզբն արարաք ներ թուողն որպէս  
գրեալ է 'ի սկզբան. և յաւարտ սորին ժամանեցաք  
ողորմութեամբ նունոյ տեառն և փրկչին Յիսուսի.  
ներ թուողն Քրիստոսի հազարորդի վեցհարիւրորդի  
վասններորդի ութերորդի՝ յամսեանն հոկտեմբերի,  
որոյ էին աւուրք երեքսասաներորդ »:

Բ. Տպ. Պետրոսի Լատինացւոյ. « Աստուածա-  
շունչ հնոց և նորոց կտակարանաց ներպարունակօզ,  
շարակարգութեամբ նախնեացն մերոց և ճշմարտա-  
սիրաց թարգմանչաց: Ի հայրապետութեան տեառն  
Նահապետի կաթողիկոսի ամենից Հայոց. 'ի թագա-  
ւորանիստ քաղաքն Ստամպօլ 'ի թաղն Պէկօզլի կո-  
չեցեալ. և թուարերութեան Հայոց ԹՃԾԳ, մայիսի  
ամսոյն 10. և 'ի թվին փրկչին 1705 »: Յիշատակա-  
րանն ալ կ'ըսէ. « ... Եղև զրաւ աստուածաշունչ  
մատենիս. թվին Հայոց ԹՃԾԶ. 'ի շնորհազարդ հայ-  
րապետութեան և կաթողիկոսութեան սուրբ աթո-  
ռոյն Էլմիածնայ ամենայն Հայոց տեառն Աղեքսան-  
դրի ճուղայեցւոյ: Ի յօրինակս հնոյ տպեցեալ՝ լու-  
սաւոր հոգի Ոսկան վարդապետի. յար և նման. ոչ  
աւելի և ոչ նուազ. սակայն մանր գրով: Ի տպարանս  
ազգականի նոյնոյ Ոսկանի վարդապետի Լատինա-  
ցւոյ Պետրոսի »:

Գ. Տպ. « Աստուածաշունչ գիրք հնոց և նորոց  
կտակարանաց՝ շարակարգութեամբ նախնեացն մե-  
րոց և ճշմարտասիրաց թարգմանչաց: Զոր զինի ա-  
մաց բաղմաց, յամի տեառն 1666 և 'ի թուին Հայոց  
ԹՃԾԾ, հրամանաւ տեառն Յակոբայ Հայոց կաթողի-  
կոսի գլխակարգեալ և տնատեալ ըստ լատինացւոց »:

նաե զհամաձայնութիւն հանուրց գրոց աստուա-  
ծաշնչից իրերաց առննթեր կարգեալ տեառն Ոսկա-  
նայ վարդապետի Երևանեցւոյ, և առաջնով տպա-  
գրութեամբ 'ի լոյս ածեալ: Իսկ այժմ'նոյն լաւա-  
գոյն թղթովք, ազնուագոյն պատկերօք, գեղեցկա-  
գոյն ծաղկագրօք, զգուշագոյն սրբագրութեամբ, և  
բազում ծախիւք վերստին տպագրութեամբ 'ի լոյս  
ածեցեալ, աշխատասիրութեամբ և Զանիւ տեառն  
Մխիթարայ վարդապետի Սերաստացւոյ Աբրահայր  
կոչեցելոյ... Յոմի տեառն 1733, և 'ի թուին Հայոց  
ԲՃՁԲ, յունիսի 15 ... 'ի Վենետիկ քաղաքի, 'ի տպ-  
Անտոնի Պօռթոլի »:

Դ. Տպ. « Աստուածաշունչ մատեան հին և նոր  
կտակարանաց ըստ Ճշգրիտ թարգմանութեան նախ-  
նեաց մերոց 'ի հելլենական հաւատարմագոյն բնա-  
գրէ 'ի հայկականս բարբառ: Նորոգապէս 'ի լոյս  
ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափարէ՝ հա-  
մեմատութեամբ այլևայլ օրինակաց, հանդերձ կա-  
րևոր ծանօթութեամբ բնաբանին: Յաշխատասիրու-  
թենէ Հ. Յովհաննու Չօհրապեան վարդապետի, 'ի  
միաբանութենէ մեծին Մխիթարայ Բաբունապետի  
և առաջին արքայի: Տպագրեալ հրամանաւ տեառն  
տեառն Ստեփաննոսի Ագոնց աստուածապատիւ  
արհիեպիսկոպոսի և առաջնորդի ուխտին սրբոյն  
Ղազարու, 1805, 'ի Վենետիկ, ԲՄԾԳ. Ի գործարա-  
նի սրբոյն Ղազարու »: Ի մի և 'ի չորս հատորս:

Հմուտ և ընդարձակ Նախարսևնոչքևամբ առ վեր-  
ժակոյս:

Ե. Տպ. Ի Սանկտպետերբուրգ. « Աստուածա-  
շունչ գիրք հնոց և նորոց կտակարանաց, շարակար-  
գութեամբ նախնեացն մերոց և Ճմարտասիրաց  
թարգմանչաց. Զանիւք և արգեամբք Ռուսաց Բիբ-  
լիական Ժողովոյն »: Ի Սանկտպետերբուրգ, 1817:

Զ. Տպ. Ի Վենետիկ. « Գիրք աստուածաշունչք  
հին և նոր կտակարանաց, ըստ միաբան վաղեմի գրք-  
չագրաց մերոց և յոյն բնագրաց »: Վենետիկ, 'ի տպ-  
Ս. Ղազարու, 1860:

Թարգմանութիւնք Աստուածաշունչ գրոց՝ յայխար հիկ շեզու:

Ա. Տպ. « Աստուածաշունչ գիրք հին և նոր կապարանաց, աշխարհաբար, ՚ի չորս հասորս »: Զմիւնիս, ՚ի տպ. Գուլիելմ Կրիֆֆիթի 1847-1850:

X

Բ. Տպ. « Աստուածաշունչ գիրք հին և նոր կապարանաց. երայական և յունական բնագիրներէն (Թարգմանուած) »: Նոր Եօրք, ՚ի տպ. Աստուածաշունչի ընկերութեան, 1859: Կոյ յուպ 1862 է է 9. 677. 9. 1574

Գաղղիացի հեղինակք Ռիշար և Ժիրոյ (Bibliothèque Sacrée) կ'աւանդեն թէ ուրիշ տպագրութիւն մ'ալ եղած ըլլայ Հայերէն Աստուածաշունչ գրոց յԱմիան Գաղղիոյ, ՚ի 1670, աշխատասիրութեամբ Թէոգորոսի Պետրոսեան (Théodore Petros): Այս տպագրութիւնը՝ եթէ կեղտկարծ աւանդութենէ կամ ուրիշ տպագրութեանց հետ չփոխելէ առաջ եկած չէ, որ հաւանական կը թուի, մեզի անծանօթ է: Նոյնպէս ալ ՚ի Նոր Զուղա եղած տպագրութիւնն, որ տեղ տեղ կը յիշատակուի:

Կը հաւատարմացընէ այս կարծիքն՝ մերձաւորն ժամանակաւ և բազմահմուտ Շրոտէր գերմանացի էր Այրաւնակ Գանձ գրոց յառաջաբանին մէջ. Theodorici Petri Simpri (Թէոգորոսեան Պետրոսի Սիմբրի) vel potius Theodori Petrosi, Cimbri, (Պետրոսեան Թէոգորոսի Գիմբրացւոյ), prouti nomen hoc scriptum est in Dedicatione Exemplaris unius Bibliorum S. Armenicorum ad Amplissimos Curatores Inclytæ Academïæ Lugduno Batavæ, ab Uskano Episcopo Erivanensi, Amstelodami anno MDCLXVI editorum; unde a nonnullis quidem Petrosus Auctor istius editionis habitus fuit.

Աղբային յիշատակագիր մը՝ մեզի անծանօթ տպագրութեան մ'ալ խօսքը կ'ընէ: Ոսկան վարդապետի ձեռքով եղած Աստուածաշունչ գրոց գովութիւնն ընկելով, կը յաւելու. « Ըստ որում յայտնի իսկ է արդեօք ՚ի Ոսկան վարդապետի տպեալ Աստուածաշունչն. որ գրեթէ ոչ վանանդեցւոյնն, ոչ Մխիթարայ արբային և ոչ Թուրչուճունն, և կամ այլոց տպեալ գրեանքն՝ կարեն լինել նմին աղախնեայք »:

Պտղայից յորդորակ յրերեսնուշ և ՚ի գիտեղ զԱստուածաշունչ գիրս: Կալկաթա, 1828:

\*Աստուածասէր, սրբոյն Յրանչիսկոսի Սալեզացւոյ: Թարգմանեալ 'ի Հ. Եդուարդ Վ. Հիւրմիւզ, արքեպիսկոպոսէ Շիրակայ, 'ի Մխիթարեան ուխտէ: Վէնեաիկ, Ս. Ղազար, 1860: Տես Սալեզացի:

Աստուածատուր Ներսիսովից: Տես Բառգիրք Լատին եւ հայ:

Ասրիբէզ եւ Գիքի: Տփխիս, կեդրոնական գրավաճառանոց:

\*Ատալա, օրիորդն սիրազոհ. «որ է պատմութիւն բանաստեղծական, յօրինեալ 'ի մեծանուն Շատիւբրիանտայ դազդիացւոյ. և Թարգմանաբար վերածեալ 'ի հայ բարբառ՝ երկասիրութեամբ պարոն Յովհաննու Աւգալեանց միոյ յանդամոց Ասիական Միաբանութեանն Բանգալայ, և այլն: Տպագրեալ արդեամբք և ծախուք պարոն Պօղոսի Որդանանեան»: Կալկաթա, 'ի տպ. Մարդասիրական Ճեմարանի, 1826:

X \*Ատամնաբոյժն արեւելեան. Կատակերդութիւն երգախառն 'ի հինգ արարս: Շարադրեց Յ. Յ. Պարոնեան: Կ. Պօլիս, 1868: **Հ Է 125 1316**

\*Ատենաբանութիւն 'ի տօնի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, զոր ազգային Սրբազան Սիւնհոգին բացման օրը խօսեցաւ Գեր. Սաեփան Վ. Աղարեան: Կ. Պօլիս, 1869:

Ատենաբանութիւն Ս. Ներսիսի Լամբրոնացւոյ.

Ա. Տպ. Ի Կոստանդնուպօլիս. «Գիրք սիրոյ և խաղաղութեան, շարագրեցեալ 'ի սրբոյն Ներսիսէ Լամբրոնացւոյ, ճոխիմաստ և աստուածաբան մեծի շնորհածաւալ վարդապետին մերոյ, 'ի խնդրոյ հրեշտակահրօն կաթողիկոսին մերոյ տեառն Գրիգորիսի՝ եղբորորդւոյ սրբոյն Ներսիսի: (Տպագրեալ) հրամանաւ տեառն Յարութեան արհիեպիսկոպոսի և փոխանորդի, 'ի Թուին Հայոց ԹՃՀԸ»:

→ Աստուածաբանութիւն Սրբ. Ստ. Գրիգորի Սիւնհոգինի մասին խօսեցաւ Սրբազան Սիւնհոգինը 1852 թ. 12 13 14

Բ. Տյւր. Ի Վենետիկ. « Սրբոյ Հօրն Մերոյ Ներսէսի Լամբրոնացւոյ՝ արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցւոց Ատենաբանութիւն և Ճառք ընտիրք 'ի Համբարձումն Քրիստոսի և 'ի Գալուստ Հոգւոյն սրբոյ: Տպագրեալ բազդատու(թեամբ ուղղագոյն օրինակաց: Յամի տեառն 1787, 'ի հոկտեմբերի 1. և 'ի Թուականութեանս Հայոց ՌՄԼՁ. 'ի Վենետիկ, 'ի տպարանի Յովհաննու Փիացեան »):

Գ. Տյւր. Ի Վենետիկ, 1838: « Սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյն Ատենաբանութիւն և Ճառք. — Յաստուածախումբ և 'ի տիեզերական ժողովն Տարսոնի, որ եղև 'ի համահրեշտակ կաթողիկոսէն Հայոց Գրիգորէ, յեղբորսրգւոյ սրբոյն Ներսեսի Կլայեցւոյ, և 'ի քրիստոսապսակ արքայէն Հայոց Լեւոնէ սակս միութեան՝ ատենական խօսք մեծի և սրբոյն Ներսէսի՝ այնմ աստուածապահ քաղաքի աթոռակալի և աստուածախօս վարդապետի »):

— Ատենաբանութիւն սրբոյն Ներսիսի Լամբրոնացւոյ. Թարգմանեալ ըստ ընտիր օրինակաց յիտալական բարբառ 'ի Հ. Յարութիւն վարդապետէ Աւգերեան Անկիւրացւոյ՝ 'ի Մխիթարեան Միաբանութենէ. և տպագրեալ 'ի կրկին բարբառ՝ հանգերձ իտալական ծանօթութեամբք: Ի վանս սրբոյն 'Լազարու, 'ի Վենետիկ, ՌՄԿԱ:

Orazione Sinodale di S. Nerses Lampronense, arcivescovo di Tarso in Cilicia, recata in lingua italiana dall'armena, ed illustrata con annotazioni dal P. Pasquale Aucher, dottore del Collegio di S. Lazzaro. Venezia, Stamperia del Collegio suddetto, 1812.

Ատենագրութիւնք ազգային ընդհանուր ժողովոց: Պաշտօնական հրատարակութիւնք ազգային տպարիարքարանի Հայոց:

Չանազան ու կարևոր տետրակներ, հրատարակուած 'ի Պոլիս, այլ և այլ ժամանակ, Սահմանագրութեան հաստատուէն ետքը:

Ատլաս աշխարհացոյց պատկերաց. երկասիրութեամբ Մխիթարեան Միաբանից. փորագրեալ

ծախիւք Յովհաննու Ամիրայի Տասեան: Վենետիկ,  
Ս. Ղազար, 1846-1849: Տասն տախտակք.

Տիեզերագրութիւն.

Հանառարած.

Ասիա.

Եւրոպա.

Ափրիկէ.

Ամերիկա հիւսիսային.

Ամերիկա հարաւային.

Ռվիիանիա.

Հայաստան աշխարհ ըստ նախնի աշխարհագրաց.

Օտնանեան սխտոռքիւն:

Ատլաս փոքրադիր վասն դպրոցաց: Վենետիկ,  
Ս. Ղազար, 1862: Տասուերկու տախտակք.

Հանառարած.

Աշխարհ մակարդակ.

Աշխարհ ծանօթ առ նախնեօք.

Եւրոպա.

Ասիա.

Ափրիկէ.

Ամերիկա հիւսիսային.

Ամերիկա հարաւային.

Ռվիիանիա.

Գաղղիա բաժանեալ 'ի նահանգս.

Հայաստան ըստ նախնի աշխարհագրաց.

Ասիոյ մասն ըստ սոչրք գրոց և ըստ նախնի  
աշխարհագրաց:

Ատլաս կամ Աշխարհացոյց տախտակք 'ի պէ-  
տրս ազգային դպրոցաց. յօրինեալ և ծրագրեալ 'ի  
Հ. Աստուածատուր վարդապետէ Աւագեան: Վիէն-  
նա, Սխիթարեանց տպարան, 1857: Քսանուձէկ  
տախտակք.

Եւրոպա.

Ասիա.

Ափրիկէ.

Հիւսիսային Ամերիկա.

Հարաւային Ամերիկա.

Աւստրալիա .

Անգղիա .

Ռուսիա Եւրոպայ .

Գաղղիա .

Բելգիա , Հոլանտա , Վերքայիա , Հաննոսի  
գաւառք , Օլտենպորկ , Մեծ դքսութիւն Հեւ-  
սեն և Նասսաւ :

Բրուսիա .

Գերմանիա .

Աւստրիական պետութիւն .

Փորրոկայ և Սպանիա .

Իտալիա .

Յունաստան և Յունիական կղզիք .

Օսմանեան պետութիւն Եւրոպայ .

Հայաստան .

Օսմանեան պետութիւն Ասիոյ .

Պարսիաստան , Աֆղանիստան և Պէրսիաստան .

Հնդկաստան :

\*Արա գեղեցիկ . պատմական վէպ Ա. Յ. Պարբիշի  
Իտալացւոյ : Վենետիկ , Ս . Ղազար , 1876 :

\*Արամայիս . « Բարոյական ստեղծաբանութիւն .  
յօրինուած Թադէոսի Խաչիկ Աւետուճեանց » : Կալ-  
կաթա , 'ի տպ . Մարդասիրական ճեմարանի , 1846 :

Արամեան լեզուի Գանձ : Տես Գանձ Արա-  
մեան լեզուի :

\*Արամեան Տարեցոյցք . (Վեժ և փոքր) : Կ . Պ .  
Լիս , Արամեան տպարան , 1870 . . .

Արապչաի . « Պատմութիւն Լէնկթիմուրայ .  
Թարգմանեաց 'ի տաճիկ բնագրէ Ա . վարդապետ  
Տէր-Յովհաննիսեանց , 'ի միաբանական ուխտէ սրբ-  
բոց Յակովբեանց » : Երուսաղէմ , 'ի տպ . սրբոց Յա-  
կովբեանց , 1873 :

Արարածք . « Գրկուկս այս որ կոչի Արարածք .  
ես Յովաննէս նուաստոգի



Արիստակէս Լաստիվերոցի. « Պատմութիւն Արիստակէայ վարդապետի Լաստիվերոցոյ » : Վե- նետիկ, 'ի տպարանի սրբոյն Ղազարու, յամի 1844, 8ՄՂԳ :

Յառաջարանն կ'ըսէ. « Մատենագիրս ողբերգակ եկաց պատմիչ յընդմիջել մետասաներորդ գարուն, ծնեալ 'ի Լաստիվերո աւանի առ երի Արծնոյ : Սկը- սանի զպատմութիւնն 'ի Թուականէն Քրիստոսի 989, յորում Թագաւորէր 'ի Հայս Գագիկ Բագրա- տունի մականուանեալն Շահնշահ, և գայ հասանէ մինչև ցամն 1071... Ի բաղդատութեան օրինակացն էին 'ի ձեռս մեր օրինակք չորք անթուականք նօտ- րագիրք... » :

Արիստիդէայ (Ս). իմաստասիրի Աթենացոյ Խօսք, « լատին Թարգմանութեամբ նուիրեալ առ Գեր. Տէր Փէլիքս Տիւբանլու, եպիսկոպոս Արեւ- լիանու Փրանկաց, քաջարան ախոյեան եկեղեցոյ, 'ի Մխիթարեան հարց վանաց սրբոյն Ղազարու : Ի Վենեակի, 1878-ՌՅԻԸ » :

Sancti Aristidis philosophi Atheniensis sermo- nes duos, quorum originalis textus desideratur, ex antiqua armeniaca versione nunc primum in lati- nam linguam translatos ...

Venetii, MDCCCLXXVIII.

Ա. « Ինքնակալի Ադրիանոսի կայսեր յԱրիստի- գէայ Փիլիսոփայէ ատենացոյ » :

Բ. « Արիստէայ Փիլիսոփայի ատենացոյ 'ի գո- չումն աւազակին և 'ի խաչելոյն տպարանութիւն » :

Գրուածքին սկիզբը գրուած յառաջարանն կ'ըսէ.

« Այս հատուած բանի գաղափարեցաւ յարժա- նաւոր հնաւանդ մագաղաթեայ մատենէ գրելոյ 'ի նլ Թուականիս մերում, որ է 981 ամ Քրիստոսի : Այլ մատենս գրեալ յելս ծՌ գարու կամ 'ի սկիզ- բըն յաջորդին՝ մատոյց մեզ միւս ևս հատուած բանի նորին Արիստիդէայ (Արիստէայ՝ ըստ օրինակին, որ սխալագիր է), 'ի Գոյնընն առաջակին, արդարե ի- մասաակօրէն կամ ճարտասանական արուեստիւ յե- ղիւրեալ. և Թուի ուրոյն ճառի մասն՝ քան ջատա- գովութեանն, մանաւանդ խօսեցելումն առաջի հե- Թանոս կայսերն » :

Un fragment de l'Apologie d'Aristide retrouvé dans une traduction arménienne. Revue de Théologie et de Philosophie. Lausanne, Georges Bridel, Éditeur. Douzième année. Janvier, traduction de M. Luc Gautier.

*Ibid.* De l'authenticité du fragment d'Aristide, par M. L. Massebieau (mai 1879).

— Un fragment de l'Apologie de Saint Aristide d'Athènes, par l'abbé Baunard, chanoine honoraire d'Orléans, professeur à l'Université catholique de Lille, docteur en théologie, docteur ès-lettres. (Extrait de la Revue des Sciences ecclésiastiques). Arras, imprimerie de la Société du Pas-de-Calais, 1879.

— Tübinger theologische Quartalschrift, Himpel, (fasc. II, 1879); et trad. (fasc. I, 1880). — Theologische Literaturzeitung, Harnack, (2 août 1879).

— L'Apologie d'Aristide et l'Épître à Diogène, par Henry Doucet. (Extrait de la Revue des questions historiques, Octobre, 1880). Paris, librairie de Victor Palmé, Éditeur, 1880.

Արիստողէմ. « Ոգրերգութիւն վ. Մոնթեայ. Թարգմանեաց Եգուարգ վարդապետ Հիւրմիւզ, արքեպ. Շիրակայ »: Վենետիկ, Ս. Ղազար, 1873:

X \*Արիստողէմ, « Ոգրերգութիւն վ. Մոնթեին. Թարգմանեաց Ա. Մ. Պահատըրեան », Կ. Պոլիս, Արեւելեան տպարան, 1856: 51 80 12 X 17

Արիստոտէլ. Տասն ստորոգոչքիւնք Արիստոտէլի. « Երբեակ օրինակք էին սորա, յորոց մին բոլորգիր հնագոյն և ընտիր, և ըստ յիշատակարանին 'ի զԵ Թուականին գրեալ. և երկուքն նօրագիրք՝ մին 'ի ՌՃԶ Թուականին, և միւսն անթուական »:

Արիստոտէլի յաղագս մեկնոչքեան. « Պերիարմենիաս անուանեալ յունարէն. երեք օրինակք էին և սորա, յորոց մին ընտիր բոլորգիր, և 'ի զԵԹ Թուականին գրեալ՝ որպէս կարծեմք, և երկուքն նօրագիրք »:

Արխատուէի բռնոր սա մեծն Աղեքսանդր Պատմա-  
մոտքիւն յաղագս աշխարհի. « յորում երևի գերա-  
ծայր ճոխութիւն հանճարոյ մատենագրիս, և թարգ-  
մանչին բնիկ գրիչն ոսկեղէն: Սորա վեց օրինակք էին  
առ մեզ. երեքն բոլորգիր ընտիր, յորոց մին 'ի ԶԿԷ  
Թուականին, միւսն 'ի ՌԻԷ. և երրորդն՝ որպէս Թու-  
'ի յիշատակարանէն 'ի ՊԵԹ. և այլ երեքն նօտրա-  
գիրք անթուականք »:

Արխատուէի բռնոր սա մեծն Աղեքսանդր յաղագս  
առաքինառքեանց: « Նոյնպէս և սորա վեց օրինակք  
էին առ մեզ. երեքն բոլորգիր՝ յորոց մին 'ի ԶԿԷ  
Թուականին, միւսն 'ի ՌԻԷ, և երրորդ Թու-ի լինել 'ի  
ՊԵԹ. և այլ երեքն նօտրագիրք »: Վենետիկ, 'ի տպ-  
սրբոյն Ղազարու յամի 1833, ՌՄՁԲ:

\*Արիւնալի մարքիզուհին: Տաշ կոմսուհի:  
Թարգմանեց Խ. Ե. Պուրուսուզեան, 2 հատոր:  
Զմիւռնիա, տպ. Տէտէեան, 1877:

X Արիւնքուրի մենակեացը: Թարգմանեց Գէորգ  
Պուպլի. հրատարակեց Մ. Թաթուլ: Կ. Պօլիս, 1871:  
Զարգարեան, 1871: Կ-Ղ ԵՊՁ 13X40

\*Արծիւ վասպուրականի, Թուոցեալ յերկրէն  
վանանգայ 'ի Տոսպ. յաշակերտաց ժառանգաւո-  
րաց գպրոցին վարագայ: Ի վանս վարագայ, 1858...  
(հանգէս ամսօրեայ):

Արծուիկ Տարոնոյ, լրատար: Տարոն, 'ի վանս  
վարագայ, 1864:

Արկածք ազնիւ տղային: Կ. Պօլիս, Գրատուն  
Մարգարեան 'ի Մէրճան:

\*Արկածք Արխատովնոսի (Ֆենելոնի). Թարգ-  
մանեց Գ. Հմայեակ Կոստանդեան: Զմիւռնիա, 'ի  
տպարանի Մեսրովպեան վարժարանին, 1843:

Արկածք Հայաստանի. պատմագրեց Տ. Յ. Յ. 'Լ:

X Արկածք Արջրայ հայուհւոյն: Յօրինեաց Ե.

այի վ. Ղեւոնդեանց: Զմիւռնիա, ապ. Տէտէեան,  
1872: 5-ը 16 10x15

Արկածք տեառն Յովնանու Խաչկեան, խաչակիր աւագ քահանայի և ասպետի: Յօրինեաց Մ. Խ. Յովակիմեան: Կալկաթա, 1863:

\*Արկածք վարդայ Մամիկոնենոյ: Գրեց Հ. Սահակ վ. Թոռնեան: Վիեննա, ապար. Մխիթարեանց, 1856, 1879:

— Նոյն, փառաւոր ապագրութեամբ, 1856:

Արկածք Տելեմաքայ: Տես Տելեմաք:

\*Արհամարհութիւն: Գրեց Տ. Գ. Գափամաձեան: Կ. Պօլիս, 1861:

Արհեստ աստուածսիրութեան. « Արհեստ բարիոք սիրելոյ, կամ Արհեստ աստուածսիրութեան, գիրք երեք: Քերթուած թարգմանեալ 'ի լատին բնագրէ 'ի հայ ոտանաւոր չափամբ. աշխատասիրութեամբ Հ. Մանուէլ վարդապետի Զախջախեան 'ի Մխիթարեան միաբանութենէ»: Ի վենետիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու, 1819:

\*Արհեստաբանութիւն. « Համառօտ, և նորանոր հնարք Տեառն Մեսրոպայ վարդապետի Աղաջբողեանց »: Վենետիկ, Ս. Ղազար, 1830:

\*Արհեստ քաղցրաւենի շինելոյ: Յօրինեաց Յովակիմեան Յակոբ Ամիրայեան Մամիկոնեանց: Տիխիս, 'ի ապ. Գ. Մեղքումեանց և Հ. Էնֆիաձեանց, 1861:

Արհեստ բանական կամ « Տրամաբանութիւն Փրանկիսկոսի Սուաւէի: Փոխեաց 'ի մերս Հ. Արսէն վ. Անթիմոսեան, 'ի Մխիթարեան Միաբանից »: Վենետիկ, Ս. Ղազար, 1825:

Բ. Տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1858:

\*Արհեստ երկայնակեցութեան: « Որ է առողջ

երկայն ու երջանիկ ապրելու արուեստը: Շարա-  
գրեց Անդրէաս Փոփովիչ սուչովացի հայազգի բժիշ-  
կը»: Կ. Պօլիս, 'ի տպար. Յովհաննու Միւհէնտի-  
սեան, ԲՄՂԹ, 1850:

- Արիեստ համարողութեան, «ամբողջ և կատա-  
րեալ: Թարգմանեցեալ 'ի պէտս հայկազունեաց և  
մանաւանդ վաճառականաց: Եւ տպագրեցեալ 'ի  
տպարանի սրբոյ Էջմիածնի և սրբոյն Սարգսի զօրա-  
վարին: Ի հայրապետութեան տեառն Յակօբայ ա-  
մենից Հայոց կաթողիկոսի, և 'ի միապետութեան  
Լուսովիկոսի չորեքտասաներորդի արքային կալիս-  
ցոց, 'ի Մարտիկի: Յամի ներմարգեղութեան  
տեառն 1675, օգոստոս ամսոյն 25: Ի Յ. Հ. Բ. Տ.  
Պ.» : (Յակովբ Հոլով Բիւզանդեան ?):

Արիեստ փրկութեան. «Կամ հրահանգ քրիս-  
տոնէական վարուց՝ յերիս պատուիրանս բաժա-  
նեալ... Թարգմանեցեալ յիտալական լեզուէ 'ի  
հայ բարբառ. և տպագրեալ յամի տեառն 1760»: Ի  
Վենետիկ, 'ի տպ. Անտոնի Պուծովի:

\*Արծազանք, գրականական և քաղաքական շա-  
բաթերթ: Խմբագիր հրատարակիչ Աբգար Յովհաննի  
սեան: Տպիխս, 'ի տպ. Յովհաննու Մարտիրոսեան,  
1882:

Արծանական 'ի բարեյիշատակ Տէր Միքայէլ  
Աղեքսանդրեան, արքեպիսկոպոս Երուսաղեմի,  
հանգուցեալ 'ի Քաղկեդոն: Կ. Պօլիս, տպ. Միւ-  
հէնտիսեան, 1865:

Արծանագիր ժողովոյ ազգային կրթութեան  
'ի Պօլիս. Հայ. Գաղղ: Վիեննա, տպ. Մխիթարեան,  
1860:

Արծանագրութիւնք. «Որք վերաբերին առ հաս-  
տատութիւն հաշտութեան ընդ Պարսկաստանի: 1.  
Բարձրագոյն հրովարտակ յազադս հաստատեալ  
հաշտութեան ընդ Պարսկաստանի, 21 մարտի 1822

աֆի: 2. Քաղուած 'ի պայմանագրէ այոր հաշու-  
թեան: 3. Բարձրագոյն պարգևագիր յանուն որբա-  
զան Ներսեսի Վիճակաւոր արհիեպիսկոպոսի Հայոց  
Վրաստանեայց: 4. Բարձրագոյն հրաման յաղագս  
անուանելոյ զնորոգ նուաճեալ իշխանութիւնս (Քա-  
ւառ. Հայկազանց), և մուծանելոյ զայն 'ի կայսե-  
րական մականուն: Սանկտպետրբուրգ, 1828:

\*Արղուծեան Յովսէփի կաթողիկոս Սանահնեցի.  
« Յիշատակարանք, 1778-1793 »: Տփլիս, Կոտնիկ  
հայոց աթիսարհի, ամսագիր Մ. Աղաբէգեան. 'ի տպ.  
Գ. Մելքումեանց և Հ. Էնֆիաճեանց:

Արճիշեցի Յովհաննէս. « Մեկնութիւն ահաւոր  
խորհրդոյ սրբոյ պատարագի, արտահանեալ 'ի մեկ-  
նութեանց Խոսրովու Անձնացեաց եպիսկոպոսի և  
Ներսիսի Լամբրոնացոյ վերատեսչին Տարսոնի, կար-  
ձեւով և պարզաբանելով Յովհաննու Արճիշեցոյ:  
Ի լոյս ընծայեաց պարոն Յովհաննէս Ավգալեանց,  
Անդամ Ասիական Միաբանութեան Բանգալայ, և  
գասասաց 'ի Մարգասիրական Ճեմարանի ... » Ի  
Գործարանի նորին իսկ Ճեմարանի, 'ի Կալիթա,  
1830:

\*Արմաւենի, լրագիր կիսամսեայ. քաղաքական,  
ազգային, բանասիրական: Խմբագիր Աբրահամ Մու-  
րտեան. Եգիպտոս, 1865:

\*Արմենակ Հայկունի. Գերեզմանք երիտասար-  
դաց: Կ. Պոլիս, տպ. Ռ. Քիւրքճեան, 1870:

— Բնորնան գաղտնիք, Եւրոպոյ արգի իմաս-  
տասիրաց գրութեանն համեմատ: Կ. Պոլիս, տպ.  
Յ. Քաֆաճեան:

\*Արշալոյս արարատեան. Օրագիր քաղաքա-  
կան, բանասիրական, ազգային և առեւտրական.  
Խմբագրութեամբ Ղ. Գ. Պալլազարեան: Չմիւռնիս,  
'ի տպ. Արշալուսոյ արարատեան (1841-1882):

\*Արշալոյս Արարատեան լրագրին 377 Թուոյզ

մէկ յօդուածին, ու անոր մէջ տպուած նամակին վրայ ճմարտասէր անձի մը խորհրդածուութիւնները : Կ. Պօլիս, 'ի տպ. սրբոյն Բենեգիկոսի, 1851 :

\*Արշակ Բ. « Ողբերգութիւն 'ի հինգ արարուածքս : Գրեաց Խորէն վարդապետ Գալիպեան, անգամ քերթողական ժողովոյն Գաղղիոյ, և այլն » : Թէոդոսիա, Խալիպեան տպարան, ՌՅԺ, 1861 :

\*Արշակ Բ. « Թատերանուագ 'ի չորս հանգէս, Հայ և իտալ : Յօրինեաց Թովմաս Թերզեցն » : Կ. Պօլիս, Արամեան տպարան, 1871 :

\*Արշակ Բ. « Ողբերգութիւն ազգային. յօրինեաց Էմմանուէլ Ասայեան » : Կ. Պօլիս, Արամեան տպարան, 1872 :

Արշարունի Գրիգոր. « Գրիգորի վարդապետի Արշարունեաց եպիսկոպոսի արարեալ Մեկնութիւն Հնթերցուածոցն, Կիւրղի երուսաղեմացոյ գերաճաճանչ և սրբազան հայրապետին » : Տես Կ ո չ ու մ ն ը ն ծ ա յ ու թ ե ա ն :

Արշաւանք Արաբաց 'ի Հայս : Տես Ղ ե ւ ո ն ի ք Ե Ր Է ց :

\*Արշաւիր (Յ.) . « Նոր Հայաստան. պատերազմ ընդգէմ ետութեան, և խոչընդոտք ազգային առաջգիմնութեան : Գրեց Յ. Արշաւիր » : Կ. Պօլիս, տպագրութիւն Անդուան Չէլիչ, 1878 :

\*Արուեստաքանութիւն . « Երկասիրեալ 'ի Հ. Մանուէլ վարդապետէ Քաջունեոյ 'ի Մխիթարեան ուխտէ » : Վենետիկ, Ս. Ղազար, 1873 :

Արուեստագրութիւն գրեալ 'ի Հ. Պետրոս Վ. Մինասեան Մխիթարեան 'ի վանս սրբոյն Ղազարու, և վիմագրեալ 'ի Քոռուաաոյ Յլախէքէներէ, 'ի Վենետիկ, 1834 :

\*Արուեստախօսութիւն գործնական, կամ

« Գլխաւոր արուեստներու գիւրին կերպով գործադրութեան առաջնորդ »: 'ի Հ. Յիբրեմ վ. Չապր. Ճեան: Վիեննա, տպ. Մխիթարեանց, 1858: Բ. տպ. 1869:

\*Արուեստ նամակագրութեան. համառօտ կամ ընտանեկան նամակներ նորադարձ պատանեկաց գիւրութեանը համար: Կ. Պօլիս, 1863:

Արուեստ ուղիղ խորհելոյ եւ բարեւոյ կելոյ: 'ի Հ. Արսէն Կ. Բագրատունւոյ: Վենետիկ, Ս. Դաւար, 1857:

\*Արուեստակ կամ Ուղեցոյց երջանկութեան: Գրեց Մկրտիչ Գ. Թաթուլեան: Կ. Պօլիս, 1866:

Արսէն դպիր: Տես Յա հիմանք:

\*Արտաշեսեան Արտաւազդայ բարձր ու վախճանը: Բանաստեղծական աղբյւրին վէպ, 'ի Հ. Սահակ վարդապետէ Թոռնեան: Վիեննա, Մխիթարեանց տպարան, 1852:

\*Արտասուք հայ մանկան, 'ի մահ Մամիկոնեան վարդանայ հայ գիւցադին: Գրեց Ալվազեան Ար. րահամ: Կ. Պօլիս, 1862:

\*Արտասուք Մարեմայ, եօթն ցաւոց աղօթքնեւրով. 'ի Հ. Գաւիթ վ. Ուզունեան: Վիեննա, Մխիթարեանց տպարան, 1857:

X Արիիական Հայաստանի « տաղաչափեալ Յովհանու Մերզայեան Վանանդեցի վարժապետ քահանայի Զմիւռնիոյ, 1836, տպեալ յՕրթադիւղ, ՌՄԶԵ. 'ի տպ. երեց որդւոց Պօղոսի Արապեան Ապուլչեւցւոյ »: 57 640 13720

\*Արփի Արարատեան. Հանդէս բանասիրական, աղբյւրին, տնտեսական, ընտանեկան, վիպական, աշխատասիրեալ 'ի Տ. Յ. Տէտէեան: Զմիւռնիա, Տէտէեան տպ. 1853....:



նաև տօնացոյց ամենայն շարժական և տեղափոխ տօնից: Տպագրեցեալ 'ի վեցերորդում ամի հայրապետութեան լուսանկար Մօրն մերոյ օրոյց Թոռոյն Էջմիածնի՝ տեառն Ղափառու սրբազնասուրբ կաթողիկոսի ամենայն Հայոց: Հրամանաւ իշխանազնեայ տեառն Յովսեփայ առաքելաշաւիղ արհիեպիսկոպոսի Սանահինեցւոյ Արղութեանց, և առաջնորդի ազգին Հայոց որ են ընդ տէրութեամբ Ռուսաց: Արդեամբք և ծախիւք նոր Զուգայեցի Խոճամինասեանց 'ի Քրիստոս հանգուցեալ Աղամալի գուստր բարեպաշտուհի Սոփիայ տիկնոջ: Յամի տեառն 1786, փետրուարի 5. իսկ 'ի Թուականութեանս Հայոց ԲՄԼԵ. 'ի Սանկաբարպուրգ, 'ի տպ. Խալդարեանց Խոջամալի որդի պարոն Քրիզորին: Հրամանաւ կառավարչացն բարեկարգութեանց »:

Երկրորդ հատորն է. « Տօնացոյց՝ երկրորդ հատոր. որ է քանօն և կառավարիչ առաջնոյ հատորին. յօրինեցեալ լի՛ խորանօք 'ի վերայ լի՛ գրոցն մերոց պարուբնականաց. որոց իւրաքանչիւր տարեգրոյ խորան՝ ըստ բերման իւրոյ տարւոյն, զամենայն շարժական և տեղափոխ տօնան՝ կանօնաւորեալ տեղաւորէ: Աշխատասիրութեամբ տեառն Սիմէոնի՝ հոգեւոյս կաթողիկոսի սուրբ Թոռոյն Էջմիածնի. յամի տեառն 1786, օգոստոս 24. իսկ 'ի Թուականութեանս Հայոց ԲՄԼԵ »:

Աւետ-Չաքարեան (Գէորգ): Տես ՏնտեսուԹիւն մարդկային կենաց:

Աւետիք պատրիարք Հայոց « կամ Երկարեղիմակոյ մարդր. (Մարիոս Թոփէն գաղղիացւոյն): Թարգմանեց Կ. Ս. Իւթիւճեան »: Պօլիս, 'ի տպ. Մասիս լրագրոյ 1872:

Աւետիքեան (Հ. Գաբրիէլ Վ.): Տես Աւգոստինոսի, յաղագս Քաղաքին Աստուծոյ: Բացատրութիւն շարականաց: Խորհրդածութիւնք: Հռոդերիկեայ՝ ցառ Համակերպութեան:

Ճառ բղխման, հայ. եւ իտալ:  
 Մեկնուածիւն չորեքտասան թղթոցն  
 Պօղոսի:  
 Մտածուածիւնք 'ի վերայ ցաւոց Ս.  
 Կուսիւն:  
 Նարեկի լուծումն:  
 Նարեկացւոյ ճառից լուծումն:  
 Քերականութիւնք հայ:  
 Քերականութիւն Թոսքանեան լե-  
 զուի:  
 Քերթուածք:

Արելիոս: Տե՛ս Մարկոս Աւրելիոս:

Ափիոն Ծխողի մը սէրը: Տե՛ս Լէօ:

Աքիմեանց. Նարս և Ռաւմաժանտի: Տփիս, Զա-  
 քարեայ Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառա-  
 նոցում, 1881:

Աքիմեանց Գ. Ոսկի ասեղներ: Տփիս, Զաքա-  
 րեայ Գրիգորեանցի Կովկասեան գրավաճառանո-  
 ցում, 1881:

Աքլոր եղբայր. « Պատմութիւն զուարճալի և  
 առակախառն. ջանիւք և աշխատութեամբ Ա. Գ. Մ.  
 տպագրութեամբ 'ի լոյս ընծայեցաւ: Կ. Պօլիս, 'ի  
 տպար. Ճեմիշեքը իլմիշեյի օանակի, 1863: Յամբ  
 տեառն 1825 գեկա. 19 գրեալ աւարտեցաւ գըր-  
 քոյկս 'ի Կոստանդնուպօլիս, 'ի պատրիարքարանի.  
 ձեռամբ Մ. վարդապետի. 'ի վայելումն իւր, և հա-  
 րազաա և հոգեկից սիրելեաց իւրոց և յունկնգրո-  
 ղաց »:

Աքսորականք 'ի Սիպերիա. « Գոթէն տիկնոջ  
 Աքսորականացն 'ի Սիպերիա վէպք. Թարգմանեաց  
 Հ. Եդուարդ Վ. Հիւրմիւզեան, արքեպիսկոպոս Շի-  
 րակայ »: Վենետիկ, Ս. Ղազար, 1874:

Ա. Մ. Ե. Պ. Գիւցազունք Հայկ, Արամ, Վա.

✱ Անգլար բնակչը, պարսի շարքեւի և առ-  
 ցաբաւը, երբոր սղանա՞մ Գ. Կոմար ԿԿՊՅ 3. Գ.  
 Կոմար 1671 62 63 12217

✱ " " " Երբոր սղանա՞մ Գ. Կոմար ԿԿՊՅ 3. Գ.  
 Կոմար 1687 62 72 13X20

Հագն: Տփխիս, Չաքարիայ Գրիգորեանցի կովկասեան գրազանաւանոցում, 1881:

Բարայեան. Ուսումնարանի ստորջրահասակ հարցեր: Տփխիս, 'ի տպար. Հ. Էնֆիաճեանց և ընկ., 1880:

— Կրքերը և ևոցս ազդեցութիւնը: Տփխիս, 'ի տպ. Հ. Էնֆիաճեանց և ընկ., 1880:

Բագրատունի (Հ. Արսէն Վ.): Տեօ  
Արուեստ բանական Սոսաւէի:  
Արուեստ ուղիղ խորհելոյ եւ բար-  
ւոք կելոյ:  
Թէոփրաստեայ նկարագիրք:  
Կեսարու յիշատակարանք:  
Հայկ դիւցազն:  
Հատընտիրք յողբերգութեանց հը-  
նոց եւ արդեաց:  
Հոմերի իլիական:  
Ճաշակ յոյն եւ լատին ճարտար-  
խօսութեան:  
Մասիլիոնի Փոքրիկ քառասնորդք:  
Միլտոնի կորուստ դրախտին:  
Որատեայ Արուեստ քերթողական:  
Պոսիւէթի Դամբանականք:  
Վիրգիլեայ Մշակականք:  
Փոսկոլոյի Գերեզմանք:  
Քերականութեան Տարերք:  
Քերականութիւն 'ի պէտս զար-  
գացելոց:  
Քերականութիւն Գաղղիական:  
Քերթուածք:

Բագմավէպ, Օրագիր բնական, բանասիրական, բարոյական, և ազգային գիտելեաց: Աշխատասիրու-  
թիւն Միխիթարեան միաբանից: (Սկզբնաւորեալ 'ի  
1843): Վենետիկ, 'ի տպ. սրբոյն Ղազարու:

Բալաքիրեվի պալատական զուարճախօսին կայ-

ներ Ռուսաց մեծին Պետրոսի զուարճարանութիւնք: Թարգմանեաց 'ի Ռուսաց լեզուէ Աւետիք Խաչեղեանց: Ս. Պետրոսը, 1858:

Բահամերեանց. Քերականութիւն աշխարհարաւ լեզուի: Տփխիս, Չաքարիա Գրեգորեանցի Կովկասեան գրավաճառանոցում:

Բաղդատութիւն Պատմութեան Մովսիսի Խորենացոյ տպագրելոյն 'ի Վենետիկ' ընդ երկուց ձեռագրաց: Երկասիրութիւն Յակովբայ վարժապետի Կարենեանց: Ի Տփխիս, 'ի 1858 ամի տեառն, 'ի Տպագրատան Հոգևոր Դպրոցի Հայոց Տփխիսոյ ընծայելոյ յԱշնուական Գէորգայ Արժրունչոյ:

\* Բամելա, կամ Բարեկենդանի գիշերները. երգախառն Թարերգութիւն 'ի հինգ արարս և յինն պատկերո: Հեղ. Սրապիոն Մ. Մանասեան: Կ. Պոլիս, Միւհենտիսեան տպարան, 1864:

Բամելայի առաքինութիւնք: Տես Առաքինութիւնք Բամելայի:

Բան « առ հայկազնեայ քրիստոնեայս, յընկերակցութենէ Ռուսաց Աստուածաշունչ ժողովոյն որ 'ի Ռուսաստան. Թարգմանեալ 'ի Ռուսաց բարբառոյ 'ի Յովսէփ Ս. Յօհաննիսեանէ. 'ի Պետրոպոլիս, 1816-ՌԾԿԻ բարձրագոյն հրամանաւ հաստատեալ 'ի տպարանի նորին Յօհաննիսեան, հրամանաւ մեծաւորաց »:

X Բան գործնական, Գործ քանակակ: Ռասնաւոր չափմամբ, 'ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան: Վենետիկ. Ս. Ղազար, 1812:

X Բանադատ. « Տեառն Տեառն Մասթէոսի սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց՝ Բարի մարդ և բարի քրիստոնեայ անուն գրքին դէմ Բողոքականներէն հրատարակուած նոյնանուն գրքին դէմ քննութիւն: Գրեց Յովհաննէս Պրուսացի Տէրոյենց »: Ի Կ. Պոլիս, 'ի տպ. Տէրոյենց, 1866: ? 6

այս — ի Կ. Պոլիս 1860 էջ 162 16411

\* Բանալի արքայութեան. աղօթագիրք *ամեն հասակի, վիճակի ու աստիճանի անձանց համար*: Գրեց Հ. Գրիգոր Վ. Գովրիկեան: Վիէննա, Մխիթարեանց տպարան, 1867:

\* Բանալի բնական երեւութից: Օ. Պուլվեր անգղիացւոյն: Վենետիկ, Ս. Ղազար, 1869:

\* Բանալի գործնական քերականութեան հայկական լեզուի: Աշխատասիրեց Ա. Մ. Վ. Գարաջաշեան: Կ. Պօլիս, Արամեան տպարան, 1871:

\* Բանալի կամ Պատասխանատուոր մտաւոր կամ գրաւոր թուաբանութեան: Կ. Պօլիս, 1848:

\* Բանալի. (Ընթերցարան Ա). Սուրբ Գիրքը բանալու, կամ Իբրին գասեր նոր կարգաւ սկսողներուն համար: Նոր-Յորք, 1879:

Բանալի համատարած աշխարհացուցին մերոյ նորածնի. « Ձոր 'ի Լոյս էած հայկական տառիւ վեհանձն և սրբափայլ հայրն մեր տէր Թօմաս աստուածազգեստ բարունին վանանդեցի, և առաքելագործ եպիսկոպոսն սրբոյ Խաչին: Շարագրեցեալ 'ի Ղուկասէ ապաշնորհ ջահընկալէ վանանդեցւոյ: Տպիւք և ծախիւք Թօմասու վարդապետի: Շարագրութեամբ քաջ դպրի տեառն Մատթէոսի ներհուն տպագրի Հայոց: Յամի տեառն 1696. յ'Ամսգելտամի »:

\* Բանալի հայերէն շարագրութեան: Գրեց Մ. Մամուրեան: Զմիւռնիա, 'ի տպ. Արեւելեան Մամուլոյ, 1878:

Բանալի ջերմեռանդակերտ.

Ա. Տպ. Ի Կ. Պօլիս, 1701: « Գիրք մտածական աղօթից, բանալի ջերմեռանդակերտ. որ բանայ դգրունս սրտից մեղօք փակեցելոց: Թարգմանեցեալ 'ի լաթին և իտալական լեզուէ 'ի հայ բարբառ 'ի Պետրոսէ վարդապետէ Թիֆլիզեցւոյ, 'ի փառս Աս.

տուժոյ և յօգուտ ազգիս մերայնոյ. 'ի հայրապե-  
տութեան տեառն Նահապետի՝ ամենից հայոց կա-  
թողիկոսի » : Գրքին վերջը՝ հետագայ հրամանա-  
գիրը կը գտնենք. « Ես Մեկքիսեթ վարդապետս՝  
կարողութեամբ և շնորհօքն Աստուծոյ պատրիարքս  
մայրաքաղաքին Կոստանդնուպօլսի՝ տեսի զմաժա-  
կան աղօթս զայս և հաւանեցայ. զի գտի զսա լի առ-  
տուածային բանիւք յօրինեցեալ. 'ի սրբոց մեծաց  
վարդապետաց եկեղեցւոյ. վասն որոյ ետու զհրա-  
ման զի տպագրիցի » : Այս հրամանագրէն զատ մաս-  
նաւոր յիշատակարան մ'ալ ունի գիրքը, յորում  
բաց յայլոց բանից, կ'ըսէ... « Աւարտեցաւ գիրքս  
մտածական աղօթից. զոր թարգմանեցեալ եղև սա  
'ի լատին լեզուէ 'ի հայ բարբառ. 'ի Պետրոսէ վար-  
դապետէ Թիֆլիզեցւոյ, 'ի խնդրոյ ոմանց եղբարց.  
կամակեցութեամբ և հաւանութեամբ մեծաւորաց  
տպագրեցեալ 'ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլս,  
աշխատասիրութեամբ և սրբագրութեամբ ումեմն  
չնչին բանասիրի : Արամեան թուին ՌձԾ, յունիսի  
ամսոյ իը, 'ի տպարանի սրբոյն Էջմիածնի և սրբոյն  
Սարգսի զօրաւարին... » :

Բ. Տպ. Ի Մարտիլիա : « Գիրք... և սուրբ Էջ-  
միածնայ կաթողիկոսութեան տեառն Աղեքսանդրի  
Ջուղայեցւոյ՝ փոխանորդին Լուսաւորչի. 'ի թուա-  
կանութեան Փրկչին Քրիստոսի ՌՁԸ և Հայոց ՌձԾԵ.  
սեպտեմբերի, 'ի Մարտիլիա քաղաքի » : Մեկքիսեթ  
պատրիարքին հրամանագրէն ետքը՝ նոր յիշատակա-  
րան մը ունի այս տպագրութիւնը. « ... Կատարե-  
ցաւ փոքրիկ գիրքս որ կոչի Մտածական աղօթս՝ ըստ  
եկեղեցւոյ մեծի Լոռմայ, 'ի թուականի մարդեղու-  
թեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ՌՁԸ. հոկ-  
տեմբեր Ի, աւարտ եղև 'ի քաղաքն Մարտիլիայ : Եւ  
այս մտածական աղօթս ես Խոշկաշինեցի Մինասի  
որդի Յովանէսս պասմայ տվի ինձ յիշատակ և ծնո-  
ղաց իմոց և ազգականաց իմոց. ով ոք հանդիպի կամ  
կարգայ և օրինակէ՝ մէկ հայր մերիւ յիշէ... Եւ ես  
տրուպ Պետրոս վարդապետս Թիֆլիզեցի զայս մտա-  
ծական աղօթս թարգմանեցի 'ի լատին լեզուէ 'ի  
հայ բարբառ : Ով ոք կարգայ և շահի իղձս հոգևորս,  
յիշեսցէ զիս և զծնողս իմ » :

վաստակ գործոյ Հայկազեան բառարանին երազել-  
քանզի վճարեալ զգործս զայս 'ի սկզբանէ մինչև  
ցվախճան առ պսակ կատարման նորա վաղվազեաց,  
ձեռնամուկ լինել 'ի յառաջաբանութիւն բառարա-  
նին. սակայն ըստ վերնախնամ տեսչութեան նահան-  
ջեցաւ 'ի փութոյ իւրմէ, վասն զի յաղագս օրհասին  
մահու կանխելոյ՝ ախտացեալ զախտ ցաւագին, ան-  
կաւ 'ի մահիճս. և իբրև անհնարին եղև ինքնին վը-  
ճարել զցիտեալն իւր, կոչեաց զձեռնասուն աշա-  
կերտս իւր, և պատուիրեաց նոցա 'ի դիմաց իւրոց  
յօրինել զյառաջաբանութիւն գործոյս, տուեալ  
նոցա յառաջագոյն զնիւթն զառյինքենէ ընդ ժա-  
մանակս ժամանակս հաւաքեալ: Եւ նոքա այն ինչ  
զպատուէր հրամանին ըստ նորին կամաց 'ի գլուխ  
հանին. և գեռ 'ի պատրաստի էին 'ի տպագրութիւն  
յուզարկել... 'ի կենաց աստի փոխեցաւ, վախճա-  
նեալ ամաց իբրև եօթանասուն և չորից, յամի փըր-  
կութեան մերոյ 1749 ապրիլի 27»: Այլ յաւելուն  
գարձեալ. « Թէ զինչ է կազմել զԲառագիրք՝ ոչ ոք  
գիտէ, բայց միայն նա որ յօրինեալ իցէ երբէք  
զնոյն: Եւ այս՝ եւս քան զևս ծանրանայ մարդոյ, ե-  
թէ ոչ ունիցի առ ընթեր զԲառարանս ինչ, կամ ոչ ոք  
իցէ յառաջեալ քան զնա՝ 'ի յօրինել զնոյն ըստ կար-  
գի. այլ ինքնին՝ 'ի ընուստ նորոգ կազմիցէ. որպէս  
մեզ յայսմ աշխատասիրութեանս՝ գիպեցաւ... Սկը-  
տեալ յամի տեառն 1727, հասաք 'ի տառն Ե. և 'ի  
գիպիլն մեր մեծամեծ զբաղանաց՝ խափանեցաք մին-  
չև ցամե 1742. և ապա վերստին բուռն հարեալ՝ հա-  
սուցաք յաւարտ գործակցութեամբ աշակերտաց  
մերոց, յամի տեառն 1745 »:

Հատոր Բ. « Բառարան հայկազեան լեզուի, Հա-  
տոր երկրորդ: Յորում նախ պարունակին մնացորդք  
գրաբառ բառից. երկրորդ՝ բառարան յատուկ ա-  
նուանց. երրորդ՝ բառագիրք 'ի գրաբառ լեզուէ յաշ-  
խարհաբառն. և չորրորդ յաշխարհաբառ լեզուէ 'ի  
գրաբառն, որոշեալք 'ի միմեանց հատուածովք այ-  
բուբենից: Արարեալ բազմաթիւն և աշաղուրջ ճգա-  
նօք յաշակերտաց ամենապատիւ տեառն Մխիթա-  
րայ մեծի. Աբբային և բարունապետին Սերաստա-  
ցւոյ: Եւ յոգնաշան երկասիրութեամբ տպագրեալ

հրամանաւ Գերապատիւ տեառն Ստեփաննոսի Աբ. բայի՝ իւրուձին յաջորդի, վարդապետին Կոստանդնուպօլսեցւոյ: Ի փառս Ամենափրկչին տեառն բոլորեցունց, և ՚ի պատիւ ամենօրհնեալ սուրբ Աստուածածնի . . . ՚ի Թուականութեան հայոց ՌԾԹԸ, ՚ի Վենետիկ, ՚ի ապ. Անտոնի Պօլթօլի»:

Աւաջին հատորն սիզբնաւորեալ է ապագրիւ ՚ի կենդանութեան Մխիթարայ բարունապետին, և յետ փոխման նորա յանգեւեալ: Քիւսաւոր գործակից ՚ի սոյն, և իբր աշոյ բազուկ հեղինակին, եղև Վ. Հ. Մկրտիչ վարդապետն մեր Անանեան Կոստանդինուպօլսեցի. ըստ իմիք և Վ. Հ. Սիմոն վարդապետն Տայիսիմոնեան: Այլ զբառս ինչ իրաց և աստեղաբաշխութեանց, զոր օրինակ կլինայ, Հայաստան և այլն, հիմնաբար արար Վ. Հ. Զաքարիա վարդապետն Ակնեցի:

Երկրորդ հատորն՝ յորում են բառք Մնացորդաց, Յատուկ անուանց՝ կրկին, այսինքն Աստուածաշնչի և արտաբոյ Աստուածաշնչի, ՚ի Գրաբառէ յաշխարհաբառ, և յԱշխարհաբառէ ՚ի գրաբառ, ապագրեցաւ յետ ժամանակաց: Ի ճակատ սորա ընդհանրապէս գնի՝ արարեալ յաշակերտաց տեառն Մխիթարայ մեծի արքայի. այլ ՚ի մասնաւորի՝ գիւսաւոր աշխատօղն ՚ի Մնացորդաց Բառգիրքն եղև նախալիչեալ Հ. Սիմոն վարդապետն, ընդ կանխագրեալ Հ. Մկրտիչ վարդապետի: Ի յատուկ անուանցն Աստուածաշնչի՝ Վ. Հ. Իգնատիոս վարդապետն Խաչատուրեան, Կոստանդինուպօլսեցի. ըստ իմիք և վերոյիշեալ Հ. Զաքարիա վարդապետն: Ի Գրաբառէ յԱշխարհաբառն՝ այլ և այլ անձինք ընդ հոգաբարձութեամբ Հ. Մկրտիչ վարդապետի: Նոյնպէս յԱշխարհաբառէ ՚ի Գրաբառն, այլ և այլ անձինք ըստ նմին օրինակի:

Բառգիրք Հայոց. « Արարեալ ՚ի սուրբ Էջմիածին՝ Երեմիայ վարդապետէ. և ես Սարգիս եպիսկոպոս աշխատասիրեալ և զբառս Աստուածաշունչ գրոցն ընդ սմա միաւորեալ. որ և ընթերցողացն աստուածաշունչ գրոց բաւական է լիով: Տպագրեցաւ . . . ՚ի յԱլիկոնայ քաղաքի, և Թուականութեանս



Հայոց Ռիփէ. և 'ի Թուին Փրկչին, 1698 յունիս » :  
Ք. Տպ. « Բառգիրք Հայոց ... տպեցաւ 'ի Սու-  
րիկոնայ քաղաքի, և Թուակոնութեանս Հայոց,  
ՌՃՀԷ » :

Յետոյ առանձինն խորագրով՝ Վարդանայ վարդապետի անունը կրող Աշխարհագրութիւնը. « Արա-  
րեալ է աշխարհացոյց նորոգ Թարգմանչին, և եր-  
կրորդ լուսաւորչին Վարդանայ վարդապետի, պարզ  
և համառօտ տեսութեամբ » :

Քառարան նոր հայկազնեան լեզուի. « Եր-  
կատիրութիւն երկոց վարդապետաց յաշակերտու-  
թենէ մեծին Մխիթարայ արքայի. Հ. Քարրիէլի Ա-  
ւետիքեան, Հ. Խաչատրոյ Աւերմիչեան և Հ. Մկրտ-  
չի Ազեբեան: Տպագրեալ յառաջնորդութեան ա-  
մենապատիւ տեառն Առքիասայ Սոմայեան արհի-  
եպիսկոպոսի Սիւնեաց և ընդհանրական արքայի » :  
Վենետիկ, 'ի տպ. սրբոյն Ղազարու, յամին 1836,  
ԹՄՁԵ :

Աշխատասիրողք այս մեծ և բազմահմուտ բառ-  
գրոց, ընդարձակ Յառաջարանին մէջ կ'ըսեն. « Ոչ  
անյայտ՝ այլ յայանի գուշակութեամբ նշանակեալ  
էր 'ի յառաջարանի նախկին Բառարանին՝ կազմու-  
թիւն երկրորդիս... զի տեսանէին 'ի փորձոյ զի ամ-  
բաս ամէ 'ի վեր երևին հին մատենիք ազգիս յան-  
կարծելի վայրաց, յորոց ելանն նորանոր բառք և  
ոճք նախնեաց՝ արժանիք նորոգ յաւելուածով պերճ  
և պանծալի ընծայելոյ զազգային բառագիրս... »

« Սկիզբն արարեալ (յօրինմանն) յամի տեառն  
իբր 1784, և աւարտակիտեալ 'ի 1834, յընթացս  
ամբողջ յորելինի յիսնամեան Ժամանակի, մերթ  
ընդ մերթ ընդհատութեամբ յերեսաց այլ և այլ  
կարևոր գործոց գրաւորաց և բանեղինաց... որով  
և գործս զքեցաւ զբազմօրինակ յեզափոխութիւն » :

« Յերկարէր գործն 'ի սկզբան անդ՝ առ 'ի կարող  
լինել վերձանել և քաղել զբառս կարևորս 'ի նորա-  
գիւտ մատենից. և զի 'ի սկզբան անդ՝ լոկ զանուանս  
և զտեղիս մատենագրաց կամք էին նշանագրել ըստ  
ոճոյ նախկին Բառարանին, ապա... լաւ ևս գատեալ  
եզև վերագիր առնել յաճախութեամբ զբուն իսկ

վկայութիւնս նախնեաց փոխանակ առ 'ի մէնջ երկար բացատրութեանց. որով և ընդ կրկին գովելի ծանր աշխատութեան կրկին մեծացաւ Բառարանն. և այսպիսի օրինօք կարծեալ եղև՝ որպէս այն թէ յաւարա հասեալ իցէ նորս Բառարանն ...

« Աւահա յեա այնորիկ գային հասանէին 'ի ձեռս մեր այլ մատեանք՝ գանձարանք լեզուիս Հայոց անտակնկալելիք ... Թող զի յաւելան զանազան օրինակք գրոց նոյն մատենագրաց արգէն սաացելոց. զորս ըսա կարի պէտք եղեն բազդատել առ 'ի գիւտ ստուգագոյն ընթերցուածոյ. և ապա սփռել զայն ամենայն ճիսութիւն 'ի վերայ նախապատրաստեալ գործոյն. մինչև տիրապէս համարել ասել թէ արգ շատ է, բունն հարցուք 'ի տպագրութիւն. զի եղեալ էր գրչագիր օրինակ մեր երկոտասան հատոր երևելի. ոյր կիսոյ չափ գողցես ունէր լինել տիպն 'ի հինգ կամ 'ի վեց հատորս 'ի ձև առաջնոյն: Բայց մ'կարէր ծախս առնել այսպիսում գործոյ... Արդա յաղթէր խորհուրդն առ Ժամն. կարճել զձեկայութիւնս՝ գրեա թէ առ հասարակ, կամ ծաղկաքող եւեթ նշանակել. Թօթափել զբազմալեզու կատարելութիւն... »

« Այսպէս յեա կրկին և երեքկին փոփելոյ, կարկտանելոյ և նորոգելոյ զգործն, որպէս ընդ համատարած ծով վերստին նաւարկելով՝ ել 'ի գլուխ երկասիրութիւնն յիսնամեան » :

Բառարան (առձեռն) Հայկազնեան լեզուի. աշխատասիրեալ 'ի Հ. Մկրտիչ վարդապետէ Աւգերեան: Վենետիկ, Ս. Ղազար, 1846:

Նրկորդ տպագրութիւնն (անդ) 'ի 1865, որուն սկիզբը գրուած համառօտ Գիտելիքը կը վկայէ. « Ի գլուխ երկորդի տպագրութեան Առձեռն Բառարոց Նայկազնեան լեզուիս զայս եւեթ 'ի հարկէն ասեմք, զի որ ինչ նշմարեալ էին ցարգ 'ի մատենի գողցելիք փոյթ յանձին կայաք կարևոր քննութեամբ ուղղել. և որ ինչ անկան 'ի ձեռս երկասիրութիւնք նախնեաց նորագիւտք, կամ ոք խուսափեալն էր յաչաց 'ի հինն, յաւելաք բառս աւելի քան զհինգ հազար, և ոճս բանից բազումս » :

Բառարան յիտալական լեզուէ 'ի հայ եւ 'ի տաճիկ բարբառ: Հնծայեալ 'ի լոյս երկասիրու-  
թեամբ տեառն Հ. Մանուէլ վարդապետի Ջախջա-  
խեան Վիւմիւշխանացւոյ 'ի Մխիթարեան Միաբա-  
նութենէ: Հրամանաւ աստուածապատիւ արհի-  
եպիսկոպոսի և արքայի Տեառն Ստեփաննոսի վար-  
դապետի Ագոնց: 1804, 'ի Վենետիկ, 'ի գործարա-  
նի վանաց սրբոյն Ղազարու:

Dizionario Armeno-Italiano-Turco. Composto dal P. Emmanuele Ciakciak, Dottore del Collegio de'Mechitaristi nell'Isola di S. Lazzaro di Venezia.

« Ի յօրինել անգ շ Բառարանս, կ'ըսէ հեղինակն 'ի Յառաջաբանին, ընարեւի գատեցաք կարդել զսա ոչ 'ի պէտս գեռավարժից կամ ուսմկաց եւեթ, ... այլ առաւել գէտ ակն կալաք 'ի պէտս զարդացելոց և հետամուտ բանասիրաց, որք գեգերին' կամ գեգե-  
րել ախորժեն յազգս ազգս դպրութեանց, և 'ի զա-  
նազան իտալական մտտեանս նախնի պերճախօս մա-  
տենագրաց, և 'ի բազմանիւթ գիրս արգեաց ամենա-  
զան գիտութեանց և արհեստից, 'ի հմտանալ և 'ի  
փոխագրել զոյնոսիկ 'ի հայ բարբառ: Յայն սակո  
ոչ շատացեալ միայն ընդ բազմագանձ և ընտրելա-  
գոյն վաղեմի Բառգիրք հռչակաւոր ճեմարանին  
Քռուսքայի որ 'ի Տիօրէնցա, ընդարձակագունին  
փափաքեցաք՝ բիւրաւորս հաւաքելով 'ի նոյն բառս  
նորս, ոճս բազմադիմիս, և նորանօր նշանակու-  
թիւնս նոյն բառից, զորս միանգամ յաւել ընտիր  
Բառարանն որ 'ի պէտս արքունի գպրոցաց Դուռի-  
նոյ, և ճոխագոյն ևս 'ի նորումս բարեացապարտն  
Ֆրանչիսկոս տէ Ալպերգի յիւրումն երկլէզուեան  
իտալական և 'ի գաղգիական նոր Բառարանի »:

Բառարան համառօտ յիտալականէ 'ի հայ եւ 'ի տաճիկ, աշխատսիրութեամբ Հ. Մանուէլ Վ. Ջախջախեան Մխիթարեանց: Ի Վենետիկ, 'ի գոր-  
ծարանի Մխիթարեանց, 1829:

Nuovo Dizionario Italiano - Armeno - Turco, composto dal P. Emmanuele Ciakciak della Congregazione dei Mechitaristi di S. Lazzaro. Venezia, dalla Tipografia Armena di S. Lazzaro, 1829.

« Յօժարամտութիւն ազգիս, կ'ըսէ յառաջարանն, 'ի փոյթ լեզուագիտութեան իբրև 'ի մի միայն հնարալուսաւորութեան մտաց 'ի վարժա ուսմանց և կենցաղօգուտ տեղեկութեանց՝ ծանուցաւ առաւել 'ի վերջին ամս, յորս 'ի խնդիր էր կարօտիւ ընդարձակ իտալական բառարանին տպագրելոյ 'ի մէնջ 'ի 1804. յորոյ 'ի սպառիչն՝ հարկ եղև նորոգ ուղղագրութեամբ անեցուցեալ զնոյն՝ ընդարձակագոյն եւս պատրաստել 'ի տիպ վայելուչ :

« Բայց 'ի կարօտութիւն և 'ի պէտս հայեցեալ փոփաքողացն՝ օգտակար և կարևորագոյն իսկ գտեցաւ 'ի ժամուս կանխել մատուցանել զհամառօտութիւն այնր ընդ անուամբ Համառօտ Բառարան իտալականէ 'ի հայ և 'ի տաճիկ, փոքրագիր յուժալա վայելչատիպ, գիւրատար և գիւրաստացիկ ամենեցուն » :

Բառգիրք 'ի բարբառ Բայ եւ իտալական, յօրինեալ 'ի Հ. Մանուէլ վարդապետէ Զախախեան 'ի Մխիթարեան միաբանութենէ : Յառաջնորդութեան Տեառն Սուքիասայ վարդապետի Սոմալեան արհիեպիսկոպոսի Սիւնեաց և ընդհանրական աբբայի Մխիթարեան ուխտին : Ի Վենետիկ, 'ի տւպարանի սրբոյն Ղազարու, ԹՄՁ :

Dizionario Armeno-Italiano, composto dal P. Emmanuele Ciackciak, dottore della Congregazione Mechitaristica. Venezia, Tipografia Mechitaristica di S. Lazzaro, 1837.

« Ընդ արս ականաւորս, կ'ըսեն հրատարակողք 'ի յառաջարանին, որք զարաւեան ազգին զգիտութիւնս փութացան բարգաւաճ առնել, եկաց արդարև և Մատենագիրս... որ խոհական կշռութեամբ ընտրեաց անդստին վաստակել առ 'ի լեզուագէտս զհայրենիս իւր յարգարել. որով միանգամայն անձամբ լինիցին տեաք ամենայն մատենից Յւրոպիոյ, և մի կարօտ իցեն մուրացածոյ գրովք 'ի ձեռն թարգմանաց ոմանց տակաւ ճոխանալ : Այսու քաջախորհուրդ մտօք միայնակ առաջին հանդիսացեալ յայս երկս վաստակոց և կատարեալ զառաջին հատորն՝ թէպէտ ոչ ըստ ամենայն ըզձից սրտին, զոր յՅւրո-

պացւոց հայերէնտգէտքն և այլք իսկ՝ բազում գրուածեօք յիշատակեն 'ի բան և 'ի գիր, ապա զերկրորդ հատորոյս բունն եհար . յոր առաւել քան յառաջինն բազում քրտունս եհեղ, յայս ձև վայելութեան 'ի վեր հանել . և յայն անհնարին տա ժանմունան սիոփուծն իւր այն էր միայն տեսանել կատարեալ զմատենագրութիւն իւր : Եւ մինչքեռ յառնէ յայսպիսւոյ բազում ձրիւք ճոխացելոյ ակն ունէր Հայաստան զայլ եւս արգիւնան տեսանել, և նա իսկ այն ինչ յամրոկ գործոյս աճապարէր . . . աւանդ, զի և ոչ զտպագրութիւն մատենիս 'ի վախճան հասուցեալ, յանկարծ 'ի մահուանէ յափշտակի՝ անմահ յիշատակ զայս թողեալ հայկազնեանս տոհմի » :

Բառարան Անգղիարէն եւ Հայերէն, աշխատասիրեալ 'ի Հ. Յարութիւն վարդապետէ Աւգերեան . ձեռնտուութեամբ ասպետի Յովհան . Պրէնտեան Վ. Ա. : Հատոր Ա. ի վէնետիկ, տպագրեալ 'ի գործատան վանաց սրբոյն Ղազարու, ՌՄՀ :

A Dictionary English and Armenian by Father Paschal Aucher D. D. with the assistance of John Brand Esqre A. M. Vol. I. Venice, printed at the press of the Armenian Academy of S. Lazarus, 1821.

« Ի մէջլէզուացն Եւրոպայ, կ'ըսէ Յառաջարանն, թէ և ոչ զառաջինն, բայց զկարևորագունին ունի տեղի անգղիականն բարբառ . 'ի սակս իւրուծն պիտանութեան 'ի համաշխարհական վաճառս, և 'ի բազմագիծի հրահանգս գիտութեանց և արուեստից :

« Ապաքէն զկնի ընծայելոյ մեր 'ի լոյս զիտալական և զԳաղղիական բառարանս՝ ընդ հայկականիս, 'ի գէպ էր մեզ թեւեղիտել և յանգղիականն . . . Այլ որպէս յամենայն գրաւոր վաստակս մեր, նոյնպէս և յայսմ յաւէտ իմն պէտս ունէաք բարեսիրացն օժանդակութեան . . . Զառաջինն Մի-Լօրտ Պայրըն, և Եգուարգ Լօմպ ազնուական անգղիացի, ուսեալ զմերս բարբառ՝ ձեռնտուութեամբ և արգեամբք իւրեանց ետուն մեզ ընծայել 'ի լոյս զկրկին Անգղիական-Հայերէն, և Հայերէն-Անգղիական քերա .

կանութիւնս՝ յօգուտ երկաքանչիւր ազգացս : Իսկ ապա Յովհաննէս Պրէնս՝ միւս ևս ազնուական ծնունդ Անգղիոյ, և վարժապետ արուեստից՝ ՚ի Կան-ասաբրիկեան համալսարանի, հայերէնագէտ և բարենախանձ ևս գտեալ՝ յորդորեաց զմեզ, և ձեռն-տու ևս եղև արդեամբք յաշխատասիրութիւն նաև Անգղիական-Հայերէն, և Հայերէն-Անգղիական Բառարանաց : ... Յաշխատասիրութեան անգ առաջիկայ հատորոյս՝ կալաք՝ մեզ առաջնորդ զԲառարանն Ճոնսըն (Johnson) գերահռչակ մասեննագրի առ անգղիացիս » :

Երկրորդ տպագրութիւն ՚ի Վենետիկ, ՚ի տպարանի Մխիթարեանց, 1868 :

Բառարան Հայերէն եւ Անգղիական, աշխատասիրեալ ՚ի Յովհաննէ Պրէնտեան Անգղիացի ասպետէ Վ. Ա. ձեռնտուութեամբ Հ. Յարութիւն վարդապետի Աւգերեան : Հատոր Բ. ՚ի Վենետիկ, տպագրեալ ՚ի գործատան վանաց սրբոյն Ղազարու, 1877 :

A Dictionary Armenian and English by John Brand Esq. A. M. with the assistance of Father Paschal Aucher D. D. Vol. II. Venice, printed at the press of the Armenian Academy of S. Lazarus, 1825.

նեալ 'ի Հ. Պետրոս վարդապետէ Մինասեան, յա-  
շակերտաց Մխիթարայ արքայի: Վենետիկ, 'ի տպ.  
սրբոյն Լազարու, 1854:

\* Հրահանգ սիրոյ: Երուսաղէմ, 'ի տպ. առաքե-  
լական աթոռոյ սրբոց Յակովբեանց:

\* Հրանտ (Ասատուր) Պատանեկան ներշնչումներ:  
Կ. Պօլիս, 1876:

\* Հրաշալիք բնութեան էմէ Մարգէն գաղղիա-  
ցւոյ . (Թարգմանուած 'ի հայ երկասիրութեամբ  
Քարրիէլի Գրասէրեան: Ա. Բ. Հատոր: Կ. Պօլիս,  
1870:

Հրաշալիք սրբազնութեան: Տես Պատմա-  
գիրք հոգւոց:

Հրաշից գիրք . « Գիրք Հրաշից ամենօրհնեալ  
սուրբ Աստուածածնին . հաւաքեալ (Թարգմանաբար  
'ի հայ բարբառ 'ի զանազան պատմութեանց իտա-  
լացի հեղինակաց . 'ի Հ. Զաքարիայ վարդապետէ  
Ակնեցւոյ, յաշակերտէ Մխիթարայ մեծի արքային  
Սեբաստացւոյ: Եւ տպագրեալ... ծախիւք և ար-  
դեամբք բարեպաշտօն և քաջատոհմիկ Շահրիմա-  
նեանց երկոցունց եղբարց հարազատաց՝ Բարաղա .

→ Հրաշալիք բնութեան յօրինեց Վարդապետ  
Կ. Կոստանդնուպօլիս 1820  
էջ 124 12x16

մեան պարոն Յովսէփին և պարոն Զաքարին ... Յամի փրկչին 1772, ապրիլի 25. Իսկ 'ի Հայոց Թուականին ՌԻՄ: Ի Վէնէտիկ, 'ի տպարանի Դեմետրեայ Թէոզոսեանց » : 52 638 11X17

Հրաւէր 'ի Խորհրդարանէ Ռուսաց Աստուածաշնչոյ Ժողովոյն. (Յովսէփ Վրլժ քարոզիչ առաքելական) : Հրամայեալ է տպագրել Յովհաննէս ապոստոլիկոսին Հայոց Ռուսաստանեայց յԱտրախան, 'ի տպարանի սուրբ Էջմիածնի, 1821 :

\* Հրաւէր միութեան : — Ե. Տ. Վրթանէս Գրիգորեան : Նամակ Ա. Նամակ սիրոյ առ լրութիւն հայ բողոքականաց : Կ. Պօլիս, 'ի տպ. Յ. Մինասեան, 1869, 1876 :

X

\* Հրաւէր սիրոյ, որ առաջի առնէ զպատասխանի խնդրոց ինչ ինչ մասանց հաւատոյ ըստ լուսաւորչական վարդապետութեան Հայաստանեայց առաքելական սուրբ եկեղեցւոյ :

Բ. Տպ. Ի Փարիզ, 1857. յԱրամեան տպարանի : — Բացայայտութիւն մտաց Հրաւէր սիրոյ տեւորակին, 'ի բանից սրբոց ուղղափառ վարդապետաց : Տպեալ 'ի պատրիարգութեան ական Պօլոսի արհիեպիսկոպոսի Անդրիանուպօլսեցւոյ : Յամի տեառն 1812, մարտի 20 : Ի Կոստանդնուպօլիս, 'ի տպարանի սուրբ Աստուածածնի պատրիարգանիստ Մայր Եկեղեցւոյ :

Հրաւիրակ Արարատեան, յօրինեալ 'ի չափս հայկականս 'ի Մկրտչէ Խրրմեան Վանեցւոյ, 'ի խնդրոյ և յարդեանց մեծարու Յովհաննէս աղայի Կտրապետեան Այվատեանց : Ա. Տպ. Ի Կ. Պօլիս, 'ի տպ. Յովհ. Միւհէնտիսեան, 1850, ՌՄՂԹ :

Բ. Տպ. Կ. Պօլիս, Տպագր. Ե. Մ. Տնտեսեան, 1876 :

Հրաւիրակ երկրին Աւետեաց, յօրինեալ 'ի չափս հայկականս 'ի Մկրտչէ Խրրմեան Վանեցւոյ. սրբոյ քաղաքին քրիստոսաճեմ վայրից փափաքող

Գ Անգայի խոզով ևս աւելի ևս յայտնուի զպատմութեամբ  
Ս. Արամեան յայտնուի ի Կոստանուպօլիս 1420 յայտն թի  
և զայնով Արարատեան յայտնար 52 43 14 79 1/2 (Ձեւովս Վարժ, շատ  
գաւջ հասար թղթ 1 քա/աւ և թիւ ընդհանրեալ) :

վեհ և հեղանձն աստուածասիրի ուրումն հայցեալ,  
և արդեամբք նորին շջմարիտ ազդասիրութեան ըն-  
ծայեալ 'ի լոյս: Ի Կոստանդնուպոլիս, 'ի տպ. Յով.  
հաննու Միւհէնիսեան, 1851, Բ8:

Հրաւիրակ մանկանց առ Քրիստոս ?

Հրաւիրակ Մնացականեան 'ի Վարդանայ Սըմ-  
բատեան: Կաշկաթա, 'ի Մարդասիրական Ճեմա-  
րանի, 1817:

Հրիտակ հօր ուրումն առ դստերս իւր. « զգու-  
շաւորութեամբ յանգլիականէ 'ի մերս թարգմա-  
նեալ բարբառ երկասիրութեամբ պարոն Մ. Յ. Ա.  
ղանուրեան մեծարոյ Աթոռակալի և անդամոյ գե-  
րապատիւ Իմաստախնդրեան Միաբանութեան: Հըռ-  
չակեալ ծախիւք օժանդակ ապարանիս ... արտօ-  
նութեամբ նորին Միաբանութեան 'ի Կաշկաթա 'ի  
1821: Տպագրեալ յընծայեալ տպարանի Յորդա-  
նանեան պարոն Պօզոսի 'ի Յ. Տէր Յակոբեան »:

Հրովարտակք բարձրագոյնք եւ արձանա-  
գրութիւնք վերաբերեալք առ եկեղեցի Հայոց 'ի  
Ռուսաստան: Մոսկուա, 'ի տպ. Ճեմարանի արևե-  
լեան լեզուաց Տեարց Լազարեանց, 1842:

Հրովարտակք եւ կարգադրութիւնք և ցու-  
ցակ Լազարեան Ճեմարանին արևելեան լեզուաց 'ի  
Մոսկով. և կանոնք նորին բարձրագոյնս հաստա-  
տեալք: Մոսկուա, 'ի տպ. Տեարց Լազարեանց, 1852:

Չայն բազմաց, ձայն Աստուծոյ: Վաղարշա-  
պատ, 'ի տպ. սրբոյ Էջմիածնի, 1871:

Չայնաբանութիւն. Տես թանգարան հա-  
սարակաց:

Չայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ պա-  
տարագի. զոր ձայնագրեաց դասատու հայկական

*Հայնաբանութիւն Տես թանգարան հասարակաց  
Վաղարշապատ սրբոյ Էջմիածնի տպ. Կոստանդ  
Չայնագրեալ երգեցողութիւնք սրբոյ պատարագի  
զոր ձայնագրեաց դասատու հայկական 1851 68*

Ճայնագրութեան Պ. Նիկողայոս Ս. Թաշճեանց,  
Կոստանդնուպօլսեցի: Ի Վաղարշապատ. 'ի տպա-  
րանի սրբոյ կաթողիկէ Էջմիածնի ՌՅԻԳ, 1874:

Տես Դասագիրք եկեղեցական ձայ-  
նագրութեան Հայոց:

Ձայնական երաժշտութեան սկզբունք, զբա-  
րատանց տղոց համար: Աշխատասիրեաց Պետրոս  
Խաչատուրեան: Յ' Երուսաղէմ, վիմագրութիւն Կ.  
Յակօբեան, 1864:

\*Ձայն բարբառոյ Հայաստանի վանեցւոյն առ-  
ամենայն աղբս. Ն. Առաւելեանց: Թիֆլիզ:

\*Ձայն ընկերասիրական, լրագիր. խմբագիր Պ.  
Ա. Հայկունի: Կ. Պօլիս, 1863:

Ձայն ճշմարտութեան: Կղեր և իրաւասու-  
թիւն: Կ. Պօլիս, 1868:

Ձայն Քրիստոսի եւ հաւատացեալ հոգւոյն.  
Շարագրեալ 'ի Մխիթարայ արքայէ մեծէ. և առ-  
պեալ ծախիւք բարեպաշտ գաղատացւոյ խօճայ  
Սարգսի Մուրսաեան և խօճայ Խաչատրոյ Գամա-  
ղիէլեան, և փեսայի նորա Խօճայ Յովհաննիսի: Ի  
Թուին Հայոց ՌՄԲ. իսկ 'ի Թուին Քրիստոսի 1753...:  
Ի Վենետիկ, 'ի տպ. Որլանտեան Ստեփաննոսի »:

Ի. Տպ. « Ձայն Քրիստոսի և հաւատացեալ հո-  
գւոյն, շարագրեալ 'ի Մխիթարայ արքայէ մեծէ:  
Տպագրութիւն երկրորդ, յամի տեառն 1810. և 'ի  
Թուին Հայոց ՌՄԵԹ, 'ի Վենետիկ, 'ի վանս սրբոյն  
Ղազարու »:

Հետը տպագրուած է նաև Խոնդունն վարոց: Տես  
'ի կարգին:

Ձայնքաղ շարական.

Ա. Տպ. Միմագրտամ յամի 1669. « Ենորհօք ա-  
մենազօրին Աստուծոյ, և ողորմութեամբ տեառն մե-  
րոյ Յիսուսի Քրիստոսի, և յօժանդակութեամբ Հո-  
գւոյն սրբոյ պարգևատուի, ըսկիզբն եգաք երաժըշ-

*X → Զայն Արքայապետոյ կամ փառք և ամենազօր  
աղօսիչ առ մեզս ինչ և առ յոյսս Արքայ-  
ապետոյ առ մզբարեպետ բարոյ խաչք Կ. Յովն  
Մ. 3. 7 Իտիմու 1869 ԵՂ 37. Վրացի յանգրագր*  
15 X 23

աական երգս շարականաց գեղեցիկ յօրինեալ 'ի սրբ  
բոց մերոց վարդապետաց, 'ի լուսաւորութիւն և 'ի  
պայծառութիւն եկեղեցեաց Հայաստանեայց, ըստ  
աւուրց պատշաճին զտերունեացն և զսրբոցն զօր  
հնօւթիւնն քաղուածովք եգաք զի մի ոք աշխա  
տիցի որոնել. նաև զգիշերապաշտօնն, զտէրու  
նեաց և զմարտիրոսացն, և զաւուր պատշաճն իւր  
սարգքն եգաք կարգաւ: Տպեցեալ յԱմագէլօտա  
մուժ քաղաքի, 'ի Թուի փրկչին 1669ին, յամսեանն  
յուլիսի Էթ. իսկ Հայոց ՌձԺԹ. և Քրիստոսի փառք  
յաւիտեանս ամէն » :

Յիշատակարանն կ'ըսէ. « ... Աւարտեցաւ տառս  
երաժշտական, որ և կոչի Ձայնքաղ շարակնոց ... 'ի  
տպագրարանի սրբոյ աթոռոյն Էջմիածնի և սրբոյն  
Սարգսի զօրավարին և տեառն Ոսկանայ վարդապե  
տի Երևանեցւոյ հանգուցելոյ 'ի Քրիստոս, որ և  
զայս գիրքս ինքն էր սկսեր և մնացեալ էր այնպէս  
կէսգատար: Եւ յետոյ ես նուառաս ամենից Պետրոս  
Ջուղայեցի ծառայելով տեառն Ոսկանայ վարդապե  
տի և ուսայ 'ի նմանէ զարհեստ շարաբարդութեան:  
Եւ սկսեցի զմնացեալն և հատուցի յաւարտ 'ի հայ  
րապետութեան տեառն Եզիազարու ամենայն Հայոց  
կաթուղիկոսի 'ի վայելումն և 'ի պէտս համայնից հո  
գեզարմից մանկանց եկեղեցեաց Հայաստանեաց... »:

Այլ ապ. 'ի Կ. Պօլիս, յամի 1743. « Երաժշտա  
կան երգեցմունք հոգևորականք: Ասացեալ 'ի յըն  
արելագունից սրբոց աստուածայնոց և հոգեբնկալ  
վարդապետացն երջանկաց՝ Հայոց Թարգմանչաց.  
զկարգաւորութիւնս եկեղեցւոյ պայծառութեամբ  
զարգարեալ վայելչացուցանողաց: Սահակ սուրբն և  
Մեսրոպ գովեալք, — մեզ Թարգմանիչ երգօղ նախ  
լեալք. — զեկեղեցւոյ մանկունս վարժեալք, — և  
գանձ անդին զայս այնց շնորհեալք » : — Ձայնքաղ  
շարական յօրինեցեալ և կարգագրեցեալ հանդերձ  
իւրովքն քաղուածովք՝ սակս պարզամասց գիւրին  
վարելոյ. ըստ պատշաճի աւուրն Հայաստանեայց ե  
կեղեցւոյ: Եւ տպագրեցեալ ... 'ի Կոստանդնուպօ  
լիս քաղաքի. հրամանաւ սրբազան Պատրիարգի  
տեառն Յակոբայ աստուածաբանն վարդապետի:  
Յամի մարդեղութեան բանին 1743 և 'ի Թուին Հայոց



1192. 'ի սպարանի կարագեափ սրգւոյ մահտեփ Աստուածասուրբի : Յիշատակարան. « ... Ես կարողութիւն մեզ նուաստեցս հասուցանել 'ի կասարուսնէ վերսփն 'ի լոյս ամեւ ապագրութեամբ զերգարանս զայս սուրբ հոգելի. առ 'ի զարգ. և 'ի պոյծասութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ. և 'ի վայելումն գիւրութեամբ մանկանց իւրոց մաքրափայլեց : Որ համեմատելով առաջին ապագրեցելոցն՝ եթէ 'ի կողմանէ Թղթոյն և եթէ ըստ այլ պիտոյիցն գերազանցէ փոքրք ... » :

Սրբոյն Սարգսի շարականին՝ մասնաւոր հարց մըն ալ կայ ապագրութեանս մէջ, այսպիսի ծանօթութեամբ. « Հեթում Թագաւորի օրինակէն գտաք » :

Երևա այլ ապ. հաւանականարար 'ի Պօլեո, և հնագոյն քան զառաջինն : Մեր ձեռքն եղած օրինակին մէջ ճակատն ալ վերջին Թուղթերը պակաս ըլլալով՝ չենք կրնար օրոշել ժամանակն ալ ապագրութեան գործարանը, որ կարգաւորութեամբ շարականացն աւելի մերձաւոր է Ամագերաամ ապագրուածին :

Այլ ապագրութիւն. « Ձայնքազ շարական, յորում բովանդակին Հայաստանեայց սուրբ և ուղղափառ եկեղեցւոյ հոգեմուտ պաշտօներգութիւնք 'ի փառաբանութիւն Աստուծոյ, և 'ի մեծարանս սրբոց նորա : Բարեկարգեալ ըստ պատշաճի իւրաքանչիւր աւուր՝ հանգերձ խորհրդաւոր քաղուածովք 'ի գիւրութիւն երգեցողաց : Հրամանաւ ամենապատիւ և վեհափառ պատրիարգի Թագաւորեալ մայրաքաղաքիս Աստանդնուպօլսոյ Տեառն կարապետի արքեպիսկոպոսի՝ վերստին ապագրեալ յամի տեառն 1830, և 'ի Թուին Հայոց ՌՄՀԹ, յ'Օրթագիւղ. 'ի սպարանի Պօղոսի Արապեան Ապուլչեխցւոյ » :

169

Ձգողաբանութիւն : Տես Թանգարանի փաստարկաց :

\*Ձգողութիւն Ա. Պետիկին գրքոյկը : Աստանդնուպօլս, 'ի ապ. Նոյեան Աղաւնոյ, 1853 :

X

Ձեռքածութիւն.

այլա

Սուաջին տպ. 'ի Հոռվմ, յամի 1671. « Ձեռքա-  
ծուծիւն յերկինս. պարունակող զգայմանց սրբա-  
զանիցն Հարց և հնագունից իմաստասիրաց: Յօրի-  
նեցեալ աշխատասիրութեամբ Տեառն Յօհաննու Պօ-  
նաի, Վսեմագունոյ Քարաինայի Ս. Ե. Հ. և Թարգ-  
մանեցեալ 'ի հայկական բարբառ 'ի Վարդանայ  
Յունահեան: Յամի ներմարմնութեան տեառն ՌՈՂԱ,  
և ընթուարերութեան Արամազնուոյ ՌՃԻ: Տպագրե-  
ցեալ 'ի մեծն Հոռվմ. ընտպարանուժ սրբազանի Հա-  
մագունմարին զՀաւատոյ »: Է Զ 374, Վրեդյակ 646 - Լուծմայ

Տպ. յԱմսդերտամ, 1705. « Ձեռքածուծիւն ...  
ընթուարերութեան Արամազնուոյ 1120 ... յԱմբու-  
դէլքոտամ »: Յետոյ անմիջապէս յէջն երկրորդ.  
« Յամի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 1705. իսկ  
ըստ Հայոց 1154, օգոստոսի 7, մարգաց 5. յԱմբու-  
դըրտամ քաղաքի տպագրեցաւ այս գիրք վայելուչ  
և մեծաշահ 'ի տպարանի Թօմասու Վանանդեցուոյ.  
Ծախիւք նորին և հաւանութեամբ: Վասն զի գոյր  
նախկնապէս Թարգմանեցեալ քաջարան և յամեն-  
իմաստ Վարդան վարդապետէն 'ի լաթին լեզուէն 'ի  
հայկական բարբառ ... Պարտաւոր Թօմաս ծառայ  
ծառայից Աստուծոյ, լոկ անուամբ վարդապետ »:  
Յիշատակարանն ալ կը յաւելու. « ... Ես անար-  
գիւն և Թափուր յամենայն լաւաց' Թօմաս ծառայ  
եկեղեցուոյն Քրիստոսի 'ի Վանանդայ Գողթնեաց'  
օժանդակութիւն ընկալեալ 'ի վերին նախախնամու-  
թեանցն, տպեցի զքաղցրաճաշակ գիրս Մեծին Վար-  
դինալ Բօնային (զոր եռամեծ Վարդան բաբունին  
լաթին լեզուէ Թարգմանեաց 'ի հայկական բարբառ  
համեղ և ախորժ ոճով), յիմուժ տպարանի, և ծա-  
խիւք իմովք յԱմսդերտամ քաղաքի. յամի տեառն  
1705, հոկտեմբերի 4. և 'ի Թուին Հայոց 1155. նա-  
ւասարդի 9 »: Ճակատին Թուականը Թարգմանու-  
թեան տարին կը նշանակէ. իսկ յիշատակարանին  
մէջ գրուածը՝ տպագրութեան:

Երկրորդ տպագրութիւն 5281

Տես Առաջնորդ երկնից:

Ձեռնադրութեան գիրք. « Գիրք աստիճան  
տալոյ գպրաց և սարկոււագաց և քահանայից, և գա-  
ւազան տալոյ վարդապետացն: Տպեցեալ ... ար-

դեամբք ' և ծախիւք Մէֆայու բարեպաշտօն մահա-  
տի Գրիգորին, 'ի Կոստանդնուպօլիս քաղաքի. 'ի  
Թուին Հայոց ՌԲՃԱ. 'ի տպարանի հանգուցեալ մահ-  
տեսի Աստուածատուրի » : Յէջ 861 նոր ճակատ.  
« Գիրք գաւազան տալոյ աշակերտացն Ճմարիա բա-  
նին քարոզութեան : Նախ զմասնաւորն իշխանու-  
թիւն, որ է չորս աստիճան գաւազանի : Եւ ապա  
զծայրագոյնն՝ որ է տասն աստիճան : Որ լինի բոլորն  
չորեքասան աստիճան վարդապետական ծայրագոյն  
իշխանութեանն քրարեալ և յօրինեալ . . . 'ի լուսա-  
զարդ բանից աստուածաբան մարգարէին Եսայեայ՝  
լուսաւոր մտօք մեկնողօրէն իմն տեսութեամբ կար-  
գաւորեալ : Եւ ապեցեալ 'ի Կոստանդնուպօլիս,  
հրամանաւ և արդեամբ նորին գրասէր Պատրիարքի  
Գէորգ աստուածաբան վարդապետի Ղափանցւոյ » :  
Յիշատակարանն ալ կ'ակնարկէ. « . . . Եղև տպումն  
գրքոյս կամելովն վերոգրեալ սրբազան պատրիար-  
քին Կոստանդնուպօլսի : Որ և կամէր եւս թէ իւր  
արդեամբք լինիցի. որ և 'ի մէջն այնպէս եգաւ. բայց  
յետոյ իրազեկ լեալ Մէֆայու բարեպաշտօն մահ-  
տեսի Գրիգորն, ըստ բարեսէր ըղձին իւրոյ խընդ-  
րեաց 'ի սրբազանէն որ ինքն սացէ զխարձն առ 'ի  
լինել յիշատակ հոգւոյ իւրոյ : Ընդ որ հաճեալ սըր-  
բազանն, ես հաւանութիւն ըստ սիրելոյն զնա՝ այն-  
պէս լինել » :

Տպ. 'ի Թրեառ. « Գիրք ձեռնագրութեան ըստ  
ծիսից Հայաստանեայց : Յորում գնին կարգաւ կա-  
նոնք և արարողութիւնք տուչութեան եօթն աստի-  
ճանաց : Տպագրեալ յամի տետուն 1787. 'ի Թրեաս,  
'ի տպարանի Հարց Մխիթարեանց » :

\*Ձեռնարկ Թուարանութեան աշխատասիրու-  
թիւն վարձելեանի : Տփխիս, Կեդրոնական Կրա-  
վաճառանոց, 1880 :

Ձեռնարկ հաւատոյ : Տես Ստեփաննոս  
Ուռպելեան :

Ձկնորսին հիւղը : Տես Զբօսարան ման-  
կանց :

Զմեռուան իրիկուններ : Տես Մատենա-  
դարան մանկանց :

Ղազար Զահկեցի : Տես  
Աստուածաղէրս :  
Դրախտ ցանկալի :  
Երգարան :

Ղազար Փարպեցի. « Ղազարայ Փարպեցւոյ ա-  
րարեալ պատմագրութիւն 'ի բաժանմանէ Թագա-  
ւորսութեան Արշակունեաց մինչև ջոր մարզպանու-  
թեան Վահանայ Մամիկոնոնոյ : Տպագրեալ յամի  
տեառն 1793 'ի մարտի 22, 'ի Թուահանիս Հայոց  
ՌՄԻԲ : Արդեամբք և ծախիւք երկուց հարազատաց  
Բարազամեանց պարոն Զաքարին և պարոն Յովսէփին  
Շահրիմանեանց ... 'ի Վենետիկ, 'ի վանս սրբոյն Ղա-  
զարու յանուն Անտոնի Պոսթոլի » :

Յառաջաբանին մէջ կը կարդանք. « Յանկալի ա-  
մենայն բանասիրաց ազգիս Ճանաչեմք զգործս Մերոց  
նախնեաց. և 'ի նոսա առաւել զգործս պատմագրա-  
կանս ... Գիւտ այսպիսի հարազատ ազգային պատ-  
մագրաց' շնորհք և պարծանք իւրաքանչիւր ազգաց.  
Իսկ զրկումն յայնպիսեաց կամ կորուստ՝ պակասու-  
թիւն անփոխանակելի, զսր չիք հնար այլուստ լը-  
նուլ ... Յոգունց պատմագրաց ազգիս գերագոյն  
արդարեւ և ցանկալի ամենեցուն համարիմք զառաջիկ  
կայ պատմագիրս Ղազար Փարպեցի, 'Ղազարիկ ձայ-  
նեալ 'ի Սամուելէ, Ժամանակակից անցիցն յիւրմէ  
պատմելոց, 'ի հնագոյն յայնմ հինգերորդ դարու՝  
զոր ոսկի գար ուսումնասիրութեան ազգիս արժան  
է կոչել. աշակերտ Աղանայ Արծրունեոյ, և ունկըն-  
դիր այնոցիկ արանց՝ զորս հիմունս և ազբիւրս պայ-  
ծառութեան հայկազեան լեզուիս պարտ է անուա-  
նել. 'ի կարգս առաջին պատմագրաց, զկնի Եղիշէի  
գասեալ 'ի Տարօնեցւոյն, 'ի Սամուելէ և 'ի Կիրա-  
կոսէ ...

« Սորայս պատմութեան կարգ զճիտ, յօրինուած  
չարագրութեան քաղցր, և որպէս թուի 'ի տեղիս  
տեղիս աշխարհիկ և ընտանի ասացուած այնր Ժա-

մանակի՝ այլ յստակագոյն բերանոց և ազատ արանց, ընթացք ոճոյն միօրինակ, գեղեցիկ հանդիսացուցիչ փոքունց պարագայից, յոր սակա թերեւս ճարտասան անուամբ յիշատակի՝ ի Տարունեցւոյն և ի կիրակոսէ, ոչ թողու տարտամուծիւն և տարակոյս ի բանս իւր . . .

« Սորայս պատմութիւն համարէն գրեթէ 97 ամաց՝ յ'388էն սկսեալ մինչ ՚ի 485, առաջի առնէ մեզ զխռովագոյն և զտրամալի գար ազգիս, զքաղաքուսն ծաղկեալ թագաւորութեան Արշակունեաց, և զքաղաքուսն խաղաղութեան կրօնի՝ ի համաշխարհական հալածանաց Պարսից. առաջի առնէ նոյնպէս և զուրախալին զսկիզբն գպրութեան ազգիս, զերկբորգ սկիզբն կրօնի բազում արեանցն հեղմամբ յետ սըբոյն Գրիգորի, և զսկիզբն մարզպանութեան » :

Բ. Տպ. Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան: Ի վեներտիկ, ՚ի վանս սրբոյն Ղազարու, 1873, ԹԵԻԲ:

Այս նոր տպագրութեան սկիզբը գրուած Ազգը կ'ըսէ. « Մի ՚ի յաւեա փափագատենչ և ընթերցական աւանդից բազմերախտ դասու և դարու թարգմանչաց մերոց՝ է Երրորդն անուանեալ Պատմութիւն Հայոց, զոր հրամանաւ քաջին Վահանայ Մամիկոնոյ՝ եղբորորդւոյ մեծին Վարդանայ, գրեաց յելս Ե դարու կամ ՚ի սկիզբն Զին՝ աշակերան աշակերտաց Սահակայ և Մեսրովբայ՝ Ղազար Վանական, ՚ի գեղէ Փարպոյ Արագածոտն գաւառի, ՚ի սահմանակցութենէ ընիկ Ոստանին Հայոց: Սա այս միակ գործ կամ գրուած նորին ծանուցեալ՝ ութսուն ամօք յառաջ տպագրութեամբ ՚ի լոյս ընծայեցաւ ՚ի մամլոց Մխիթարեան վանացս, և զոր յայնժամ ծանուցին հրատարակողքն Բանս առ վերժանսոյս՝ անփոփոխ զնոյն և մէք զկնի մերոյս գոյզն այսմ ազգարարութեան կարգեմք . . . մանաւանդ զի և ոչ միոյ յետ այնորիկ հանդիպեալ մեր նորոյ օրինակի պատմութեանս, հարկաւորիմք ըստ առաջնոյն կրկնել զառպագիրս զայս . . . սակաւ ուրեք ՚ի յայանի վրիպակսրն՝ արարեալ ուղղութիւն. և յերիս տրոհեալ Դրուագս զբովանդակ գիրսն, զի և այսպէս իսկ կուչէ հեղինակն զմասունս գրոց պատմութեանն, և ե.

րեք իսկ գլխաւոր մասունք երեկն յիւրումն պատմագրութեան. զոր դարձեալ առանձին 'ի հարիւր գլուխս տրամատեցաք, առանց խորագրաց. զի որ յառաջնում տպագրութեան եգեալքն են՝ չեն հեղինակին կամ հին կարգաւորութիւն: Միայն 'ի տեսիլն սրբոյն Սահակայ և 'ի մեկնութեան նորին արարաք այլայլութիւնս բանից ըստ հնագիր օրինակաց որ 'ի Ճառքնտիրս գտանին ...

« Օրինակ թղթոյն Ղազարայ առ ձեռնտու իւր Վահան՝ յայտնեցաւ 'ի դարանս մատենից աթոռոյն Էջմիածնի, 'ի ձեռն փութաջան խուզարկուել Յովհաննու եպիսկոպոսի Շահխաթունեան. որ և հատուածս ինչ անտի էյեռ յիւրումն Ստորագրութեան Էջմիածնի և հնգեցուն դաւառացն Այրարատայ. ապա յամի 1853 հմուտ վարժապետն՝ Տեսուչ Ղազարեան Ճեմարանի՝ Պ. Մկրտիչ Էմին զրովանդակն 'ի տիպ արձանացոյց 'ի Մոսկուա քաղաքի, երկար յառաջաբանութեամբ և ծանօթութեամբք: Յետ նորս և այլ ոմն եռանգուն բանասէր, Միք. Նալպանտեանց, յեզեալ զնոյն յաշխարհիկ բարձու իւրոյ դաւառին՝ երկարագոյն եւս խորհրդածութեամբք բանից՝ եթող առ մտերիմն. որոց յետ արածամահու նորին հոգացեալ հրատարակեցին 'ի մայրաքաղաքին Ռուսաց, յամի 1868: Ի վերայ երկացուն սոցա երկասիրութեանց անգէպ վարկաք յաւելուլ և մերովսանն ծանօթութիւնս, բայց ուր ուրեք անհրաժեշտն թուեցաւ. այն զի և թուղթն ինքնին և Պատճառն նախակարգեալ 'ի մերձաժամանակ մատենագրէ՝ տան ոչ սակաւ կարևոր և պիտանի ծանօթս զկենաց Ղազարու: Այլ զի հանդոյն պատմութեանն և թղթոյս այսորիկ մի միայն օրինակ գտեալ է ցարդ, և թերութիւնք ոչ սակաւ նշմարին 'ի գաղափարին՝ ստիպեցաք և մեք թողուլ նայապէս, ըստ առաջին ապագրողացն, լոկ զվրիպեալսն 'ի նոցին տեսութենէ՝ ուղղագրելով, որում բաղդատու զացն գիւրին է կալ 'ի վերայ: Բայց զգլխաւոր ուղղութիւն մի հարկ համարիմք յիշեցուցանել. այն է գասաւորութիւն հատածոց բանի թղթոյն, որ 'ի միջին տեղիս խառնակեալ և անյարիր մնայր, 'ի սակս սխալակ յետ և յառաջ կազմութեան թերթից մա-

տենին՝ յորմէ գաղափարեալս է. և ըստ այնմ վերայ գասաւորութեամբ տպագրեալ էր նախայիշեալ բա. նասիրացն, զոր մտագիր քննեալ՝ գասաւորեցաք որ. պէս արժան և ստոյգ էր. միայն ՚ի միում տեղ ոչ կարացաք ՚ի հունն ելանել, և պակաս կարծեմք ՚ի բա. նին, որպէս և նշանակեցաւ անդէն (յէջ 93). գու. ցէ այլոյ ուրուք ճարտարութիւն, և մանաւանդ ըզ. ձալին բաղդ, լցցէ և զայն թերութիւն. հանդերձ նորոգ ևս գործովք քաջի վիպագրին և ճարտասանի մերոյ Ղազարայ » :

*Lazare de Pharbe.* Histoire de l'Arménie, traduite pour la première fois en français et accompagnée des notes historiques et critiques, par le P. Samuël Dr Ghésarian (Cantar), Membre de l'Académie nationale arménienne de St. Lazare de Venise. (Collection des Historiens anciens et modernes de l'Arménie, publiée en français... par Victor Langlois. Tome deuxième, 253 - 368). Paris, Librairie de Firmin-Didot frères, fils et Compagnie. Imprimeurs de l'Institut, rue Jacob, 56. MDCCCLXIX.

« ... Nous ferons observer que l'Histoire de Lazare n'a jusqu'à présent été traduite dans aucun idiome européen, et que le seul auteur qui ait tiré des renseignements du livre de Lazare est l'arméniste français J. Saint-Martin, qui lui a fait de larges emprunts, pour annoter l'édition de *l'Histoire du Bas-Empire* de Lebeau, publiée par la Maison de MM. Firmin-Didot. Les renseignements précieux que renferme l'histoire de Lazare faisaient désirer depuis longtemps qu'une traduction de ce livre fut mise à la disposition du public lettré. Aussi les RR. PP. Mékhitaristes avaient entrepris une version italienne de cet ouvrage qui, par suite de circonstances particulières, n'a point été publiée. Le P. Samuël Ghésarian, en se chargeant de traduire l'Histoire de Lazare, s'est imposé la tâche glorieuse de faire passer dans notre langue un document qui présente des difficultés d'autant plus sérieuses, que le seul texte qu'il avait à sa dispo-

sition est malheureusement incorrect. Cependant la connaissance approfondie de l'arménien littéraire, que possède au plus haut degré le P. Samuël, l'a puissamment aidé à rompre les difficultés qu'il a rencontrées, et qu'il a surmontées avec un rare bonheur; aussi sa traduction que nous offrons au lecteur présente-t-elle les plus grandes garanties d'exactitude et de fidélité». ( V. Langlois ).

Թուղթ Ղազարայ Փարպեցոյ. Մեղադրութիւն ստախոս արեգոյից: Վենետիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու, 1873, ՌՅՌԲ: Թղթոյն սկիզբը իրեն ընտանի սւ ժամանակաւ մերձաւոր անձէ մը գրուած տեղեկութեան մէջ կը կարգանք անոր գրութեան պատճառը:

« ... Երանելին Ղազար ... անգամին 'ի մանկական տիողն սկիզբն արարեալ բանական գիտութեան, Յունաց յաշխարհն ճանապարհորդէր. և անդ քաջաց և առաքինի մարդոց պարապեալ՝ լիով զմարգարիտն՝ զբանն աստուածային՝ ընկալեալ յինքեան, եկեալ հասանէր յիւր աշխարհն ...

« Կամեցեալ մեծի իմաստութեան Վահանոյ մարգպանին զօրավարին Հայոց՝ տեսուն Մամիկոնէից, զնա իւր առաւել մերձաւոր և սիրելի առնել, շնորհէր նմա զհոյակապ և զսկանաւոր տեղին՝ 'ի Նոր քաղաքի, որում անուռն էր սուրբ կաթողիկէ եկեղեցի, վանօքն. և նորա ընկալեալ զբան մարգպանին՝ խնամածէր զտեղին:

« Պատահեաց նմա կրել արամութիւն 'ի վայրապար մարդկանց, զի 'ի հրոյ մնտսեալ փայտակերտն եկեղեցւոյն ... Յայսմանէ կամեղև նմա զնալ՝ 'ի կողմանս Յունաց. հասանէր յԱթթ քաղաք, և անդ առ ժամանակ մի զտեղի առնոյր: Տեսանելով զայն չարանախանձ մարդկան՝ յաւելուին բանս սուտս զտեղւոյն և զուսմանէն ևս զնորա, զի զբարձր անուռն խոնարհեցուցանել կարասցին: Լուեալ զայս ամենայն Ղազարու՝ իրեւ զքաջ պատերազմող զինեալ զինքն, զի բանիւ զօրութեան զիւր ոգւոյն և զքաջալերութեան և զպատկեր կերպարանաց՝ 'ի ձեռն գրոյ Թղթոյս այսորիկ ծանուսցէ նոցա ... զի կարճեսցին բերանք չարախօսացն զնմանէ: ... Եւ մանա-



ւանգ. զի վստահ եղեալ յամենիմաստ մարդպանն,  
 եթէ գիտէ ճարտարութեան բանի լինել չլսող և գի-  
 տել զերաւունս, զի անմեղադրելի զինքն արասցէ 'ի  
 ձեռն գրոյս: Եւ աւեալ 'ի ձեռն զգէն գիտութեան,  
 զի յազթող երևեսցի. և առաքէ զգրեալս 'ի ձեռն  
 բարեակեր մեծի և պատուական նախարարին՝ Մամբ-  
 կոնէին Համազասպայ, որ և պատճառ իսկ եղև նմա  
 այսրէն գարձին ...

« Զերրորդ պատմութիւնս Հայոց՝ երանելի իմ  
 Ղազար պատմագրեաց: Ընդ նմին գրեցաք և զթուղ-  
 թըս, զի ընթերցասերքն զպատմութիւնս կարգա-  
 լով՝ ընդ նմին և զթուղթս ընթերցեալ, զգործ առ-  
 ցեն նորա լաւութեան բանին » :

Ղազարայ փարպեցոյ բռնորդ աս վահան տերև Մա-  
 միկոնէից: Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին Տեսուչ  
 Լազարեան ձեմարանի արևելեան լեզուաց: Մոսկ-  
 վա, 'ի տպարանի Վլադիմիրայ Գոգիէ, 1853:

Ղազար փարպեցու գրած բռնորդ, Մեղադրութիւն  
 ստախոս արեղաներին: Թարգմանութիւն և բացա-  
 գրութիւնը Մ. Նալբանդեանց: — Նալբանդեանցի  
 համառօտ կենսագրութիւնը: Տպագրութիւն Մ.  
 Տէր Գրիգորեանց, Ս. Պետերբուրգ, 1868, րՅԺԷ:

\*Լարաբաղի աստղագէտը կամ Շուշի բերդի  
 հիմնարկութիւնը 1752 թուականում. Անդրկովկա-  
 սեան պատմական վեպ. հեղինակութիւն Պլատօն  
 Զուբովի: Թարգմանեց Բաքիի. (Արասապած Մը-  
 շակ լրագրից): Թիֆլիս, Կովկասի կառավարչ. գլխ-  
 կառավ. տպարանում, 1882:

Ղերուբնա եղեսացի. Թուղթ Արքարու Թա-  
 դաւորի Հայոց, և քարոզութիւն սրբոյն Թագէի ա-  
 ռաքելոյն: Ի տպարանի առաքելական աթոռոյ սըր-  
 բոց Յակովբեանց յԵրուսաղէմ, 1868, րՅԺԷ:

Տես Լարուբնիա, ուր յիշատակուած եւրո-  
 պական լեզուով Թարգմանութեանց վրայ արժան է  
 յաւելուլ հետևեալներն՝ որ ասորական բնագրէն  
 եղած են:

Ancient Syriac documents, relative to the ear-  
 liest establishment of Christianity in Edessa ... By  
 W. Cureton. London, 1864.

The doctrine of Addai, the apostle, now first edited in a complet form in the original syriac, with an english translation and notes. By George Philipps. London, 1876.

ՂԵՆՈՂ պատմիչ. Արշաւանք Արարաց 'ի Հայս, արարեալ ՂԵՆՈՂ վարդապետի Հայոց: Ի ԼՅՍ ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Շահնազարեանց, միաբան սրբոյ Էլմիածնի, և անդամ արեւելեան ընկերութեան գիտնականացն Փարիզոյ: Ի Գործատան Կ. Վ. Շահնազարեանց: Paris, imprimé par E. Thunot et Compagnie. Հրատարակողն կ'ազգէ 'ի յառաջաբանին թէ « Զխոստումն զոր արարի յեւս 1856 ամին, գամ 'ի կատարել' ձեռն մտելով արդ 'ի ապագրութիւն Շարի հայ պատմագրաց... Զէր նոր ինչ յիս խորհուրդս և ոչ ծնունդ եռանդեան. քանզի մինչդեռ յամի 1834 'ի վարդապետարանին սրբոյ Էլմիածնի 'ի մարզս դեգերեի հռետորական և աստուածաբանական ուսմանց, ձեռնարկեալ էի յօրինակութիւն ընտիր պատմագրաց մերոց 'ի հռչակաւոր գրանոցի տեղւոյն. յորս յաւելի ապա և զսեղագրութիւն պատմութեամբ և աշխարհագրութեամբ հանդերձ Սիւնեաց աշխարհին... Այլ զայս ամենայն տասնամեայ արգիւնս երկանց իմոց... ձեռն մի անանուն յափշտակեաց 'ի միում վայրկենի և եթող զիս 'ի խոր տիրութեան:

« Զկնի ամաց ինչ միւսանգամ ձեռն արկի 'ի գործն իմ առաջին. և յայս նուազ զհռչակաւոր մատենադարանն սրբազան Կարապետ արքեպիսկոպոսի Վքրաստանի ունելով ինձ յաղթիւր' օրինակեցի և համեմատեալ ուղղագրեցի զինչ ինչ հազուտգիւտ պատմիչս... 'ի Կոստանդնուպօլիս... զամս երիս շարունակ 'ի նոյն գործ դեգերեցայ, և գանձեցի զորս պակասէինն ինձ ցայնվայր ազգային պատմագիրք, զորոց զպակասորդն լըոյց կայսերական գրատուն Փարիզի. յորում գտի զընտիր գրչեայ պատմիչս... :

« Ազգային մատենագիրք կեցեալք զկնի օւթերորդ գարուն Քրիստոսի, ճանաչեն և յիշեն զՂԵՆՈՂ... Ստեփաննոս Աստղիկ Տարօնեցի... յիշէ զՂԵ.

ւոնդ ասերով. « Եւ պատմութիւն Ղեւոնդեայ երի-  
ցու, որ ինչ վասն Տաճկաց ելիցն և անցիցն Հայոց 'ի  
նոցուն բռնութենէ », յորմէ և քաղէ բազում ինչ առ  
'ի հիւսեւ զիւր պատմագրութիւն. և գնէ զՂեւոնդ  
ընդ մէջ Սերէոս եպիսկոպոսի և Շապհոյ Բագրա-  
տունւոյ: Մխիթար Այրիվանեցի ժամանակագիր.  
որ եկաց և գրեաց յերկոտասաներորդ գարուն նոյն  
պէս յիշէ զՂեւոնդ ընդ պատմիչս Հայոց. զոր և կար  
գէ ընդ մէջ Զաքարիա Կաղկանտուացւոյ՝ պատմա-  
գրի Աղվանից, և Ուխտանէս եպիսկոպոսի՝ որ գրեաց  
զհերձուածոյն Վրաց »:

*Histoire des guerres et des conquêtes des Arabes en  
Arménie, par l'éminent Ghèvond Vartabed armé-  
nien, écrivain du huitième siècle, traduite par Ga-  
rabet V. Chahnazarian, et enrichie de notes nom-  
breuses. Paris, 1856.*

Թարգմանութիւն 'ի ռուս, աշխատասիրութեամբ  
'Բ. Պատկանեան, Փետրպուրկ, 1862:

Über einige neuere Erscheinungen der arme-  
nischen Literatur. Zeitschrift der deutschen Mor-  
genlandischen Gesellschaft, 1861, B. XV. (Henri  
Petermann).

\*Ղուկասեանց. Ընթերցարան. Տփխիս, Կովկա-  
սեան գրավաճառանոց Զաքարիայ Գրիգորեանց,  
1880:

Դասադիրք ընդհանուր պատմութեան. Հին դար:  
Տփխիս, Կովկասեան գրավաճառանոց, 1880:

Հիմնական դիրսկոսիկան կանոններ: Տփխիս, Կով-  
կասեան գրավաճառանոց, 1880:

Համասոս հայկացք Մայրենի լեզուի վերայ: Տըփ-  
խիս, Կեդրոնական գրավաճառանոց, 1880:

Ղուկաս Վանանդեցի Նուրիջանեան: Տեա  
Բանալի համատարած աշխարհա-  
ցուցի:

Բնաբանութիւն իմաստասիրական:  
Փանծ չափոյ:

Դոուըն իմաստութեան:

Խաղք եւ համաձայնութիւնք:

Handwritten notes in Armenian script, including a signature and a date: 1633 52 150

Հայելի աստուածաշունչ հին կտա  
կարանաց:

Պաշտօն աստուածային:

Պատկերասէր եւ պատկերատեաց:

\*Ճանապարհորդական նկատողութիւնք. Քաջ  
բերունի: (Փորձ, ազգային և գրականական հանգուստ.  
Ա տարի, թ. 3, 361-384. թ. 4. 388-406: Բ տարի,  
թ. 2, 330-367. թ. 4, 321-367: Գ տարի, թ. 1.  
97-118: թ. 40, 35-53: Ե տարի, թ. 3. 77-91: թ.  
4, 79-92: թ. 6, 46-62):

\*Ճանապարհորդական տպաւորութիւններ:  
Սիւլիւկ. (Փորձ, Գ տարի. թ. 10, 91-114: թ.  
11, 110-134: Դ տարի, թ. 1, 151-169):

\*Ճանապարհորդութիւն Ախլցխայից մինչեւ  
Անի, Յ. Գեղամանց. (Փորձ, Գ տարի, թ. 12.  
106-129: Դ տարի, թ. 4, 56-80: թ. 5, 33-61:  
թ. 6, 50-96: թ. 8, 91-129):

\*Ճանապարհորդութիւն Աղեքսանդրոպօլից  
դէպ 'ի Կարին. հեղինակ՝ Քաջբերունի: (Փորձ, Գ  
տարի, թ. 5, 172-192: թ. 9, 106-123):

\*Ճանապարհորդութիւն Թէոփիլոս Դէյրօլի  
Լազիստանի և Հայաստանի մէջ. Թարգմանութիւն  
Ա. Փիրուսեանցի: (Փորձ, Դ տարի, թ. 5, 95-128:  
թ. 5, 113-147: թ. 11, 33-49: Ե տարի, թ. 5,  
100-122):

\*Ճանապարհորդութիւն Թիֆլիզից մինչեւ Ա.  
գուլիս: Նկատողութիւններ, գաղթականների մա-  
սին. հեղինակութիւն Բաքի: (Փորձ, Բ տարի,  
թ. 3, 181-244):

\*Ճանապարհորդութիւն 'ի Դավրէժ, Աբէլ  
արքեպիսկոպոսի Մխիթարեանց, միաբանի սրբոյ  
Էջմիածնի: Հին Զուղա: - Մենաստան սրբոյն Ստե-

*Չառնայորդ իր լեզու. կամ այլապէս ըստ զանազան  
աւանդութեան հասարակ և սովորաբար պատշաճ  
աւանդութեան ըստ իր քրոջ: Այստեղ թ. 10. Չառնայ  
Գաղթականներու հիմնադրութեան. Գ. 1909 թ. 9. Կարին  
Ստեփաննա ԱՅԵ Եւ ԿԵԿ*

փաննոսի նտխավկային 'ի Մազարթայ լերին: — Հրովարտակք Աշոտ Թագաւորին: (Կառունկ Հայոց աշխարհին, օգոստոս, 1861):

\*Ճանապարհորդութիւն 'ի մայր Աթոռն Արարատեան և անտի 'ի Կոստանդնուպօլիս: Գրեաց Ղեւոնդ վարդապետ Փերդալէմեանց Տոսպեցի յԱւետէն վարագայ: Կոստանդնուպօլիս, Գործարան Զարդարեան, 1871:

\*Ճանապարհորդութիւն Կարինեանց Յակոբ վարժապետի: Ախաւքաշակ, Աղէքսանդրապօլ, Անի, Աշտարակ, Էջմիածին, Երևան և Սեւան: (Կառունկ Հայոց աշխարհի, մարտ, 1862):

\*Ճանապարհորդութիւն Հայաստանումը Գալուստ Շիրմազանեան վարդանիւնցի 'ի 1842: Թաւրիզից Մարանգ: — Մայրական գիւղ: — Շամբ և Նախավկայի վանքը: — Պօղոս վանահայր, միայնակեացը և նորա հետաքրքրական պատմութիւնը: (Կառունկ Հայոց աշխարհի, 1863):

\*Ճանապարհորդութիւն յԱնի Արէլ վարդապետի Մխիթարեանց, միաբանի սրբոյ Էջմիածնի, աւպագրեալ 'ի Կ. Պօլիս, 'ի ապարանի Մասիս լրագրոյ, 1865, արդեամբք Հայկազնեան ընկերութեան Տրապիզոնի:

Ճանապարհորդութիւն Մեսրոպայ Դ. Թաղիդեանց վ. Ա. Սարկաւազի սրբոյ Էջմիածնի 'ի Հայս: Հատոր Ա. Տպագրեալ արդեամբք ազգի մերոյ 'ի սփիւռս Հնդկաց: Ի ապարանի Արարատեան ընկերութեան 'ի Կալկաթա, 1847:

Ճանապարհորդութիւն Զալալեանց Սարգիս արքեպիսկոպոսի, 'ի Ածն Հայաստան. Հատոր Ա. Թիֆլիզ, 'ի տպ. Ներսիսեան Հոգևոր դպրոցին, 1842: Հատոր Բ, 1858:

\*Ճանապարհորդութիւն վեգուվեան հրա-

*Handwritten note:* \*Ճանապարհորդութիւն Զալալեանց Սարգիս արքեպիսկոպոսի, 'ի Ածն Հայաստան. Հատոր Ա. Թիֆլիզ, 'ի տպ. Ներսիսեան Հոգևոր դպրոցին, 1842: Հատոր Բ, 1858:

քուղխ սարի վերայ. այլ և 'ի Պոմպէյի, Հերքու-  
լանում, Հռոմ, Վենետիկ և այլ քաղաքներ իտալի-  
այի, 'ի 1865 և 1866 ամի. Վ. Յ. Խօջայեանցի: Տըփ-  
խիս, 'ի տպ. Համբարձումայ Էնֆիաճեանց և ընկ.:

Տես Պատմութիւն Անւոյ: — Վակնէր:  
— Տեղագրութիւն 'ի Մեծն եւ 'ի Փոքր  
Հայս:

Ճաշակ հին եւ նոր ողբերգութեանց, 'ի հել-  
լենաց եւ յարդեաց, Թարգմանեալք յիւրաքան-  
չիւր բնագրացն 'ի ձեռն Հ. Արսէնի կոմիտասայ Բա-  
գրատունւոյ Մխիթարեանց: Վենետիկ, Ս. Ղազար,  
1869:

Սոփոկի, Իգիպոս Թագաւոր. — Անտիգոնէ. —  
Էլէկտրա:

Ռասիկի, Բրիտանիկ. — Գոթոզիա. — Միհրդատ.  
— Իփիգենի յԱւլիս:

Վորդեռի, Աւզիրա. — Մերոպէ:

Ալփիերեսայ, Սաւուզ արքայ Իսրայելի:

Ճաշակ հելլեն եւ լատին ճարտարխօսու-  
թեան: Թարգմանեաց 'ի բնագրաց Հ. Արսէն կո-  
միտաս Բագրատունի Մխիթարեանց: Ի Վենետիկ,  
'ի վանս սրբոյն Ղազարու, 1863:

Եսքիկեսի ընդդէմ կտեսիփոնի:

Դիմոսթենի յաղաքս Պսակին:

Կիկիերովնի վասն Արքիայ քերթողի: — Վասն կ.

Լիգարիոսի: — Վասն արքային Դիոտարայ: — Եր-  
կրորդ Փիլիպեան ընդդէմ Մ. Անտոնիոսի:

Ճաշոց գիրք.

Ա. Տպ. Ի Վենետիկ, յամի 1686. « Ճաշոց գիրք՝  
գեղեցկաատիպ և վայելուչ, գաղափարեցեալ 'ի մա-  
տենից հնոց Թագաւորացն Հայոց, տպագրեցեալ  
'ի հայրապետութեան սրբոյ աթոռոյն Էջմիածնի՝  
տեառն Եղիազարու սրբազան կաթողիկոսին: Ներ-  
տպարանում ճուղայեցի խոճայ Սահրատի որդի պա-  
րոն Գասպարին, և Թաթէոսի երիցու Երեանեցւոյ  
Համազասպեան: Ի Թուականութեան Արամեան  
ՌՃԼԾ. յամսեանն յունվարի ԺԷ. իսկ 'ի Թուի փրբկ.

չին 1686, 'ի Վենետիկ» : Ասոր նման ուրիշ նոր մակագրութենէ մը ետքը՝ ընծայական մը կը գնէ Թագէտս երէց՝ առ Եղիազար կաթուղիկոս, յորում համառօտիւ կը պատմէ այս գրոց տպագրութեան համար կրած վշտերն ու նեղութիւնները. զոր արժան կը համարիմք համառօտել. « Աստուած ... ըս. փոփեաց զտառապեալ անձն եմ, տալով ինձ զիմացումն մտաց, դիմել աւ ազնուատոհմ և քրիստոսասէր Զուղայեցի խոճայ Սահրաաի օրդի պարոն Գասպարն, և յայտնել նմա զիզձն իմ որ առ տպագրութիւնս գրեանցն հայկազունեաց : Որ և հաճեալ 'ի բանս և 'ի գիտաւորութիւնս իմ, խոստացաւ օգնել ծախոյն, և ընուլ զթերութիւնս գոյիցն հարկաւորաց : Աստուստ առադրելով և իմ ընդ նմին զգուշնաքեայ արդիւնս իմ զորս ունէի, յանձնեցի զիս այցելութեան տետռն. և աղօթիւք սրբազանիդ ելեալ յ'Սպահանայ, չուեցի դէպ 'ի Մարջիլիա, ուր էր տպարան տեառն Ոսկսնայ վարդապետին : Եւ գտանելով զտպագրատառնն տապալեալ, և 'ի սպառքայքայեալ և աւերեալ, գարձայ 'ի մայրաքաղաքն Վենետիկ, ունելով ընդ իս զկատարեալ իմն ածնացոյց 'ի գիտնոց արանց սրբագրեցեալ և զգուշապէս գաղափարեցեալ. և զերկուս և զերիս ճաշոցս հարուստս և ճօխս, մեծաւ շնարիւ աստի և անտի հազիւ 'ի ձևս արկեալս. բայց անհամեմատս և անբաղգատս միմեանց, թէ ընթերցուածովքն և թէ աղօթիւք տերունականացն սօնից, որոց վերայ տարակուսելով՝ կայի ըն մեծի վարանման նկատելով 'ի տարաձայնութիւնս նոցին : Եւ աջուցութեամբ տեառն առդիպեցաւ մեզ աստ ճաշոց իմն վաղեմեան ամբողջ և անթերի, 'ի գանձուց հնոց թագաւորացն Հայոց. զոր և առընթեր եգեալ աստուածաշնչոցն մատենից, գտի զնա ամենևին համեմատ և համաձայն ընթերցուածովք ... Աստուստ վստահացեալ ... զարքայականն ինձ ընտրեցի գաղափար. և զբազումս գրամս վաանեալ ... ետու քանդակել երկուս տեսակս տառից նորակերտից. զմին խոշորաձև, և զմիւսն մանրագիր 'ի պէտս խորագրաց. և հոգացեալ զբնաւս կահս և զկարասիս տպագրատան, սկսայ 'ի լոյս ածել զխորհրդատետր իմն պատարագի՝

ըստ հնոց օրինակաց Հայաստանեայց եկեղեցւոյ, և զՃաշոցս այս վայելուչ և գեղեցկատիպ՝ զարգարեալ զանազանիւք թփովք, ազգի ազգի ծաղկագորովք և յարմարագունիւք պատկերովք: Եւ զայս խորհրդա-ծուծեամբ և հաւանութեամբ տեառն Յովնէփայ վարդապետի և արհիեպիսկոպոսի Զմիւռնոյ քաղաքի որ բարեբաստապէս առդիպեցաւ 'ի լըումն տեն-չանաց իմոց, ... և սյլն » :

Բ. Տպ. Ի Կոստանդնուպօլիս, 'ի 1732. « Ճաշոց գիրք, փոքրագունեղ, արտահանեալ 'ի մեծ Ճաշոցէ գեղեցկատիպ և վայելուչ, գաղափարեցելոյ 'ի մատենից հնոց թափաւորացն Հայոց: Յաղագս եկեղեցական դպրաց՝ մեծաց և փոքունց. զի յառաջագոյն ստացեալ վերահասու լինիցին՝ զգուշացեալ ուղիղ ընթերցման 'ի յատեան եկեղեցւոյ առաջի մեծամեծաց. սյսինքն եպիսկոպոսաց, և վարդապետաց և իմաստնոց քահանայից և առհասարակ ամենայն ժողովրդոց » : Յիշատակարանն ալ կ'աւանդէ թէ ... « աւարտեցաւ Ճաշու մատեանս աստուածային հին և նոր կտակարանաց. 'ի հայրապետութեան ... և 'ի սլաորիարգութեան երկուց աթուոց ... տեառն Գրիգորի և տեառն Ովհաննիսի ... 'ի թուիս մերոյ ԻՃՁԱ » :

Գ. Տպ. Ի Պօլիս, 1793: ... « Տեառն Զաքարիայ ազգասէր և բարեկարգ պատրիարքի հրամանաւ տպեցեալ 'ի տիպ յերրորդ. 'ի Կոստանդնուպօլիս, յամի տեառն 1793. 'ի մայր դպրատան. 'ի Մատթէոս գպրէ, իւրով իսկ տպագրաւ: Վերջաբանին մէջ՝ եկեղեցական պաշտամանց գրոց կարևորութիւնն նշանակելէն ետքը, կը յաւելու. « Զորոյ զհարկաւորութեան զչափ առեալ նախնեացն մերոց, յառաջ քան զքառասուն ամ տպագրութեամբ ծաղկեցուցեալ, զմանկունս իւրեանց յետ սաղմոսին 'ի սոյն կրթեալ զմայլեցուցանէին: Իսկ զարգիս, ըստ որում պակասելով օր 'ի յօրէ թառամեալ՝ թանկագին եղև, յաղագս որոյ յոյս յԱստուած և 'ի յօգնութիւն բարեսիրաց մինչ գնէի, բարեպաշտ և մեծահաւատ Մուրատ ամիրայն՝ միջնորդութեամբ տէր Պօղոս համեստափայլ քահանայի՝ եղբորորդւոյ տեառն իմոյ ազգասիրի յայտ յանդիման նկատելով,



զոր 'ի դիւրագիւտ պատրաստական լինելոյ սորին օգուտն, և զոր 'ի հազուագիւտ ծանրագին դուռն փնասն, նախանձաւոր շնորհաց եղեալ և բարեաց, ... եղև ձեռնառու և օգնական տպեցման սորին. իւրով իոկ աստուածապարզ և արգեամբք ... » :

Վերջաբանին այս խօսքերը կ'ակնարկեն թէ քառասուն տարի առաջ ժիւտ տպագրութիւն մըն ալ եղած ըլլայ Ճաշոցի, որ մեր ձեռքը հասած չէ, թէ որ գրուած թուականը սխալ չէ, և ուղած չըլլայ երկրորդ տպագրութիւնը յիշատակել, թէպէտև 61 տարուան է այդ երկու տպագրութեանց մէջ եղած ժիջոցի տարբերութիւնը :

Դ. Տպ. Ճաշոց գիրք Հայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ, տպագրեալ հրամանաւ վեհափառ և ամենապատիւ Տեառն՝ Գէորգայ Դ սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց, Վաղարշապատ, 'ի տպարանի սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, 1874, ՌՅԻԳ :

« Հնագոյն ընտիր ընտիր ձեռագիր Աստուածաշունչներէն և Ճաշոցներէն կարի զգուշութեամբ ուղղագրուած՝ Մայր Աթոռոյ տպարանէն լայս տեսաւ այս Ճաշոց գիրքը, որոյ նաև նոր տառից և յստակ տպագրութեան գեղեցկութեան՝ անշուշտ էմբ թէ ամենայն ոք կը հաւանի և կը վկայէք :

« Մեր Եկեղեցւոյ Պաշտօնէից գիւրութեան համար՝ Ճաշոցիս մէջ իւրաքանչիւր աւուրց տօնից և հանգիսից հրահանգաց շատերուն մէջ բաւական պարզ բացատրուած խրատներ և հրահանգներ յաւելացած են. ինչպէս ճառերն ևս ձեռագիր ճառնորաց համաձայն սրբագրուած » : (Սրարատ, ամսագիր) :

Ճաշու Աւետարան : Տես Աւետարան :

\*Ճառ բարոյական : Յ. Ս. Տ : « Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն » : (Ա. և Բ. Տպ. 1848) Կոստանդնուպօլիս, 'ի տպ. Յովհ. Միւհէնիսեան, ՌՄԼԵ :

Ճառ դաստիարակութեան օրհորդաց. ըստ ինգրոյ պարոն Յովսեփայ Աղաբէգեանց գրեաց Մ.

Գ. Թաղիդեանց Վ. Ս: Ի տպ. Արարատեան ընկե-  
րութեան 'ի Կալկաթա, 1847:

X

\*Ճառ 'ի վերայ քրիստոնէական միութեան:  
« Անկէքան եպիսկոպոսի մը գրածէն հայերէն աշ-  
խարհաբառ թարգմանված »: Կոստանդնուպօլիս 'ի  
տպ. Յովհաննու Միւհենտիսեան, 1846: 52 շջ 10X15

Ճառընտիր համառօտ. « Գիրք և Ճառ հոգե-  
շահ ' արարեալ յուղղափառ և յաստուածաբան  
վարդապետաց եկեղեցւոյ. որ պարունակէ ներին-  
քեան համառօտապէս զՃառս յոգունս խորհրդա-  
ւորս տէրունական տօնից, սկսեալ 'ի ծննդենէն  
Քրիստոսի մինչև 'ի Խաչվերաց տօնն, քաղցր բանիւք  
և մեղրածորանի վարդապետութեամբ: Եւ արդ 'ի  
ըյս ածեցեալ սրբագրութեամբ և տպեցմամբ Մար-  
տիրոս դպրի Կոստանդնուպօլսեցւոյ, 'ի փառս Աս-  
տուծոյ և 'ի պատիւ սրբուհւոյ Աստուածածնին ...  
'ի Թուրին Հայոց ՌՃՀԱ ... 'ի տպարանի Սարգսի 'ի  
Քուզանդիա »: Անմիջապէս յերկրորդ իջի կը յա-  
ւելու. « Յնթեոնուլն ձեր զսա՝ եթէ գտանիցի բառ  
ինչ կամ բան և կամ տառ սահեալ յարհեստէ քեր-  
թողութեան, ներեցէք սխալութեանս, զի 'ի միոյ  
խառնեցեալ օրինակէ արտելուզանել հազիւ կարո-  
ղացաք այսբան »: Յիշատակարանին մէջ ալ հե-  
տևեալ տողերով կը նշանակուի տպագրութեան  
թուականն. « Այն որ ասի Հայոց Թուրիկ, — Երկեակ  
բառիւ գրացի այսուրիկ. — Թէ գոյ լեալ ոք հազիկ  
հարիկ, — Ընեօթնեակ տասն՝ ամս երկիկ: Ի փետըր-  
վարի իգ »:

Ճառ 'ի վերայ Աւագ Ուրբաթու, « 'ի վերայ  
մահուան և չարչարանաց Փրկչին մերոյ Յիսուսի  
Քրիստոսի. տպագրեալ 'ի գործատան Մարգասի-  
րական Ճեմարանի 'ի Կալկաթա. 2000 օրինակք. 'ի  
սեպտ. 1828 »:

\*Ճառ 'ի վերայ ազգային յառաջադիմու-  
թեան: Ի տպարանի Արարատեան ընկերութեան 'ի  
Կալկաթա, 1845: « Առաջիկայ Ճառս զառաջինն տը-



տեառն 1817, նոյեմբ. 1. իսկ ըստ Հայոց Թուա-  
կանի ՌՄԿՁ, 'ի տպ. մայր սուրբ Աստուածածնի » :

Ճառ ներքողեան 'ի սուրբ խաչն Քրիստոսի, և  
պատմագրական առասացութիւն 'ի սուրբ նշանն  
Վարագայ, գրեալ 'ի Յովհաննէ քահանայէ Վանան-  
դեցւոյ: Մոսկուա, 'ի տպ. Արեւելեան Ճեմարանի  
տեարց Լազարեանց, 1852:

\*Ճառ Պիոսի Թ և Հովուական Աւստրիական Ե-  
պիսկոպոսաց: Վիէննա, 'ի վանս Պաշտպան Ս. Աս-  
տուածածնի, 1850:

X

Ճառ վասն ծննդեան եւ չարչարանաց Տեառն  
մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի. 'ի Գէորգ վար-  
դապետէն ասացեալ 'ի սուրբ Լուսաւորիչ եկեղեցին  
Ղալաթի ~~Պարտիզ~~ Տպեալ: ... 'ի Կոստանդնուպօլիս յամի  
տեառն 1793, 'ի մայր դպրատան, 'ի Մատթէոսի  
գարե, իւրով տպագրաւ: Էջ 74, քոյրս յիստորիս  
էջի տե յաւած է իւրով թ 54. յետ զաւանակ  
11X15

Ճառք դպրոցականք. « Վանուցս Ժառանգա-  
ւորաց դպրոցի աշակերտաց պարգևաբաշխութեան  
հանդիսի մէջ խօսած մէկ քանի ճառեր »: Երկու  
փոքր տետրակներ. Երուսաղէմ, 'ի տպ. Սրբոց Յա-  
կովբեանց, 1863, 1867:

Ճառք Հ. Ռափայելի վարդապետի Թրեանց,  
'ի Մխիթարեան ուխտէն: Վենետիկ, 'ի տպ. սրբոյն  
Ղազարու, 1845: — Ա. Ի սուրբն Ներսէս մեծն: —  
Բ. Ի սուրբն Սահակ Պարթև: — Գ. Ի սուրբն Մես-  
րոպ: — Դ. և Ե. Ի մեծն Մխիթար արքահայր: — Զ:  
Ուսումն պատմութեան: — Է. Ուսումն հայերէն  
լեզուի: — Ը. Կարևորութիւն գաստիարակութեան,  
և այլն:

Ճարտասանութիւն համառօտ Յովհաննու Հո-  
լով Վանանդեցւոյ. « Համառօտութիւն Ճարտասա-  
նականի արուեստի: Շարագրեցեալ 'ի Յովհաննիսէ  
վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ ... Տպագրե-  
ցեալ ընդօրծարանում սրբոյ Էջմիածնի, և սրբոյն

Սարգսի զօրավարին: Ի Մարտիլիայ: Յամի ներմար-  
մնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 1674.  
նաւուր նառաջնում յունիսի ամսոյն»: Յէջն 154.  
« Ես Մատթէոս Յօհաննիսեան, որ 'ի գեղջէ եմ Վա-  
նանդեան, եզէ բարգօղ փոքերս գրգկան »:

X Ճարտասանութիւն. « Ճարտասանութիւն բա-  
վանդակեալ 'ի հինգ գիրս: Յօրինեալ ըստ շաւղաց  
երևելի և մեծանուն հեղինակաց Ճարտասանութեան,  
և ճոխացուցեալ յաճախութեամբ ընտիր ընտիր օ-  
րինակաց նախնի հոյակապ մատենագրաց հայկազ-  
նեանս ազգի: Շարադրեալ 'ի Հ. Ստեփաննոս վար-  
ժապետ վարդապետէ Ազոնց, 'ի միաբանութենէ Կա-  
մենապատիւ տեառն Մխիթարայ մեծի արայի ...  
Արդեամբք և ծախիւք բարեպաշտօն և քաջատոհմիկ  
Շահրմանեանց երկոցուն եղբարց հարազատաց՝  
Բարազամեան պարոն Յովսեփին և պարոն Չաքա-  
րին ... Յամի տեառն 1775, 'ի սեպտեմբերի 18. Իսկ  
ըստ Հայոց Թուականին ՌՄԻԴ. 'ի Վենետիկ, 'ի տպ-  
րեմետարեայ Թէոդոսեանց »:

Ճարտասանութիւն վասն բարձրագոյն դա-  
սու. աշխատասիրեալ 'ի Հ. Եփրեմայ Վ. Սեթեան 'ի  
Մխիթ. ուխտէն: « Պարոն Պօղոս Լազարովիչ ընծայէ  
հանգուցելոյ իւրոյ քեռւոյ Աղա Սամուէլի Մկրտչի  
Մուրադեան առ 'ի յիշատակ »: Վենետիկ, 'ի տպար-  
արոյն Լազարու, 1832, ՌՄՁԱ. 42545 15422

Ճարտասանութիւն առձեռն, համառօտեալ  
'ի Հ. Եգուարգայ Վ. Հիւրմուզ, 'ի Մխիթ. ուխ-  
տէն: Վենետիկ, 'ի տպ. Ս. Լազարու, 1841, 1856:

Ճարտասանութիւն կամ Ճարտարախօսութեան  
արուեստ, զոր յօրինեալ է Հ. Մատթիայ Գարա-  
գաշ, յաշակերտաց մեծի հօրն Մխիթարայ: Վիեն-  
նա, 'ի տպ. Պաշտպան Ս. Աստուածամանի, 1844:

\*Ճարտասանութիւն համառօտ կամ Նոր՝ Ճա-  
շակ դպրութեան: Աշխատասիրեաց Եղիազար Մու-  
րատեան: Երուսաղ. 'ի տպ. Ս. Յակովբեանց, 1869:

Handwritten notes and signatures at the bottom of the page, including the number 14557 and the year 1893.

Տես Խաչատուր վարդապետ:  
Հրահանգք Գառարանութեան:  
Տարերք հռետորական արուեստի:

\*Ճաւայի դատապարտեալք, պատմական վէպ:  
Աղաւ Թարգմանութիւն Հ. Նիբել վ. Չազրճեան,  
'ի Միխիթ. ուխտէն: Վեննա, Պաշտպան Ս. Ա.  
տուածածնի վանքը, 1858:

Ճեմարան գիտելեաց. « որ է համառօտ տեղե-  
կութիւն հարկաւոր գիտութեանց, ազատական ա-  
րուեստից 'ի պէտս ուսումնասէր մանկանց յօրի-  
նեալ ոտանաւոր չափմամբ՝ հանգերձ ծանօթու-  
թեամբք և տախտակօք պատկերաց. 'ի Հ. Մինաս  
վարդապետէ Բժշկեան Տրայիզոնցւոյ, յաշակեր-  
տութենէ ամենապատիւ տեառն մեծին Միխիթա-  
րայ »: Վեննաիկ, 'ի տպ. Ս. Ղազարու, 1815, 1818:

նվի  
380  
11x19

\*Ճերմակ կամ Պարոն Ս. Փափաղեան և Իր Ժա-  
մանակր: Գրեց Արմենակ Հայկունի: Կ. Պօլիս, Ա.  
րևելեան Համագրացին տպարան, 1863:

\*Ճիզվիթն: Գործ ... Արբայի: Թարգմանեաց 'ի  
գաղղիականէ Յ. Աթթարեան: Կ. Պօլիս:

\*Ճշմարիտ բարեկամ տղայոց, գաղղիարենէ  
Թարգմանուած: Կ. Պօլիս, 'ի տպ. Ռ. Յ. Բիւրք,  
Ճեան, 1856:

\*Ճշմարիտ դարձ կամ Յաւիտենական Ճշմարտու-  
թիւններ: Վեննաիկ, Ս. Ղազար, 1850:

Ճշմարիտ իմաստութիւն « կամ Խոկմունք ու-  
մանք հզօրագոյնք առ 'ի ամեւ զսիրտս մարդկան, 'ի  
բարի երկիւղն Աստուծոյ: Դասակարգեցեալք վասն  
իւրաքանչիւրոյ աւուրն շքաթու. հանգերձ ու-  
սումնագրութեամբ աղագս բարեպէս խոստովանե-  
լոյ: Երարդեցաւ իտալերէն յուսմանէ վարդապե-  
տէ և հոգեից քարոզողէ 'ի կարգէ Յիսուսեանց և  
Թարգմանեցաւ 'ի հայ բարբառն յայլմէ ուսմանէ Աս-

*Ճիզվիթն և Վիթիթն, իւր իւր ստուգար. Պօլիս  
Պարոն Պարոն Պարոն Պարոն Պարոն Պարոն Պարոն  
Պարոն Պարոն Պարոն Պարոն Պարոն Պարոն Պարոն*

Պարոն Պարոն Պարոն Պարոն Պարոն Պարոն Պարոն  
Կ. 258 16x9

տուժոյ ծառայէ 'ի նոյն կարգէն: ... Ի հայ Թվին  
Քրիստոսի ՌՁԹԸ, և Հայոց ՌՃԿԵ, յուսկարի Էն, 'ի  
մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսի » :

Ճշմարիտ նշանակութիւնն Կաթուղիկէու-  
Թեան « տպագրեցեալ երկրորդ անգամ, 'ի հայրա-  
պետութեան ամենայն Հայոց, Տեառն Վազարու-  
Ճշմարտասէր կաթուղիկոսին : Ռդորմութեամբ և  
արովք՝ քրիստոսասէր և բարեպաշտուհի Կիււ խա-  
թուհին: Ձրի բաշխեալ: Թուին Հայոց 1199 » : Յա-  
ռաջաբանին մէջ կ'ըսէ. « ... Աղաչեմ զընթերցողս զի  
մի ոք մեղագրեցէ զմեզ՝ վասն սակաւութեան վը-  
կայութեանց Գրքիս այսորիկ. զի 'ի մէջ բանտի շա-  
րագրեալ եմք զսա. ոչ ունելով զայլ գիրք՝ բաց 'ի  
նոր կտակարանէն » : Հեղինակն է Կէորդ Մխէլիմ,  
ինչպէս յայտնի կ'ակնարկեն 195 իջին խօսքն. « Ճըշ-  
մարտութեամբ ասեմ 'ի Քրիստոս և ոչ ստեմ. վը-  
կայէ Աստուած 'ի հօգի իմ, զի յետ վեց տարի ու-  
սանելոյս իմոյ 'ի Թագաւորական դպրատանն Փարի-  
զու. ապա Թէ 'ի վերջն զայս Ճշմարտութիւնս իմա-  
ցայ և ուսայ, որ 'ի վերայ հաւատոց ոչ յետ գնել  
պարտ է և ոչ 'ի վերայ գնել. և յետոյ յորժամ  
գնացի Հայաստան, տեսի որ ամենայն գեղացիք և  
գոռհիկք, արք և կանայք, երիտասարդք և տղայք,  
ամենեքեան գիտէին զայս գիտութիւնս, զոր ես յետ  
վեց տարի ուսման՝ հազիւ կարացեալ էի ուսանիլ:  
Եւ յամսթ եղեալ զարմանայի ... » : Ի Հռովմ սոր-  
վին ալ կը յիշատակէ յէջ 209. « Զայն ուսուցին  
ինձ պատրիշքն 'ի մէջ դպրատանն, զի մի երբէք զոք  
բամբասեցին » : Յէջն 269 յիշատակարան մը կայ 'ի  
տպագրողաց. « Մանիր ով ընթերցող, զի 'ի մէջ այս  
երկրորդ տպագրութեանս, 'ի բաց Թողաք զվերջին  
տասն նշանն հերձուածողաց. վասն զի կամեցաք  
փոքրացուցանել զգիրքս. զի գիւրին լիցի ամենե-  
ցուն ... կրել զնա 'ի ծոցս և 'ի ճէպս իւրեանց ...  
Չամենայն գիրքս մեր շարագրեմք և տպագրեմք գրա-  
մք մերովք. և ձրի բաշխեմք զնոսա » : (Թուի տպա-  
գրութիւն Կոստանդնուպօլսի) :

Ճշմարտութիւնն հաւատոյ: Տես Փիթրմալ

Պօղոս:

*Handwritten notes:*  
Ճշմարտութիւնն յուսկարի Էն: ...  
Կաթուղիկէու Թեան: ...  
Կաթուղիկէու Թեան: ...  
Կաթուղիկէու Թեան: ...

Ճշմարտութիւն յաւիտեանական. « Շարագրեցեալ 'ի Կառլօ Ռիսօլէ կոչեցելոյ 'ի կարգէ Յիսուսեան. և թարգմանեցեալ 'ի Պետրոսէ վարդապետ Քրիժիղեցւոյ. և սպագրութեամբ 'ի լոյս ածեցեալ 'ի Սարգսէ արքեպիսկոպոսէ Կոստանդնուպօլսեցւոյ, յապաւմամբ խորթ շարագրութեանց որքան իցէր կարելի: Ընդ որս առակձին նաև երկու գեղեցկագոյն Կտակք և Քարոզք՝ վասն Աւագ Ուրբաթի աւուրն: Օժանդակութեամբ ծախուց Մահտեսի Յակօբի որդի՝ Յօհաննէս չէլէպօլոյն Սեղբոսեան ... Յամի տեառն մերոյ 1750, յապրիլի 18, 'ի վենետիկ, 'ի սպար. Անտօնի Պուլթօլի »: Յառաջաբանին մէջ սպագրողն կ'ըսէ. « Աղաչեմ... այնու սիրով ընկալնուլ զգիրքս զայս, որով և ընկալայք զգիրքն Աղբիւր բարի կոչեցեալ. զի և սա շարագրեցաւ 'ի նոյն գովելի հեղինակէ, և թարգմանեցաւ 'ի նոյնոյ թարգմանչէ »:

Ճուարաղ յարձակ եւ 'ի չափաճոյ բանից հին և նոր մատենադրաց: Մոսկուա, 1858:

\*Ճուարաղ, ամսագիր բանասիրական հրատարակեալ 'ի Մսերայ Մագիստրոսէ Մսերեանց և 'ի Զարմայրայ Մսերեանց: Հատոր Ա. Մոսկուա, 1859:

Ճուարաղ, ամսագիր կրօնական, բանասիրական և ազգային գիտելեաց: Հատոր Բ. , 1860-61:

Ճուարաղ, ամսագիր կրօնական և բանասիրական գիտելեաց: Հատոր Գ. 1861-62:

\*Ճրագ հոգւոյ. Զմեռնիս, 'ի սպ. Գուլիէլմ Կրիժիթիթի, 1849:

X Ճրագ ճշմարտութեան. « Գրքուկս կոչեցեալ Ճրագ ճշմարտութեան. շարագրեալ 'ի Յակօբոս պատրիարգէ երբեմն սրբոյ Երուսաղեմի, և նարդեհնս Կոստանդնուպօլսոյ: Որ իբրու Ճրագ՝ ընդ առաջ ընթացեալ ուզողապնացից, յայտնէ զվիհս և զխորխորատս ընդգէմ ճշմարտութեան մաքառողաց: Եւ

1894 6231 10X14



զանդդոյշ պարզափասն՝ ազատէ՛ի յորոգայթից մու-  
 լորուծեանց ստապատիր նոցին առարկութեանց։  
 Տպեցեալ հարկադրութեամբ Տեառն Սահակայ եր-  
 կրորդ Պարթեւի՝ ծայրագոյն պատրիարքի և հայրա-  
 պետի ամենայն Հայոց ... 'ի Թուին Հայոց ՌՄԵ,  
 մայիսի է » : Յիշատակարանն ալ կ'ըսէ. « Յիշեսլիք  
 իսկ՝ զչանկացող լուսոյ ճրագի ճշմարտութեանս այ-  
 սորիկ զտպել տուողն արգեամբ՝ զարժանապատիւ  
 զատուածիմաստ Արահամ վարդապետն Աստա-  
 պատցի, և զնարդենիս արքեպիսկոպոսն Չմիւսնոյ ...  
 Յիշեսլիք և զտպագրոյս սորին անարժան՝ զորդի  
 հանգուցեալ Աստուածատուրի՝ զՅօհաննէս գպիրս » :

52367 16 X 10

\* Մագդաղինէ. վիպասանութիւն ժիւլ Սանտոյ  
 գաղղիացոյն : Վենետիկ, Ս. Ղազար, 1860 ;  
 Տես Զրօսարան մանկանց :

Մագիստրոս : Տես Գր. Մագիստրոս :

\* Մամիլդ, օգտակար պատմութիւններ : Քաղ-  
 զիարենէ Թարգմանեց Յ. Տէրոյենց : Կ. Պօլիս, 'ի  
 տպ. Տէրոյենց, 1861 :

\* Մամիլտ, կամ Նորատի կնոջ մը յիշատակները :  
 Վիպասանութիւն 'ի Ա հատորս . հեղինակութիւն  
 Էօթէն Սիւ գաղղիացոյ . Թարգմանեց Գրիգոր Զի-  
 լինկիրեան : Զմիւսնիս, 'ի տպ. Տէտէեան, 1869 :

Մաղաքիս արեղայի պատմութիւն վասն ազգին  
 Նետողաց : Ի լոյս ընծայեաց Ք. Պ. (Քերովբէ Պատ-  
 կանեան) : Ս. Պետերբուրգ, 'ի տպ. Կայսերական  
 Ճեմարանին գիտութեանց, 1870 :

Հրատարակիչն 'ի գլուխ գրոցն . « Միակ հասեալ  
 առ մեզ երկասիրութիւն Արեղայիս է մատեանս պատ-  
 մութեան ազգին Նետողաց, յորում ճառէ զարշա-  
 ւանաց Թաթարին 'ի Հայս յեւս թք գարու : Միակ  
 ունէաք առաջի օրինակ հեղինակիս, գաղափարեալ  
 յամին 1847 'ի վասն որոցն Ղազարու, և այն՝ բազ-  
 մաօխալ և Թերարան : Անփոփոխ պահելով զուղա-

գրութիւն և զկէտագրութիւն սկզբնագրին, զօտար-  
ազգի և զանիմաց բանս նոտրագրով գրոյմեցաք,  
զլուսաբանութիւն հեղինակիս այլում ժամանակի  
թողեալ: Յաւելլով 'ի վերջոյ գլխատակարան ան-  
յայտ շարունակողին պատմութեան Միքայէլի Ասոր-  
ւոյ և զմեկնութիւն դժուարիմաց այլազգի բառից,  
'ի լայս բնծայեմք զգրքոյկս 'ի գիտութիւն մերազգի  
և օտար բանասիրաց » :

Ouvrage de Malakia - Abéga, ou Malakia-le-  
Moine, traduit par M. Brosset. ( Additions et ec-  
claircissements à l'Histoire de la Georgie depuis  
l'antiquité jusqu'en 1469 de J.-C. Par M. Brosset ).  
Saint-Pétersbourg, 1851.

Թարգմանութիւնն 'ի ռուս բարբառ, երկասիրու-  
թեամբ Քերովրէի Պատկանեան: Փետրպուրկ, 'ի  
ուպարանի Կայսերական Ճեմարանին, 1871:

Մաղթանք չափաւ 'ի Հ. Եգուարգ. Վ. Հիւր-  
միւզ, 'ի Մխիթ. ուխտէն: Վենետիկ, 'ի Գործարա-  
նի վանաց սրբոյն Ղազարու, 1843:

Մամբրէի վերծանողի ճառք: Վենետիկ, 'ի սպ.  
սրբոյն Ղազարու. յամի 1833, ՌՄԵՐ:

Ա. Երանկերոյն Մամբրէի վերծանողի ասացեալ  
'ի յարուրիւնն Ղազարոս:

Բ. Վասն յարուրեան Ղազարոս յառոյր շարարոս:

Գ. Նորին 'ի մեծի առոյր գալստեակ տեսան մե-  
րոյ Յիսուսի Գրիստոսի յԵրուսաղէմ:

Յառաջաբանն կը ծանուցանէ. « Մամբրէի վեր-  
ծանող կոչեցելոյ կրտեր եղբօրն Մովսիս Խորենա-  
ցւոյ և աշակերտակցին, երեք եւեթ մինչև առ մեզ  
ժամանեցին ճառք, մին ի յարուրիւն Ղազարոս, և  
երկու այլ ի գալուստ տեսան յԵրուսաղէմ: Այլ  
սոքա երկու յեփնքս յոյժ ստորե են քան զառա-  
ջինն, զորոց և չկրի ինչ հակառակութիւն. և երրեակ  
են նօսրագիր օրինակք սոցա առ մեզ, մին գրեալ է  
ՌՁԶ թուականին, և միւս երկուքն անթուականք:  
Մնայ մեզ գառաջին ճառն զՅարութեանն Ղազարու  
փոքր ինչ 'ի քնին առնուլ:

« Վէպք իրացն յարութեան Ղազարու զբազում

*Handwritten signature and notes at the bottom of the page.*

և զմեծամեծ հանձարաց զաշխոյժ եռանդիցն բորբոքեալ են 'ի բան և 'ի գիր 'ի հնուքն առ Հարս եկեղեցւոյ, նմին իրի վեց այլևայլ օրինակագրաց անուամբք ճառս գտանեմք 'ի Յարութիւն Ղազարու ասացեալ. յորոց առաջինն Սեւերիանոսի եմեսացւոյ, երկրորդն Հիպոդիտայ բոսարացւոյ, երրորդն Թէոփիլէի, չորրորդն Ոսկեբերանի, հինգերորդն Մամբրէի Վերծանողի Յովնաննոռ աշտարատնին մեկնոռքնէն ասացեալ, և վեցերորդ առանց ուրուք անուան: Այս խուռն յաճախութիւն վարդապետութեանց 'ի մի և նոյն բան՝ շփոթս արկեալ է և յանուանս շարագրողացն զնոսին. մանաւանդ զի չև է հասեալ տակաւին 'ի ձեռս մեր և ասացեալ Մեկնութիւն Մամբրէի յԱւետարանն Յովհաննոռ: Այլ այս որպէս և է, մեր եօթն օրինակք էին առաջի՝ յորոց զտպագրութիւնս զայս արարաք: Երկուք 'ի վերնագրին ունէին զանուն Ոսկեբերանի. այլ 'ի յոյն մատեանս վարդապետիս չգտաք զայն. որ և նօտագիր են և անթուական. այլ երկուք զանուն Մամբրէի, մին նօտագիր գրեալ 'ի ՌՁԶ Թուականին, և միւսն բոլորգիր անթուական. և երեք այլ առանց ուրուք անուան. յորոց երկուքն բոլորգիր՝ մին գրեալ 'ի ՈՅԷ Թուականին, և միւսն անթուական, և երրորդն նօտագիր անթուական: Ի սոցանէ որ զանունն Ոսկեբերանի և Մամբրէի ունէին՝ միաբան էին ընդ իրեարս, նմին իրի և մեք յանուն Մամբրէի տուաք 'ի լոյս ... Իսկ անանունն, զոր և գտաք 'ի մատենի ուրեմն Տօնանամակ կոչեցելոյ, զի ուրեք կարի անմիաբան էր ընդ այլոցն, վասն որոյ ուրոյն և զնա տպեցաք զկնի առաջնոյն » :

Մամուրեան (Մ.): Տես

Ամուրիի մը երագները:

Անգղիական նամականի:

Անիճեալն:

Աշխարհի շրջանն 80 օրուան մէջ:

Արեւելեան Մամուր:

Բանալի հայերէն շարադրութեան:

Պաղանիք Բարիզի:

Պիտելիք եւ պարտիք տղայոց:

Երեք հրացանակիրք:  
Ընթերցարան:  
Ի վանօօ:  
Խորհրդաւոր կղզի:  
Հազար ու մէկ գիշերներ:  
Մանկտի:  
Մանր վէպեր:  
Միքրօ մեղաս:  
Պատմութիւն ընդհանուր:  
Պրաժլօն դերկոմս:  
Վէրթէր:  
Քսան տարի ետք:

Մահ Արելի: Տես կեսնէր:

\*Մահ Ողիմպիադայի Թագուհւոյն Հայոց:  
Գրեց Արմենակ Հայկունի: Ա. Համազգային, տպ.  
Կ. Պօլս, 1864:

\*Մահ Պարետի: Գրեց Մերունին Գարրիէլ Պատ-  
կանեան: Տէր և հրատարակիչ Տիգրան Յարութիւն  
Տէտէեան: Զմիւռնիա, տպագրութիւն Տէտէեան,  
1875:

\*Մայր, առաջին դաստիարակ մանկութեան: Վե-  
նետիկ. Ս. Ղազար, 1875:

\*Մայրենի լեզուի քերականութեան տարերքը.  
Առաջին մասը աշխատասիրեց Նիկ. Տէր-Ղեւոն-  
դեանց: Տիփսիս, 'ի տպ. Մարտիրոսեանց, 1882:

\*Մայր որդեխնամ: Զմիւռնիա, 'ի տպ. Գուլիէլմ  
Կրիֆֆիթի, 1840:

Մայր ցուցակ ձեռագիր մատենից Գրադարանի  
սրբոյ Աթոռոյն Էջմիածնի: Տպագրեալ հրամանա-  
Տեառն Մատթէոսի ընդհանրական Հայրապետի ա-  
մենայն Հայոց: Մխուք 'ի Կարնոյ գաղթական Յա-  
կոբայ վարժապետի Կարենեանց, յօգուտ դպրոցի  
ժառանգաւորաց սրբոյ Էջմիածնի, 'ի 1863 ամի: Ի

Թիֆլիզ, 'ի սպար. Ներսիսեան ազգային Հոգևոր  
Իսկոյնի Հայոց:

Մանանայ հոգեւոր: Տես Մեկնուութիւն ա  
ւետարանի:

\*Մանանայ. Ժողովեաց և 'ի լոյս էած Գ. Վ. Սը-  
րուանձտեանց. Հրամանաւ Հասարակաց կրթու-  
թեան Ժողովոյ: Կ. Պօլիս, Տպագրութիւն Ե. Մ.  
Տնտեսեան, 1876:

« Ես դրականութեան այն շինական մշակն եմ,  
կ'ըսէ Հեղինակն իր գրոց Յառաջարանին մէջ, որ 'ի  
վայրիս և 'ի մայրիս կը թարթափի. լեռնային, դաշ-  
տային տունկեր, ծաղիկներ և բուսեր կը ժողովէ, և  
կողովով կ'ածէ զայն 'ի վաճառ 'ի հրապարակս քա-  
ղաքին, յորմէ առեալ քաղաքացին՝ արուեստիւ կը  
վերատնկէ զայն և կը դարմանէ 'ի պարտէզս և 'ի  
բուրաստանս ապարանից մեծատանց:

« Իսկապէս այս է իմ երկն: Բանասիրաց և գրա-  
սիրաց համար պատրաստած նախնական նիւթ: Ահա

Համ և հոտ հայրենեաց:

Հայաստանի հենարիւնք:

Վեպք հայրենեաց:

Երգք և նուագք հայրենեաց:

Ժառանկապարտեան:

Հայրենեաց զառառական բառեր »:

Մանաւանդական առարկութիւնք: « Præci-  
puæ objectiones quæ vulgo solent fieri per modum  
interrogationis a Mahumeticæ legis sectatoribus  
Judæis et hæreticis Orientalibus adversus catho-  
licos, earumque solutiones. Auctore Michæle Fe-  
bure. Romæ, typis S. Congregationis de Propa-  
ganda fide. MDCCLXXXI. Superiorum permissu ».

— « Մանաւանդականք առարկութիւնք որք հաս-  
րակապէս սովորք են լինել 'ի Մահմետականաց, 'ի  
Յուդայեանց և 'ի հերետիկոսաց արեւելականաց,  
ըստ կերպի և եղանակի հարցման, ընդդէմ կաթո-  
ղիկեաց ուղղափառաց. և նոցին իսկ լուծմունք. 'ի  
հեղինակէ Ֆէպուրեան Միքայէլէ. 'ի Հռոմ. Տպիւք

սրբազանի ժողովոյն Սերեղուծեան հաւատոյն. 'ի  
Թուին ՌՈՁԱ. Մեծաւորաց ակնարկուծեամբ » :

Մանդակունի Յովհաննէս. « Տեառն Յովհաննու  
Մանդակունւոյ Ճառք: Վեհետիկ, 'ի տպարանի  
սրբոյն Ղազարու, յամի 1836, ՌՄՁԵ » :

Յառաջաբանն կը ծանուցանէ. « Ի քսանևից ճառից  
աստի Հայրապետիս, առաջինքն մեծաւ մասամբ  
յանունն Եփրեմի մակագրեալք են 'ի Ճառընտրի ուրեք.  
որպէս և 'ի փարիզացւոց քաղաքին կայ այլ օրինակ  
մի ամբողջ բոլորագիր անթուական նովին մակագրով:  
Այլ առ մեզ նոյն ճառք 'ի նորագիր մատենի միոջ  
ամենայնն յանունն Մանդակունւոյ մակագրին:  
Իսկ 'ի հնագոյն պատուական օրինակն երկաթագիր  
զոր ունիմք և զոր կալաք մեզ առաջնորդ 'ի տպագրուծեան,  
խանգարեալ էր անունն մատենագրին առ հնուծեանն:  
Են 'ի ճառից աստի և ոմանք յայլևայլ գրչագիրս  
միոյն անուամբ վարեցեալ և այլոց յայլուամ... զայս  
և եթ յայսնի գիտեմք, զի 'ի յոյն և յասորի  
բնագիրս մատենագրուծեանցն Եփրեմի չիք և ոչ  
մի 'ի ճառից աստի: Այլ թէ նորին Մանդակունւոյ  
իցեն թարգմանուծիւնք յԵփրեմայ' որոց  
բնագիրն կորուսեալ իցէ, կամ թէ 'ի բանից  
նորին Եփրեմի և Ոսկերերանի ծաղկաբազարեալ  
և յանձնէ յայլ կերպարան անեալ իցէ զնոսին  
ըստ ժամուն պիտոյից 'ի բեմբասացուծիւն ժողովրդեան,  
յորմէ յոմանս 'ի նոցանէ երևի անունն Եփրեմի,  
և ուրեք ևս Ոսկերերանի, չիխսեմք առ ժամագատաստան  
առնել համարձակ: Այլ թէ այսպէս և թէ այն,  
կարծեմք թէ չիցեմք ինչ վրիպակ գործեալ եթէ  
Մանդակունւոյ զնոսին ընծայեցաք ցորչափ օրինակ  
յանունն նորին 'ի ձեռին ունիմք, և 'ի հակառակէն  
ոչ զօրաւոր ինչ հաւաստիք » :

Վասն խոստովանուծեան վարուց յանցանաց: —  
Վասն աստի խարուծեան: ~ Վասն պահոց պնդուծեան:  
— Վասն ընդունելի և անընդունելի աղօթից: —  
Յաղագս ողորմութեան տնանկաց: — Յաղագս պաղոց  
և պատարագաց: — Վասն փոխոց և վաշխից: —  
Յաղագս մտիթարութեան աղքատաց: — Վասն քահանայից  
տեսչութեան: — Յաղագս բամբասողաց:

- Վասն սիրոյ և մախանաց և նախանձու: - Վասն բարկացողաց բարուց: - Վասն ռիսապահաց և քինահանաց: - Վասն սակաւ գողութեան որ ոչ ապաշխարեն: - Վասն չար սովորութեան երգման: - Վասն արբեցողաց անօրէնութեանց: - Վասն անօրէն թատերաց դիւականաց: - Վասն կնաթողաց: - Վասն անամնամոլաց: - Վասն չսիրելոյ զԹշնամիս Աստուծոյ: - Վասն անհեղ հարուածոց կարկառի: - Վասն զգուշութեամբ 'ի խորհուրդն մերձենալոյ: - Վասն մխիթարութեան վախճանելոց: - Ողբք: - Ազօթք: - Յաղագս պէսպէս առաքինութեան խրատու: - Յաղագս պէսպէս ախտից: - Վասն հմայից դիւթականաց: - Կանոնք: - Յաղագս քառասնորգական պահոց: - Ի սուրբ Երրորդութիւնն: - Վասն սիրոյ:

Բ. Տպ. Տեառն Յովհաննու Մանգակունւոյ Հայոց հայրապետի շառք: Երկրորդ ապագրութիւն: Ի Վենետիկ, 'ի տպ. սրբոյն Ղազարու. յամի 1860, 188թ:

Այս ապագրութեան մէջ նորագիււ ա ճառ մ'ալ կայ՝ մակագրեալ. Բան յարատու առ ձգնւորսն:

Մաշտոց. « Գիրք սրբոյն Մաշտոցայ վարդապետի, Արարողութիւն հանապազօրգեան եկեղեցեաց Հայաստանեաց: Պարունակող եօթանց դիւաւորաց խորհուրդունակ սրբազնագործութեանց, և այլոց մանաւորաց պաշտամանց հաստատելոց 'ի հնադունից հարցն սրբոց առ 'ի լրումն հոգեկանին հարկաւորութեան, և մարմնականին պիտանացութեան. սահմանադրեցեալ օժանդակութեամբ հոգւոյն սրբոց: Տպագրեցեալ 'ի տպարանի սրբոյն Էլմիածնի, և սրբոյն Սարգսի զօրավարին. 'ի հայրապետութեան տեառն Յակոբայ կաթուղիկոսի սրբոյ Էլմիածնի: Ծախիւք և սրբագրութեամբ Ոսկանայ վարդապետի և արքեպիսկոպոսի Երևանեցւոյ. 'ի յԱմսգէլտամի. 'ի Թուոյ Փրկչին 1667, դեկտեմբերի 11, իսկ ըստ Հայոց 1116, դեկտեմբերի 1 »:

Բ. Տպ. « Գիրք սրբոյն Մաշտոցայ ... Սարգսի զօրավարին: Ի հայրապետութեան տեառն Յակոբայ ամենից Հայոց կաթուղիկոսի, և 'ի Թազաւորու-

*Handwritten note:*  
 1431, 253. Յորժամագրող իւրոյ զգու. Առ. Լեզուպէ:  
 1544

Թեանն կալլիացւոց Քրիստոսապաշտի և բարեպաշտի Լուսավիճակի չորեքտասաններորդի: Արդեամբք և գոյիւք Աւետիսի և Սողոմոնի պաշտօնատարի. 'ի Մարչիլիայ քաղաքի. 'ի Թուոյ Փրկչին 1676, զեկտեմբերի 11. իսկ ըսա Հայոց 1125, զեկտեմբ. 1 » : Յառաջարանն կ'ըսէ. « ... Փափաքեցեալ ամէներջանկի հօրն Հայաստանեայց տեառն Յակօբայ ամենայն Հայոց գիտապետի, չորիւք ամբք կանխաւ գրեալ էր առ բազմաշխատ և սիրելի աշակերան իւր տէր Ոսկան աստուածարան վարդապետն. տպել ըսա ըսա բաւելոյ կարողութեան իւրոյ, օժանդակութեամբն Աստուծոյ, և ձեռնաբուութեամբ քրիստոսասէր վաճառականաց. յորոյ յաւուրն յայնոսիկ նախ քան զհասանիլ հրամանի պետականին՝ աղաւնամիտ վարդապետն միաբանեալ էր ընդ կայենածին և օճարսորոյ արիստագաւան չերիցւոյն Թաթէոսի Երևանեցւոյ առ 'ի տպումն Ատենի Սողոմոսին. յորմէ պատճառէ կրեալ զզանազան փորձութիւնս և զնորասես հարուածս ... մահուամբ բարձաւ 'ի կենաց աստի. զորոյ զլիալիք պատմութիւն անցից նորին ամենայնի ընթեանչոց էք 'ի յատուկ գիրս նորին. և այսու ամենայնիւ զկնի մահուան տեառն իմոյ մասնեցայ ես տրուպս փոխանակ նորին 'ի ձեռն անօրէն դողգոսին ամս չորս ... գործելով միշտ (Թագէի) ընդգէմ աղգին Հայոց և սրբոյ աթոռոյն Էջմիածնի և գործարանի նորին, ոչինչ համարելով զամենայն Հայս և զյոյով բանագրանս կաթողիկոսին և ամենայն վարդապետաց ... Որովք ... պատճառօք ոչ կարացաք ցարգ կատարել զհրաման վեհին. այժմ սակաւ ինչ զոգի առեալ ... ձեռն արկտք առ 'ի տպել ... նախ զփոքր Մաշտոցն, և ապա զկատարեալ բունն ըստ հրամանի հոգևոր տիրին » : Յիշատակարանն կը յաւելու. « ... Յիշեսլիք զհոգևոր հայրն և զբազմաշխատ մըշակն զՈսկան արհիեպիսկոպոսն հանգուցեալ 'ի Քրիստոս. և զկենդանի եղբայր նորին զԱւետիսն, և զքեռորդի նոցին զՍողոմոնն. որ կայ մասնեցեալ բազմաց չարչարանաց 'ի Մառչիլիայ սակա գործարանի սրբոյ աթոռոյն Էջմիածնի ... և զիս զնուստորս յամենեցուն զՄկրտիչ անուամբ և եթ բանի սպասաւորս ... հանգերձ ... Զուղայեցի Ոսկեձեռ.



քենց Տէր Գաւթիւն. որ ոչ խնայէ օգնել մեզ 'ի նեղութեանս մերում, 'ի գործառնութիւնս յայս) ... :

Գ. Տպ. « Գիրք սրբոյն ... հոգւոյն սրբոյ : Տպագրեցեալ ոչորմութեամբն Աստուծոյ, և բարեխօսութեամբ սրբոյն Մինասայ զօրավարին : Ի հայրապետութեան տեառն Աղէքսանդրի կաթուղիկոսի ամենայն Հայոց 'ի տպարանի պարոնն Կարապետի որդի արուպ Ասվածատուրի : Ի Թվին ՌՃԿԳ, յաւրիսի իր » : Յիշատակարանն կ'ակնարկէ. « ... Եգաբ 'ի սորա միջի ձեռնագրութիւնն 'ի լաւ և 'ի սոցոգ օրինակէ, որ արարեալ է ... Գրիգորի հոգեարի ... 'ի հայրապետութեան տեառն հանգուցեալ Աղէքսանդրի սըրբազան կաթուղիկոսի ... և առաջնորդութեամբ սրբոյ Երուսաղէմի, և մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Տէր Յօհաննէս վարդապետի » :

Գ. Տպ. « Սուրբ գիրք որ կոչի Մաշտոց, պարունակէ յինքեան զոմանս սրբազան արարողութիւնս Հայաստանեայց եկեղեցւոյ : Տպեցեալ 'ի Կոստանդնուպօլիս քաղաքի. հրամանաւ նորին վերադիտողի տեառն Զաքարիայ ազգասէր և աստուածարան վարդապետի և արքեպիսկոպոսի : Ի տպարանի Յօհաննիսի և Պօղոսի » : Յիշատակարանն է Պազասար դպրի, որ այրպէս կ'ըսէ. « ... Ըղձայի հանապազ սրբագրել զՄաշտոց մի, և նոր տալ տպել ... Աւստի հարկօզ հրամանաւ սրբազան պատրիարքին մեծի Պօլսոյս՝ ձեռնամուխ եղէ 'ի գործս այս : Եարելով առաջի իմ հինգ վեց հնագոյն ընտիր օրինակս, և համեմատելով զնոսա ընդ իրեարս բազում աշխատութեամբ և անհանգիստ աքնութեամբ ... Եւ եթէ գտանիցին սխալանք ինչ և 'ի մերս սրբագրութեան, ներեռնէք տկարութեանս » : Պօլսոյ Յովհաննէս պատրիարքն (Կոլոտ) տպագրութեան հրամանն կու տայ. « Ես Յօհաննէս վարդապետ և արքեպիսկոպոս Կոստանդնուպօլսոյ, ընթերցայ զսրբագրեցեալ օրինակն Մաշտոցիս, և տեսի որ ըստ ամենայնի լի էր ուղղութեամբ. վասն որոյ հարկ եգեալ հրամայեցի տպել զսա և 'ի լյս ածել ... Եւ առ 'ի հաստատութիւն բանիս, զերաքանչիւրսն սոցա՝ կնքեցի և հա 'ի նախկին Թղթին իմովս կնքով » :

Ասոնցմէ ամենէն աւելի հնագոյն տպագրութիւն

մ'ալ կայ Մաշտոցի, որուն միայն քանի մը թերթերն հասած են մեր ձեռքը: Տառքն՝ ձեռագրաց տառից ձեռք. նման, ինչպէս անթուական ժամապրոց և Աղթարաց սրոնց վրայ խօսեցանք, և որով նոյն ատե՛նուան սպագորութիւն կը գուշակուի:

Ե. Տպ. « Մաշտոց. Արարողութիւնք պաշտամանց եկեղեցւոյ Հայաստանեայց ըստ կարգաւորութեան սրբոց Հարցն մերոց, բաղդատուութեամբ բազմաթիւ և հնագիր օրինակաց իբր յիսնից, նաև հնագոյն երկաթագիր ձեռագրի: Վենետիկ, 'ի վանս Ս. Ղաղարու, 1831 »: Յտուաջարանն կ'ակնարկէ. « Կարգաւորութիւն արարողութեանց ամենայն խորհրդոց եկեղեցւոյ (Հայաստանեայց), երանելւոյն Մեսրոպայ վարդապետի և անշուշտ յօրինուած, աջակցութեամբ սրբոյն Իսահակայ, որք միշտ անմեկին ամուլքն էին առ 'ի ձգել զպիտ բարեզարգութեան կրօնից: Այնր աղագաւ և գիրք արարողական կարգաւորութեանց զյօրինողին զաւելի անուանն կաշեալ, Մաշտոց կոչեցաւ: Իսկ յետ նոցա Յովհան հայրապետ Մանգակունի բազում ինչ 'ի վաստակս վարդապետացն յաւել. և այլք եւ յաշակերտոց նոցա՝ Մովսէս և Խոսրով և Ընձակ և Կորիւն և Ղալբիկ, այլովքն հանգերձ, հրամանաւ վարդապետացն, աստի և անտի թարգմանութեամբ առեալ բերին 'ի Հայս կանոնս և օրհնութիւնս, ճոխացուցանելով զկարգաւորութիւնս մեր... Չամենայն դրչագիր մաշտոցս մատենագարանիս մերոյ՝ իբրև յիսուն, անդրէն վերջստին ածաք 'ի բաղդատութիւն. որ վաղ ուրեմն և 'ի բազմավաստակ ծերունւոյն մերոյ 'ի Հ. Վրթանայ վարդապետէ Ասկերեսն բաղդատեալ էին: Բայց յայնժամ չև ևս էր հասեալ 'ի ձեռս մեր երկաթագիր վաղեմի ընտիր մաշտոցն մագաղաթեայ... (որ) թէպէտ և առ թերութեան թերթից ինչ յառաջոյ և յետոյ անթուական, այլ որպէս յամենայն նշանացն գուշակի, անշուշտ գրեալ է յառաջ քան զամն հագար, թերեւս և յառաջագոյն իսկ՝ իբր 'ի սկիզբն ութերորդ գարու, նախ քան զկաթուղիկոսութիւն Իմաստասէր հայրապետին Յովհաննու: Միւս հնագոյն օրինակք գրեալ էին 'ի Ոսե (1216), Ռձ (1221), 2ԳԴ (1345), ԳԼԲ (1383), 2Գ (1485) », և այլն:

Մաշտոց, (համառոտ), 'ի պէտս գործածութեան պաշտօնէից Հայաստանեայց եկեղեցւոյ: Ղալաթիա, Կ. Պօլսոյ, 'ի ապ. Յովհ. Միւհէնտիսեան, 1849:

\*Մանկատաճութիւն որ է բնական, բարոյական և իմացական հրահանգ խնամաաւարութեան մանկանց: Աշխատասիրեաց Սերոբէ Վիչենեան: Ի Կ. Պօլսոյ, 'ի ապ. Յովհաննու Միւհէնտիսեան, 1844:

\*Մանկական երգեր Գամառ-Բաթիպայի աշխատասիրած: Հայերէն գրքերի հրատարակորեան ընկերութեան արգեամբ: Տփլիս, 1880:

\*Մանկավարժ, որ պզտի տղոց վարժութեան համար աղէկ զրոյցներ կ'ընէ: Զմիւռնիա, 'ի ապ. Գուլբեղմսի Կրիֆֆիթի, 1838:

\*Մանկավարժական տարակուսանքներ մեր մէջ: Հեգինակութիւն Սեգրակ Մանգինեանցի: Տփլիս, 1875:

\*Մանկավարժոչիւն համառոտ Սեգրակ Մանգինեանցի: Տփլիս, 1876:

\*Մանկտիք ԵանՖլէօրի գաղղիացւոյն: Թարգմանեց Մ. Մամուրեան: Զմիւռնիա, 'ի ապ. Տէտէեան եղբարց, 1876:

Մանճոնի Աղեքսանդրի Խօսեցեալք. Թարգմանութիւն Եգուարգայ Հիւրմիւզեան, արքեպիսկոպոսի Երրակայ 'ի Մխիթարեան ուխտէն: Վենետիկ, Ս. Ղազար, 1875:

\*Մանոն Լէսքոյ, վիպասանութիւն Փրէվշ գաղղիացւոյ. Թարգմանեց Գրիգ. Զիլինկիրեան: Զմիւռնիա, 'ի ապ. Տէտէեան եղբարց, 1871:

Մանրանկար կամ Մինիաթուրա: Արհեստ մանր նկարչոյ զպատկերս և զայլ ամենայն առարկայս՝ հանգերձ ախտակազ պատկերաց: Յօրինեալ 'ի Հ. Իգնատիոս Վ. Փափաղեան, 'ի Մխիթ. ուխտէն: Վենետիկ, Ս. Ղազար, 1813:

*Handwritten notes in Armenian script, including names like 'Մանրանկար' and 'Մինիաթուրա', and some numbers like '69 386 16 X 10'.*

\*Մանր ուսմունք սրբազան պատմութեան աւետարանի գրեալ 'ի Մսերայ Մազխարոսէ Մսեհեանց: Մոսկուա, 1861:

\*Մանր ուսմունք քրիստոնէական հաւատոյ և սրբազան պատմութեան աւետարանի: Կ. Պօլիս, 'ի տպ. Ռ. Յ. Քիւրքճեան, 1871:

\*Մանր վէպեր տղայոց կրթութեան համար: Երկասիրեց Մ. Մամուրեան: Զմիւռնիա, 'ի տպ. Տէտէեան եղբարց:

\*Մասեաց աղանի, Աւետարեբ Հայաստանեայց. (Կենցաղօգուա բանք: - Տեսարանք Եւրոպայ: - Հանգիստարան աշխարհաշէն մարդկան: - Հայկազեան թանգարան: - Փարիզեան ամառգիր): Հրատարակեալ ազգասէր սատարութեամբ պարոն Ե. գուարգայ Ռաֆայէլի 'Լարամեան: Խմբագիր Գարբիէլ վարդապետ Այվազովքի: Առաջին Տարի: Փարիզ 'ի գրանոցի Ճանիկի Արամեան Նիկոֆրացոյ, 1855: — La Colombe de Massis, Messenger de l'Arménie. Paris, imprimerie Walder, rue Bonapart, 44. — Երկրորդ Տարի: Խմբագրեալ 'ի Գարբիէլ վարդապետէ Այվազովքի, 1856: — Երրորդ տարի: Խմբագրութիւն Գարբիէլի վարդապետի Այվազովքի և Ամբրոսեայ վարդապետի Գալֆայեան, 1857: — Չորրորդ տարի: Խմբագրութիւն ... Խորենայ վարդապետի Գալֆայեան, 1858:

Մասեաց աղանի, ծիածան Հայաստանեայց. ամսագիր կենցաղօգուա, ազգային և քաղաքական գիտելեաց. Խմբագրութիւն Գարբիէլ վարդապետի Այվազովքի. (հայ. գաղղ. և ռուս): Թէոդոսիա, 'ի տպարանի Խալիպեան ուսումնարանի ազգիս Հայոց, 1860...

\*Մասիս Լրագիր քաղաքական, ազգային, բանասիրական, առևտրական: Խմբագիր - հրատարակիչ Կ. Ս. Իւթիւճեան: Պօլիս, 'ի տպ. Մասիս Լրագրոյ, 1856-1883:

*Handwritten notes and signatures at the bottom of the page, including names like 'Աստուծոյ' and 'Գ. Կ...'.*

Մասիլիոնի եպիսկոպոսին Կէրմոնի Փոքր Քա-  
ռանորդք: Թարգմանեաց Հ. Արսէն Կ. Բագրա-  
տունի 'ի Միսիթ.: Վենետիկ, Ս. Ղազար, 1862:

Տես Բեմասացու թիւնք:

\*Մատաղահասաների գերեզման: Տփիս, Գու-  
լամիբեան Գրատուն:

Մատենագիրք (ընտիր): 1. Եղնկայ Կողբացոյ  
Բագրեանդայ եպիսկոպոսի Եղծ ազանդոց, 1826: 2.  
Մովսեսի Խորենացոյ պատմութիւն Հայոց, 1827:  
3. Եղիշէի վարդապետի վասն Վարդանայ և Հայոց  
պատերազմին, 1828: 4. Ներսեսի Շնորհալոյցոյ բանք  
չափաւ, 1830: 5. Գրիգորի Նարեկայ վանից վանա-  
կանի ողբերգութիւն, 1833: 6. Սգարակգեղոս պատ-  
մութիւն Հայոց, 1835: 7. Ներսեսի Շնորհալոյցոյ նա-  
մականի, 1838: 8. Գրիգորի կարողիկոսի Տղոյ կոչե-  
ցելոյ նամականի, 1838. Տեսնալ Ներսեսի Լամբրո-  
նացոյ առեւնարանութիւն, թուղթ և ճառք, 1839:  
9. Մխիթարայ գոյի առակք: - Առակք Ողոմայեանու,  
1842: 10. Գրիգորի Մագիստրոսի քերթուածք,  
1869: 11. Ղազարայ Փարպեցոյ պատմութիւն Հա-  
յոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան, 1873:

Մատենագրութիւնք նախնեաց հրատարա-  
կեալք 'ի Միսիթարեան հարց 'ի Վենետիկ: 1. Բով-  
հաննոշ Ոսկերեանի յԱւետարանագիրն Մատթէոս.  
Գիրք Ա. 1826: 2. Բ. Ոսկերեանի յԱւետարանա-  
գիրն Մատթէոս. Գիրք Բ. 1826: 3. Բ. Ոսկերե-  
անի յԱւետարանագիրն Մատթէոս: Հատուածք,  
1826: 4. Գրիգորի Նարեկացոյ մաաենագրութիւնք,  
1827: 5. Սեբերիանոսի Երևասցոյ Գարաղացւոց  
եպիսկոպոսի ճառք, 1830: 6. Սրբոյն Բարադի եպիս-  
կոպոսի Կեսարու Կապագովկացւոց ճառք վասն վեց-  
օրեայ արարութեան, 1830: 7. Մխիթարայ Հե-  
րացոյ Զերմանց միսիթարութիւն, 1832: 8. Փառա-  
տոսի պատմութիւն Հայոց, 1832: 9. Չնկոք Գրակ  
պատմութիւն Տարօնոյ: Բովհան Մամիկոնեանի եպիս-  
կոպոսի պատմութիւն Տարօնոյ, 1832: 10. Կորիզն  
վարդապետ, Մամբրե վերմանող և Դաշիթ Անյադր

*Տես նաև Մատենագիրք Երևանացի. Տարգմանութիւն Երևանացի Եր. Գրատունացոյ և Մամբրե  
Պատմութիւն. Կրտսէացի 1856 թ. 216.*

մատենագրութիւնք, 1833: 11. Յովհաննոս Իմաստասիրի Օձնեցոյ մատենագրութիւնք, 1833: 12. Սրբոյն Եփրեմի Խորին Ասորւոյ մատենագրութիւնք, Հատ. Ա. Մեկն. Արարածոց-Մնացորդաց, 1836: 13. Ս. Եփրեմի Հատ. Բ. Մեկն. Համաբարբառ Աւետարանի, 1836: 14. Ս. Եփրեմի Հատ. Գ. Մեկն. Թղթոցն Պաւղոսի, 1836: 15. Ս. Եփրեմի Հ. Գ. Ճառք և Աղօթք, 1836: 16. Յովհաննոս Մանդակոչնոյ Ճառք, 1836: 17. Եղիշի վարդապետի մատենագրութիւնք, 1836: 18. Գրիգորի Խոսաւորի մատենագրութիւնք, 1836: 19. Մեկնոչիւն գործոց առաքելոց խմբագիր արարեալ նախնեաց յԱսկերբանէ և յԵփրեմէ, 1839: 20. Պատմոչիւն Սիւրբ սանգրի մակեդոնացոյ, 1842: 21. Մովսէսի Խորնեացոյ մատենագրութիւնք, 1843: 22. Սրիսուկեայ Խաստիվերոցոյ պատմութիւն, 1844: 23. Ներսէսի Խարբրնեացոյ Խորհրդածութիւնք 'ի կարգս եկեղեցոյ և մեկնութիւն Խորհրդոյ պատարագին, 1847: 24. Վարք սրբոց Հարանց և քաղաքավարութիւն նոցին, ըստ կրկին Թարգմանութեան նախնեաց. Հատ. Ա. 1855: 25. Վարք Հարանց և Նեղոսի Խորատր. Հատ. Բ. 1855. 26. Յովհաննոս Ոսկերերանի Կ. Պօլսի եպիսկոպոսապետի Ճառք, 1861: 27. Յովհաննոս Ոսկերերանի մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի. Հատ. Ա. 1862: 28. Յ. Ոսկերերանի Հատածք, Ճառք երկբայականք և անբնագիրք. Հատ. Բ. 1862: 29. Խարոչնեայ գիւանագիր գարի Եղեսիոյ, Թուղթ Աբգարու, 1868: 30. Խոսրովոս Անձնացեաց եպիսկոպոսի մեկնութիւն աղօթից պատարագին, 1869: 31. Վարք և Վիայարսնոչիւնք սրբոց: Հատ. Ա. 1874: 32. Վարք և Վիայար. Հատ. Բ. 1874: 33. Պրատնի Իմաստասիրի տրամախօսութիւնք. Եւթիփոսն, Պաշտպանութիւն Սոկրատայ և Տիւֆոս, 1877: 34. Գիրք վաստակոց (Γεωπονικα) Թարգմանութիւն նախնեաց յարաբացի լեզուէ, 1877:

Ա. Վարդանայ վարդապետի հաւաքունն պատմութեան, լուսարանեալ, 1862:

Բ. Եփրակոսի վարդապետի Գանձակեցոյ համառօտ պատմութիւն 'ի սրբոյն Գրիգորէ ցաւուրս իւր, լուսարանեալ, 1865:

Մատենադարան Արամեան ընկերութեան: Վիէննա, պաշտպան Ս. Աստուածածնի վանքը, 1845-1873: — Ե. Նխարագիր ուսմանց, 1845: Բ. Գիտութիւն տէրութեանց. Հատոր Ա. 1847: Գ. Գիտութիւն վաճառականութեան, 1848: Դ. Պատմութիւն Հայոց, 1851, 1871: Ե. Պատմութիւն քաղաքականութեան Եւրոպական տէրութեանց. Հատոր Ա. 1856: Զ. Նոյն, Հատոր Բ. 1856: Է. Գործնական Արուեստախօսութիւն, 1857, 1869: Ը. Ատլաս կամ Աշխարհացոյց տախտակք, 21, 1857: Թ. Պատմութիւն քաղաքականութեան, Հատոր Գ. 1859: Ժ. Նոյն, Հատոր Դ. 1859: ԺԵ. Գործնական վաճառագիտութիւն, 1867: ԺԲ. Սկզբնական գասագիրք պարզ ուսողութեան, 1868: ԺԳ. Ընդհանուր պատմութիւն համառօտ, 1873:

Մատենադարան կրթական եւ գրօսալի տնտրակաց: Վիէննա, պաշտպան Ս. Աստուածածնի վանքը, 1849-1860: Ա. Խօսք վասն հայրենասիրութեան: Բ. Քրիստափոր Կոլոմբոս, Ամերիկայի գրանուիրը: Ա. Ճամբորդութիւն: Գ. Ճառ Պիտտի Թե Հովուական Աւստրիական եպիսկոպոսաց: Դ. Քրիստափոր Կոլոմբոս: Բ. Ճամբորդութիւն: Ե. Օգտերեւութարանութիւն համառօտ: Զ. Քրիստափոր Կոլոմբոս: Գ և Դ Ճամբորդութիւն: Է. Բարոյական վէպեր. Հատոր Ա: Ը. Յովհաննա տ'Արզ կամ Օւլէանի օրիորդ: Թ. Առողջութիւնը պահպանելու վրայ օգտակար կանոններ: Ժ. Բարոյական թատրոններ. Հատոր Ա: ԺԱ. Տրգատայ առանձնանալը, վերջին օրերն և մեռնիլը: ԺԲ. Արեւելեան յիշատակագիրներ, նամակներէ քաղուած. Հատ. Ա: ԺԳ. Բարոյական վէպեր. Հատ. Բ: ԺԴ. Փեռն. Գորգէզ. Մէքսիկոյի առնուիլը. Հատ. Ա: ԺԵ. Դաստիարակ մանկանց: ԺԶ. Փեռնանա Գորգէզ. Հատ. Բ: ԺԷ. Բարոյական վէպեր. Հատ. Գ: ԺԸ. Փեռնանգ Գորգէզ. Հատ. Գ: ԺԹ. Մեծն Ներսէս: Ի. Պատմութիւն մատենագրութեան Հայոց. Հատ. Ա: ԻԱ. Տարւոյն չորս եղանակները, կամ Նկարագիր սքանչելեաց բնութեան: Գարուն: ԻԲ. Բարոյական թատրոններ. Հատ. Բ: ԻԳ. Արտաշեսեան Արտաւազդայ բարբն ու վախ.

Handwritten note in Armenian script at the bottom of the page, including a date: 1463 6260 1887.

Ճանք: ԻԳ. Տարւոյն չորս եղանակները: Ամառ: ԻԵ. Բարոյական վէպեր. Հաս. Դ: ԻԶ. Տարւոյն չորս եղանակները: Աշուն: ԻԿ. Մերզայեան Մանուկ Պէյ: ԻԸ. Տարւոյն չորս եղանակները: Զմեռ: ԻՓ. Արկածք Վարդայ Մամիկոնենոյ. Հաս. Ա. Լ. Զուարճալիք Բնապատմութեան: ԼԱ. Արկածք Վարդայ Մամիկոնենոյ. Հաս. Բ: ԼԲ. Գիւտերուն պատմութիւնը: ԼԳ. Ուսչինկթըն, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ տէրութեանց գահերէց: ԼԴ. Բարոյական վէպեր. Հաս. Դ: ԼԵ. Նանդուգգեցի Արթուր Կորսոն Բիմին պատահարները: ԼԶ. Գուգ նաւապետին վարուցն ու ճամփորդութեանց պատմութիւնը: ԼԷ. Փրանկիսկոս Սուաւէին բարոյական պատմութիւններէն քաղուածք: ԼԸ. Ճաւայի գատապարտեալք, պատմական վէպ: ԼՊ. Բարոյական վէպեր. Հաս. Ա: Ի. Աշխարհէթ, Թաշահրաց ժամանակէն վէպ: ԻԱ. Գոնրատ կայսրն ու զարմանալի ազան: ԻԲ. Յաւոց խզիկը կամ Գիպուրփ:

Մատենադարան Հայկազնեան ընկերութեան հաստատեալ 'ի 1 յունուար 1859, 'ի Պէշխթաշ Կոստանդնուպ. ։ Այս ընկերութեան արգեամբք տարուած գրքեր:

Ա. Առաջնորդ հայ ընթերցանութեան կամ Նոր քերական և հեգարան: Յօրինեաց Ներսէս Սահակունի Մեղպուրեան: Իններորդ տպագրութիւն: Տպագրութիւն Ռ. Յ. Քիւրքճեան, 1865: Բ. Պարտք տրուալոց: Թարգմանեաց 'ի գաղղիականէ Նշան Զօհրապեան: Գ. Նախագիտելիք մակիսնց: Թարգմանեաց 'ի գաղղիականէ Ստեփան Մոզեան: Դ. Թոռագիտութիւն համասօտ: Յօրինեաց Ստեփան Պ. Պ. Փափազեանց: Ե. Դպրոցի: Լ կամ Լոր քերականութիւն հայերէն: Յօրինեաց Ա. Մ. Վ. Գարագաշեան: Զ. Կրթութիւն հայերէն քերականութեան: Յօրինեաց Ա. Մ. Վ. Գարագաշեան: Է. Քերականական փոքրոժոռքիւն: Յօրինեաց Ա. Մ. Վ. Գարագաշեան: Ը. Սկզբունք տրամաբանութեան: Յօրինեաց Ա. Մ. Վ. Գարագաշեան: Թ. Համասօտ Լոր քերականութիւն: Յօրինեաց Ա. Մ. Վ. Գարագաշեան: Ժ. Գեղազրութիւն հայերէն:



\*Մատենադարան մանկանց, կամ Հաւաքուած օգտակար և զուարճալի պատմութեանց տղոց կըրթութեան համար, (Թարգմանութեամբ կամ հետևողութեամբ Շմիտ գերմանացւոյ) : Վենետիկ, Ս. Ղազար.

1. Ոթոն կամ Կորսուած տղայ, 1839, 1853: 2-3. Չմեռուան իրիկուններ, 1839, 1858: 4. Յուլիոս կամ Հոգեղաւակ մը, 1840, 1859: 5. Երանեակ կամ Թանկոյի Թագուհին, 1841, 1859: 6-7. Իւլանտայի անակը, 1842, 1867: 8. Քարայր օպաշխարութեան, 1853: 9. Թէոփիլէ կամ Պղտի Ճգնաւոր, 1853: 10. Լուգովիկոս կամ Կորսուած տղայ, 1853: 11. Ռոզալիա, Փալէրմոյ քաղաքին մէկ գեղէն, 1853: 12. Քրիստինէ կամ Գառնուկ, 1853: 13. Ֆէնհէյմ կամ Աւաքինութիւն վարձատրեալ, 1853: 14. Ֆէլիքէ կամ Որբ տղայ, 1853: 15. Բարթողիմէոս կամ Հովիւ քարոզիչ, 1866:

X

Մատենադարան նախնեաց. Հատընտիր Քաղուածք 'ի Ս. Գրոց. երկասիրութեամբ Ա. Ս. Վ. Քարապաշ: Հապոր Ա: Կ. Պոլիս, 1866? 1876:

Բ. քաղաք 1867 Էջ 400

Մատթէոս վանանդեցի Յովհաննիսեան: Տես Բնաբանութիւն իմաստասիրական: Դուռն իմաստութեան:

X

Մատթէոսի Ուռհայեցոյ Պատմութիւն Հայոց: Երուսաղէմ, 'ի ապ. առաքելական աթոռոյ սրբոց Յակովբեանց, 1869: « Ի յիշատակ շնորհապարտ ոգւոյ նուիրէ Եսայի արքեպիսկոպոս և պատրիարք սրբոյ քաղաքիս զայս մտտեան, արձան յաւեժական փոխարէն երախտեացն զոր ցուցին յուղևորութեան նորին յԵւրոպա յամի փրկչին 1863, Զմիւռնացի մեծահամբաւ և հարազատ եղբարք: Սպարդալեան և այլ բարեպաշտ և մեծարոյ վաճառականք բնակեալք 'ի Մանչեսթէն » :

Յառաջաբանը կը ծանուցանէ. « ՉՄատթէի Ուռհայեցոյ վարուցն և զկենաց չունիմք ինչ ստուգագոյնս զըռցաբանել առանձն. քանզի և ոչ մի յիշատակութիւնս գէթ Թափառացիս աւանդեցին մեզ

նորին ժամանակակիցք և որ զկնի նորա երևեցան 'ի պատմական աստարիզի ազգային դպրութեանս, և ոչ 'ի մնացորդս տարեգրութեանց գէպ եղև հանել անել մեզ 'ի լոյս զնորա կենայ ինչ հանգամանս, զծննդեանն, զսննդեան և զվախճանին: Նա ինքն Մատթէոս անձամբ զտնձնէն խօսի յիւրական պատմութեան, անուանելով զինքն Ուռնայեցի և Վանահան (յերես 134), յորմէ համարիմք զնա աներկբայ 'ի նմին քաղաքի ծնեալ, և անդ զվարժս ուսմանց իւրոց աւարտեալ, և զսոյն զայս պատմական երկասիրութիւնն 'ի գրի հարեալ. քանզի ասէ յերես 342. « Զամս բազումս քաջաջան քննութեամբ կացի, և արիարար մտք 'ի քաղաքս Միջագետոսց յՈւռնայ ժողովեալ գրեցաք » :

« Սկիզբն առնէ պատմութեան իւրոյ յամէ 932, և հասուցանէ մինչև ցամաք 1036: Զկնի մահուան իւրոյ Գրիգոր Երէց, որ համարի լինել աշակերտ նորին, շարունակէ գրեթէ նովին ոճով լեզուին և նովին ոգւով, և հասուցանէ մինչև ցամաք Տեառն 1162...

« Արկին օրինակք էին առձեռնպատարաստք 'ի սկըսանելն զհրատարակութիւն գրոցս. առաջինն 1107 համարաւ, բոլորագիր հին հասարակ թղթեայ և առանց թուականի. երկրորդն 1031 համարաւ, նօտրագիր, անթուական և նոյնատեսակ թղթով. որոց գրչութիւն ոչ անցանէ ցփէ գարն: Երկրորին ևս ունին 'ի սկիզբն զպատմութիւն սրբոյն Ներսեսի Պարթևի արարեալ 'ի Մեսրոպայ Երիցուէ. և ըզթիւ գլխակարգութեանցն խառնեալ կամ զերկրորդին ընդ առաջնոյն կցեալ: Իսմբանական ճառն Բարսեղ վարդապետի 'ի միումն և եթ նօտրագիր՝ օրինակին գտանէր, որ չէր ազատ 'ի բազմապատիկ վրիպակաց իմաստից և բառից. որպէս էին և ամբողջ օրինակքն երկրորին, վասն որոյ 'ի տեղիս տեղիս ըզմթագոյն և զդժուարիմաց բառս և զիմաստս ուղղեցաք 'ի վերայ գաղղիական թարգմանութեան, ոչ զանց առնելով և առանձին 'ի կարգի ծանօթութեանցն նշանակել զնոսին, և ուրեք 'ի փակագծի ամփոփեցաք զբառսն որ ինքնին պահանջէին 'ի լուսաւորութիւն մասցն: Երրորդ օրինակ մի ևս նօտրագիր և հասարակ թղթեայ և անզգաստ գրչու-

Թեամբ գաղափարեալ, եհաս 'ի ձեռս մեր 'ի յԱմ-  
թայ 'ի սկիզբն ապագրուԹեան երրորդ մասին գրոցս,  
յորում յուսայք գտանել զճառսն Բարսեղ վար-  
գապետի առ 'ի համեմատել ընդ մերումս. և ոչ մի-  
այն պակասէր այն ճառ, այլ և զկէս մասն գրոցս  
զանց արարեալ էին ընդօրինակողք 'ի ՃՄԲ գլխոյ  
և այսր...» :

Chronique de Matthieu d'Edesse (952-1136)  
avec la continuation de Grégoire-le-Prêtre jus-  
qu'en 1162. Dans la Bibliothèque historique ar-  
ménienne, par M. Ed. Dulaurier. Paris, 1858.

Թարգմանիչն 'ի յառաջաբան տեղեկուԹիւնսն...  
« Ma version a été faite sur trois manuscrits in-4<sup>o</sup>  
de la Bibliothèque Impériale de Paris; cotés, les  
deux premiers sous les n.<sup>os</sup> 95 et 99 de l'ancien  
fonds arménien, et le troisième, classé dans le sup-  
plément de ce même fonds. Le manuscrit n.<sup>o</sup> 95  
est tracé avec assez d'élégance... le texte, qui est  
ordinairement assez correct, comprend les 120  
premiers chapitres de la Chronique de Matthieu,  
jusqu'à l'année 530 de l'ère arménienne...

Le manuscrit n.<sup>o</sup> 99 a été transcrit... par un  
scribe à la main inhabile et ignorant... mais il  
est plus complet que le précédent; puisqu'il va  
jusqu'au chapitre 207 inclusivement, 560 de l'ère  
arménienne...

Le troisième manuscrit est une copie des 132  
derniers chapitres de la Chronique de Matthieu et  
de la continuation de Grégoire-le-Prêtre, l'année  
611 de l'ère arménienne. Cette copie a été faite...  
sur cinq exemplaires que possède la Bibliothèque  
du couvent de St.-Lazare de Venise.

C'est en comparant les leçons qui m'ont four-  
nies ces trois manuscrits que j'ai cherché à ré-  
tablir le texte original... Un fragment en avait  
déjà paru en 1850, sous le titre de: *Récit de la pre-  
mière Croisade*, à partir du chapitre 150 jusques et  
y compris le chapitre 253. J'ai refait ma version  
en l'améliorant par de nouvelles recherches, et  
par une étude plus approfondie du monument que  
j'ai entrepris d'interpréter.

*Notice de deux manuscrits arméniens contenant l'histoire de Matthieu Iierets, et extrait de cette histoire, relatif à la première Croisade; en arménien et en français, par M. Chahan de Cirbied. Paris, 1812.*

*Ed. Dulaurier. L'Histoire des Croisades, d'après les Chroniques arméniens. Revue de l'Orient, tome VIII, 1858.*

*Félix Nève. Les Chefs belges de la Ire Croisade, d'après les historiens arméniens. Bruxelles, 1859.*

*Petermann H. Beitrage zu der Geschichte der Kreuzzüge aus armenischen Quellen; Abhandl. der Kön. Akad. des Wissensch. zu Berlin, 1860.*

*Histoire des Croisades. Documents arméniens, par Ed. Dulaurier. (Fragments). Tome I, Paris, imprimerie Nationale, 1869.*

\*Մարդակազմութեան տարրական դասեր, 18 պատկերներով, գարոցների համար. աշխատասիրեաց Զ. Գրիգորեանց: Թիֆլիզ, Յովհ. Մարտիրոսեանցի տպարանում, 1881:

Մարիանէ կուսի վկայարանութիւն. « Պատմութիւն սրբոյ կուսին Մարիանէ: Հանեալ 'ի դազափարէ յորում տպագրեցեալ 'ի Կոստանդնուպօլիս 'ի Թվին Թվականութեան Հայոց 1215: Եւ այժմ տպագրեցեալ 'ի Հնգիկս 'ի մայրաքաղաքս Մազրաս՝ տառիւ յօրինեցեալ 'ի ձեռագործէ Յարութիւն քահանայի որդւոյ Շմաւօն Շիրազեցւոյ առ 'ի օգուտ մանկանցն Հայոց... Յամի տեառն Փրկչին մերոյ 1789 Թիվն Թուականութեան Հայոց 1238 »: Ի վերջ մատենկանս յիշատակարան սպազրոզի. « ... Տպագրեցաւ դրքուկս այս երկու հարիւր հատս առ 'ի պատիւ սերտ մտերմին իմոյ ազնուազուն Աղա Մարութ Յովսէփ Փռնաչեանց կռեցեալ... ով ոք վայելէք զքաղցրաճաշակ դրքոյկս այս, յիշեցէք՝ որդի վտաց և գոյտ (գիւտ) գրոցս, որ յօրինեցաւ ձեռամբ իմով, ամենայն պարագայս, Թէ՛ տառաշինութիւնն և Թէ՛ շարումն կապարից.

ծախիւք և վասպակօք իմոյ՝ Յարութիւնն Եմաւօն, շնորհօքն Աստուծոյ քահանայ Շիրազեցի ... Մազրասուքն: Յունվարի 30, յամի տեառն 1790 »:

Այլ տպ. 'ի Պօլիս. « Վկայաբանութիւն սրտոյ կուսին Մարիանեայ: Վերսին տպագրեալ հրամանաւ տեառն Յօհաննու արհիեպիսկոպոսի և աստուածաբան վարդապետի և քաջաբարոզ պատրիարքի կոստանդնուպօլսոյ: Ի կոստանդնուպօլիս, 'ի տպագրարանի Մատթէոս դպրի: Յամի տեառն 1803, ապրիլի 7 »:

Ասոնցմէ յառաջ 'ի 1766, եղած է 'ի Պօլիս առաջին տպագրութիւնն, զոր կ'ակնարկեն, Գրիգոր պատրիարքին օրով, և որուն օրինակը մեր ձեռքն հասած չէ:

\*Մարգարիտ արքայութեան երկնից: Գրեց Մկրտիչ վարդապետ Խրրմեան: Կ. Պօլիս, 'ի տպ. Յ. Միւհէնախեան, 1866:

*Մարգարիտ Արքայի Երկնից - Յիսկ վարդապետ Խրրմեանի արքայութեան - Երկնից - Պօլիս, 1866*

\*Մարդ: Զմիւռնիա, Տէտեկեան տպարան: Կարգաւոր Գրքարան

\*Մարդաբանութիւն. Միութիւն մարդկային տեսակի: Կ. Պօլիս, Գործարան Զարգարեան, 1871:

\*Մարդավարութիւն, 'ի պէտս ազգային վարժարանաց: Վենետիկ, Ս. Ղազար, 1857:

\*Մարդկային լեզուի եւ առանձինն ազգային լեզուաց վերայ քննութիւնք. 'ի Հ. Պօլոս վ. Յոննանեան, 'ի Մխիթարեան ուխտէ: Վիէննա, պաշտպան սուրբ Աստուածածնի վանք, 1857:

\*Մարդեղութեան (Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ) խորհրդոյն վրայ խօսակցութիւն: Վենետիկ, Ս. Ղազար, 1854:

\*Մարդկութիւն: Կ. Պօլիս, Միւհէնախեան տպարան, 1848:

Մարգարան. Գրեաց Մկրտում կարապետ: Կալկաթա, 'ի տպ. Մարգասիրական ձեմարանի, 1831:

*Մարգարանի վերջին խմբագրութիւնը 1875 թ. 528*

X

1876 Է Բ 141 16 11

X → Մարգարանի վերջին խմբագրութիւնը 1875 թ. 528

\*Մարիամ Սթուարթ, Սկոտլանդի թագուհւոյն պատմութիւնը: Գրեց Հ. Ատուածածաճաբ Վ. Աւագեան 'ի Մխիթ. ուխտէն: Վիէննա, պաշտպան Ս. Ատուածածնի վանքը, 1861:

\*Մարիամին պատմութիւնը: Զմեռնիա, 'ի տպ. Գուլիէլմ Կրիֆֆիթի, 1841:

\*Մարտինոս Լուտերի վարուց եւ նորոգութեան պատմութիւնը. Ի Հ. Ղեւոնդ Վ. Յովնանեան, 'ի Մխիթ. ուխտէ: Վիէննա, պաշտպան Ս. Ատուածածնի վանքը, 1850:

Մարկոս Աւրելիոս. « Գիրք ոսկեղէն եւ թուղթք քաղցրալուրք. յորս ընթեռնանին վարք, արարմունք եւ բարքն իմասանագունեղ փիլիսոփայի եւ ճարտարագունեղ բանաստեղծի, Մարկոսի Աւրելիոսի կայսեր. նորապէս սրբագրեցեալ եւ ուղղեցեալ: Յաւելուն յայսմիկ նորապէս ցանկք ամենից զօրութեանց բանից եւ բարեաց ասացուածոց որք 'ի սմա պարունակին: Թարգմանեցեալ 'ի սպանիականէն 'ի հայկական բարբառ 'ի նախանձայուղ եւ ջանասէր պարոն Գաբրիէլէ Համազասպեան Երևանցւոյ, 'ի յօգուա եւ 'ի զուարճութիւն ազգին Հայոց: Աշխատութեամբ եւ գոյիւք նոյն պարոն Գաբրիէլի, որդւոյ պարոն Արիստակէսին... Տպեցեալ եղև յամի տեառն 1738 փետրուարի 13. Իսկ 'ի թուին Հայոց 1187: Վենետիկ, 'ի տպարանի Անտոնիոսի Պուլթոլի, հրամանաւ մեծաւորաց »:

\*Մարկոս Աւրելիոս կայսեր բարոյական ու իմաստասիրական թուղթերը: Թարգմանութիւն Գեր. Եզուարդոյ Հիւրմիւզ, արքեպիսկոպոսի Երեւակայ 'ի Մխիթ. ուխտէ: Վենետիկ, Ս. Ղազար, 1868:

X Մարմոնթէլ. « Բելիսարիոս, յարացոյց անյիշաչարութեան, յորինեալ նախ 'ի գաղղիական բարբառ 'ի ներհուն Մարմոնտելայ գաղղիացւոյ, եւ անտի թարգմանեալ 'ի լեզու լուսիտանիացւոց, յորմէ եւ անգրածեալ եղև յարամեանս բարբառ 'ի վերապատուելի տեառն Պետրոս վարդապետէ Պուռնազեան

Handwritten notes in Armenian script, including dates like 1849 and 1861, and names like Մարմոնթէլ. « Բելիսարիոս... 1849 ԵՒ 161 12X17

Կարնեցւոյ յաշակեառէն Բրօքահանտի: Ի Մագրաս, 1809. 52 285 16 X 16

Մարտիրոս Բիւզանդացի: Տես Կտակգիրք:

Մեծասմանայ Պետրոսի Քաարերգութիւնք սրբազանք, Թարգմանեալ 'ի ձեռն Հ. Սքուարգայ Հիւրմիւզ արքեպիսկոպոսին Երեւակայ 'ի Մխիթարեան ուխտէն: Վենետիկ, 'ի սուրբն Ղազար, 1876:

Ի մահն Արեւի: - Յիսասիակ, օրինակ Փրկչին: - Յովսէփ Գեղեցիկ: - Ի շարչարանս Փրկչին: - Ի դռն խոյն Հեղինէ: - Ի Յովսէփ արքայ Յուդայ: - Յազակ տարիսն Բեռնիչայ: - Ի Չեկոքիս Հայկազն:

Շղերիբազարիւնք 'ի մահն Աբելի, 'ի զենուսն Իսահակայ, 'ի գերութիւն Յովսէփայ և յազատութիւն Բեռնիչայ. աշխատասիրեաց Յակոբ Կարինեանց՝ գաղթական 'ի Կարնոյ: Մոսկով, 'ի սպ. Օգոստեայ Սեմենի, 1841:

X

\*Մեծասմագիրոսի Պետրոսի սրբազան գործողութիւններ. հատընտիր Թարգմանեալ յիտալական լեզուէ: Ի Կ. Պօլիս, 'ի սպ. Արապեան, 1841, ՌՄԸ: 52 119

10 X 16

Մեծասմանայ Ապաստանարան Սիրոյ. « Բանասեղծութիւն 'ի գիս, Թարգմանեալ ոտանաւոր չափմամբ յիտալական լեզուէ 'ի հայ բարբառ, երկասիրութեամբ Յովհաննու Սգեկեան: Չմիւռնիս, 'ի սպ. եղբարց, Տէտէեան, 1853:

\*Մէթօէրնիք, մեծանուն քաղաքագէտ Աւստրիոյ: Գրեց Ղ. Յովակիմեան: Կ. Պօլիս, 'ի սպ. Արամեան, 1871:

\*Մէլլօրայ (ձիոյայ) Տարերք իմաստասիրութեան 'ի պէտս համբակաց: Յիտալականէն փոխեաց 'ի հայ Գաբրիէլ Գեորգեան Փոթիշանցի, գպիր Սազիմայ: Յ' Սրուսաղէժ, 'ի սպ. սրբոց Յակովբեանց, 1852:

(Տես Մասնաց տղաւնի, Աւետարեր Հայաստանեայց, Ա. Տարի 1856):

\* Commentarius in Evangelia auctore P. Jacobo Villotte Societatis Jesu. արդէր սրոյ եւտրարութե, 20-  
ու Ի Դուկու Վ. Ի Կոպիտ Երանց  
1841, Եջրիս Եւանջելիոց Դե. Դոքոզ. Եւի  
mo. d. Dec. XIV. Superiorum permittit.  
49 616 16 X 22

Մէթոտին վրայ. Գրեց Գ. Կոստանդեան: ԶԺԼԱ.  
Նիս, 'ի տպ. Մսերեան, 1878:

Քննոչքիւն Մէրոտի վրայ անուն գրքուկին, ուղ-  
ղեալ առ ուսումնասէր և ողջամիտ հոյ երիտա-  
սարգս: Յառաջագիմուծիւն: Կ. Պօլիս, 'ի տպար-  
Արամեան, 1882:

\*Մեծն Ներսէս և Հայաստանի վրայ ունեցած  
ազգեցութիւնը. 'ի Հ. Ղեւոնդ Վ. Յովնանեան:  
Վիէն., Պաշտպան Ս. Աստուածածնի վանքը, 1851:

Մեծն Ներսէս կամ Հայաստանի բարերարը. ող-  
բերութիւն 'ի չորս արարուածս. յօրինեաց Սար-  
գիս Վանանդեցի Միրզայեան: Ս. Տպ. Փարիզ, Ա.  
րամեան տպարան, 1858: Բ. Տպ. Երուսաղէմ, 'ի տպ.  
առաքելական ակադեմիոյ սրբոց Յակովբեանց, 1863:

Մեկնութիւն Աւետարանի. « Համառոտ իմն  
մեկնութիւն սրբոյ Աւետարանի Տեառն մերոյ Յի-  
սուսի Քրիստոսի. 'ի վերայ բազմաց և զանազանից  
բանից հաւաքելոց 'ի չորից աւետարանչաց. որպէս  
Ջերմեանդ հոգւոյ մնուցիչ ոգևոր իմն Մանանայ,  
մտածելոյ աղագի: Հատոր Առաջին: Սակս գալըս-  
տեան, մանկութեան և վարդապետութեան տեառն  
մերոյ Յիսուսի Քրիստոսի: Երազրեցեալ 'ի Պատրի  
Պետրոսէ Ռիքարտ 'ի կարգէ Յիսուսի Քրիստոսի ...  
Յամի տեառն 1714, մարտի ամսոյ 8-ը: Մեծաւորի  
հրամանաւ »: (Թուի տպագիր Լիվոանոյի):

Մեկնութիւն Գործոց: Տես Գործոց մեկ-  
նութիւն խմբագիր:

Մեկնութիւն դաւանութեան հաւատոյ. Ex-  
planatio professionis fidæi orthodoxæ jussu SS.  
D. N. Urbani PP. VIII editæ. Auctore P. J. Vil-  
lotte, Soc. Jesu. Romæ, typis S. C. de Propag.  
fide. Anno MDCCXI, superiorum permissu. —  
« Մեկնութիւն գաւանութեան ուղղափառի հաւա-  
տոյ: Երազրեալ 'ի Յակոբ վարդապետէն 'ի կար-  
գէն Յիսուսեանց, յամի տեառն 1711 »:

*Նրկեամբ Զորից արքայապետայ հուսերոյց զարմ  
յազմաւ համարացաւորք, կարգաւորու 27 Երպ. Առ. Յակոբ  
Երջանեան 1886 Եր ձեռ. 13x40*

*Նրկեամբ շարադրութեան ընդ շարադրութեան, զորից  
Ջերմեանդ Վանանդեցի Միրզայեան, Երազրեալ  
Ս. Տպ. Փարիզ, Ա. րամեան տպարան, 1858: Բ. Տպ. Երուսաղէմ,  
'ի տպ. առաքելական ակադեմիոյ սրբոց Յակովբեանց, 1863:*



Մեկնութիւն Երզնգ Երզոյն. « Սրբոյ Հօրն մե-  
րոյ Գրիգորի Նարեկացւոյ Մեկնութիւն Երզոց Եր-  
զոյն Սողովմանի: Տպագրեալ յամի տեառն 1789, 'ի  
նոյեմբ. 23, և 'ի Թուականութիւնս Հայոց ՌՄԼԸ...  
ի վենետիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու, յանուն Ան-  
տօնիոսի Պօռթոլի »: Յէջն 203 դրուած է սուրբ Հե-  
ղինակին ծանօթ և ինքնագիր յիշատակարանն. « Նիջ  
'ի Թուականութեան և 'ի Թագաւորութեան Հայոց »  
և այլն:

Տես Խաչատուր վարդապետ:

Մեկնութիւն ընթերցուածոց: Տես Կոչուամն  
ընծայութեան:

Մեկնութիւն Եսայեայ: Տես Ոսկեքերան:

X Մեկնութիւն Թղթոց սրբոյն Պօղոսի. « Մեկ-  
նութիւն չորեքասան Թղթոց երանելոյն Պօղոսի  
առաքելոյ: Արարեալ ըստ ողջամիտ շաւղաց վարդա-  
պետաց եկեղեցւոյ, ընտրութեամբ հորազատ բնա-  
գրի հայկական Թարգմանութեան, հանդերձ բա-  
ցաքննութեամբ այլոց Թարգմանութեանց: Աշխա-  
տասիրութեամբ տեառն Հ. Գաբրիէլի Աթոռակալ  
վարդապետի Աւետիքեան Կոստանդնուպօլսեցւոյ,  
յաշակերտութենէ նախապատիւ Աբբայի տեառն  
Մխիթարայ Բաբունապետի: Յերրեակ հատորս բա-  
ժանեալ...: Տպագրեալ բարեյօժար արգիւնա-  
տրութեամբ բանասէր պարոնի Տիրացու Հռեթէոսի  
որդւոյ Մահտեսի Սարգսի. յիշատակ բարեաց եր-  
կուց հարազատացն հանգուցելոց՝ պարոն Նիկողի-  
մոսի և պարոն Մանուէլի ... 1806, ՌՄԾԵ: Ի վե-  
նետիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու »: Տես Աղամա-  
լեան: Կոչ Պաշա Թ. Թ. Գաղար:

Մեկնութիւն Ժամագրքի: Տես Խոսարով:

Մեկնութիւն երկոտասան փոքր մարգարէից:  
Տես Ներսէս Լամբրոնացի:

Մեկնութիւն Թղթոյն Եփեսացւոց յօրինեալ

'ի Պետրոս արքեպիսկոպոսէ Աղամաշեան Բերդու-  
մեանց: Երուսաղէմ, 'ի տպ. առաքելական աթոռոյ  
սրբոց Յակովբեանց, 1850:

X

Մեկնութիւն ժամակարգութեան . « Գիրք  
մեկնութեան ընդ որում պարունակի Պաշտօնն Աս-  
տուածային անպատում պարգեւացն: Յամի ներմար-  
մնութեան տեառն 1759, և ընթուարերութեան Ա-  
րամաղնէի 1208ուֆ եղև տպեցեալ... Ժամակար-  
գութեան մատենիկս մեկնեալ համառօտաբար, հարց-  
մամբ և պատասխանատուութեամբ յուսմանէ բա-  
նասիրէ Հայոց: Եւ ապագրութեամբ նարդենիս 'ի  
լոյս ածեցեալ արգեամբք և ջանիւք արանց ոմանց  
բարեպաշտից, 'ի փառս Աստուծոյ: Ի հայրապետու-  
թեան... քաղաքիս առաջնորդութեան Աբրահամու  
արհիեպիսկոպոսի, որոյ յորդորմամբ իսկ տպեցաւ  
յԻզմիր 'ի ծովահայեաց նահանգիս » : Յառաջա-  
բանն ալ կ'ըսէ. « ... Կամեցաւ ոմն բանասէր բա-  
ցայայեալ, և ես հէքս տպագրել » : Իսկ յիշատակա-  
բանն կը ծանուցանէ թէ « ... Զայս համառօտ ժա-  
մակարգութեան մեկնութիւնս գաաք 'ի հին գրեան  
սըն որ ժողովեցեալ էր յուսմանէ բանասիրէ գիտ-  
նականէ. բայց մեկնողին և ժողովողին՝ ոչ քոյր գրեալ  
անուն 'ի մակագրին. սակս որոյ ոչ կարացաք իմանալ  
զայն հաւաստեալ. սակայն բանն և մեկնութիւնն՝ յոյժ  
աղին և գեղեցիկ էր: Յաղագս սրոյ հարկ եղև մեզ  
առաքել զսա առ Սրբազան հայրն մեր և պատրիար-  
գըն Կոստանդնուպօլսոյ Տեառն Յակոբայ աստուա-  
ծաբան վարդապետին. զի տեսցէ և սրբագրեսցէ  
զայս հոգեշահ մատեանս: Եւ նա տեսեալ և սրբա-  
գրեալ՝ կրկին դարձոյց զսա առ մեզ... Եւ եղև ա-  
ւարտն համառօտ մեկնութեանս 'ի Թուին Հայոց  
ՌՄԸ. և հոկտեմբերի 7, 'ի ծովահայեաց քաղաքս  
Իզմիր, 'ի տպարանի Մահասի Մարիոսի » :

Այլ մեկն. ժամակարգութեան 'ի Մատթէոս  
գարէ, տպագրեալ 'ի Կոստանդնուպօլիս, Վի 1795:

Մեկնութիւն ժողովողի. « Մեկնութիւն գրոց  
ժողովողին, արարեցեալ և շարագրեցեալ 'ի Մխի-  
թարայ վարդապետէ Սեբաստացւոյ Աբրայհայր կո.

այս

Գրչագրուայ է զի Զաւարթաթի քաղից և յԻզմիր, յամի տպարան  
1759, կգտնուես զի Զաւարթաթայ արզաւոր և Յաստիկայ  
Զարթաթի: Կտնուես 97-98 և 47:

Հաստատուի ժամակարգի, արարուող իմ  
Սեբաստացւոյ քաղի և Զաւարթաթայ մի  
Սեբաստացւոյ և Զաւարթաթայ քաղի

չեցելայ: Ըստ մտաց և իմացմանց մեկնութեանց  
Հարցն սրբոց և վարդապետաց եկեղեցւոյ, և մեծա-  
մեծաց մեկնչաց աստուածաշունչ սուրբ գրոց: Այլ  
և վերահայեցմամբ երրայականի բուն նշանակու-  
թեան, որ երևի 'ի Թարգմանութիւնս բազմաց լե-  
զուաց. այսինքն Լատինացւոց, Յունաց, Ասորւոց,  
Արաբացւոց և Քաղզէացւոց ... Յամի տեառն 1736,  
ապրիլի 16: Ի վէնէտ. 'ի տպ. Անտոնի Պօսթօլի » :

Մեկնութիւն կաթողիկեայց: Տես Ս ա ղ գ ի ս :

Մեկնութիւն կաթողիկէ Թղթոյն Յակովբայ  
առաքելոյ. « Աստուածաբանական և բարոյական  
Մեկնութիւն կաթողիկեայ գրոց երանելոյն Յա-  
կովբայ առաքելոյն: Արարեալ և շարագրեալ 'ի Հ.  
Տրանչիսկոս Գունելլեան Աստուածարան վարդա-  
պետէն 'ի Կարգէն Յիսուսեան: Իսկ Թարգմանու-  
թեամբ և երկամբք աշխատանոց իտալիական լեզուէ  
'ի հայկական բարբառ 'ի լոյս ածեալ 'ի Աթանաս  
վարդապետէ Կոստանդնուպօլսեցւոյ Տայի Սիմո-  
նեան: Արդեամբք և ծախիւք ազնուաբարոյ և ազ-  
նուամեծար քրիստոսասէր բարեպաշտի ումեմն 'ի  
փառս Տեառն ... Յամի Փրկչին 1749 'ի օգոստոսի  
18. Իսկ ըստ Հայոց յամին ՌՃՂԸ, 'ի վէնէտիկ, 'ի  
տպարանի Անտոնի Պօսթօլի » :

Ի վերջ գրոցն՝ նոր թղթահամարաւ. « Դաւանա-  
կազրոշքիսն սրբազան Մուշք Գրոց » :

Մեկնութիւն Ղուկասու աւետարանին: Տես  
Ի գ ն ա տ ի ո ս վ ա ղ դ ա պ ե տ :

Մեկնութիւն Մատթէի. « Մեկնութիւն սրբոյ  
աւետարանի տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի որ  
ըստ Մատթէոսի: Արարեցեալ և շարագրեցեալ 'ի  
Մխիթարայ վարդապետէ Սեբաստացւոյ Աբբահայր  
կոչեցեալ. ըստ մտաց և մեկնութեանց հարցն սրբոց  
և վարդապետաց կաթողիկէ եկեղեցւոյ. և մեծա-  
մեծաց մեկնչաց սրբոց Գրոց: Եւ աշխատասիրու-  
թեամբ նոյնոյ տպագրեցեալ 'ի յօգուտ մանկանց ե-  
կեղեցւոյ ... յամի տեառն 1737, սեպտեմբերի 18:  
Ի վէնէտիկ, 'ի տպարանի Անտոնի Պօսթօլի » :

*Handwritten notes in Armenian script:*  
... արեւելք ... արեւմուտք ...  
... 1826 ...  
... 90426

Տես Ներսէս Ծնորհալի:  
Յովհան Ոսկեբերան:

Մեկնութիւն Յայտնութեան. « Գիրք մեկնութեանն Յայտնութեանն սրբոյ Յովհաննու Աւետարանչին : Ի Լաթինացոց Թարգմանեցեալ 'ի հայ բարբառ , 'ի Պետրոսէ վարդապետէ Թիֆլիզեցոյ : Տպագրեցեալ ներ տպարանում' սրբոյ Էջմիածնի , և սրբոյ Սարգսի զօրավարի : Ի Կոստանդնուպօլիս քաղաքի և Թուարերութեան Հայոց ՌձԾ . և շին յունվարի ամսոյն . և 'ի Թվին Փրկչին 1700 » : ՅԷջն 205 կը անկեմք հետևեալ վկայագիրը . « Ես Մելքիսեգ վարդապետս՝ կարսղութեամբն և շնորհքն Աստուծոյ պատրիարգս մայրաքաղաքին Կոստանդնուպօլիս տեսի զմեկնութիւնս զայս և հաւանեցայ . զի գտայ զսա ըստ մեկնութեան սրբոց մեծաց վարդապետաց եկեղեցոյ . վասն որոյ ետու զհրաման զի տպագրիցի » : Յետոյ համառօտ յիշատակարանս . « ... Թարգմանեալ եղև սա 'ի Լաթին լեզուէ 'ի հայ բարբառ 'ի Պետրոսէ վարդապետէ Թիֆլիզեցոյ 'ի ինգրոյ ումնն ապիկար բանասիրի ... որ և աւարտն սորին եղև 'ի Թուին փրկչին 1701 . իսկ ըստ Հայոց ՌձԾ . 'ի մայիսի իբն » :

Տես Ներսէս Լամբրոնացի:

Մեկնութիւն Նարեկ աղօթագրոց . « Մեկնութիւն աղօթից և ներբողինաց սրբոյն Իրիգորի Նարեկացոյ Հրեշտակական վարդապետի ... Շարագրեալ և մեկնեալ մեծաւ զգուշութեամբ և շքահայեցութեամբ 'ի Յակոբայ արքեպիսկոպոսէ և պատրիարքէ Կոստանդնուպօլսոյ Աստուածաբան կոչեցելոյ : Եւ սրբագրութեամբ նոյնոյ հեղինակի տպագրեցեալ արդեամբք Տեանն Յարութիւն արքեպիսկոպոսի և աստուածաբան վարդապետի : Յամի Տեանն 1745 , գեկտեմբերի իբ . և Հայոց ՌձՂԹ . 'ի Կոստանդնուպօլիս քաղաքի , 'ի նորակազմ տպարանի տիրացու Գաբրիելին նոր 'ի լոյս ածեալ » : Տես Նարեկի Լուծումն : 1136 ՉԳՂԴ

Մեկնութիւն Յովհաննու : Տ. Ոսկեբերան :

1136 426 24 7 591 29 20000000  
Վերսիս 1 - պիս . Ս . 41 979 10000  
ամս

X

Հասցէն յայտնաբերուի . Ա. Յակ. (առաջինը) , կամ աստուածաբան  
Կոստանդնուպօլսոյ և Նիքիոսի վարդապետի . կամ Կոստանդնուպօլսոյ  
Վարդապետ Բարսեղ Բարսեղեցի . Ի կապիտալում . Եստ  
Հայրապետ 1446 ԿԶ 350 21x17  
\* Հայրապետի Գրք Երբորդի և Նոր Խրատման  
Կոստանդնուպօլսոյ 1446 ԿԶ 350 21x17

Մեկնութիւն սաղմոսացն Դաւթի. « Յօրինեալ  
պանչելի աստուածաբանութեամբ սուրբ և երջա-  
նիկ տեառն մեծին Վարդանայ Բարձրաբերդցոյ՝ լե-  
զուագէտ և բազմազաստակ վարդապետի Հայոցս-  
ծաղկաբաղ հաւաքելով 'ի լուսաւոր մեկնութեանց  
հոգեկիր հարցն՝ Աթանասի, Բարսղի, Եպիփանու,  
Եփրեմի, Դանիէլի և Ներսեսի Լամբրոնացոյ: Ի  
ինգրոյ արհիական տեառն Յովհաննու Բագրատուն-  
ւոյ՝ առաջնորդի սուրբ ուխտին Հաղբատու, և ա-  
շակերտաց իւրոց: Ի Թագաւորութեանն Հայոց որ  
'ի կիւրիկիա՝ Հեթմոյ առաջնոյ: Յամի տեառն 1251.  
և 'ի Թուականութեանս Հայոց եօթնհարիւր: Տպա-  
գրեալ ... հրամանաւ սրբոյ աթոռոյն Էջմիածնի  
ծայրագոյն Նուիրակի, Հիւսիսային կողմունս եղեալ  
ամենայն ազգիս Հայոց՝ առաքելաշաւիղ առաջնորդի,  
Սանահնեցի Երկայնաբազուկ Արղութեանց՝ իշխան-  
ազնեայ Տեառն Յովսեփայ՝ Պսակազգեաց սրբազան  
արքեպիսկոպոսի: Արդեամբք և ծախիւք՝ 'ի Սուրաթ-  
բնակեալ՝ Խօջայ Մինասենց Գրիգոր աղայի որդի 'ի  
Քրիստոս հանգուցեալ Աղայ Յովհաննեսին Զուգա-  
յեցոյ: Յամի տեառն 1797, մարտի 24: Իսկ 'ի  
Թուին Հայոց ՌԾԻԶ՝ 'ի տպարանի նորին բարձր Սըր-  
բազնութեանն: Ընդ հովանեաւ սուրբ Աստուածա-  
ծնայ եկեղեցւոյն որ 'ի յԱժգարխան»: Յէջն 519 յի-  
շատակարան տպագրողի, յորումկը ծանուցանէ Թէ  
սատարք այս գրոց հրատարակմանն « գաշն գրեր են  
որ գրամագլուխն՝ որպէս զվիճակ վաճառուց՝ մնաս-  
ցէ միշտ ներ Տպարանիս անվերջանալի. և որքան ինչ  
ազգասօգուտ գրեանք տպիցին 'ի նոյն տպարանի՝ այն  
գրամով՝ 'ի զանազան ժամանակս, ամենայնն՝ 'ի յի-  
շատակ անուան իւրոյ և իւրայոցն լինիցի » ... :

Տես Պարզաբանութիւն:

Մեկնութիւն Սաղմոսաց, « յօրինեալ 'ի Հ. Մի-  
քայելէ Զամէան՝ յաշակերտութենէ ամենապատիւ  
Մխիթարայ Աբբայհօր: Տպագրեալ հրամանաւ Հո-  
գևոր տեառն Ստեփաննոսի մեծի Աբբայի Ագոնց,  
աստուածապատիւ արքեպիսկոպոսի: Յամի տեառն  
1823 և Հայոց ՌԾՀԲ: Բաժանեալ 'ի տասն հատորս:  
Վենեաիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու »:

Այս ընդարձակ և բազմաՀմուտ գործոյն հեղինակը՝ յառաջարանին մէջ հեռակեալ տեղեկութիւնները կու տայ, զորս կը համառօտենք. «... Յազգի մերում՝ յորում առաւել 'ի գործածութեան տեսանի կիրառութիւն սաղմոսաց, չեղև ումեք առ նախնիս 'ի սոյն համարձակիլ: Առ ժամանակօք լամբրոնացւոյն 'ի խնդիր եղեն կրօնաւորք ունել ինչ այսպիսի. և տեսեալ զոգի զգաստութեան յայրն անարաձա՞ արաչեցին զնա ձեռնամուխ լինել 'ի սոյն: Եւ նա վստահացեալ 'ի Հոգին սուրբ՝ ձեռն էարկ մեկնել ծայրէ 'ի ծայր, ոչ ըստ ճառին՝ այլ ըստ հոգեւորին 'ի պէտս գործածութեան վանականաց. որպէս զի 'ի սաղմոսել նոցա՝ զմիտս բանին ըստ հոգեւորին յանձինս հպեցուցեալ՝ Քաջակեսցեն 'ի ներքուստ հոգւով՝ զոր արտաքուստ նուագեն բերանով...»

«Այլ քանդի այնպիսեօք՝ միայն խորհրդական իմաստ բանին յառաջ բերի, և ոչ նկարագրականն, ցանկային բազումք զնոյն ևս ունիլ: Եւ 'ի սաստկանալ ծարաւոյ նոցա՝ Վարդան վարդապետ Բարձրբերդցի կամեցաւ ձեռն արկանել յայն 'ի խնդրոյ Յովհաննու վարդապետի առաջնորդին Հաղբատու և այլոց ոմանց. բայց կարճութիւն ժամանակին ոչ թողացոյց զնա ընդարձակել զբան իւր. սմին իրի յամփոփ սահման բովանդակեաց զմեկնութիւն իւր՝ ըստ օրինակի համառօտ լուծմանց այլևայլ գրոց, քաղեալ 'ի մեկնութենէ Աթանասի, Եպիփանու, Եփրեմի, Բարսղի, և այլն: ...»

«Բաց 'ի մեկնութեանց աստի արարելոց 'ի լամբրոնացւոյն և 'ի Վարդանայ՝ զայլ մեկնութիւն սաղմոսաց ոչ եղև տեսանել յազգի մերում՝ 'ի նախնեաց անտի, և ոչ գոնէ թարգմանութեամբ, բաց 'ի քանի մի հատուածոց յանուն Եպիփանու, Աթանասի, և այլն: Ի յետին ժամանակս Յովհաննէս վարդապետ Կոստանդնուպօլսեցի 'ի խնդրոյ նահապետին Ագուլեցւոյ հաւաքեաց աշխարհաբառ լեզուաւ մեկնութիւնս 'ի մեկնաբանից, և արար պարզաբանութիւն ինչ յերկուս էջս՝ տպագրեալ 'ի Թուականութեան մերում ՌճԼԵ՝ 'ի մին զբան սաղմոսին գնելով, և 'ի միւսն զպարզաբանութիւն իւր. բայց և այն ոչ է

մեկնութիւն իմաստից, այլ որոշումն շարադրութեան ...

« Զայս տեսեալ լուսահոգի հօր մերոյ մեծի բարունակեալին Մխիթարայ արքայի, կամեցաւ ձեռն արկանել յընդարձակ մեկնութիւն սաղմոսաց. այլ նուազումն ժամանակին ոչ ներեաց սկիզբն առնելոյ. սմին իրի իրրև կտակաւ աւանգեաց աշակերտաց իւրոց՝ փոյթ ունել զամանէ. յորմէ յորդորեալ միոյ՝ ՚ի նոցանէ՝ որ այն ինքն է Մկրտիչ վարդապետ Անանեանց, մինչդեռ պանդխտանայր ՚ի Թեսաղոնիկէ քաղաք, յօժարեցաւ ձեռնամուխ լինել յայս. այլ ՚ի կանխել օրհասին՝ ոչ յաջողեցաւ ինչ:

« Ապա եղաւ հրաման ՚ի վերայ նուաստիս՝ ՚ի մեծաւորէ իմմէ ՚ի գերապատիւ Ստեփաննոսէ արքայէ Մեղքոնեան՝ որ անմիջական յաջորդն էր Մխիթարայ մեծի, աշխատիլ ՚ի սոյն: Եւ ես բանիւ հրամանի նորա հնազանդութեամբ վստահսցեալ՝ արկի զանձն իմ յաշխատանս և ՚ի ճգանս զամս բազումս, մինչև կատարել ինձ զհրամայեալն. զոր և խոնարհութեամբ ընծայեմ իմուան ազին համօրէն »:

Մեկնութիւն սրբոյ Պատարագի: Տես Արճի շեցի Յովհաննէս: - Խոսրով Անձեւազի: - Լամբրոնացի Ներսէս:

Մեկնիչ սրբոյ Աւետարանին. « Commentarium in Evangelia. Auctore P. Jacobo Villotte, Societatis Jesu. Մեկնիչ սրբոյ Աւետարանին. Շարադրեալ ՚ի Յակոբ վարդապետէ ՚ի կարգէն Յիսուսեանց: Romæ, typis Sacræ Congreg. de Propag. fide. Anno MDCCXIV »:

Մեկնութիւն սրբոց սաղմոսացն Դաւթի, հանեալ ՚ի գրոցն սրբոյն Աթանասի և Դաւթի անյաղթ փրկիսոփայի: Կ. Պօլիս, 1801:

\*Մեղու լրագիր, ուսումնական և բանասիրական: Խմբագիր և Հրատարակող Յ. Սըվաճեան: Կ. Պօլիս, ՚ի այս. Յովհաննու Միւհէնախեան, 1857-60:

\*Մեղու Հայաստանի, լրագիր քաղաքական, բանասիրական և առևարական. առաջին խմբագիր-հրատարակիչ Ստեփան քահանայ Մանգինեանց: Տփխիս, 1858-1883:

\*Մենաստանի աղօրին կամ Տարաբաղդ Վարդաշի. Թասրեբդուծիւն հինգ արարուածով: Կ. Պօլիս, 'ի տպ. Յովհաննու Միւհէնտիսեան, 1865:

\*Մեչուխեցա. Սահակ վարդապետ, փոխանորդ Երուսաղէմի: Կ. Պօլիս, 'ի տպ. Յ: Միւհէնտիսեան, 1860:

Մեսրոպ Երեց. « Պատմութիւն երջանիկ վարուց և մահուան երանելի առն Աստուծոյ՝ սրբոյն մեծին Ներսիսի. և որ ինչ մարգարեական ոգւով առաց նախ քան զլինելն: Եւ վասն արիական դործոցն քաջին Մուշեղայ Մամիկոնոյ. և անպարա մահուան նորին զբարտանօք նենգողաց, և այլ ինչ: Տպեցեալ 'ի Թուրն ՌձՁՁ »: Յէջն 223. « Ներբողեան աաղաչափական 'ի վերայ վարուց մեծին Ներսիսի, Առաքել վարդապետի ասացեալ »: Յիշատակարանն ծանուցանէ Թէ « ... Տպեցաւ ... 'ի նորակազմ տպարանի տիրացու Աբրահամին: Արգեամբ և գոյիւք պարոն Գանիելի որդի տիրացու Մովսէսին ... յիշեալք ... զտիրացու Գրիգորն և զգրքածախ տիրացու Յարութիւնն, որ զօրինական ետուն »:

Այլ տպագրութիւն 'ի Մաարաս Հնդկաց. « Պատմութիւն Մնացորդաց Հայոց և Վրաց, արարեալ յուսմանէ 'ի Մեսրոպայ քահանայէ 'ի Հողոց գեղջէ 'ի Վլոյոց ձորոյ յաշխարհէն Սիւնեաց. յամի տեառն 962: Նախ պատմելով զգալստենէն Օրմէլեանց. և ապա զվարուց Սրբոյ մեծին Ներսիսի: Նաև զքաջէն Մուշեղայ զսպարապետէն Հայոց: Ի լոյս անեալ տպիւք և ծախիւք Եղիազարու Շամիրեան կոչեցելոյ՝ աշխատակցութեամբ Մովսէսի Բաղրամեան Հրահանգչին իւրոյ: Նաև քրտնաթոր վաստակօք Կարապետի Մկրտումեան սորին Տպագրողի: Ի զբօսանս և 'ի զուարճութիւն սիրարփի սերնդոց և Թարմահասակ մանկանցն Հայոց ... Յամի մարգեղութեան



Բանին 1775, և 'ի Թուին Հայոց 1224. 'ի Հնգիկո 'ի քաղաքն Մասրաս, 'ի տպարանի Յակոբայ Շափրեան կոչեցելոյ : Յ'էջն 141 գրուած յիշատակարանն կ'ըսէ. « ... Թէպէտ լուեալ եմք զտպագրութենէ զգոյն պատմութեան սրբոյն Ներսիսի, բայց քնաւ 'ի ձեռս ոչ է եկեալ. բայց 'ի գրչագիր պատմութենէ աստի, յորմէ եղև տպագրութիւն. նոյն պէս և Վրացն ... քանզի մեք ոչ յանձնէ ինչ արարաք, կամ զյաւելորդ բան իմն ներմուծաք. այլ ըստ ամենայնի մի և նոյն գրչագիր օրինակին զտպագրութիւն հետևեցուցաք » :

Պատմուհիսն սրբոյն Ներսիսի Պարբեշի Հայոց հայրապետի ('ի կարգի Հայկական Սոփերաց, հատոր 2) : Վենետիկ, 'ի տպարանի Միխիթարեանց, 1853 :

Յառաջարանն. « ... Մի ճանաչի (սա) առ մեզ 'ի գեղեցիկ չափով և համով սոփերաց գարութեան հայ լեզուիս, մանաւանդ ըստ վիպասանութեան առանձին կենցաղականացն : Որոյ և հեղինակ գրոցն Թուրի Ժամանակակից կամ ոչ շատ կրտեր 'ի նմանէն, որպէս յիշեացի և 'ի Ժանօթութիւնսն ... գործ սա ռսկեակ գարու Թարգմանչաց, և ոչ Մեսրովբայ երիցու 'ի Ժուռն կացելոյ' հետևողի և կրկին յերկրորդի պատմութեանս բազում յաւելուածովք 'ի մնացորդաց Հայոց պատմութեանց քաղելով՝ որպէս ասէն » : Մանօթութիւնն ալ կ'ականարկէ. « Աստուծոյ յիշատակութիւն Մեսրովբայ (Թարգմանչի), որպէս և զկնի, մատնանիչ իմն ցուցանէ, զի կամ սա ինքնին գրեաց նախ զվարս մեծի քահանայապետին, և կամ պատմեաց մանրամասն, և մի ոմն յաշակերտաց նորա էյեղ 'ի գիր. բայց հաւանագոյն է Թէ ինքնին զյետին բանս սրբոյն նշանակեալ էր գրով, զազօթան ասեմ և զգուշակութիւնսն. որք ապա փոխեցան 'ի հայ գիր : Իսկ ոյր արդեօք յաշակերտաց Մեսրովբայի գիպողագոյն էր զվարքս գրել. քան Թէ սորին ինքեան քեռորդոյն՝ քաջին Մովսիսի. և հաւաստիս տան կարծեացս որք քննեալ զգիւհանս Երուսաղեմացոց 'ի Ս. Յակոբ՝ ասացին Թէ այս պատմութիւն վարուց Ներսիսի մտկագրեալ էր յանուն Խորոնեցոյն և Սակայն եթէ Մովսիսի գրեալ իցէ և

եթէ Աբրահամն, զի սա կոչի հեղինակ Արևելեայ գրոց պատմութեանց, յորմէ օժանդակեցաւ Մեսրովբ երէց վերստին յերկրող պատմութեանն, և եթէ նոցայն վարդապետի, երեւի ուրեք և ձեռնն օտարի միեւալ 'ի նոյն: — Իսկ բանք յիշատակի Մեսրովբայ երիցու այս են. « Ի ՆԺՁ (967) Թուականիս Հայոց և 'ի վերագիտողութեանն տեառն Վահանայ Հայոց կաթողիկոսի, և յամս Աշոտոյ Բագրատունւոյ Հայոց Թագաւորի 'ի տանէն Շիրակայ, ես Մեսրովպ նուաստ քահանայ 'ի Վայոյ ձորոյ 'ի գեղձէ Հողոցմանց, ուստի Յովսէփ էր երանելի նահատակն յաւուրս սրբոյն Վարդանայ ... մեծ ցանկութեամբ ծաղկաքաղ արարի զգիրքս զայս 'ի Հայոց մնացորդաց յԱրևելից գրոց. զյաղթութիւն և զվատթարութիւն Թագաւորացն Հայոց և Վրաց, և զառաքինութիւն և զքբանչելիս հայրապետաց տոհմից սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և զտեսիլ և զկտակ սրբոյն Ներսէսի, և զյաղթութիւն և զքաջութիւն արիական ազգին Մամիկոնէից ... Եւ արդ զայս հանաւ յԱրևելից գրոց 'ի Հայոց մնացորդացն պատմութեանց, և ետու որդիացելոյ իմոյ սուրբ աւագանին ծննդեամբն՝ Վահանայ Մամիկոնենոյ, 'ի գիւղքն որ կոչի Վարժի »:

Généalogie de la famille de St. Grégoire Illuminateur de l'Arménie, et Vie de St. Nersès, patriarche des Arméniens, par un auteur anonyme du Vme siècle. Ouvrage traduit pour la première fois en français, par Jean-Raphaël Emine. (Collection des Historiens anciens et modernes de l'Arménie, par Victor Langlois). Paris, librairie de Firmin-Didot fr., fils et C.<sup>ie</sup>, MDCCLXIX.

\*Մեղքը խաղալիք չէ: Զմիւռնիա, 'ի ապ. Գուլեկեւր Կրիֆթիթի. 1844:

\*Մեղքի մեծանալոյն եւ զօրանալուն համար: Թարգմանութիւն: Ի Մոսկով. 1840:

Մեսրովպեան տառք. Գաղափար հայկական Մեսրոպեան գրոց, որ ասի Գլխագիր բացայայտեալ

ըստ Ճչգրիտ կանոնի համեմատութեանց, և գծադրեալ 'ի վեշտառան աստիճանս չափոյ մեծութեան: Աշխատասիրութեամբ Հ. Յովհաննէս վարդապետի Ձոհրապետան: Վենետիկ, 'ի Ս. Ղազար, 1816:

\*Մետաքսաբանութիւն «կամ աղէկ մետաքս շինելու արհեստ: Կռճիկեան Յակոբ աղային աշխատութեամբը, Ճէզայիրլեան Հովուեանց ազնուատոհմ Մկրտիչ Ամիրային ուղեղովը և ծախիւբը տըպուեցաւ Կոստանդնուպօլիս, Յովհաննէս Միւհէն տիսեանին տպարանը », 1846:

Մերովպէ, Ողբերգութիւն Ալփիէրեայ, Թարգմանեալ 'ի չափս հայկականս 'ի Հ. Եղուարդայ Հիւրմիւզ, յարքեպիսկոպոսէ Շիրակայ: Վենետիկ, Ս. Ղազար, 1873:

\*Մերենականութիւն Գործնական և Փորձառական: Յօրինեաց Հ. Մանուէլ Վ. Քաջունի 'ի Մխիթ. ուխտէն: Վենետիկ, Ս. Ղազար, 1872:

\*Մէտէորա հանդէս ուսումնական և բանասիրական: Ձմրւնիա, 'ի տպ. Գ. Մսերեան, 1881-83:

\*Մէփիստոփէլ: Կ. Պօլիս, տպ. Մանկոյ, 1870: <sup>4րդ թիւ</sup> 3

Միաբանութիւն Հայոց ընդ Հռոմէական սուրբ Եկեղեցոյն: « Վասն պարզաբանութեան նոյն աւրինացն և է խորհրդոյն սուրբ Եկեղեցւոյ և այլ ևս բազում սուրբ խորհրդոց. որ եղև հրամանաւք Եւճիկիոսի չորրորդ սուրբ փափին 'ի Ժողովն Ֆիւաւրենցւոյ Թ. ՌնԹ: Եւ հրամանաւ սրբազան Գրիգորիոսի հնգեասաներորդի սուրբ փափին. այլ ևս սուրբ Ժողովոյն որ վասն հաստատութեան հաւատոյ են կարգեալ կազմեալ եղև: Թ. ՌՌԳ: Romæ, Excudebat Steph. Paulinus. Superiorum permissu. MDCXXIII ».

Միաբանութիւն Հայոց սուրբ Եկեղեցոյն ընդ մեծի սուրբ Եկեղեցոյն Հռովմայ: Տես Կղեմէս Գալանոս:

→ Ռէսուսմատ Վե Երեսու Վե Եվրոպե Տե  
հոյս արդար քաւալեալս և արեւորդս  
չոյսաբաւ. 1670 64 2257 12717

Միլտոնի Դրախտ կորուսեալ. Թարգմանեալ յանգղիական բնագրէն 'ի Հ. Յարութիւն Վ. Ա. գե. րեան: Վենետիկ, Ս. Ղազար, 1827:

Միլտոնի կորուստ Դրախտին: Թարգմանեաց Հ. Արսէն կոմիտաս Բագրատունի 'ի Մխիթարեանց: Ի Վենետիկ, 'ի Ս. Ղազար, 1861:

«Առ շնորհաշուք վեհափառութիւն Վիկտորիայ դշխոյի Միացեալ Թագաւորութեան մեծին Բրիտա. նիոյ և Իռլանդիոյ՝ այս չափաւ Թարգմանութիւն կորստեան գրախտին Միլտոնի 'ի գրաւոր բարբառ հայկական, նորին հաճութեամբն մեծարանօք ըն. ծայի»:

\*Մի կաթիլ արսուսը զոր կը հեղու Սիսակ հայ մոխիրին վրայ: Կ. Պօլիս, ապագրութիւն Ա. Մ. Ա. ճեան և ընկեր. 1879:

Միհրդատ, ողբերգութիւն: Յօրինեաց Պ. Սարգիս Տ. Մարգար Վանանդեցեան: Առատաձեռնութեամբ մեծայարգ և ազգասէր Գրիգոր աղայի Քէհ. րիպարճեան: Կ. Պօլիս, 'ի տպ. Հ. Գայրլի, 1858:

\*Միշըլէ, Յ.: Մեր, Թարգմանեաց Արրահամ Մու. րասեան: Կ. Պօլիս, 1871:

\*Միութիւն հայութեան, բանախօսութիւն Գեր. Հ. Մաղաքիայ վարդապետի Օրմանեան յԱնտոնեան միաբանութենէ, արտասանեալ 'ի Լսարանին որ յ'Օրթագիւղ կոստանդնուպօլսոյ 'ի 1880: Պօլիս, տպ. Պօզսսի Քիրիշճեան, 1880:

\*Միութիւն վահառականութեան: Կ. Պօլիս, 1866:

\*Միջակ վարդապետարան ուղղափառ հա. ւատոյ Հայաստանեայց եկեղեցւոյ: Յօրինեաց Գաբրիէլ Վ. Այվազեան: Փարիզ, Արամեան, տպ. 1858:

\*Միջնավէպը Հայոց ազգի պատմութիւնից:

*Հայոց ազգի պատմութիւնից, Միջնավէպը, հարցում և ազ. աւստի կրթութեւն, Եւանգելիստ. Էկեղեցւոյ մասին, Եւանգելիստ. Հայոց ազգի զոր զարգացայ 1877 ամսեմբ. Ի Վ. համալսարանից Եւանգելիստ. և Եւանգ. էջ 234 16x11,*

Աշխատասիրութիւն Վերջը կ'իմանաք: 1. Հայերի  
Երասխ գետէն անցնելը: 2. Տաւրիկեան Հայերը և  
Նոր Նախիջեւանայ հիմնարկութիւնը: Ս. Պետեր-  
բուրգ, 'ի տպարանի Ռափայէլի Պասկանեան, 1863:

\*Միրզայեան Մանուկ Պէյին վարուց պատ-  
մուծիւնը, 'ի Հ. Ղեւոնդ Վ. Յովնանեան, 'ի Մը-  
խիթ. ուխտէ: Վիէննա, Պաշտպան Ս. Աստուա-  
ծածնի վանքը, 1852: (Մանուկ Պէյին կենդանա-  
գրովը):

\*Միրզայ եւ Աննա: Գրեաց Ռ. Գ. Բարխուտա-  
րեանց: Տէր և Հրատարակիչ Տիգրան Եարուծիւն  
Տէտէեան: Զմիւռնիա, 'ի տպ. Տէտէեան, 1876:

\*Մին արար ծառայի պատմութիւն: Մոսկով,  
1830:

Միսալ, Missale Sacri Ordini Prædicatorum Au-  
ctoritate Apostolica approbatum. Rmi P. F. Thomæ  
Ripoli, ejusdem Ordinis Generalis Magistri jussu  
editum. Romæ, MDCCXXVIII. Typis S. Congr. de  
Propaganda fide. Superiorum permissu. « Միսալ որ  
է Պատարագամտոյց Սրբազանի կարգին Եղբարց  
Քարոզողաց Առաքելական իշխանութեամբ հաստա-  
տեցեալ. Պատուականագունեղի Հօր Եղբօր Թօմայի  
Ռիպօլ Նոյնոյ կարգին Ձէնէրալ վարդապետի հրա-  
մանաւն տպագրեցեալ: Ի Հռոմ, ՌՁԻԸ. 'ի տպ. սրբոյ  
Ժողովոյն՝ որ է Փրօփականդայ Ֆիդէ »: Թարգմա-  
նիչն՝ որ հաւանականաբար է Թոմաս Խոշկաշինեցի՝  
նոյն կարգէն, մասնաւոր յիշատակարանաւ մը այս  
գրոց տպագրութեան պատմութիւն կ'ընէ. « ... Յետ  
որոյ սրբազան Ժողովն Հռօմէականի, գէ Փրօփա-  
կանդա Ֆիդէ, հաւանեցաւ տպագրելոյ զՄիսալս:  
Հրամանաւ նոցին ելեալ 'ի Հռօմայու, գնացի 'ի Վե-  
նետիկ, յամի տեառն ՌՁԻԳ. և անդ գրեալ և Թարգ-  
մանեալ օրինակեցի ամբողջապէս, ամենեկն համա-  
ձայնելով ընդ լատինացւոց. վերատեսչութեամբ և  
վերաճանաչմամբ՝ վերապատուելեաց Հարց, Միսիթա-  
րայ արքայի, Խաչատրոյ վարդապետի, ըստ յանձնե-

լոյ ասացեալ սրբոյ Ժողովոյն. և գլինի եզերեկոյ՝ վերստին դարձայ՝ ՚ի Հռոմ, յամի տեառն ՌՁԻԳ: Եւ յեա բազում դժուարութեանց և վշտակրութեանց ... սուրբ տարւոջն որ էր թուին Փրկչին ՌՁԻԵ, սկըսաւ զտպագրութիւն մինչև ցամն ՌՁԻԸ, օգոստոսի է ... աւարտեցաւ զտպագրութիւն սրբոյ Մատենիս ... Նախկին թարգմանութիւն սորա եղև ՚ի երանեկէւոյն Բարթօլոմէոսի, զարհիբպիսկոպոսէ, յերկրէն Խտալիոյ ՚ի կարգէ սրբոյն Իօմինիկոսի յամի տեառն ՌՁԼԳ. յորժամ հիմնեալ հաստատեաց զսրբազան կարգն Քարոզողաց ՚ի Մեծն Հայաստան, ՚ի գաւառն Նախիջևանու: Երկրորդ նորոգումն թարգմանութեան ընդ նորագունից տօնից, եղև ՚ի լուսաւոր հոգի Գրիգորէ Մործորեցւոյ, Աստուածաբան վարդապետէ, ՚ի նոյնոյ կարգէ Քարոզողաց, և ՚ի վերոյսացեալ գաւառէ, յամի տեառն ՌՌՁԶ: Իսկ երրորդ թարգմանութիւն և նորոգումն հանգերձ աւպագրութեամբ եղև ՚ի Պատրի ... է Խօշկաշինեցւոյ. ՚ի յայնմանէ վերոյիշեցեալ կարգէ Քարոզողաց, և ՚ի նոյնոյ գաւառէ »:

Միքայէլ Ասորի: « Միխայէլի Ասորոց պատրիարքի ժամանակագրութիւն հանեալ ՚ի հնագոյն գրչագրէ: Երուսաղէմ, ՚ի տպ. Առաքելական աթոռոյ սրբոց Յակովբեանց, 1871 »:

*Chronique de Michel-le-Grand, patriarche des Syriens Jacobites. Traduite pour la première fois sur la version arménienne du prêtre Ischôk, par Victor Langlois. Venise, imprimerie arménienne des Mékhitaristes à St. Lazare, 1868.*

*Extrait de la Chronique de Michel-le-Syrien, par Ed. Dulaurier. (Journal Asiatique, tome XII, 1848 et 1849).*

*Idem. — (Croisades. — Dulaurier. — Documents arméniens, tome I, 311-409). Բնագիր և թարգմանութիւն, 1869:*

— Յաղագս Քահանայոչքեան և Յոշակասաց: Երուսաղէմ, ՚ի տպ. առաքելական ուխտի սրբոց Յակովբեանց, 1871:

\*Միքրոյ - մեղաս, Ժանօ եւ Քոլէն. Ճերմակ  
ու Սել: Վոյթերի վիպասանութիւնք: Չմիւռնիա, 'ի  
տպ. Տէտէեան եղբարց:

\*Միւռութան Հայոց խնդիր. D. S. A. de N. գաղ-  
ղիացւոյ հեղինակութիւն: Փարիզ, Արամեան տպա-  
րան, 1862:

Մխիթար Աբբահայր Սերաստայի: Տես

Բառգիրք:

Դրախտ հոգւոյ:

Դուռն քերականութեան:

Կրթութիւն աղօթից:

Ձայն Քրիստոսի:

Խոկումն վարուց:

Մեկնութիւն Ժողովողի:

Մեկնութիւն Մատթէի:

Քերականութիւն:

Քրիստոնէական աշխարհաբար,  
հանդերձ Տաղարանաւ եւ Շա-  
րականօք:

Քրիստոնէական գրաբառ:

Քրիստոնէական 'ի մեկնելն զպատ-  
կերս հոգեւոր խաղու:

Աբրայ Մխիրարայ Վարդապետի ասացեալ պատ-  
ճառք որք առբերին ընդգէմնոցին, որք ասեն թէ  
ոչ երբէք պարտ է գնալ ուղղափառաց 'ի Ժամն  
Հայոց: Հրատարակեց իւր ծախքովը Վուկաս վար-  
դապետ Տէրտէրեան, կարևոր ծանօթութիւններով:  
Չմիւռնիա, 'ի տպ. եղբարց Տէտէեան, 1879:

Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Ժա-  
մանկագրական: Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին:  
Մոսկվա, 'ի տպարանի Արևելեան Ճեմարանի լե-  
զուաց Տեարց Լազարեանց, 1860:

Բ. Տպ. Հրատարակիչ Քերովէ Տէր-Պետրո-  
սեան Պատկանեանց: Ի Ս. Պետերբուրգ, 'ի տպար-  
կայսերական Ճեմարանի, 1867:

*Histoire Chronologique*, par Mkhitar d'Aïrivankh,  
traduite de l'arménien sur le manuscrit du Musée  
asiatique, par M. Brosset. St.-Petersbourg, 1869.

*Etude sur l'historien arménien Mkhitar d'Aïri-vankh, (XIII<sup>me</sup> siècle). 1. et 2. partie, de la création du monde au commencement de l'ère chrétienne; 3. partie, jusqu'en 1289 de J.-C., par M. Brosset. (Mélanges Asiatiques, tome iv, 315).*

*Notice sur l'historien arménien Mkhitar d'Aïri-vankh, par M. Brosset. (Mélanges Asiatiques, tome, iv, 714-715).*

**Թարգմանութիւն 'ի ոռւս բարբառ, երկասիրութեամբ Քերովրէի Պատկանեան : Փետրուարի, 1869 :**

**Մխիթարայ Անեցւոյ պատմութիւն. « Սկիզբն, գլուխք բսանկօթն և Յաւելուածք » : 'ի լոյս ած Ք. Պ. (Քերովրէ Պատկանեան) : Ս. Պետերբուրգ, 'ի տպար. կայսերական Ճեմարանին գիտութեանց, 1879 :**

**Հրատարակողն 'ի Յառաջարանին. « Զհանգամանաց կենաց Մխիթարայ Անեցւոյ չէ ինչ մեզ յայտնի, բայց այն միայն թէ' էր սա աւագերէց կաթուղեկէ եկեղեցւոյ Անւոյ և եկաց յէլս երկոտասաներորդ դարու : Սա գրեաց զպատմութիւն իւր 'ի խնդրոյ հաւր Հառիճայի վանաց, Գրիգորոյ վարդապետի, և եթող յետնոցս զայլ և այլ երկասիրութիւնս, որք ոչ հասին 'ի ձեռս մեր, և զորոց ճառեն Վարդան և Ստեփանոս մեքապաւլիսն Օրբէլեան : Վարդան կրկնակի յիշէ զՄխիթար յիւրումպատմութեան... Ստեփանոս Օրբէլեան նոյնպէս յիշէ զսա և զգեղեցիկ Պատմութիւն որոս յատեն. « Այլ զի գտեալ էր յիշատակ նախնական զքուցատրութեանց նոցա, նաև ամենայն արութիւնք և գործք երևելիք 'ի տանն Վրաց ազգին Օրբէլեանց 'ի նոցին ժամանակագրոցն, զոր Քարթլիս Յխորեբայ կոչեն, վասն այն մեք ոչ գիտացաք զորպէսն և զկարգ բանիցն, զի և ըստ կարգի շարայարեալ էաք 'ի մատենիս. բայց զոր ինչ գտաք 'ի հայալեզու գիրս սակաւ ինչ յիշատակ' գիցուք, ևս և զվախճան կատարածի նոցա, զոր հաւաստեալ ծանոյց մեզ գեղեցիկ Պատմութիւն Մխիթարայ Անեցւոյ » :**

**« Մեզ չէ յայտ, եթէ պատմութիւնս այս Վրաց, 28**



յիշատակեալն 'ի Վարդանայ և 'ի Ստեփանոսէ, առանձին երկասիրութիւնն էր հեղինակիս, եթէ մասնինչ « աշխարհագրումար զրուցաց » Անեցւոյն : Ինքն այսքան միայն ասէ 'ի նախերգանս իւր թէ « գումարեցի զայսոսիկ գումարումն յերիս պրակս . . . Առջին պրակն սկսանի 'ի Պարոյրայ հայկազնոյ, առաջին թագաւորէ Հայոց մինչև ցՅովանէս վերջին . իսկ երկրորդն 'ի Յովանիսէ ' մինչև 'ի քահանայանաշն տեառն Բարսղի . և երրորդն մինչև 'ի գերեզն զԵրուսաղէմ և ցելս ազգաց Ֆրանկաց » : Ի սոցանէ մտան միայն առաջին Պրակին եհաս 'ի ձեռս մեր, զաւղեալ 'ի ստուար գրչագրի միում 'ի մատենադարանի բարձրը Սրբազան Սարգիս արքեպիսկոպոսին Հասան Զալալեանց, որոյ 'ի լուսաւոր թոյլտուութենէ շահեցեալ տարաք ընդ մեզ 'ի Ս. Պետերբուրգ զերկուս գրչագիր մատեանս 'ի նոյն գրագարանէ վասն ընդաւրինակելոյ 'ի սոցանէ զինչ ինչ բանս . և այժմ 'ի լոյս ընծայեմք զնշխարս Պատմութեան Անեցւոյն, յուսալով զի և զմնացորդն հանդիպեսցի գտանել ումք յաջողագունի քան զմեզ » :

Մխիթարայ բժշկապետի Հերացոյ Զերմանց մխիթարութիւն : Արդեամբք և ծախիւք ազնուական Վարապետ Զէլէպիի Տիւղեան : Վենետիկ, 'ի տպ. սրբոյն Ղազարու, յամի 1832 ՌՄՁԱ : Գրքին մակագիրն է . « Բժշկական անուամբն Աստուծոյ ' միայն վասն երեք ազգ ջերմանցն . արարեալ Մխիթարայ իմաստուն բժշկի, որ 'ի Հեր քաղաքէ ծննդեամբ . և վարժեալ իմաստութեամբն հելլենացոց, Հայոց, արտաքոց և պարսից, օգնականութեամբն Աստուծոյ » :

Հրատարակողք 'ի յառաջաբանին . « Որպէս զյուրովագունից 'ի մերոց արանց բարգաւաձելոց յազգս ազգս առաքինութեանց և 'ի պերճ գիտութիւնս զարգացելոց, նոյն և զմատենագրիս Մխիթարայ որ 'ի Հեր աւանէ' զհանգամանս կենացն գողացաւ 'ի մէնջ վրիպագործ ժամանակն . . . Առ ժամանակօք մեծաց կաթուղիկոսացն Ներսիսեանց և Գրիգորեանց կեցեալ սորա, և ընդ նոսա զոլոր սիրոյ բարեկամութեան պնդեալ, զկշիւ փոխարինին առաքի-

նութեանց իւրոց և զիմաստաստեք-բարոյիցն ընկալաւ զանկեղծ սէր նոցա: Որոց կամեցեալ իսկ թողուլ յետնոցս անջինջ արձանագիր զսիրոյ իւրեանց և զմեծարանաց առ այնպիսի այր մեծարոյ, առաջինն զէքնաղ քերթածն իւր Յաղագս երկնից և զարդուց նորա ընծայեաց սմին ... իսկ երկրորդն, զի մի ան- յիշատակ ելցէ յաշխարհէ այրն ծայրացեալ յուս- մունս իւրոյ ժամանակին, բռնագատեաց զնա յայս երկասիրութիւն ...

« Զբժշկական ճարտարութենէ օրինակագրիս թո- ղումք հմտացելոցն արուեստին զճգրիտ քննու- թեանն բերել 'ի վերայ զդատավճիռ. բայց մեզ ընդ անհնարին մատենայած հմտութիւն առնն զարմա- նալ է, որ 'ի վեր և 'ի վայր 'ի մատենին գտանեմք յիշատակեալ զճարտարս արուեստին որ 'ի համ- ազգեաց, որ 'ի յունաց, որ յտրաքացւոց և որ 'ի պարսից ...

« Յամին 1824 գտաւ գրչագիր օրինակ սորա նօ- տարացի գրով 'ի մատենագարանն արքունի 'ի Փա- րիզ, առանց ինչ յիշատակարանի և կամ թուականի ինչ գրչութեանն. այլ 'ի գրոցն տարազուէ և յորա- կէ թղթոյն կարծի գրեալ յեթնևտասներորդի գա- րուն: Եւ այս միայն գրչագիր էր առաջնորդ մեզ յայսմ տպագրութեան »:

Մխիթարայ քահանայի Սկեւուացւոյ Պատաս- խանիք յաղագս համապատուութեան երկոտասան առաքելոց: Յ' Երուսաղէմ, 'ի տպարանի սրբոց Յա- կովբեանց, 1865:

Մխիթար Գոշ. « Առակք և ոտանաւորք խրա- տականք, ասացեալք 'ի նախնեաց մերոց 'ի հրա- հանգ ուսուցիչսէր համբակաց: Տպագրեալ յամի տեառն 1790, 'ի յունվարի 18. և 'ի թուականու- թեանս Հայոց ՌՄԼԹ ... ի վենետիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու, յանուն Անտօնի Պօռթօլի »:

Մխիթարայ Գոշի Սքակք: - Առակք Ողորմիանու: Վենետիկ, Ս. Ղազար, 1842, 1854:

Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք: Իրաւաբա- նական հետազօտութիւն վահան Մ. վարդապետ



456  
Բաստամեանցի քարե աշտոխե և գրականական  
հանդես Ք. Տարի, Թիւ VI, 65-125. VII VIII, 60-100.  
IX, 54-105. Ա. Պայտաւեան Գաւառի և Արարատի  
շրջանի մասին հարցազրոյցներ 1880 թ. 1-52

Միխիթարեանց Աբէլ վարդապետ: Տես 1780 + 842  
Հանապարհորդութիւն յ Անի: 1782  
Վաղարշապատ:  
Տրապիզոնի Հայոց գաղթականութեան վրայ:

\*Մկրտութեան վրայ Նորադանդներուն վարդապետութեանց քննութիւն: Երազրեց Յովհ. Տէր կարապետեան Տէրոյնց: Կ. Պոլիս, 1845, 'ի տպ. Յովհ. Միւհէնսիսեան:

Մշակականք: Տես Վիրգիլիոս:

\*Մշակ, քաղաքական և գրականական ամենօրեայ լրագիր: Խմբագիր-Հրատարակող Գրիգոր Արծրունի: Թիֆլիզ, 1872-83:

Մշտնջենաւոր Պարզատոմար: Տես Պարզատոմար:

\*Մովիէր, «լը պարպուլիէ» կատակերգութիւն, մէկ արարուածով. Թարգմանեց Տիգրան Գարաբաշեան: Զմիւռնիա, 'ի տպ. Տէտէեան, 1864:

Նոյն հեղինակին ուրիշ կատակերգութիւնները Թարգմանուած յաշխարհիկ բարբառ: - Տղայ մարդկանց խրատ: - Սերը բժիշկի է: - Փոքրստնեագ: - Բրժիշկի բանի: - Թիֆլիզ, Կեդրոնական գրաւաճառանոց:

X  
\*Մոլորութիւնք բողոքականութեան յայտնեալք առ շինականս, Սէքոնոյ Տրանքոյ յետևեան կրօնաւորին: Թարգմանեց Հ. Աղեքսանդր վ. Պաշէան, Միխիթ. ուխտէն: Վիեննա, Պաշտպան Ս. Աստուածածնի վանքը, 1866:

X  
Մոլորութեանց գիրք. Գիրք Մոլորութեանց. այս.

X  
Միստր Ք. Պայտաւեանի և Տրապիզոնի  
պատմական հարցազրոյցներ Թիֆլիզ և  
Արարատի մասին հարցազրոյցներ 1880 թ. 1-52  
Թիֆլիզ, 1880 թ. 1-52

ինքն համառօտ համահաւաքումն վարդապետու-  
 թեանց, զիւրաքանչիւրոց տեսակաց մոլութեանց.  
 և մանաւանդ զեօթանց գլխաւորաց մեղաց, թէ զինչ  
 իցեն և ճրքան խորշէլիք: Ընդ որում և առակցին  
 ոմանք վարդապետութիւնք զպահպանմանէ հնգից  
 արտաքնոց զգայութեանց, և պարզաբանութիւնք  
 զտասանց պատգամաց: Անդրածեցեալ 'ի լաթինա-  
 կանէն 'ի հայ բարբառ 'ի գաւառն Նախջուանու 'ի  
 վաղնջուց ժամանակաց: Իսկ այժմ 'ի լոյս ածեցեալ  
 աշխատասիրութեամբ և սրբագրութեամբ տեառն  
 Մխիթարայ վարդապետի Սեբաստացւոյ Աբբայ Հայր  
 կոչեցելոյ: Եւ տպագրեցեալ արդեամբք պարոն  
 Սարգսի, որդւոյ տիրացու Գէորգի Կոստանգինու-  
 պօլսեցւոյ ... Յամի տեառն 1720. իսկ 'ի Թուին  
 Հայոց ՌՃԿԹ. օգոստոսի 20: Ի վենետիկ, 'ի տպա-  
 րանի Անտօնի Պօլթօլի»: ԿՂ ԿՅ5 1/Մ ԿՂ Ե

Բ. Տպ. « Գիրք Մոլութեանց ... Շարագրեալ  
 'ի Պետրոսէ Աբեղայէ Արագոնացւոյ, որ 'ի կարգէ  
 Քարոզողաց սրբոյն Իոմֆնիկոսի: Թարգմանեալ 'ի  
 լատինականէն 'ի հայ բարբառ 'ի գաւառն Նախջուա-  
 նու, 'ի Թուին Քրիստոսի 1339: Ի լոյս ածեալ և  
 տպագրեալ նախ աշխատասիրութեամբ Տեառն Մը-  
 խիթարայ վարդապետի Սեբաստացւոյ Աբբայ Հայր  
 կոչեցելոյ: Եւ այժմ տպագրեալ երկրորդ անգամ  
 զգուշագոյն սրբագրութեամբ: Արդեամբք և գոյիւք  
 բարեպաշտօն և քաջատոհմիկ Շահրիմանեանց եր-  
 կոցունց եղբարց հարազատաց՝ Բարաղամեան պա-  
 րոն Յովսէփին և պարոն Չաքարին, առ 'ի լուսաւո-  
 րութիւն առաքինասէր մանկանց եկեղեցւոյ ... Յա-  
 մի տեառն 1773. իսկ 'ի Թուին Հայոց ՌՄԻԲ, սեպ-  
 տեմբերի 20: Ի վենետիկ, 'ի տպարանի Դեմետրեայ  
 Թէոդոսեանց »:

\*Մոնիէ - Քրիստոյ, վիպասանութիւն Տիւմայի,  
 'ի 6 հատորս: Գաղղիարենէ Թարգմանեց Տիգրան  
 Յարութիւն Տէտէեան: Չմիւռնիա, 'ի տպ. Տէ-  
 տէեան եղբարց, 1866:

Մովսէս Խորենացի: Տես Խորենացի:



Մսերեանց Մսեր: Հաշտասպատոռն, այն է մանր  
ուսմունք քրիստոսական հաւատոյ: Մոսկուա, 'ի  
տպ. Լազարեան ճեմարանին, 1859:

Հրահանգ քրիստոսական հաշտոյ ըստ ուղղա-  
փառ դաւանութեան եկեղեցւոյ Հոյաստանեայց,  
աշխատասիրութեամբ Մսերայ Մագիստրոսի կրօն-  
ուսոյց ճեմարանի Լազարեան վարժարանի: Մոս-  
կուա, 'ի տպ. Լազարեան ճեմարանին, 1861:

Մանր ուսմունք սրբազան պատմութեան աւե-  
տարանի: Մոսկուա, 'ի տպ. Լազարեան ճեմարանի,  
1861:

Քրիստոսասպատոռն, այն է համառօտութիւն ա-  
ւետարանական պատմութեան. հանգերձ ծանօթու-  
թեամբք: Մոսկուա, 'ի տպ. Լազարեան ճեմարանի,  
1861:

Պատմութիւն կարոչիկոսացն Էջմիածնի 'ի Սիմեո-  
նէ մինչև 'ի Յովհաննէս Ը. ամբ տեառն 1763-1831:  
Գրեալ 'ի Մսերայ մագիստրոսէ Մսերեանց Զմիւռ-  
նացւոյ: Մոսկուա, տպագրութիւն Զարմայրայ Մը-  
սերեանց, 1876:

Տես Խմբագիր չափածոյ բանից:  
Ճռաքաղ:

\*Մտածութիւններ համառօտ: Զմիւռնիա, 'ի  
տպ. Գուլիելմ կրիֆֆիթի, 1847:

\*Մտածութիւն վարդապետութեան 'ի վերայ  
Հաշտութեան. Մասն Ա. և Բ: Կալիաթա, 'ի տպ.  
Մարդասիրական ճեմարանի, 1832:

Մտածութիւնք չարչարանացն Քրիստոսի:  
« Մտածութիւնք 'ի վերայ չարչարանաց Տեառն մե-  
րոյ Յիսուսի. Քրիստոսի: Արարեալ 'ի Հ. Մատթէոս  
վարդապետէ աշակերտէ Միսիթարայ վարդապետի  
մեծի արքայի: Եւ սպագրեալ... յամի տեառն 1759  
'ի սեպտեմբերի 6... Ի վենետիկ, 'ի տպարանի Ան-  
տօնի Պօսթօլի »:

Տես Խմացք: — Լիգուորի:

Մտածութիւնք ցաւոց սուրբ կուսին: « Մը-

աածուծիւնք 'ի վերայ եօթն գլխաւոր ցաւոց սուրբ Աստուածածնին: Արարեալ 'ի յորդորումն բարեպաշտից' 'ի բարբառ գրոց և յաշխարհաբառ: Տեառն Հ. Գաբրիէլի Աւետիքեան Կոստանդնուպօլսեցոյ Աթոռակալ վարդապետի, յաշակերտութենէ Տ. Մխիթարայ մեծի արքայի: Տպագրեալ յամի տեառն 1810, ԲՄԾԹ: Ի վէնետիկ, 'ի վնս Ս. Ղազարու »:

\*Մտածուծիւնք քրիստոնէութեան վրայ, մեծին Նարովոնի: Գազդիարենէ Թարգմանեց Յովհաննէս Տէր Կարապետեան Տէրոյենց: Կ. Պօլիս, 'ի սպ. Տէրոյենց, 1865:

\*Մտամարզութիւն ըստ Բելիսիէի. (Մայրենի ոճ): Մասն Ա և Բ: Աշխատասիրեց Թովմաս Թերզեան: Կ. Պօլիս, 1879:

\*Մտաւոր Ֆիզիքական և բարոյական ինքնակըրթութեան մասին, Զօն Ատ. Բլէկիի, Թարգմանութիւն Շահուդաղեանց: Թիֆլիզ, Կովկասեան գրավաճառանոց Զաքարիայ Գրիգորեանց:

\*Մտքին մշակութիւնը. « Վերի բաները մտածեցէք չէ թէ ան որ երկրիս վրայ է »: Կող. Գ. Չ: Զմիւռնիա, 'ի սպ. Գուլիելմոս Կրիֆֆիթի, 1844:

**Մրգուզ: Տես Յովհաննէս Մրգուզ:**

Մրկանոց կամ Մրգանոց: « Մրկանոց հոգեւորայսինքն կարճառօտ մեկնութիւն քրիստոնէականի վարդապետութեան, և ուսումնայլոց կրթութեանց, որք պահանջին 'ի առաքինեաց մարդկանց: Շարագրեցեալ յուսմանէ աստուածաբան վարդապետէ. 'ի ժամանակի կաթողիկոսութեան սրբոյ աթոռի Էմիաժնայ տեառն Աղէքսանգրի Ճուղայեցոյ ամենից Հայոց կաթողիկոսի: Ի թուականութեան տեառն մերոյ Յիսուսի ԲեճժԳ »: (Թուի տպագիր Մարսիւնոյ կամ Լիվօնոյի):

Մրմունջք Յիսուսի. Գրեաց Գաբրիէլ ծերունի

Պատկանեան: Ռոստով, (Դոնի վրայ), 'ի տպ. Յովհաննու Տէր-Աբրահամեան, 1864:

\*Մրցանակ կաղանդի, առ ուսումնասէր մանկունս: Գրեց Մ. Ս. Գավաֆեան: Կ. Պօլիս, 'ի տպ. Յովսէփայ Գավաֆեան, 1868:

Մօր մը քաշած վշտերը: Տես Ջրօսարան մանկանց:

\*Մօրիս Բլօք, Փոքրիկ ձեռնարկ գործնական տրնտեսութեան. Թարգմանութիւն Սա. Պալասանեանի: Թիֆլիզ, Հրատարակութիւն Հայերէն գրքերի տպագրութեան, 'ի տպ. Մարտիրոսեան և ընկ.:

\*Մօրիս կամ Աշխատութիւն. բարոյավէպ Ջ. Գաւառոյ տիկնոջ: Թարգմանեց 'ի գաղղիարենէ Սա. Թենիկ Գ. Հարենց, ըստ յանձնարարութեան արժանապատիւ Գարեգին Վ. Սրուանձաեանց: Կ. Պօլիս, 1879:

Յակովբայ արքեպիսկոպոսիւ պատրիարքի Կոստանդնուպօլսոյ մայրաքաղաքի Թուղթ խրատական բանից առ ամենայն հոգևոր առաջնորդս և առ համայն եկեղեցական դասս կարգաւորաց, հովուաց եկեղեցւոյ և առ աշխարհիկ իշխանս և առ հասարակ բոլոր ժողովուրդս, հաւաքեալ 'ի սուրբ գրոց: (Խառն ընդ գրաբառ և ընդ աշխարհաբառ): Յամբ տեառն 1851, յունվար, 'ի պատրիարգարանի ամենայն Հայոց 'ի Կոստանդնուպօլիս, 'ի Խուճիսափու: Տպեալ վերստին 'ի տպարանի Յովհաննու Միւհէն ախեան:

Յակովբայ քահանայի Գրիգորենց Գովք Պրիթանիոյ. « Անարհեստ ոտանաւորս ասացեալ Յակոբ Գրիգորենց Հայոց քահանայէս, վասն այսմ Պրիթանիա կղզւոյս, և այլոց բանականաց մեծի և փոքու առ հասարակ ամենեցուն, որք էին ներկայ այսմ ժամանակի »: Վենետիկ, Ս. Ղազար, 1875:



England's Eulogy, written in armenian verse by the Rev. James Grigorenz A. D. 1675. (Text and translation). S. Lazarus - Venice, 1875.

Գրուածքիս վերջը գրուած՝ հեղինակին ինքնագիր յիշատակարաններէն. « ԹՎԻՆ ՌՁՃՀԴ գեղտեմբերի ԺԲ հասայ Սբաթորթ. ուղիղ եկի առ Տօբթօր Մարչալն, զի ունէի անձնառութեան գիր 'ի վերայ սորա. տեսայ զսա յոյժ իմաստուն ճարտար ամենայն լեզուաց, և առաւել ծերութեան ժամանակի՝ սաստիկ ցանկութեամբ կամէր զմեր Հայոց լեզուն ուսանել... »

« Ես Տէր Յակոբ Գրիգորենց Հայոց քահանայս գրեցի սակաւիկ տետրիկս 'ի ինգրոյ Լուսարիսիմօ տօբսօր Մարչալին, 'ի քաղաք Սբաթորթ. ԹՎԻՆ Փրկչին ՌՁՃՀԵ, յունվարի Ե. և Հայոց մեծաց ԹՎԻՆ ՌՃԻԿ, յունվար Ե, օրն ուրբաթ » :

Յակովբ ՄԾբնայ հայրապետ: Տես Զգօն:

Յակովբ Նալեան. « Գիրք աղօթից ամենայն անձանց հարկաւոր: Երազրեալ 'ի Յակոբ պատրիարզէ... Արդեամբք հոգևոր որդւոյ իւրոյ տիրացու կարապետ խոհեմագոյն բժշկի: Յամի տեսուն 1760 և Հայոց ՌՄԹ. յունվարի 4. 'ի տպարանի Աստուածասուրի » : Տես

Գսն ձարան ծանուցմանց:

Ջէն հոգեւոր:

Հոգեշահ:

Ճրագ ճշմարտութեան:

Մեկնութիւն Նարեկացւոյ:

Վէմ հաւատոյ:

Տետրակ զունայնութենէ կենցալ

ղոյս:

Գրիստոնէական:

Յակովբ Շահան Զրպետեան. « Ելք լատինացւոց յարեւել՝ ըստ նախադուշակման մեծին Ներսէսի: Հանեալ 'ի պատմական գրուածոց Մատթէոս երիցու Ոււհայեցւոյ՝ որ պահի 'ի կայսերական գրատան Փարիզոյ: Ի լոյս ընծայեալ սրբագրութեամբ և ծանօթութեամբ 'ի վերայ բնագրին, և

Թարգմանութեամբ 'ի գաղղիական լեզու 'ի Յակոբայ Շահանայ Զրպետեան Եղեսացւոյ, 'ի գաստուովարժապետէ հայկազեան բարբառոյ 'ի գպրոցի արևելեան լեզուաց 'ի նոյն գրատան » :

— « Պատմութիւն դարձի և մկրտութեան Յովհաննու Յովսեփայ Քախիբեան մեծանուն Նրէի՝ բարունոյ Երրայեցւոց 'ի գաւառին Ալամանաց : Որոյ գաւանեալ զուղղափառ հաւատս՝ մկրտեցաւ հանդերձ այլ ևս հինգ գերդաստանօք . որպէս է տեսնել 'ի սոյն պատմութեան շարագրելոյ յինքենէ 'ի լեզու Գերմանացւոց : Թարգմանեալ 'ի մերս յիտալական բարբառոյ 'ի Տէր Յակոբ վարդապետէ Զըրպետեան Եղեսացւոյ յամի Տեառն 1797, 'ի Լիզօնո » :

Տես Ընդհանուր Ծանօթութիւն :  
Մատթէոս Ուռհայեցի :

Յակոբ Շամիրեան : Տես  
Նոր տետրակ :  
Որոգայթ փառաց :

Յակոբ Վիլլոզ . Պատմութիւն իւրոյ ժամանակին . Յիշատակարանն կ'ըսէ . « Յիշեօղէ 'ի մօքրափայլ աղօթս ձեր զ 'ի լոյս ածօլ սորին Տէր Յակոբ վարդապետն 'ի կարգէ Յիսուսեանց , և ընդ նմին Ատամպօլցի Տէր Յարութիւն եպիսկոպոս պատճառ տպագրութեան սորին , և տպաւորութեամբ հոգաբարձու զառաքելագործ Տէր Խաչատուրն ... » : (Յովհաննեան Յար . Պատմ . Նոր Զուղայ , Հատոր Բ . 48 ) :

Յաղագս մարդկային իրաւանց եւ պարտուց : Երարգրեաց Սարգիս վարդապետ Թէոդորեան , վերատեսուչ Հայկազեան վարժարանի : Փարիզ , 'ի գրանոցի Ճ . Արամեան , 1858 : 62 1/2 11 x 14 1/2

Յաղագս Ուսումնարանին Հայոց որ 'ի Մուկով կայսերական հրամանաւ հաստատեալ . 'ի տպարանի Ս . Յովսէփ Յովհաննիսեանի . 1827 , 'ի Պետրոպօլիտ :

Յաճախապատում. « Գիրք որ կոչի Յաճախապատում. ասացեալ սուրբ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին : Յորում պարունակին ճառք յոգնապատումք քսան երեք վասն անհաս էութեանն Աստուծոյ, և խնամոցն և սիրոյն որ առ ստեղծուածս. և վարուց ուզողութեան և հատուցման գործոց » : Յէջն 264 գրուած է այն գրչագրին յիշատակարանն՝ որուն վրայէն եղած է այս տպագրութիւնն. և յորում կ'ըսէ. « ... Յանկացող եղեալ սուրբ տառիս յոգներանեան տէրս մեր և առաջնորդ սուրբ ուխտիս Մլիճոյ տէր Ստեփաննոս արհեսպիսկոպոս ետ գրել զսա ինձ անպիտանիս, և եգ ընդ այլ գրեանսն սուրբ ուխտիս » ... : Տպագրողն կը յաւելու. « Այս յիշատակարան գծագրողն է հին օրինակի Հոգեւից գրքոյս, յորմէ զտպեալս գաղափարեցաք », և այլն : Յիշատակարան տպուլին կ'ըսէ. « ... Տպեցեալ աւարտեցաւ սուրբ գիրքս 'ի թվին Հայոց ՌձՁԶ, մայիսի ի. 'ի հայրապետութեան սրբոյն Էջմիածնի՝ Թէքիրտաղցի տեառն Աբրահամու սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց ... 'ի տպարանի Կարապետի որդւոյ մահտեսի Աստուածատուրին և որդւոյ նորին տիրացու Յօհաննէսին, 'ի Կոստանդնուպոլիս քաղաքի ... Սուրբ Էջմիածնի նուիրակ Պետրոս աստուածաբան վարդապետն յիշեցի 'ի բարին. զինա ետ զօրինակն սորին ... յիշեալիք զՍարգիս աստուածաբան վարդապետն և զղազէզ տիրացու Մեկրիսեթն և ծնօղս նոցին. զի զօրինակսն ներբողեանցք նոքա ունէին » ... :

Բ. Տպ. « Գիրք որ կոչի Յաճախապատում. ասացեալ սրբոյ Հօրն մերոյ երանելոյն Գրիգորի Լուսաւորչին. յորում պարունակին ճառք յոգնապատումք քսաներեք. վասն անհաս էութեանն Աստուծոյ, և խնամոցն և սիրոյն որ առ ստեղծուածս. և վարուց ուզողութեան և հատուցման գործոց ... 'ի պատրիարքութեան մեծի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Տեառն Կարապետի երանաշնորհ արքեպիսկոպոսի. որոյ վեհափառ հրամանաւն տպեալ վերստին, արդեամբք և ծախիւք առն ազգասիրի և բարեպաշտի Ակնեցի մահտեսի Յօհաննէսեան մահտեսի Աբրահամ ամերայի. յիւրում իսկ սեպհական գոր-

ծարանի: Յամի տեառն 1824, յուրիսի 21. 'ի Հասանփաշայ խանն. 'ի Առատանգնուպոլիս »: Էջ 400

1472/

Յետ քսան և երեք ճառից սրբոյն, յէջն 294. « Յօհաննիսի վարդապետի Սզնկացւոյ, ասացուած ներբողական գովեստի 'ի սուրբ Լուսաւորիչն Հայոց 'ի մեծն Գրիգորիոս: Ասացեալ յօր յիշատակի նորին, զոր ամենն մեծաժողով Հանգիսիւ 'ի լեառն Սեպուհ (որ է տեղի Ճգնութեան նորին և հանգստի) յոգնահաւաք հանգիսիւք քահանայական դասուց և վարդապետաց և ժողովոց հաւատացելոց բազմաց անդ դումարելոց »: Տպագրողին յիշատակարանն կը յաւելու. « Ամենայն պատուոյ արժանի բազմբանեան հայրս մեր սուրբն Գրիգորիոս Լուսաւորիչն Հայաստանեայց ... յեա հաստատելոյ եկեղեցիս և կարգելոյ քահանայս և պաշտօնեայս ... միայնակեցութեան ցանկացեալ, ելանէր 'ի յանապատ տեղիս ... Եւ անդ մինչ էր 'ի խստակրօն վարս ճգնութեան, սկսաւ դարձեալ շարագրել գիրք երկրորդ՝ զհոգելից մատեանս զայս կոչեցեալ Յաճախապատուում... (յորում) գանձք աստուածային ծածկեալք յազարուկի: Վասն որոյ այրն ազնուական մահաւետի Արրահամ բարեպաշտ ամիրայն՝ զնոցայն գիտելով զյարգ, եղև ցանկացող այնր աստուածային գանձուց: Ուստի զսոյն զայս մատեան ... զ'ի յայլմէ նախ արձանացուցեալ 'ի տիպ՝ որ առ մեօք սպառեալ և պակասեալ ... ետ արձանացուցանել 'ի տիպ՝ իւրով իսկ արդեամբ ... 'ի սեփական իւր գործարանի »:

Գ. Տպ. « Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորի՛ Յաճախապատուում ճառք և աղօթք: Ի Վեհետիկ, 'ի տպարանի սրբոյն 'Ղազարու, յամի 1838 ՌՄՁԻ »: Յառաջաբանն կ'ըսէ. « ... Մատեան այսպիսի՛ հնութեամբն և պատուականութեամբն պակասելի լեալ յամենայն ժամանակի 'ի հանուր ազգիս, չգիտեմ՝ յոր արկածից բաղգին մատնեալ 'ի ձեռս առն աննշանի խանգարեալ ծայր 'ի ծայր 'ի յստակ դարձուածոյ բանից հայեցի ունոյ, և 'ի հատուածոց ինչ յապաւեալ և եկամտօք կցկցեալ, ել և երևեցաւ 'ի միջի: ... Մերոյ հաւատարիմ տպագրիս օրինակ գրեալ էր 'ի ՌձԻԲ գաղափարեալ 'ի հին երկաթագիր օրինակէ գրելոյ 'ի Թուխ ՅՆԸ որ

պահէր յարկեղս գրոց 'ի Սիս քաղաքի, որպէս ազգառնէ յիշատակարանն. և քննեալ մեր մանրախուզիւ զգաղափարն վկայեմք երկիւղածութեան գրչին յամենայնի անայլայլակ առեալ զհաւասարն ըստ ամենայն նշանախեցից հնագիր օրինակին, մինչև զմիոյ կամ զերկուց տառիցն անգամ որ 'ի հնութենէ խանգարեալ էին 'ի հինն՝ գասարկ թողուլ զտեղին» : ...

Յայսմաւուրք. « Ճառ սրբոց վկայիցն ճմարտին Աստուծոյ. ազգաց և ազանց հանուրց քրիստոնէից. որոց բազումք կատարեցան 'ի Քրիստոս, և գրեցին զանուանս 'ի դիրս որ կոչի Յայսմաւուր. ըստ պատշաճ աւուր իւրում կարգի ընթեռնուն զմատեանս՝ ներ պարունակող շարագրութեամբ նախնեացն մերոց և ճմարտասիրաց թարգմանչաց. ... 'ի թուականի Փրկչին ՌէձՁ, իսկ Հայոց ՌձԾԵ, և 'ի ամսեանն յուլիսի մեասանի՝ յառաջին, և յեախնն 'ի միում ամսեանն տպեցաւ 'ի մայրաքաղաքն Կոստանդնուպօլիս: Ներ տպարանումն Գրիգորի զպրի, որդւոյ Մկրտչի» : Յիշատակարանին մէջ՝ տպագրողն, Գրիգոր զպրի, կ'ըսէ. « ... Եգի զմիտս իմ... և իմ ներմտածման բանիս, ըսկիղբն եգի արհեստ կաղապարաց տպարանիս: Ոչ ումեմն տեսանելով իմ, և ոչ 'ի Հռովմ գնալով, և ոչ 'ի յայլմէ արհեստաւորաց տեսեալ՝ և կամ 'ի նմանէ ուսեալ: Վասն որոյ իբրև զմթացեալ ամպ ընկալաւ զիս՝ սուգ տրամուծեան և տարակուսա՛ք... Եւ օրհնեալ հոգի Քէօմիրձիզատէ հռետոր... Երեմիա չէլէպի: Զի և նա յառաջոցն բազում ջանս և աշխատանս կրեցեալ էր վասն գործարանիս և յառաջածեալ: Եւ տպագրեալ վասն փորձարանաց գրոյն՝ փոքրիկ գրքուկս երկուս. այսինչ՝ գովառանութեան իւրոյ յարմարեալ 'ի սուրբ տնօրինականացն Քրիստոսի. և միւսն տաղս գեղեցիկս: Սակայն զգիր նորին էր նուազ և նիհար: Որոյ կաղապարն տեսեալ վերծանուցի, և նոր իմն սկիզբն եգի... ամենայն զանազան ձագագրերով, փառքերով և գեղեցիկ կանոններով և մեծամեծ խորանիւք փտաեալ զարդարանօք զարդարեցի, և պատկերս ըստ իւրոյ պիտոյից՝ նկարեալ իմով և քանդակեալ փորուածով... Եհաս կատարումն տպարանիս են.

Թականգնեալ վերջ տպագրատանս ողորմութեամբն Աստուծոյ: Յետ որոյ զիղձ ցանկութեան սրտի իմոյ, որոյ անուանն սկիզբն առեալ հաստատեցի զկողապար տպարանիս: Զնոյն ընկալեալ ումեմն բարերարոյ անուանեալ սարաֆ մտհտեսի Ղազար, ընկերացեալ իմ նորին, ընկերօքն իւրովք որ են 'ի քաղաքէն Ակնա 'ի գիւղէն Եպուշեղու և Կարուչլացի: Որ և իսկ սա խնդրեաց տպագրել Յայսմաւոր մտեանս՝ որպէս և իմ գոյր փափաքեալ եռամեծար սրտիս՝ զնոյն տպել Յայսմաւոր մատեանս, ընդ որոյ անուանն աշխատեցայ երկոտասան ամ... Այց արար մեզ արեգակն 'ի բարձանց, և ետ զնպաստութիւն 'ի ձեռն շնորհաց որդւոյն իւրոյ միածնի՝ 'ի լոյս ածել զգեղեցկատիպ և զլիակատար մատեանս եկեղեցւոյ՝ զգաղափարեցեալս 'ի յընտիր օրինակէ վաղեմից Թագաւորացն Հայոց » . . . :

Բ. Տպ. « Գիրք որ կոչի Այսմաւուրք: Որ պարունակէ յինքեան զճառս վարուց սրբոց, և զնահատակութիւնս երանելի մարտիրոսացն և վկայիցն Գրիստոսի Աստուծոյ մերոյ: Զոր կարգեցին նախնի հարքն մեր՝ ընթեռնուլ յամենայնում աւուր 'ի մէջ սուրբ եկեղեցւոյս Հայաստանեայց ըստ պատշաճի աւուրց իւրաքանչիւր ամսոյ 'ի բոլոր տարին, 'ի յիշատակ սրբոցն, և 'ի յօգուտ վարուց ջերմեանդ լսողացն, և ամենեցուն 'ի փառս Աստուծոյ: Սկսեցեալ 'ի տպագրել 'ի հայրապետութեան սրբոյն էջմիածնի լուսակաւոյց աթոռոյն տեառն Աբրահամու սրբազան կաթողիկոսի ամենայն Հայոց. և 'ի պարիարքութեան սրբոյն Երուսաղեմի և Կոստանդնուպօլսի տեառն Գրիգորի և Յօհաննու աստուածաբան վարդապետաց, և տշակերտաց Վարդանայ Տաճարաչէն սուրբ վարդապետի Բաղէշեցւոյ . 'ի Թուին Հայոց ԻձձԹ. մարտի ք. 'ի տպարանի Գրիգորի դպրի Մարտունեցւոյ »: Յիշատակարանն կը յաւելու. « ... Ես նուաստ ամենեցունցն Մարտունեցի Մկրտչի որդի տպագրիչ մահտեսի Գրիգոր դպիրս, որ եմ ձեռնասուն աշակերտ Տիրաբանակերտցի ծաղիկ երաժիշտ Սարգիս գիտնական վարդապետին որ 'ի յԱմբրաօլ գասատունն էր վարժեալ հմուտ աստուածային գրոց: Եւ ես նուաստ աշա-

կերտ գործով նմին, ըստ իմուժ՝ կարողութեամբս ուսայ՝ ՚ի նմանէ զընթերցողութիւնն և զԺաղկարարութիւնն: Եւ զկնի ժամանակաց եկեալ ՚ի Կոստանդնուպօլիս հանդերձ վարդապետիւս, որ էր թուականն Հայոց ՌձԼԳ: Եւ ինքն յետ բազում քարոզութեանն՝ եւ գնաց ՚ի վանքն իւր սրբոյն Կոնոնոսի: Եւ ես մնացի ՚ի Կոստանդնուպօլիս ... Եւ ՚ի ՌձԾԵ թըվին կարողութեամբն Աստուծոյ նախ տպեցի զայս Այսմաւուրս. զորս յետոյ ազահեցան ընկերացեալքըն իմ, և ոչ կացին յառաջին պայմանին և զըկեցին զիս անխնայ. և զիմ բաժինս ափշտակեցին. յինէն, զոր ՚ի շինելն և ՚ի թափելն զգաղափար արձձէ գրերացն մինչև ժամ ամ աշխատեցայ. զոր մաշեցաւ կեանք իմ և գաղափարքն իմ ... և թողին զիս թափուր ՚ի ընչից: Այլ որ առասն է ՚ի բարիս ... կրկին արժանի արար տպեցման և աւարաման սուրբ մատենիս » ... ուր տպագրութեան ձեռնտու եղողներն նշանակելէն ետքը կը յաւելու. « Յիշեալիք ՚ի տէր զարբագրող օրինակի սուրբ մատենիս զյոգնիմաստ և զխոհեմամիտ զԿոստանդնուպօլսեցի զՊաղտասար դպիրն »: Յիշատակարանէն ետքն նոյն օրերն ՚ի Պօլիս հանգիպած քանի մը անցքերն կ'աւանդուին, և յետոյ միւս յիշատակարան մ'ալ. « Ես նըւաստ ոգի Միքայէլ վարդապետս արևելցի, ՚ի գաւառէն Գողթնեաց, և ՚ի գերագով վանից սրբոյն Թումայի առաքելոյն որ յԱգուլիս, աշխատեցայ ՚ի վերայ Յայսմաւուրբիս. և հաւաքեցի զանուանս սրբոց Աստուծոյ՝ ըստ այբուբենից գասաւորութեանց » ... :

Գ. Տպ. « Յայսմաւուրբ, ըստ կարգի ընտրելագոյն Յայսմաւուրաց Տէր Խորայէլի: Յորում պարունակին երկնակրօն վարք և ճգնութիւնք աստուածահաճոյ սրբոց ՚ի հին և ՚ի նոր օրէնս հանգիստացելոց, ընտրելոց ՚ի սկզբանէ աշխարհի ՚ի զանազան ազգաց և լեզուաց, և վկայաբանութիւնք չարչարանաց և մահու յաղթող նահատակաց սանելեաց և յիշատակելեաց յեկեղեցիս Հայաստանեայց, ըստ բարեկարգ սահմանագրութեան սուրբ և երանեալ հայրապետացն մերոց, բաժանեալ ՚ի վերայ աւուրց իւրաքանչիւր ամսոյ: Կամօք և հաւանութեամբ ազգային ժողովոյ նորոգ սրբագրեալ, և զգուշաւոր

տպագրուածեամբ 'ի լոյս ընծայեալ. հրամանաւ ամենապատիւ և վեհափառ պատրիարքի Տեառն Ստեփաննոսի սրբակրօն արքեպիսկոպոսի: Ի Կոստանդնուպօլիս, յ'Օրթագիւղ, 'ի տպարանի Պօլոսի Արապեան Ապուշեխցւոյ, 1834-ՌՄՁԴ:

Յառաջաբանին մէջ հրատարակողն Գրիգոր գպիր Փէշտըմալճեան թէ՛ այս և թէ նախընթաց տպագրուածեանց վրայ հետևեալ տեղեկութիւնները կուտայ. «...Սուրբ և հոգեւից թարգմանիչք մեր 'ի հինգերորդ դարու՝ ընդ այլոց բազմաց ազօգուտ գործոց, որովք բարգաւաճեալ ցուցաւ ազգս մեր ամենայն հոգևոր իմաստութեամբ և գիտութեամբ, թարգմանեցին և զվարս ինչ սրբոց, որպէս երևի 'ի վսեմական ոճոյ կազմութեան բանից նոցա: Ապա Գագիկ վարդապետ Ատոմայ վանաց յիններորդ դարու, ոչ սակաւս 'ի վարուց սրբոց թարգմանեաց 'ի յունականէն, որոյ մատեանն կոչեցաւ Ատոմագիր:

« Հուսկ ապա սուրբ և երանելի Հայրապետն մեր Գրիգոր Վկայասէր՝ որ յառաջն Վահրամ կոչէր, որդի իմաստնոյն և մեծ իշխանին Գրիգորի Մագիստրոսի 'ի զարմէ սուրբ Լուսաւորչին, 'ի մետասաներորդ դարու, շրջեալ յարևելս և յարևմուտս 'ի վանորայս և յանապատս՝ յուզախնդիր եղև վկայաբանութեանց և վարուց սրբոց. և զոր միանգամ եգիտ 'ի յունական ընտիր մատեանս՝ թարգմանեաց զնոսին 'ի հայ բարբառ: Ժողովեաց և զբազում ճառս սրբոց. և եղեալ զամենեսին 'ի կարգի՝ արար մատեան մեծ, որ յետոյ կոչեցաւ ճառընտիր. և սահմանեաց ընթեռնուլ յեկեղեցիս և 'ի վանորայս ըստ պատշաճի իւրաքանչիւր աւուր:

« Յետ որոյ Տէր Իսրայէլ այր բանիբուն՝ որ ծաղկեցաւ յաւուրս Վանական վարդապետի 'ի սկիզբն երեքտասներորդ դարուն, զվարս սրբոց և զվկայաբանութիւնս և զճառս ինչ որ կային 'ի ճառընտիրն՝ հատընտիր քաղեալ բաժանեաց 'ի վերայ աւուրց իւրաքանչիւր ամսոյ. և որպէս 'ի դէպ գայ ասել՝ յարեալ յարմարեաց ընդ նոսին յաստուածաշունչ գրոց և 'ի վաղեմի աւանդութեանց զվարս նահապետաց սրբոց և մարգարէից և առաքելոց. և այս գիրք նորա կոչեցաւ Յայսմաւուրք: Եւ արար սկիզբն մա-



տենին յառաջներորդ օրէ սեպտեմբեր ամսոյ .  
« Վասն համարելոյ , ասէ , Հռոմայեցոցն իմասանոց՝  
սկիզբն լինեւ տարւոյ » :

« Ապա Կիրակոս վարդապետ Արեւելցի 'ի հնգե-  
տասաներորդ գարու՝ առաջնորդ ունելով զՏէր Իս-  
րայէլ նորոգ յօրինեաց զգիրս Յայսմաւուրաց : Յետ  
այնորիկ Գրիգոր վարդապետ Խլաթեցի՝ Մերենց կո-  
չեցեալ , 'ի նմին 'ի հնգետասաներորդ գարու՝ հաւա-  
քեալ Յայսմաւուրաց Տէր Իսրայէլի և Կիրակոս  
վարդապետի , յաւել 'ի նոսին անընտրողաբար և  
ինչ ինչ յանհաւաստի և յանօգուտ զրուցաց , և ա-  
րար նոր գիրք Յայսմաւուրաց . յոր հեազհետէ մու-  
ծին օրինակողք և զայլ ևս անպատշաճս ըստ իւրա-  
քանչիւր ախորժակաց , և խանգարեցին զպատուա-  
կան մատեանն , զոր Տէր Իսրայէլ հաւատարմու-  
թեամբ համառօտեալ էր 'ի Ճառնտիր գրոց :

« Եւ այս աղաւազ օրինակ Յայսմաւուրաց Խլա-  
թեցւոյն , յետ ժամանակաց տպագրեցաւ միանգամ  
և երկիցս 'ի Կոստանդնուպօլիս յաւելմամբ վրիպա-  
կաց 'ի տպագրողաց . և փոխանակ ընտիր Յայսմա-  
ւուրացն Տէր Իսրայէլի և կամ Կիրակոս վարդապե-  
տի մուծաւ յեկեղեցիս մեր անդգուշութեամբ . և  
այն էր որ ընթերցեալ լինէր մինչև ցայսօր : Բայց  
վասն բազմապատիկ տլլալութեանցն որ 'ի նմա , խո-  
տան համարեալ էր ոչ միայն յաչս իմաստուն քննո-  
ղաց՝ այլ և բազմաց հասարակութեան :

« ... Վասն որոյ 'ի բազմաց հետէ փափագէին 'ի  
ձեռս բերել զօրինակ Յայսմաւուրաց Տէր Իսրայէ-  
լի , և տպագրութեամբ 'ի լոյս ընծայել , գիտելով  
քաջ թէ յստակ է ջուր յակն քան 'ի վտակն . սմին  
իրի յառաջ քան զամս ինչ գրեցին առ բազում քա-  
ղաքս և 'ի հռչակաւոր վանորայս , և ոչ կարացին  
գտանել : Ապա յորժամ արքունի հրամանաւ եկն  
այսր Տէր Կիրակոս կաթողիկոս տանն Կիլիկիոյ , լը-  
ւեալ 'ի նմանէ թէ գտանի ընտիր օրինակ Յայսմաւու-  
րաց Տէր Իսրայէլի 'ի կաթողիկոսարանն Սսոյ , բա-  
րեմիտ կամք խնդրեցին զայն առ 'ի տպագրել . և նա  
'ի դարձի իւրում՝ 'ի հայրապետական աթոռն՝ առա-  
քեաց անյապաղաբար : Եւ էր մատեանն գրեալ 'ի  
մագաղաթի բոլորգիր՝ յաւուրս բարեպաշտ թագա-

ւորին Նայոց Օշնի և Կոստանդին կաթողիկոսի. և զի Թուղթք ինչ անկեալ էին յառաջոյ և 'ի վերջոյ' ոչ գոյր 'ի նմա յառաջարանութիւն ամբողջ և վերջարանութիւն. վասն որոյ և ոչ որոշակի Թուական: Իայց քանզի Օշին օծաւ Թագաւոր յամի Տեառն 1308, և Թագաւորեաց զամս երկոտասան. և յիշատակարանքն որք կան եղեալ 'ի վախճան իւրաքանչիւր վկայարանութեանց՝ ցուցանեն Թէ նորոգ օծեալ էր Թագաւոր, և անգրանիկ որդի իւր Լեւոն դեռ 'ի տղայական հասակի էր, ապա հաւանելի է ասել՝ Թէ յառաջին կամ յերկրորդ ամի Թագաւորութեան նորա էր գրեալ, այսինքն յամի 1309:

« Քանզի 'ի սեպտեմբերի 7 գնի յիշատակարան այսպիսի. « Աոցին բարեխօսութեամբ Քրիստոս Աստուած ողորմեա ստացողի գրոցս բարեպաշտ Թագաւորիս մերոյ Աւշնի, և գեաւորոյ մանկան իւրոյ Լեւոնի, և ծնողաց իւրոց, և բազմամեղ գրչիս Գրիգորի գպրի, և պատուական քահանային և աւագ երիցու Թագաւորին Թորոսի »: Ի սեպտեմբերի 2. « Քրիստոս զորացո զնորոգ օծեալ բարեպաշտ Թագաւորս մեր Աւշնի, և զգեաւորոյս մանուկն իւր զԼեւոն »: Ըստ այսոցիկ են և յայլ տեղիս:

« Յազազս որոյ զգուշաւոր քննութեամբ և համակամ հաւանութեամբ ազգային Ժողովոյ ... սահմանեալ հաստատեցաւ, զի այսուհետեւ ընթերցուած Յայսմաւուրաց Խլաթեցւոյն աղաւաղեալն բազմօք՝ բարձցի 'ի սպառ յամենայն եկեղեցեաց և 'ի վանորէից ազգիս. և առ հաստատուն պահելոյ զբարեկարգ սովորութիւն երանելի նախնեաց մերոց՝ փոխանակ նորա ընթերցեալ լիցի Յայսմաւուրս այս:

« Ի սոյն ազգային Ժողովոյ յանձն եղև մերումս նուաստութեան սրբագրել զմատեանն զայն օժանդակութեամբ տեառն Սասթէոսի շնորհափայլ վարդապետի Զուխաճեան. և զվարս ինչ և զվկայարանութիւնս սրբոց որք յետոյ էին քան զժամանակ կենաց հեղինակին՝ յայլուստ ընտրանօք ընու...

« Եզաք 'ի վախճան մատենիս և գճառս ինչ որոց կէսք կային յօրինակի մերում. և կէսք 'ի հնագոյն ճառընտիրն՝ զոր նա ինքն Տէր Կիրակոս կաթողիկոսն առաքեաց 'ի Կիլիկիոյ՝ ընդ այսմ Յայսմաւուրս

րաց: Եւ ահա այժմ հարկադրութեամբ ազգային ժողովոյ եկեղեցականաց և աշխարհականաց, և հրա մանաւ ամենապատիւ և վեհափառ Պատրիարքին՝ յաշխատասիրութենէ քաջահմուտ տպագրիչ պարոն Գալուստի Արապեան՝ գործակցութեամբ եղբարց իւրոց հարազատաց՝ պարոն Աստուածատրոյ և պարոն Գէորգի՝ գեղեցիկ և վայելուչ տպագրութեամբ ՚ի լոյս ընծայեցաւ ՚ի փառս Քրիստոսի՝ պարագլխոյն մարտիրոսաց, և ՚ի լրումն բաղձանաց համօրէն ազգիս » :

Յայտարարութիւնք:

X Յայտարարութիւն առաջին ընդդէմ նորազանդից: *Սրբեշ*  
X Յայտարարութիւն երկրորդ ընդդէմ նորազանդից: *Դոմոս*  
Տպեալ հրամանաւ Տեառն Մատթէոսի արք. *ԵԵԽԵ*  
Կաթիկոսոսի ազգասէր և վեհափառ Պատրիարքի *ԵԶ ԶԶ*  
Կոստանդնուպօլսոյ: Պօլիս, ՚ի տպ. Յ. Միւհէնտի: *ԽԾԻԿ*  
սեան, 1846: *ԷԶ 30 10X14*

Յայտարարութիւն ազգային ճեմարանին Ս. Երուսաղեմի որ յիւսկիւտար: Տպագրեալ ՚ի ճեմարանի, 1840, ՌՄԵԹ:

Յայտարարութիւն (ազգօգուտ) Յովակիմայ Եղիազարեան, առ լուսաւորչակրօն ազգակիցս իւր ՚ի սահս Եղիազարեան Համալսարանին Հայոց Մոսկովո: Ի Մոսկով, ՚ի տպար. Օգոստեայ Սեմենեանց, 1826:

Յայտարարութիւն անցից Մուրատեան վարժարանին: Փարիզ, ՚ի տպ. Վալտերի, 1855:

Յայտարարութիւն արգի ազգային պարագայից: Կ. Պօլիս, ՚ի տպ. Յ. Միւհէնտիսեան, 1861:

Յայտարարութիւն Բարեգործական ընկերութեան Հայոց: Կ. Պօլիս, ՚ի տպ. Ռ. Յ. Քիւրքճեան, 1861:

Յայտարարութիւն առ համօրէն լրութիւն ազգիս Հայոց: Կ. Պօլիս, 1867:

Յայտարարութիւն և կանոնք բարեկարգութեան Խաչիպեան ուսումնարանի ազգիս Հայոց: Թէոփոսիս, ՚ի Խաչիպեան տպարանի, 1859:

Յայտարարութիւն և համառօտ դաւանութիւն Հայաստանեայց Աւետարանական եկեղեցւոյ: Կ. Պօլիս, 1846:

X → Յայտարարութիւն Եւ արքայից պատրիարքի  
Գեորգի. Բ. Եւ. Սրբազան Երանայան 1861 7  
*ԵԶ ԶԶ*

Յայտարարութիւն և հաշիւք Համազգեաց ընկե-  
րութեան : Կ. Պօլիս, 1847 :

Յայտարարութիւն յիմաստանդրեանց միաբա-  
նութենէ որ 'ի Կալկաթա : Ի Կալկաթա , յամի  
տեառն 1820, 'ի 29 յուլիսի : Տպագրեալ յընծայ-  
եալ տպարանի Յորգանանեան պարոն Պօղոսի :

Յայտարարութիւն քրիստոնէական ուսմանց :  
Զմիւռնիա, 'ի տպ. Գուլիելմ Կրիֆֆելթի, 1842 :

Յայտարարութիւն վասն նորակերտ տառից : Կ.  
Պօլիս, 'ի տպ. Յ. Միւհէնտիսեան, 1847 : 52 16 4X11

Յայտարարութիւն Լուսաւորչեան ընկերութեան :  
Կ. Պօլիս, 'ի տպ. Յ. Փափազեան, 1868 : 52 14 12X17

Յայտարարութիւն Տեառն Հ. Սերովբէ վարդա-  
պետի Ճէվահիրճեան : Վենետիկ, 'ի տպ. Ս. Ղազա-  
րու, 1852 :

Յայտարարութիւն քրիստոնէական պարնաւորու-  
թեան հպատակաց ամենաբարեպաշտ կայսերու-  
թեան Բուսաց, 1826-ՌՄՆ : Ի Տփլիս, 'ի գործա-  
րանի դպրոցին Հայոց :

Յայտարարութիւն Հասունեանց դէմ. « Մեր ուղ-  
ղափառ Հայոց ազգին խաղաղութիւնը » ... Աղգա-  
սէր ոմն : Կ. Պօլիս, 'ի տպ. Յովհաննու Միւհէնտի-  
սեան, 1853 :

Յայտարարութիւն կամ Թոռոյր առ Տէր Յովսէփ  
Պօրճօնեան աթոռակալ և ատենադպիր նախագա-  
հական : Աղգային իրաւանց պաշտպան անձ մը : Կ.  
Պօլիս, 'ի տպ. Յ. Միւհէնտիսեան, 1853 :

Յայտարարութիւն . « Անցեալ սեպտեմբեր ամ-  
սուան առջի օրերը » : Կ. Պօլիս, 'ի տպ. Յ. Միւհէն-  
տիսեան, 1853 :

Յայտարարութիւն . « Մօտ օրերս Չմարտութիւն  
Կ. Պօլսոյ Հոովմէական Հայոց Նախագահ » ... Յով-  
հաննէս վարդապետ Բահտիարեան կաթողիկոսա-  
կան Գործակալ : Կ. Պօլիս, 'ի տպ. Յ. Միւհէնտի-  
սեան, 1853 :

Յայտարարութիւն . « Սաստիկ լուութիւն ... ինչ-  
պէս ընդհանուր հակառակութեան » ... Հոովմէա-  
կան Հայք : Կ. Պօլիս, 'ի տպ. Յ. Միւհէնտիսեան,  
1856 :

Յայտարարութիւն. Ընդդէմ Կոնդակին որ հրա-

*հրատարակուեցաւ Հռովմէական Հայոց եկեղեցեաց մէջ. Յուլիս) 22: Կ. Պօլիս, 'ի տպ. Յ. Միւհէնտիսեան, 1856: Եւ 17 1871*

Յայտարարութիւն ընդդէմ յայտարարութեան Պ. Սիսակ Մեռակեանի: Կ. Պօլիս, 1865:

Յայտնութեան (սրբոյն Յովհաննու առաքելոյ) մեկնութիւն, համառօտեալ 'ի զանազան մեկնչաց, 'ի Պետրոսէ արքեպիսկոպոսէ Նախիջեւանցոյ Աղամալեան Բերդումեանց: Տպեալ օժանդակութեամբ Յովհաննու Աղաբեգեան Ասպետի: Ի Կալկաթա, 'ի տպարանի Արարատեան ընկերութեան, 1846:

Յայտնութեան (մեկնութիւն) սրբոյ աւետարանչին Յովհաննու. արարեալ տեառն Անդրէի և Աբեաասայ եպիսկոպոսացն Կեսարու. Թարգմանեալ 'ի յոյն բնագրէ և սրբագրեալ տեառն Ներսեսի արքեպիսկոպոսի Տարսոնի Կիլիկեցոց: Երուսաղէմ, 'ի տպարանի սրբոց Յակովբեանց, 1855:

\*Յայտնութիւն աստուածգիտութեան. « Յորում պարունակին համառօտ հարցմամբք և պատասխանեօք կարևոր գիտելիք զԱստուծոյ, և հարկաւոր կանոնք քրիստոնէական հաւատոյ. բաժանեալ 'ի յիսուններկու կիւրակէս տարւոյն, և 'ի հինգ տաղաւարս: Յօրինեալ 'ի Հ. Մինաս Վ. Բլաթչեան Տրապիզոնցոյ »: Վենետիկ, 'ի տպ. սրբոյն Ղազարու, 1820, 1836:

Յանդիմանութիւն անծին՝ արարեալ 'ի պարոն Գէորգայ Աւետեան Զաքարեան Զուգայեցոյ առ դէմս իւր, 'ի Բատավիա որ 'ի Զավա: Արդեամբք և ծախիւք առաքինասէր յարգոյ տիկին Մարիամու Յակովբայ Յարութիւնեան: Ի Կալկաթա, 'ի տպար. Հայկեան Մարդասիրական Ճեմարանի, 1846:

Յանոսի, յաղագս Պապին և Ժողովոյ նորա: Թարգմանեաց Գարրիէլ արքեպիսկոպոս Այվազեանց, միաբան սրբոյ Էլմիածնի: Ի Վաղարշապատ, 'ի տպ. սրբոյ կաթողիկէ Էլմիածնի, 1818-1871:

*Յայտարարութիւն հրատարակուեցաւ 1850 Յուլիս 67 441 68 15 1271*

Յաշկոռատ. « Կանոնական կոնդակ Պիոսի Թ. յաղագս Եկեղեցւոյ, մատուցեալ 'ի քննութիւն Հարց պատուականաց » :

\*Յառաջադիմութիւնը Ճշմարիտ գիտութեամբ: — Քննութիւն « Մէթոտի վրայ » անուն գրքուկին, ուղղեալ առ ուսումնասէր և ողջամիտ հայ երիտասարդս: Կ. Պօլիս, 'ի տպարանի Արամեան, 1882:

\*Յատկութիւն Արարատայ և նորին Ս. Եկեղեցւոյ: Աշխատասիրութիւն Միհրդասայ Թագէտոսի Միհրդատեանց: Կ. Պօլիս, 1870:

Յարացոյց ապաշխարողաց. « Յարացոյց Ճշմարիտ ապաշխարողի. նկարեցեալ 'ի յապաշխարող արքայն Գաւիթ, և 'ի նմանէ բացատրեցեալ 'ի յիս ներորդ սաղմոսի. և առաջագրեցեալ ամենայն քրիստոնեայ ապաշխարողաց առ 'ի հետեւիլ... Արարեցեալ յումեմնէ կրօնաւորէ Աղէքսանդրոս կոչեցելոյ 'ի կարգէ Յիսուսեան' յիտալական բառառոջ: Եւ անտի արտահանեցեալ 'ի Պետրոս վարդապետ Թիֆլիզեցւոյ, և շարագրութեամբ անգրաբերեալ 'ի հայ բարբառ յամի տեառն 1719: Իսկ յամի տեառն 1731 սրբագրեցեալ և յարմարագրեալ աշխատասիրութեամբ տեառն Միխիթարայ վարդապետի Սեբաստացւոյ Աբբայ Հայր կոչեցելոյ, ... 'ի Վենետիկ, 'ի տպ. Անտոնի Պօսթօլի » :

\*Յաւելուած 'ի պատմութիւն վերագարձի երեց վարդապետաց: Վերագարձ տեառն Խորենայ Գալ Ֆայեան քերթող վարդապետի: Փարիզ, 'ի տպ. Ճ. Արամեան, 1858:

Յետին ժամը կայսերն Նիկողայոսի առաջնոց զոր 'ի ռուս լեզուէ փոխեաց 'ի հայ գաւառու կրօնական ուսմանց յարեւելեան լեզուաց Ճեմարանի տեարց Լազարեանց Մագիստրոս և ասպետ Մսեր Գրիգորեան Մտերեանց: Մոսկուա, 'ի տպ. արևելեան լեզուաց Ճեմարանի տեարց Լազարեանց, 1855:

*Յուսիքի արքայն Լուսինայ սրբոյ. Կուսարմաբան շարժի և դպրութիւն. Յ. Կիսիպիսե 1859 Եղ Կ67 17X17*

*Յուսիքի արքայն Լուսինայ սրբոյ և Կուսի Ա. Կիսիպիսե արքայն Լուսինայ սրբոյ և Կուսի Ա. Կիսիպիսե*

\*Յետին վիուկն ժիւլ Սանտոյ քաղղիսցւոյ  
Թարգմանեց 'ի Ֆրանսերէնէ Աշնաւորեան: Կ. Պօ-  
լիս, 1878:

Յիշատակարան բազմերախտ հոգարարձու Լա-  
զարեան Ճեմարանի: Մոսկուա, 'ի տպ. Ճեմարանի  
արևելեան լեզուաց տեարց Լազարեանց, 1859:

Յիշատակարան կենաց և գործոց մեծանուն  
պայազատաց Լազարեան տոհմի. շարագրեալ 'ի ՄԸ-  
սերայ Մագիստրոսէ և ասպետէ Գրիգորեան Մսե-  
րեանց: Մոսկուա, 'ի տպարանի արևելեան լեզուաց  
Ճեմարանի տեարց Լազարեանց, 1856-ՌՅԵ:

Յիշատակարան քահանայական վարուց, կամ  
մեծի հովուապետի Յիսուսի Քրիստոսի խրատք ու  
գեշահք առ հովիւս եկեղեցւոյ իւրոյ և առ այլ քա-  
հանայս. Թարգմանեալ 'ի Հ. Սրապիոն վ. Էմինեան  
'ի Ախիթ. ուխտէ: Վիէննա, 'ի վանս Պաշտպան Ս.  
Աստուածածնի, 1852:

X  
\*Յիսուսի վարուցը համառօտ պատմութիւնը:  
Քաղղիարեւնէն Թարգմանեալ. Հրամանաւ Յակով-  
բայ սրբազան պատրիարքի Կոստանդնուպօլսոյ (Նի-  
կողայոս Մ. Զօրայեան): Պօլիս, 'ի տպ. Յովհ. Միւ-  
հէնտիսեան, 1849: 5269 15 X 11

X  
\*Յիսուսի վերջին շարաթ. Խաչի ճառ և կորու-  
նելոցն յիմարութիւն. շարագրեց Խրիմեան հայրիկ:  
Կ. Պօլիս, 1876: 58140 9 1/2 X 14

X  
Յիսուս Որդիւ Ա. Տպ. «Տեառն Ներսեսի Հա-  
յոց կաթողիկոսի նուէր մաղթանաց ներշնչական  
տաղիւ. ողբուն հեծութեան, 'ի խորոց սրտէ խօսք  
ընդ Աստուծոյ թրջի վերջը հեանեալ ճանու-  
ցումը կը կարգանք. «Փառք... որ ետ կարողու-  
թիւն նուաաս և՛ տառապեալ անձին իմոյ՝ Յովհան-  
նէս անկիւրեցւոյ Թարգմանչի, որ մականունն ըստ  
հռօմայեցւոց ձիւանի Մօլինոյ ասի, հասանել 'ի  
յաւարտ տպագրութեան արհեստիս, զոր բազում

Դիւ Գ.  
Կ. Պ.

Զանիւք և շատ նեղութեամբ աքնեալ և աշխատեալ այս վեց ամէ զոր կախեալ կամ վասն տպագրութեան արհեստիս. ապաւինելով 'ի յոյսն ամենեցուն 'ի Քրիստոս Աստուած, և 'ի շնորհաբաշխ հոգին սուրբ. . . եղի 'ի մօտի զտպագրութեան արհեստըն առ 'ի պայծառութիւն ազգիս Հայոց: Այլ և պատճառ աշխատանաց մերոց այս էր, զի յԱռհայտեցի Սրապիոն կաթողիկոսն բազում փափաք ունէր վասն տպագրութեան արհեստիս և ոչ եղև հասու: Եւ ետ պատուէր աշակերաին իւրոյ տէր Քրիգոր քաջ րարունապետին Աեսաբիոյ, լինի թէ գուկարողանաս տպագրութեան արհեստիս. և նա ևս ոչ կարողացաւ: Իսկ նա ինձ մեղաւորիս և անարժանիս իբր հարկս 'ի վերայ եղեալ պատուիրէր ինձ հանապազ թէ լինի գուկարողանաս. վասն զի իմ ծանօթութիւն կայր ընդ ազգիս Ֆռանկաց եթէ կարգաւորվ և եթէ չեզուաւ . . . Զոր և հասի յաւարա ըստ ձերում աղօթիւք: Իսկ եթէ նուազութիւն գտանէք, ներեցէք իմում պակասութեանս, զի կար մեր այս էր: Արդ եղև կատարումն և աւարտումն երգոյս Տեառն Ներսիսի Հայոց կաթողիկոսին, զոր անուանեալ կոչի Յիսուս որդի, 'ի լաւ և յընտիր օրինակէ բազում քննութեամբ և ստուգաբանելով: Ի թուականիս Հայոց ՌՂԲ . . . Ի վայելուչ և 'ի գեղեցկաշէն կզգիս Վանատկոյ. և յիշխանութեան նոյն քաղաքի Փրանկէսկոս Երիցու գուճի . . . յիշեցէք 'ի Քրիստոս զՏարանտացի մահտեսի Աստուածասուրն որ օգնութիւն արար ինձ 'ի սրբագրելն. այլ և զօրինակն շնորհեաց ինձ . . . կատարեցաւ գիրք երկու. նախ սաղմոս, և ապա Յիսուս որդի. 'ի տպագրատունն Սալիգաթատու »:

Բ. Տպ. Յովհաննէս Պովիս իտայացւոյն ձեռքովը, և իր մասնաւոր գործարանին մէջ 'ի 1660: Յիշատակարանն կ'ըսէ. « . . . Ետ կարողութիւն նուաստ և տառապետութիւն իմոյ ձեռն Վարդապետ օրմականուամբ ասի Պովիս որ եմ ազգաւ լատինացի 'ի գեղեցկաշէն մայրաքաղաքէն Վանատիկոյ: Զոր բազում Զանիւք և աշխատանք հազիւ կարացի 'ի յանգհանել զտպագրութեան արուեստ: Եւ ոչ ուստեք եղև ինձ օգնութիւն այսմ տպագրութեան արհեստ.



տիս: Ապաւինելով 'ի յոյսն ամենեցուն Քրիստոս, ... եզի 'ի մօի զապագրութեան արուեստն առ 'ի պայծառութիւն ազգին Հայոց: Այլ և պատճառ աշխատանաց մերոց այս էր որ բազում ժամանակաւ յառաջ ունէի սէր և բարեկամութիւն հետ ազգին Հայոց. և յարժամ կայի տեսանել զչքեզաշուք իշխանն Հայոց խոճայ Սաֆրազն. զոր ոչ կարացի հասանել ցանկութեանս իմոյ, զոր փոխեալ է առ Աստուած. և զնորահաս որդին իւր զխոճայ Վազանն: ... Խնդրեմ ամմեղադիր լինել վասն անյարմարութեան. քանզի ամենևին ոչ դիտէի լեզու Հայոց, և կամ դիր. և ոչ տեսեալ 'ի վարպետաց զայս ապագրութեան արհեստն. ըստ պարզւելոյն 'ի հոգւոյն սրբոյ այսքան յայտ ածեալ երևեցուցի վասն օտուութեան ազգին Հայոց ... 'ի լաւ և յընտիր օրինակէ, բազում քննութեամբ և ստուգաբանելով: Ի թուականութեանս Հայոց ՌՃԹ ... 'ի վայելուչ և գեղեցկաշէն կղզիս Վանատիկոյ. և յիշխանութեան նոյն քաղաքի Տոմէնիկօ Գոնդարինի դուճի ... Յիշեցէք 'ի Քրիստոս ... Ճուտն Պաղիսա Պովիսիս ... Գարձեալ յիշեցէք 'ի Քրիստոս Զուղայեցի Տէր Ստեփանոսի որդի Յազուպ ահան որ և նա շատ աշխատեցաւ 'ի սրբագրելն սորա ... Գարձեալ զնորահաս մանուկն Ստեփանոս որ է ազգաւ հայ որ շատ աշխատեցաւ և օգնութիւն արար ոյս արհեստիս 'ի սրբագրելն և 'ի շարելն ... կատարեցաւ գիրք քնախ Յիսուս որդի և ապա Սաղմոս »:

Գ. Տպ. « Յիսուս որդի անուն տեառն Կերսեսի Հայոց կաթուղիկոսի ասացեալ բան մտիթարութեան ասնս Հայոց »: Մատթէի Ծարեցւոյն ձեռքովը եղած է այս ապագրութիւնը, ինչպէս կ'ակնարկէ յիշատակարանն, զոր քաղելով կը համառօտեմք. « Ի թուին Հայոց ՌՃԵ. ես նուաստ ծառայ Քրիստոսի Աստուծոս քպիր Ծարեցի նօտար և սպասաւոր տեառն Փիլիպպոսի սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց ... հրամանաւ տեառն Հայոց Յակոբ կաթուղիկոսի՝ յիզմիրու ելեալ դիմեցի յարեմուսս յերկիրն իտալացւոց սակս գործոյ ապագրութեան. որ և աւուրս քանասուն հասեալ 'ի պայծառ և 'ի գեղազարդ քաղաքն և նաւահանգիստն 'ի Վենետիկ, որ

այս

ընթացեալ 'ի տպարանս գրոց, բազում ջանիւք հոգ՝ տարեալ վերահասու եղէ գործառնութեանս. այլ զի 'ի Վենետիկ ոչ գոյին արուեստաւորք պատշաճք այսմ գործոյ, և էր մահ սաստիկ 'ի մեծն Հռովմ ամենայն ճանապարհք փակեալ, յամեցայ առանց գործոյ 'ի Վենետիկ ամիսս չորեքտասան. և յորժամ վերցաւ մահն, և բացեալ եղեն ճանապարհք, ելեալ գիմեցի 'ի մեծն Հռովմ: Անդ ևս եղէ վերահասու, որ ոչ կային վարպետք կատարեալք այսմ գործոյ. և մանաւանդ ոմանք և հակառակասէրք և բարիատեացք գրգռեցին զմեծամեծս և զժողովս առ 'ի խափանել զայս գործ. որ և եղև իսկ: Հրաման ել 'ի ժողովոյն այսպէս. որք ընդ յարկաւ մերով իցեն արհեստաւորք այսմ գործոյ, մի ոք իշխեսցէ հանել զայս արհեստ և տալ 'ի ձեռս Հայոց. և որք յանդգնեալ արասցեն զայս գործ ծածուկ կամ յայտնի, պատիժ սաստիկ կրելոց են 'ի մէնջ: Եւս կամէին ահացուցանել զմեզ. բայց ոչինչ էր փոյթ մեզ սոցին որոտմունք: Մնացի 'ի Հռոմ ամիսս ութն առանց գործոյ, և քանիցս անգամ ազդ արարի կարտինալաց ժողովին և փափին իսկ, բայց ոչ եղև հնար: Վասն որոյ ... ելեալ գիմեցի 'ի յերկիրն յԱլանտիա, 'ի գեղեցկաչէն վայելուչ քաղաքն Ամսդերտամ. և անդ ևս վերահասու եղեալ գտի պատուական վարպետք այս արհեստի. ... բազում ջանիւք և հոգացողութեամբ գուն գործեալ աւարտեցաք մասն ինչ առաջարկեալ գործառնութեանս մերոյ 'ի ցայդ և 'ի ցերեկ մահու շափ աշխատելով, միայն և առանց ուրուք օգնականի յերկարելով յաշխատութիւնս չորս ամ և ութն ամիս, յանձն առնելով զվիշտս և զտառապանս զոր յայսքան ժամանակս կրեցաք 'ի հակառակասիրաց, և յոչ կամեցողաց զբարեգոյն գործս 'ի ձեռաց այլ ազգաց. և մանաւանդ 'ի մերային չազանց՝ 'ի սուտաձեւ կարգաւորաց թէ 'ի Վենետիկ թէ արտա Ամսդերտամ, որք փոխան օժանդակութեանն որ պարտըն էին, դիմաբանեալ հակառակէին մշտաբար բանիւք, գործովք և արդեամբք և զառաջարկեալ գործ մեր խափանել ջանային. և թէ ոմանք բարեպաշտք կամէին օտարք՝ օգնութիւն մեզ առնել, զայն ևս յուսահատեցուցանեն և ապաշաւել տոյին բարե.

գործութեանն: Սակայն... Աստուած օգնեաց ինձ  
 յաջողմամբ միշտ և ամենայն ուրեք տալով զչնորհս  
 առաջի ամենեցուն. և մեք ես ոչ դագարէսք, ոչ  
 դուլանայաք 'ի գործառնութեանցս. և ոչ ինչ էր  
 փոյթ մեզ հակառակութիւնք և չարութիւնք սոցին:  
 ... Եւ շնորհօք ամենազօրին Աստուծոյ աւարտեալ  
 կատարեցաք երեք ազգ գիր բոլոր, յոյժ կատա-  
 րեալ որակութեամբ և քանակութեամբ զանազա-  
 նեալ: Յորոց մինն և իբրև միջին կերպ է այս զոր  
 տեսանէք յառաջիկայդ. զոր յազագս տեսութեան  
 և փորձառնութեամբ տպեցաք զՅիսուս որդի. յա-  
 մին որ էր ծննդենէն Քրիստոսի ՌՈՎ. 'ի հայրապե-  
 տութեան Հայոց տէր Յակոբայ սրբազան կաթողի-  
 կոսին, և 'ի թագաւորութեան Պարսից փոքր Եա-  
 հապասին, և յիշխանութեան քաղաքի փրինչի-  
 փային Վիլհելմ Սրանեայ. և 'ի թուին որ ըստ Հա-  
 յոց ՌձԺ ... 'ի վայելուչ նաւահանդիսան և յաս-  
 տուածաշէն քաղաքն Ամսդերտամ... ինգրեմ ձեզ  
 ներել պակասութեան գրոցս. զի օրինակն մեր էր  
 և շարողք Ֆաանկ. որ ոչ են տեղեակ գրոց մերոց և  
 լեզուաց ... և ես միայն և տկար գորով սրբագրէի  
 այսքան ... Չայս յիշատակարանս Մատթէոսն գրեաց  
 իւր ձեռամբն, յառաջ քան զմեռանիլն: Ի տպա-  
 գրելն Յիսուս որդւոյն, որ էր գիրքն ԼԵ տետր,  
 յորժամ տպեցաւ ի՞նչ տետրն ... նօսար Մատթէոսն  
 'ի թուին Հայոց ՌձԺ, յունվար ամսոյ ի՞նչ, լուսի ե-  
 րեքշաբաթ գիշերն մետասան ժամին մեռաւ: Ես Ե-  
 րևանեցի Ղլիջէնց Ռսկան վարդապետի եղբայր Ա-  
 ւետիսս, որ ընկեր էի նորա գրամով և այլ օգնու-  
 թեամբ, Աստուած ի՞նչ որ վաստակ տայ մեր մէջն,  
 վաստակն կիսոյ լինի: յորժամ որ մեռաւ՝ ես իբրև  
 որբ մնացի 'ի Ամսդերտամ. վասն այն որ սրբագրող  
 ոչ գոյր, բայց միայն ես էի կարգացող. որ չի խիստ  
 հմուտ: Ժամանակ մի տարակուսեալ և պարապ  
 մնացի ... երկու ամիս ժամանակ անցաւ, ակօսն նա-  
 ւերն գնալ 'ի դէմ արևելս 'ի քաղաքն Չմիւռնայ.  
 սկսալ մնացեալ ժո՞ տետրն տպագրեցի ... Այսպէս  
 սրբագրեցի. օրինակն եգի 'ի մի կողմն, տպագրածն  
 'ի միւս կողմն. մի կու նայէի օրինակն, մի 'ի տպա-  
 գրաքն: յորժամ որ սխալ լինէր՝ ուղղէի. այսպէս

Կարող եմ ասել ըստ իմ փորձերս

սրբագրեցի մնացած չորեքտասան տետրն . ապա ուսայ զսրբագրելն : Թուին ՌձԹ մարտ քսանն հինգ ... տպագրեցի ձերին սուրբ ազօթիւք . մայիս քսան և եօթն աւարտ եղև ... Վասն որոյ աշխատանք ունիմ 'ի վերայ այս գործիս , թէ գրամով և թէ այլ օգնութեամբ ... և ուխտագիր եղեր եմ որ մինչ 'ի մահս պիտի որ աշխատիմ վասն սուրբ Էջմիածնուն ... Մատթէոսն որ մեռաւ , թէ որ ես չէի ' ով պիտի տիրէր 'ի վերայ քերխանային . հազար մառչիլ չոր պարտք էր քերխանային , որ հինգ հարիւր մառչիլ չէր արժէր ... յանձն առի յորժամ մեռաւ ... Դարձեալ հետ սուրբ աստուածաշնչի գիր պիտի դուրս գար . Կիրացուն մեռաւ , դեռ քառսուն կամ վաթսուն գիր չէր փորուել . դեռ երկու հարիւր 'ի գիր էլ պիտի փորվել . ես վարձեցի որ մինչև 'ի սուրբ Խաչն դուրս գայ , եթէ վարպեան չմեռնի » :

**Դ. Տպ.** Ոսկանեան գրով , հաւանականաբար 'ի Մարտիլ Քաղղիոյ . « Յիսուս որդիանուն տեառն Ներսեսի Հայոց կաթողիկոսի ասացեալ բան միւթարութեան տանս Հայոց վասն մանկանցն որ օրհնեն զՅիսուս միշտ յանուն նորա ցնծութեամբ . յամի տեառն 1702 » : Յիշատակարան չունի :

**Ե. Տպ.** « Տեառն Ներսեսի Հայոց կաթողիկոսի ասացեալ բան միւթարութեան տանս Հայոց վասն մանկանցն որ օրհնեն զՅիսուս միշտ յանուն նորա ցնծութեամբ : Ի Թուոջս մերում ՌձԷԳ , նոյեմբեր Ժ » : Յէջն 404 այս համառօտ յիշատակարանս կայ . « Ողորմութեամբ Աստուծոյ և բարեխօսութեամբ սրբոյն Մինասայ աւարտեցաւ սուրբ տառս 'ի Թվականի 1174 , յունվ. 8 . 'ի տպարանի արուսպ Աստուածատրոյ » :

**Զ. Տպ.** « Դերք որ կոչի Յիսուս որդի . արարեալ և շարագրեցեալ 'ի Ներսիսէ Կլայեցոյ յոգն երախտ Հայրապետէ յեղբօրէ Գրիգորիսի Վկայասիրի Հայոց կաթողիկոսի : Տպագրեցեալ ... 'ի Կոստանդնուպօլիս քաղաքի ... 'ի Թուի Փրկչին Յիսուսի 1746 , օգոստոսի 21 . և 'ի Հայոց 1195 , 'ի տպարանի Աստուածատուրի » :

**Է. Տպ.** « Տեառն Ներսեսի Հայոց կաթողիկոսի ասացեալ բան միւթարութեան տանս Հայոց վասն

մանկանց որ օրհնեն զՅիսուս միշտ յանուն նորա ցնծութեամբ » : Յիշատակարանն կ'ըսէ . « Աւարտեցաւ տաղաչափական գիրքս որ կոչի Յիսուս որդի ... Յիշեալիք զՅակոբ գերբըջանիկ բարունապետն , որ բաց 'ի հրաման տալոյն մեզ 'ի տպումն Երգարանին , յաւել ևս օրինակ մի 'ի գրեանցն իւրոց զբանն սրբոյն Գրիգորի Մագիստրոսի ... Յիշեալիք ևս ... զՅովհաննէսս և զԾնողն իմ » ... : Տպագրութեան թուականն է 1746 , ինչպէս յիշատակուած է 'ի գիրնն Մագիստրոսի (տես) :

Տպ. 'ի Փեթրպուրկ . « Յիսուս որդի տըւող շնորհաց , լուսաւորիչ խաւար մշտաց , բաց և զմիտս իմ թանձրամած , արժանացո լուսոյդ փառաց : Զքեզ աղաչեմ ով տէր Յիսուս , լեր ձեռընտու ինձ լքքելոյս : Գիրք որ կոչի Յիսուս որդի : Արարեալ և շաբադրեցեալ 'ի Ներսիսէ Ալայեցւոյ , յոգնեբախտ հայրապետէ յեղբօրէ Գրիգորիսի Ակայասիի Հայոց կաթուղիկոսի : Եւ տպագրեալ հրամանաւ իշխան աշնեսոյ տեառն Յովսեփոյ առաքելաշաւիղ արհիեպիսկոպոսի Սանահնեցւոյ Արղութեանց , և առաւնորդի սգգին Հայոց որք են ընդ տէրութեամբ Ռուսաց ... Յամի տեառն 1785 . իսկ 'ի թուին Հայոց ՌՄԼԻ ... ի Սանկտպետրբուրգ , 'ի տպարանի Խաղարենց պարոն Գրիգորի » :

Տպ. 'ի Մատրաս . « Գիրք որ կոչի Յիսուս որդի : Արարեալ և շաբադրեցեալ 'ի Ներսիսէ Ալայեցւոյ ' յոգնեբախտ հայրապետէ յեղբօրէ Գրիգորիսի Ակայասիի Հայոց կաթուղիկոսի ... 'ի Թագաւորութեան օգոստոսիառ տեառն Երկրորդի Հերակլայ Բակրատունւոյ որ 'ի Թիփլիս ... 'ի մայրաքաղաքն Մագրաս 'ի տպարանի տէր Յարութիւնի Շմաւոնեան Երազցւոյ ... յամի տեառն 1792 . 'ի թուին Հայոց 1241 » : Տես Շնորհալի :

Յորայ գիրք տաղաչափեալ 'ի Գեր. Եղուարդայ Հիւրմիւզ յարքեպիսկոպոսէ Երրակայ : Վենետիկ , Ս. Ղազար , 1862 :

Յոքելեան սուրբ տարի թողութեան հոչակեցեալ 'ի հայրապետէն Սրբազանէ Բենէտիքոսսէ և .

*X → Եւ այսինքն ... ի գիրք սոխաւայեալ սրբապետ և ժամեր  
 3 աղմուտիս և քաղաքային սոխալ ինչ շօնաբան եւ ... ;  
 Ի իսկ սոխալայեալ գործարարս Յուսէ օրն 1824 հոյսեմ և  
 սոխալայ ի սաւ ի հրապարակուած էջ 106 / սրբապետ*

րեքաստաներորդէ . և 'ի խնդրոյ բարեսէր ուխտաւորացն , 'ի լեզուն Հայոց եղև շարագրեցեալ աշխատութեամբ Յօնանու եպիսկոպոսին . և տպա ծախիւք և սրբագրութեամբ եղբօր նորին Օհաննու քահանային , տպագրեցեալ 'ի լոյս ածեցաւ : Il Giubileo dell' anno santo. Pubblicato dal Sommo Pontefice Benedetto XIII. Per la petizione dei Cattolici Armeni peregrini, interpretato dall' idioma Latino in Armeno da monsignor Giona vescovo di Sebaste, mediante la fatica e l'ajuto di D. Giovanni suo fratello. Յամի տեառն ՌէճիՅ , 'ի Հռոմ , հրամանաւ մեծաւորաց : In Roma, 1725. Nella stamperia della Sagra Congregazione de Propaganda fide.

X Յոգնադիմի Աստուածաբանական, Բարոյական և Քաղաքական իրողութեանց սահմանք . երկասիրութեամբ մեղուաշան արանց 'ի մի վայր ըստ կարգի այրուբենիցն հաւաքեցեալք : Ի լոյս ածեալ տըպիւք և արդեամբք տաւքելաշաւիղ Փօմայ եռամեծ վարդապետի Վանանդեցւոյ . Յամի տեառն 1704, Յ'Ամսդէլտամ :

**Յովհան . Ոսկիբերան : Տես Ոսկեբերան :**

Յովհաննէս Աստուծոյ . « Վարք երանելոյն սրբոյն Յովհաննիսին Աստուծոյ , հօրն աղքատաց և հիմնողին սրբազանի կարգին հիւրանոցաց և հիւանդանոցաց , բարի եղբարք կոչեցելոց : Գրեցեալ յումեմնէ կրօնաւորէ Յիսուսեան կարգէ , կարգաւ վայելչագունիւ և պարզ շարագրութեամբ : Արտահանեցեալ 'ի լեզուէ իտալիանականէ , և 'ի հայկական բարբառն շարագրեցեալ աշխատութեամբ Յովնանու եպիսկոպոսին Սերասաիոյ : Յամի տեառն 1724 . . . 'ի Վենետիկ , 'ի տպարանի Անտօնի Պալտի » :

**Յովհաննէս Արճիշեցի Ոսպնակեր .**

Ա . Տպ . Ի Կոստանդնուպօլիս . « Մաղթանք ձեռնտուութեան առ կոյսն երանուհի : Իսկականի լուսոյն ծընօղ , - Միոյ Փըրկչին և տեառն բարձօղ - Արարածոց խնամչին տաճօղ . Բամից էից տեառն յան

ձանձօղ. — Տեսեալ մարմնով էին գըրկօղ, — Իմաստու-  
թեան վերնոյն տարող, — Ռենի որգւոյն սընուցանօղ,  
— Ուրախութեամբ վերընդունօղ. — Սրբուհի կոյս օգ-  
նեա մեզ. — Ե՛ր փրուհի լեր ընդ մեզ » : Յառաջաբանին  
մէջ՝ հրատարակողն Մարտիրոս դպիր կ'ըսէ. « ... Ի  
վայելուծմն աստուածատէր անձանցդ ձերոց՝ կամեցայ  
'ի գործ ապագրութեան ածել զսա. 'ի հայրապե-  
տութեան տեառն Աստուածատրոյ աստուածաբան  
կաթուղիկոսի ամենայն Հայոց ... և պարզապէս  
ՌձԿՁ » . Յիշատակարանն ալ կ'ըսէ. « Եղև զբաւ մա-  
տենիս տպեցման ... զի միշտ 'ի բարւոյն նկատեալ  
ոորին կատարելութիւն Աստուծով, այսքան հաղի-  
կարողացաք տեսակաւորել : Եւ այս՝ վասն ոչ ուրեք  
գտանելոյ մեր միւս այլ կատարելագոյն օրինակ :  
Բայց իբրև լուաք թէ 'ի սուրբ Գեորգայ եկեղեցւոյ  
լեալ առ հեզահոգի տէր Մովսէս քահանայն գտանի  
մեկնութիւն իմն յաճախ սրբոյ խորհրդոյս, խնդրե-  
ցաք ալերսանօք տալ մեզ առ 'ի զպակասութեանն  
սորա ընու զթերութիւն : ... Իսկ ... (նա) շնոր-  
հեաց մեզ : Եւ մեր առեալ զայն և որոնեալ, գտաք  
'ի տեղիս տեղիս մեկնութեան ինչ քարոզից, և քա-  
հանայական աղօթից սրբոյ խորհրդոյս՝ որք ոչ գոյին  
'ի մերս օրինակ : Զի էր որ 'ի Ներսիսէ Լամբրօնացւոյ  
էր արարեալ, և էր որ 'ի Խոսրովու Անձևանձու ե-  
պիսկոպոսէ. զորս հանեալ եդաք 'ի մէջ սորա՝ 'ի պատ-  
շաճաւոր ետեզ : Բայց զմեկնութիւն զայս ինչ աղ-  
թից, այսինքն զՀայր սրբոյն, և զՈսկիաբանի ասա-  
ցեալ զԳոհանամին, և զայլ երից համառօտ Գոհա-  
նամիցն՝ որք առ գէմս երից անձանց սուրբ Երրոր-  
դութեան՝ ոչ գտաք ... յիշեցէք զՍարգիս ... զտը-  
պօղ մատենիս » , և այլն :

Բ. Տպ. Ի Կոստանդնուպօլիս. « Մեկնութիւն  
ահաւոր խորհրդոյ սրբոյ Պատարագին. արտահա-  
նեցեալ 'ի մեկնութեանց Խոսրովու Անձևացեաց ե-  
պիսկոպոսի և Ներսիսի Լամբրօնացւոյ վերատեսչին  
Տարսճի, կարճաբանելով և պարզաբանելով 'ի Յո-  
հաննու Արժիշեցւոյ ... Տպագրեցեալ 'ի Կոստանդ-  
նուպօլիս յամի տեառն 1799. արդեամբք 'ի յԱն-  
դրիանուպօլիս բնակեալ արևելցի որ և բնիկ տեղեալ  
Ռամիցի իշխանազնեայ մահտեսի Բենիաթի որդի

մահտեսի Գէորգ բարեպաշտօն Ամիրային » : Ի վերջ գրոյն. « Յիշատակարան տպագրչիս՝ սակս ձրի բաշխեցեալ սուրբ մատենիս ... Աւարտեցաւ տպումն սրբոյ մեկնութեանս յամի տեառն 1799 ... 'ի կոստանդնուպօլիս, ընդ հովանեաւ սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյ ... Արդեամբք և գոյիւք արևելացի որ և գիւղիւ Ռամեցի մահտեսի Պենիաթի որդւոյ մահտեսի Գէորգին, սակս ձրի բաշխելոյ ... յիջեցէք զտպագրիչ սորին զՄատթէոս նուազս մանկավարժս ընդ քեռն իմոյ Բրաբիոն նօտարի » ... :

Գ. Տպ. « Մեկնութիւն ահաւոր խորհրդոյ սըբբոյ Պատարագին. տրտահանեալ 'ի մեկնութեանց Խոսրովու Անձևացեաց եպիսկոպոսի և Ներսեսի Լամբրոնացւոյ վերատեսչին Տարսոնի, կարճելով և պարզաբանելով Յովհաննու Արձիշեցւոյ : Ի լոյս ընծայեաց պտրոն Յովհաննէս Ավգալեանց՝ անգամ Ասիական Միաբանութեանն Բանգալայ, և դասասաց 'ի Մարդասիրական Ճեմարանին ... 'ի գործարանի նորին իսկ Ճեմարանին. 'ի կալկաթա, 1830 » : Հրատարակողն կը ծանուցանէ 'ի վերջաբանին. « Զայս մի ինչ կարևոր համարիմ յիշատակել՝ զի 'ի սուպգրուութեան մատենիս փոյթ յանձին կալայ ըստ ճիշդ կանոնաց յարմարագրութեան զկէտագրութիւնն կարգել, ուստի թսփուր էր օրինակն սպագրեալ 'ի կոստանդնուպօլիս յուլթևասաներորդում օգոստոսի, յամի Տեառն 1799, յորմէ և 'ի լոյս հանի զայս տպագրութիւն՝ ափսոսալով զի չունէի 'ի ձեռին զգրչագիր օրինակ ինչ՝ որոյ ընդ տպագրելոյն համեմատութեամբ հնար լինէր զամենայն ուղիղ արամագրել, և եթէ պատահէր վրիսակ ինչ գրչի՝ զսոյնն որոշել :

« Երեք հարիւր օրինակք այսր մատենի տպագրեցան, զի նօքօք հնար լիցի զիջուցանել զծարաւ հոգւոց որոց 'ի Հնդիկս կան մերազնեայք, և որոց 'ի Զուղայ բնակին որգիք նորոյս Սիոնի » : Յետոյ մասնաւոր խորագրով. « Համառօտ պատմութիւն պատճառի տպեցման մատենիս, 'ի Յովհաննիսէ Ավգալեանց », յորում կենսագրութիւն Մերջան տիկնոջ Ստեփաննոսեան՝ սատարողի տպագրութեանն :



Յովհաննէս Երզնկացի: Տէս

Յաճախապատում: — Սոփերք:

Վիպասանութիւն գերկնային մարմնոց շարժմանէ:

X

Յովհաննէս իմաստասէր Աւծնեցի. « Յովհաննու իմաստասիրի և կաթողիկոսի Հայոց Օձնեցւոյ ճառ ընդդէմ Երևուծականաց. նախ զառաջինն 'ի լոյս ընծայեալ սովին տպագրութեամբ ըստ չին օրինակին եղեւոյ 'ի մեծ գրատան Փարեզու. հանդերձ յառաջաբան և հետևորդ ծանօթութեամբք Հ. Մկրտիչ վարդապետի Աւգերեան . . . 1807, ՌՄՁ: Ի Վենետիկ, 'ի վանս սրբոյն 'Լազարու»: էջ 96 11X<sup>19</sup>

« Ի տպագրութեանս, — կ'ըսէ հրատարակողն 'ի 'ի յառաջաբանին, — զամենայն զգուշութիւն 'ի գործարկաք զյոյզ ընդ հաւատարմութեան, մինչև զյայտնի վրիպակս ինչ գրչի . . . 'ի ծանօթութիւնս անդ նշանակեցաք, զուզիղն եգեալ 'ի կարգին՝ ըստ պահանջեւոյ իմաստից . . . Զնշանակս հնապրութեանն՝ ըստ սրում էրն, անփոփոխ պահեցաք՝ մինչև ցշեչս անգամ: Իսկ օրինակ ճառիս առաւ 'ի մեծ գրատանէ Փարեզու՝ յընտիր և 'ի վաւերական օրինակէ Գորգայ, որ գաղափարեալ է զսա 'ի Սկեռայ անապատըն՝ այն է վանք Լամբրոնացւոյն, 'ի մատենէ անտի զոր 'ի ձեռին ունէին, և յարկեղս գրոց իւրեանց պահէին սուրբն Գրիգոր Վկայասէր՝ մեծն և փոքրն, սուրբն Ներսէս Ալայեցի, սուրբն Ներսէս Լամբրոնացի, և Գրիգոր կաթողիկոս մեկանուն Տղայ »:

Ընտրութիւն առտուածարանից վանս ճառին Յովհաննու Օձնեցւոյ ընդդէմ Երևուծականաց. լատին, իտալ. և հայ: Վենետիկ, Ս. Լազար, 1812:

Յովհաննու իմաստասիրի Աձնեցւոյ Մատենագրութիւնք: Վենետիկ, 'ի ապարանի սրբոյն 'Լազարու. յամի 1833, ՌՄՁԲ:

« Յառաջին կէնցազն իւր և 'ի գալն յաթու հայրապետութեան, և հաստատել բազմապատիկ և զանազան կարգս և կրօնս եկեղեցւոյ: — Կանոնք: — Նորին ընդդէմ Պաւղիկեանց: — Նորին ընդդէմ Երևուծականաց: — Նորին տեառն Յովհաննու իմաստասիրի յաղագս կարգաց Եկեղեցւոյ Գրիստոսի: — Իար.

ձեալ՝ յաղագս կարգաց Եկեղեցւոյ:— Յովհաննու Ի. մաստասիրի Հայոց կաթողիկոսի վասն մեծի աւուր միաշարաթին: — Հատուածք բանից Յովհաննու Ի. մաստասիրի 'ի հաւաքմանց յաղագս կարգաց եկեղեցւոյ և յիշատակարանն 'ի գիրս կանոնաց:— Ճառք կրկին յԵկեղեցի՝ երկրայականք »:

Յառաջբանն կը ծանուցանէ. « ... Ատենաբանութեան երանելւոյ հօրս, և ճառիցն ընդդէմ Պաւղիկեանց և Երեւութականաց, միակ գտանի օրինակ՝ այլ ընտիր յոյժ 'ի բանիբուն գրչէ երկասիրեալ: Ըստ յեղակարծ իմն գիպուածոյ զարմանագործ ժամանակին՝ գրչագիրս այս օրինակ բաժանեալ յերկուս, մինչև 'ի ճառն ընդդէմ Երեւութականաց՝ այսր 'ի ձեռս մեր եհաս. իսկ ճառն այն՝ 'ի նորին գրչէ, 'ի նոյն գիրս և 'ի նոյն ձև և յորակ թղթոյ նմանագիր գրեալ, և նովին ոճով մակագրեալ շարայարելով զհետ մերոյս հատուածոյ. Նորին ընդդէմ Երեւութականաց, յաճեալ առ օտար ազգս, և 'ի մայրաքաղաքին գաղղիացւոց 'ի Լուտեաիա քաղաքի յարքունական մատենադարանին պահի: Յորմէ ամենայն զգուշութեամբ, և երբակի բաղգատուութեամբ յայլ և այլ անձանց առեալ զգաղափարն, ըստ նմին օրինակի զապագրութիւնս զայս արարաք: Իարձեալ և զկանոնսն և զայլն ամենայն նովին զգուշութեամբ 'ի վաւերական գրչաց մատենադարանիս ածաք 'ի տիպ 'ի վայելումն հանգիպողաց մարտիրոս »: Երկրայական ճառից համար ալ կը ծանօթարանէ. « Զայսօսիկ կրկին ճառս 'ի միում ուրեք 'ի հնագիր մատենից դասք առանց անուան մատենագրի՝ այլ տիպք բանիցն և դարձուածք, ոչ օտարք 'ի բանից Յովհաննու Իմաստասիրիս, նորին գու հաւանեցուցին մեզ. և իբրև երկրայականս յաւելաք զկնի այլոց մատենագրութեանց նորին հայրապետի, մինչև ժամանակըն բազմիմաստ ստուգագոյնս ինչ ուսուցէ »:

Յովհաննու Իմաստասիրի Անճնեցոյ Առնեալսնորիս և ձառ ընդդէմ Պաւղիկեանց. Beati Johannis Ozniensis, Sermones duo, quod per P. Joh. Bapt. Aucher Vic. Gen. Congreg. Mechit. nunc primum ex Armenio in Latinum translatus Emin. ac Rev. Jacobo Card. Monico Venetiarum Patriarchæ S.

Purpuram solemniter induenti Mechitaristica Armeniorum Societas gratulationis devotionisque ergo D. D. D. Venetiis, in Insula S. Lazari, XVII. Kal. Octobr. MDCCCXXXIII.

Տեսան Յովհաննու Ինաստասիի Սահմանայ Մանկարարի թարգմանեալ 'ի Լատին բարբառերկասիրութեամբ Տեսան Հ. Մկրտչի վարդապետի Աւգերեան, Աթոռակալի ուխտի Մխիթարեանց: Ի վէնետիկ, 'ի տպարանի սրբոյն Ղազարու յամի 1834, ՌՄԶԳ:

Domini Johannis philosophi Ozniensis Armeniorum catholici Opera. Per R. P. Johannem Bapt. Aucher Vic. Gen. ac Doct. Congr. Mechit. ex Armenio Latino reddita. Venetiis, typis PP. Mechitaristarum in Insula S. Lazari, MDCCCXXXIV.

Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերացոյ Պատմութիւն Հայոց: Ա. Տպ. Երուսաղէմ, 'ի տպ. սրբոց Յակովբեանց, 1843:

Բ. Տպ. Ի լոյս ընծայեաց Մկրտիչ Էմին Տեսուչ Ղազարեանց Ճեմարանի Արեւելեան լեզուաց: Մուկվա, 'ի տպարանի Վլախիմիրայ Գոսիէ, 1853:

Քննարան հրատարակողն՝ յառաջարանութեան մէջ կ'ըսէ. « Որպէս քաջածանօթ իսկ է ուսումնասէր ընթերցողաց՝ Յովհաննու Կաթողիկոսի Պատմութիւն զառաջինն երևեցաւ 'ի գաղղիացի թարգմանութեան յամի 1841, զոր արարեալ էր հռչակաւոր հայերէնագէտն Սէն-Մարտէն: Թարգմանութիւնդ այդ՝ ի լոյս ընծայեցաւ զկնի մահուան յետնոյս հրամանաւ և ծախիւք լուսաւորեալ կառավարութեանն Քաղղիոյ:

« Զկնի այսորիկ յամին 1843 զառաջինն յերուսաղէմ տպագրեցաւ հայերէն ընդգիրն յիշեալ Պատմութեան՝ հրամանաւ Տեսան Զաքարիայի պատրիարգին Երուսաղէմայ: Առաջիկայ մերս տպագիր արարաւ 'ի գրչագիր անթուական օրինակէ արգոյ և գիտնական բարեկամի մերոյ Մսերայ մագիստրոսի Զմիւռնացոյ: Զօրինակէս զայսմանէ լիագոյն անգղեկութիւն կարէ գտանել ընթերցողն 'ի թղթի նորա, զոր 'ի խնդրոյ մերոյ հաճեցաւ գրել այրն ի մաստուն: Որ և այս է սլատճէն թղթոյն. —

« ... Մատեանս այս հոծ և հարուստ բազմաբա-  
րեան անցից յիշատակօք մերոց հայրենեաց, և  
վայելչաբան յօրինուածոնն՝ սքանչելի, տուաւ ինձ  
'ի Ս. Էջմիածին յամի 1828, յարկեղէ գրոց Ստե-  
փաննասի արքեպիսկոպոսի Յնովքեան ... Թէպէս և  
չէ յայտ՝ ոյր ուրուք երկասէր ձեռին վաստակ իցէ  
գրչու(թիւն մատենիս, (զի և ոչ իսկ յիշատակարան  
գոյ նորա 'ի վերջէ՝ ըստ օրինակագրացն սովորու-  
թեան), սակայն 'ի նօտրագիր կամ 'ի շղագիրն անուա-  
նեալ ձևոյ գրերոյն՝ որ միատարազ 'ի բովանդակ  
մատենին տեսնի, թուի ինձ գործ լինել միոյ ու-  
րումն 'ի յաջողածեան գրչաց Հայրսպետանոցին՝ ե-  
զելոց յաւուրս Սիմէոնի կաթողիկոսի, կամ՝ Ղուկայ  
կամ նորուն յաջորդի :

« Ընարու(թիւն և վաւերականութիւն օրինակիս՝  
եթէ ուղղագրութեանն մասամբ, եթէ հարազատու-  
թեամբն 'ի բնաւ իսկ ըն(թերցուածսն, և թէ ան(թե-  
րի լրութեամբ յառաջաբանին և վերջաբանին, գեր 'ի  
վերոյ քան զայլոցն ցուցաւ 'ի բաղդատելն իմ զայն  
ընդ այլոց ևս կրկին օրինակաց. յորոց զմին ունէի  
ես յառաջնմէ իմով գրչութեամբ գաղափարեալ 'ի  
Զմեռնիա յամին 1824, յան(թուական և յաղաւաղ  
օրինակէ, առանց իրիք փոփոխութեան. և զմիւսն  
բերեալ էր 'ի Կոստանդնուպօլսէ հոգիազարդն Հ.  
Յովհաննէս վարդապետ Գէորգեան Շահխաթու-  
նեանց, այն որ ապա յեպիսկոպոսութեան ամբար-  
ձաւ աստիճան : ...

« Զամենայն հանգամանս զմիոյ միոյ յօրինակոցս  
յիշատակելոց յակն արկեալ իմ և հանգուցելոյն 'ի  
Տէր հօրն Շահխաթունեանց, ինամով իմն ջան յան-  
ձին կալաք 'ի բաղդատութիւն առնուլ զնոսին՝ ոչ  
միանգամ կամ երկիցո, այլ յոլովակի ծայր 'ի ծայր  
վերծանութեամբ բովանդակ մատենին 'ի բազում  
աւուրս : Եւ այնպէս իսկ յետ զգուշաւոր զննու-  
թեանց՝ զուղղագրութիւնսն արարաք զմատենիս, 'ի  
գրչացն վրիպակաց զնոյն մաքրեալ, 'ի մ(թութեանց  
պարզեալ, զ(թերին լցուցեալ, զաւելորդսն յապա-  
ւեալ և զգլխաւորագոյնսն 'ի տարբեր ըն(թերցու-  
ածոց կամ յերկբայելեաց ընտրանօք 'ի ներքոյ գրոչ-  
մեալ » : —

« Ահա զայն զայս գրչագիր օրինակ կալաք մեզ գաղափար յառաջիկայ տպագրութեանս: Այ աւելորդ գատեցաք բաղդատել զայն նաև ընդ յերուսաղէմ տպագրելոյն, զորոյ և զտարբեր ընթերցուածսն 'ի վերջ մատենիս զգուշութեամբ եղաք »:

Գ. Տպ. Պատմութիւն Յովհաննու կաթողիկոսի: Ի տպարանի առաքելական Աթոռոյ սրբոց Յակովբեանց յերուսաղէմ, 1867:

Գրքին սկիզբը գրուած համառօտ Ազգը կ'ըսէ. « Երկրորդս այս տպագրութիւն պատմութեան Յովհաննու կաթողիկոսի եղև 'ի վերայ վեց գրչագիր օրինակաց, յորոց երկուքն համաձայնէին իրր 'ի միոյ բնագրէ առեալ. իսկ միւս չորեքին օրինակք, որոց այլ և այլ էին նախագաղափարք, թէպէտ և նօրագիրք ամենայն և ոչ հնագոյնք ժամանակաւ, այլ յընտիր օրինակաց գաղափարեալք էին. որոց և մեք հետեւեցաք յերկրորդումս այս տպագրութեան 'ի ստորին լուսանցսն նշանակելով զտարբերութիւնս: Երկուք ևեթ յայսոցիկ ունէին բաժանմունս գլխոց, այլ տարբերք 'ի միմեանց. իսկ զվերագիրս գլխոյն ունէր միակ օրինակ, յորմէ առեալ և մեք եղաք »:

*Histoire d'Arménie, par le Patriarche Jean VI, dit Jean Catholicos, traduite de l'arménien en français par M. Saint-Martin. Ouvrage posthume, publié sous les auspices du ministère de l'Instruction publique, par Félix Lajard. Paris, 1841.*

*Examen de l'histoire de Jean VI le patriarche, traduite de l'arménien par Saint-Martin, par Félix Nève. Louvain, 1843. (Extrait du N.º 96 de l'Univers Catholique. Décembre).*

- Յովհաննէս Հովով: Տես
- Թովմա Գեմբացի:
- Խոկոճմն քրիստոնէական:
- Խոստովանարան:
- Խորհրդատետր հայ. իտալ:
- Հայելի ճշմարտութեան:
- Ճարտասանութիւն համառօտ:
- Նորագոյն ծաղիկ զօրութեանց:
- Նուագարան կոլսիս:

Պատասխանատրութիւնք:  
Պարզաբանութիւն սաղմոսաց:  
Քերականութիւն հայ եւ լատին:

Յովհաննու Մամիկոնեանի եպիսկոպոսի Պատմութիւն Տարօնոյ: Վենետիկ, 'ի տպարանի սրբոյն Ղազարու յամի 1832-ՌԾԶԱ: Յառաջաբանն. «Յովհանն Մամիկոնեան եպիսկոպոս յաւուրս Ներսեսի հայրապետի Շինողին կացեալ, հրամանաւ նորա գրեաց զգիրս զայս: Յորում պատմէ զպատերազմունս տանն Մամիկոնեանց ընդ Պարսս, և զՄուշեղայ և զԳայլ Վահանայ, այլովքն հանգերձ. որ ինչ յաւուրս Խոսրովու երկրորդի Պարսից արքայի յերկրին Տարօնոյ գործեցան: Այլ որ ինչ իւր 'ի Տըրգատայ մինչև ց'Խոսրով լեալ են, զոր մատենագիրս 'ի յիշատակարանին իւրում աւանդէ գտեալ 'ի կողմանս Արեւելոյ և Թարգմանեալ, չերևին 'ի միջի:

«Անգատին 'ի նոցունց օրինակաց գրոցն Ձենորայ և տպագիրս այս արարաւ. առ որ ցանկալի էր մեզ ընտրելագոյն օրինակս 'ի ձեռին ունել: Ձի առաւել եւս 'ի սմա գտանին փոփոխմունք և յաւելուածք. որք եթէ ոչ 'ի գրչագրաց իցեն յետոյ կրճատեալ, ինքն իսկ արգեւք մատենագիրն, կամ յետ նորա Գլակայ վանիցն առաջնորդք յաւելին զայնս ըստ նորին յորգորանացն՝ զոր 'ի յիշատակարանին իւրում առնէ ... Հնգեցունց օրինակաց բաղդատու Թեամբ՝ անթերի զբնագիրս յերիւրեալ, Թողումք այլում տեղոյ քննել որ ինչ 'ի սմա ըստ Ժամանակագրութեան մատին գտանին անտեղութիւնք, և զպատճառս նոցին հետազօտեալ հոլանել»:

Jean Mamigonien, continuation de l'histoire de Daron, traduite pour la première fois de l'arménien par Jean Raphaël Emine. (Collection des historiens anciens et modernes de l'Arménie, publiés en français par Victor Langlois). Paris, librairie de Firmin-Didot frères, fils et Compagnie. MDCCCLXIX.

X

Յովհաննէս Մրքուզ, կամ Չուզայեցի: «Գիրք իսկապէս համառօտ վասն և շքմարիտ հաւատոյ, և

գաւանդութեան ուղղափառ կաթողիկէ ընդհանուր  
Հայաստանեայց եկեղեցւոյ, զորս առաք և ունիմք  
այժմ՝ի Գրիգորէ սուրբ Լուսաւորչէն, և երից  
սուրբ Ժողովոցն և ՚ի սրբոց հոգի ընկալ երկոսասան  
վարդապետացն. և ևս վասն ընդդիմութեան երկա-  
րնակացն որք հետեւին ըստ մտայածին բանից իւ-  
րեանց, և ոչ ըստ աւանդութեան սրբոց հոգի ընկալ  
հարցն, զոր ստացեալ ուսան ՚ի քաղկեդոնական ժո-  
ղովոցն և ՚ի սուրբէն Էլեոնի. որ յայտնի ընդդէմ  
է երից սուրբ Ժողովոցն և աստուածընկալ սուրբ  
հարցն: Եղև տպագրութիւնս ՚ի Թագաւորութեան  
արքայից արքայ Շահ Սուլէման Թագաւորին ... ՚ի  
Ջուղա ՚ի վանս սուրբ Ամենափրկչի. ձեռամբ նորին  
առաջնորդի Ստեփաննոսի արհիեպիսկոպոսի. ՚ի քա-  
լանթարութեան պայազատ պարոն Աւետին. աշխա-  
տողք տպարանումս զՍարգիս և զԱստուածատուր  
երիցունքն ևս յիշէլ աղաչեմք: Գաւանդութիւն Հա-  
յոց և Ներածութիւն Անուղղից. Symbolum Arme-  
norum et Introductio De Didiregtam. Ի Թուոյ  
Փրկչին Ռ. ՁՃ. ԵՂ և ըստ Հայոց ՌՃԼՁ»: Գրքին այս  
ճակատն յառաջ ծանուցումն մը կը կարգանք  
« ... Նուաստ յուսմեմէ Ստեփաննոսէ քանի պաշ-  
տօնէի. և վերագրիտողէ մասին Հայոց որք ՚ի կողմանս  
Պարսից: Գիտութիւն լիցի ձեզ սիրելեացք ... սկը-  
սաք ՚ի լուսածել զսպագրատունս, առ ՚ի տղել  
զվաղեմի սուրբ գրեանքս ... Այժմ որովհետեւ պատ-  
րաստեալ եղև ՚ի միջի մերում գործարան տպագրու-  
թեանս ... զիրկնակի փոքր գրեանսն՝ որ և դրաւ և  
կատարումն իսկ եղև, հինգ հինգ հարիւրով սփռե-  
ցաք ... Եղև սկիզբն և կատարումն սորին ՚ի վանս  
սուրբ Ամենափրկչի Նոր Ջուղայու, ձեռամբ և հո-  
գաբարձութեամբ Տեառն Ստեփաննոսի » ... : Եղև  
361՝ որով աւարտի գրուածն, կը յաւելու հեղի-  
նակն. « Այսքանս բաւականացի իմաստայեղց հան-  
ճարեղագունիցն. զոր արարաւ և յօրինեցաւ ՚ի ձեռն  
ամենաթշուառ անձին Յոհաննէս վարդապետիս Եիս  
պահանցոյ » : Յիշատակարանն ալ մաղթէ « ... յիշել  
՚ի Քրիստոս զսրբոյ մենարանի աստ գումարեցելոց,  
յուսուցչապետէ հոգի ընկալ հօրս մերոյ տեառն  
Գաւթ վարդապետի, որք միշտ ՚ի սպասու կան և

կատարեն զպաշտօն սրբոյ եկեղեցոյս . որ և կամա-  
կցուածեամբ միմեանց ջան եդեալ և գուն գործեալ 'ի  
վերայ գործարանի տպագրութեանս , այսինքն զՄի-  
քայէլ վարդապետն , զՅոհաննէս վարդապետն զԿա-  
րաբրդ գրոյս , զԱղեքսանդր միշտաբարող վարդա-  
պետն , զԵսայի վարդապետն , զԱհարոն վարդապետն .  
զհոգեբարձու վանաց և տպագրութեանս զտէր Ան-  
դրէասն , զտէր Թովմասն , զտէր Յոհանն . և այլ գոր-  
ծակալք տպագրութեանս » . . .

Այլ տպագրութիւն 'ի Պօլիս . « Կրթութիւն հա-  
ւատոյ , տպագրեցեալ 'ի Թովին Հայոց ՌձԿԲ » . Ե-  
տոյ ուրիշ ճակատ մ'ալ . « Կրթութիւն հաւատոյս  
քրիստոնէականի , 'ի վարժումն մանկանց կաթու-  
ղեկէի եկեղեցւոյս Հայաստանեայց : Եարադրեցեալ  
աշխատութեամբ Յոհաննիսի աստուածաբան վար-  
դապետի Զուղայեցւոյ : Տպեցեալ Թուին Փրկչին  
ՌձԿԲ . իսկ ըստ Թվոյս հայկազնականի ՌձԿԲ . . . 'ի  
մայրաքաղաքն Կոստանդինուպօլի » : Յիշատակա-  
րանն ալ կ'ըսէ . « Յաւարտումն եհաս տպագրումն  
գրոյս շահաւէտի : Եւ քանզի 'ի վաղուց հետէ ա-  
ծեալ իմ զմասալ տպեցեալ խորովէի 'ի սրտի , Թէ  
նրքան գրեանք աստուածայինք . . . արտագրեցեալք  
գոն 'ի մերս , և ահա ոչ երևին ներկայապէս . . . Եւ  
մինչ յայսց վարանեցմանց և 'ի հոգոց էի դերեցեալ ,  
տեսի զգրգուկս զայս 'ի ձեռն Զուղայեցի պարօն  
Աղավէիին . հայեցայ և ահա բան զօրաւոր էր 'ի միջի .  
և իսկոյն սաստիկ ըղձիւ հարայ 'ի սէր սորա : Եւ  
անգ 'ի տեղին էին Ագուլեցի Մուրասի որդի պարօն  
Յարութիւնն , և Զուղայեցի տէր Աստուածաբանի  
որդի պարօն Պեարոսն . որոց ջերմեանդ սիրով  
յանձին կալեալ զբաւական ծախս տպագրատան'  
մեծաւ ջանիւ և յօժարութեամբ սրտի ստիպեցին  
զիս զանարժանս 'ի գործ տպելոյ . . . Յիշեալք և զիս  
զչնչին և զմեղաւոր զԿրիգոր զտպագրող գրգոյս . . .  
և զԿանջապի զՅովհաննէս վարդապետն , որ 'ի յաւ  
և 'ի տուր Թղթոյ՝ աշխատանս ինչ կրեաց » :

այ ւ  
Այլ տպագրութիւն դարձեալ 'ի Պօլիս . « Դա-  
ւանութիւն հաւատոյ և ներածութիւն անուղից .  
տպեցեալ 'ի տպարանում սրբոյն Մինասոյ զօրա-  
վարին և վկային Քրիստոսի . 'ի ընթուում հայկա-



կականիս ՌՃԿՐ» : Յիշատակարանն ալ կ'ակնարկէ .  
 « ... Յաւարտ և 'ի կատար եհաս և 'ի լրումն ժա-  
 մանեաց տպագրումն գրգռկիս այսորիկ ... տիրա-  
 ցու Փիլիպպոսն և տիրացու Մովսէսն 'ի ապագրումն  
 աալ զսա կամեցան , զոր և գլխաւորելոյ արժանա-  
 ցան շնորհօք տեառն մերոյ . 'ի Թվականութեան  
 հայկականս տումարի ՌՃԿՐ ... ընդ հովանեաւ եկե-  
 ղեցւոյն հռչակաւորի սրբուհւոյ Կուսին Մարիամու  
 Աստուածածնին , 'ի Կոստանդակերան քաղաքի » :

ԵՎ ՅՅԵ ԴԵ ԿՂ

\*Յոյս , ամսագիր , բարոյական , կրօնական և բա-  
 նասիրական . հրատարակութիւն միաբանական ուխ-  
 տին որ յԱրմաշ : Արմաշ , 'ի տպ . Վանացն Չարխա-  
 փան սուրբ Աստուածածնի , 1870-1876 :

\*Յովհաննա Տ'Արք . վիպասանական ողբերգու-  
 թիւն Շիլլէրի : Թարգմանեաց 'ի գերմանականէն  
 Կ . Կ . Ղազարոսեան : Կ . Պօլիս , 1868 :

\*Յովհաննա Տ'Արք , կամ Օսէանի օրիորդին պատ-  
 մութիւնը , 'ի Հ . Ղուկայ Վ . Տէրտէրեան 'ի Մխիթ .  
 ուխտէն : Վիեննա , 'ի տպ . Մխիթարեանց , 1850 :

Յովնան եպիսկոպոս Սեբաստիոյ . Տես Յով-  
 հաննէս Աստուծոյ :

Յովնանեան ( Հ . Ղեւոնդ Վ . ) : Տես  
 Գիտութիւն տէրութեանց :  
 Մաղիկ սուրբ գրոց :  
 Հրահանգք գաղղ . լեզուի :  
 Մ . Լուտերի պատմութիւնը :  
 Մեծն Ներսէս :  
 Միրզայեան Մանուկ պէյ :  
 Նեպոսի վարք զօրավարաց :  
 Պատմութիւն քաղաքականութեան :  
 Քերականութիւն գաղղիարէն լե-  
 զուի :

Յովնան կամ Յունան եպիսկոպոս Թոխաթե-  
 ցի . Տես Դաշտիկ ծաղկալի :

Նորագոյն ուղեկցուածիւն:  
Պատմագիրք հոգւոց:

Յովսէպոս. « Գիրք պատմութեանց Յովսէպոսի երբայեցւոյ արարեալ յաղագս պատերազմին Հրէից ընդ Հռովմայեցիս, և աւերմանն Երուսաղէմի: Թարգմանեալ 'ի լատինացւոց բարբառոյ 'ի Հայոց լեզու, 'ի ձեռն ուրումն Իլովացւոյ Ստեփաննոսի բանին Աստուծոյ սպասաւորի. »: Իսկ երկրորդ ճակատն կ'ըսէ. « Պատմագիրք արարեալ Յովսէպոսի երբայեցւոյ յաղագս պատերազմին Հրէից ընդ Հռովմայեցիս. և աւերմանն Երուսաղէմի և տաճարին հնոյ: Թարգմանեալ 'ի լատինացւոց բարբառոյ 'ի մեր լեզու, աշխատասիրութեամբ երջանկակրօն Միաբանի Քրիստոսատէջ սրբոյ Փահիս Տեառն Ստեփաննոսի գերիմաստ վարդապետի Իլովացւոյ, քաջամուտ և հարազատ թարգմանչի, 'ի թուականութեան մերում ՌձԹ: Իսկ նարգենիս տպագրութեամբ 'ի լոյս ածեցեալ 'ի ստոյգ ձեռագրէ նոյնոյ թարգմանչին 'ի լուսակառոյց աթոռս սուրբ Էջմիածին ... 'ի տպարանի սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ. 'ի թուոջ փրկչին 1787, և 'ի մերում թուականիս ՌՄԼՁ »: Իսկ յիշատակարանն կը ծանուցանէ. « ... Ես Ստեփաննոս Լէհացի յեաինն 'ի մանկանց եկեղեցւոյ, և կըրտսեր 'ի սպասաւորացն բանին Աստուծոյ, բազում անգամ յառաջագոյն հարկեալ 'ի հրամանէ երիցս երանեալ տեառն Փիլիպպոսի կաթուղիկոսի, և ապա աղաչեցեալ 'ի թախանձանաց եղբարցն որք կոյին 'ի հրահանգս գեգերանաց իմաստից, և 'ի սուրբ աթոռս Էջմիածին. 'ի թուարերութեան տումարին Հայոց ՌձԹ ... զայս պատմութիւն Յովսէպոսի թարգմանեցի 'ի լատինացւոց բարբառոյ 'ի Հայոց լեզու: Բայց գիտելի է զի արտաքոյ այս պատմութեան՝ զոր գրեաց յաղագս պատերազմացն Հրէից ընդ Հռովմայեցիս, այլ մատեանս սորա ունիմք ... Իսկ ես միայն զայս գիրս 'ի մեր լեզու փոխարկեցի »: Յէջն 491 կը հանդիպինք յիշատակարանի Յովհաննու վարդապետի Կարճուանեցւոյ. « ... Ես Յօհանն. ... եղբայր ըստ մարմնոյ տեառն Եսայեայ շինողի սրբոյ Կարապետի վանիցն Ապրակունեաց, բայց քեցեալ

և տարակացեալ 'ի գործոց արիութեանց և քննա-  
 սրբութեանց նորին, գաւառաւ 'ի Մեղրոյ, և գեղ-  
 ջաւ Կարձաւանցի, լսէի միշտ 'ի գիրս ամենայն պառ-  
 մագրութեանց Հայոց յաղագս Յովսէփոսի. և փե-  
 սանէի զվկայութիւնսն առ 'ի նմանէ, և ցանկայի բա-  
 զում ասարփանօք, և ոչ երբէք տեսանէի 'ի մէջ ազ-  
 գիս մերոյ: Վասն այսորիկ ընդ այլոց սրբազնագոյն  
 եղբարց միշտ թախանձէի զերջանկապատիւ զեղ-  
 բայրն մեր զտէր Ստեփաննոս վարդապետն Լեհացի  
 առ 'ի թարգմանել: Որոյ խոնարհեալ յաղաչանս  
 մեր, սիրով թարգմանեաց զսա: Եւ ես տրուպս ա-  
 մենայտի, նորին ընչիւքն ընդօրինակել ետու այլոց  
 գրչաց, և զպա որ իւրով ձեռամբ է գրեալ, առեալ  
 վասն իմ պահեցի. զի եղիցի սա յիշատակ յաւիտե-  
 նական նորին, և ծնողացն բարեպաշտից, և ինձ եղ-  
 կելի բանասիրիս Կարձաւանցւոյ ... 'ի թուարերու-  
 թեանս մերում ՌՃԹ»: Յէջն 492 ուրիշ յիշատա-  
 կարան մ'ալ կը տեսնենք. « Դարձցուք, կ'ըսէ, այս  
 բէն ասել և վասն թարգմանութեանց և տպագրու-  
 թեան գրքոյս: Էր սա թարգմանեալ 'ի վաղնջոց  
 ժամանակաց 'ի նախնի վարդապետացն մերոց 'ի մեր  
 լեզու և 'ի գիր. վասն օգտութեան ինչ իրաց, և վասն  
 գիտութեան լրութեան աստուածային գրոց՝ զորս  
 կանուխն ասացաք, որպէս վրէ գրասէր վարդապե-  
 տըն մեր Յօհան Կարձաւանցին յիւրումն յիշատա-  
 կարանի ... Իսկ 'ի լինել խստագոյն առնապանաց  
 աշխարհիս Հայոց ... սպառեալ է և այս գիրք ընդ  
 այլ շահաւէտ և օգտակար գրեանց մերոց. որ և ոչ  
 ուրեք երբէք գտանի այսօր՝ յաղգս մեր ... Ուստի  
 հարկ է եղեալ կրկին թարգմանել զայն 'ի ժամա.  
 նակս տեսան Փիլիպպոսի սրբազան կաթուղիկոսի ...  
 'ի ձեռն տեսան Ստեփաննոսի ներհուն. թարգմանչի  
 ... Իլովացւոյ ... քր եկեալ էր 'ի սուրբ. աթոռս ...  
 Իսկ 'ի նարդենիս Ջուղայեցի Պօղոսեան բարեսէր  
 մահտեսի պարոն Սաչիկն խնդրեալ էր 'ի սրբազան  
 վեհապետէս մերմէ ... տպեցուցանել զայս 'ի սուրբ  
 Աթոռոջս արգեամբք նորին. վասն որոյ հրամայեաց  
 'ի տպագրել ... Եւ մինչ սկսաք տպել զգիրքս, թէ-  
 պէտև սեկին 'ի ձեռս մեր օրինակք գրեցեալք յայլ  
 գրչաց, ոմանք ստոյգք և ոմանք սխալք, այլ մեք

զայն հեղինակի գրքոյս միայն համեմատեցաք, և զտպեալս որ կայ 'ի միջի 'ի հեղինակէն առաք. այս է 'ի ձեռագրէն՝ զոր նոյն ինքն Իլովացի Տէր Ստեփաննոս վարդապետն իւր ձեռամբն էր գրեալ. որ և նոյնն է գեալ կայր 'ի դրաստանն սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Յորմէ օրինակեցաք զտպեալս՝ ոչ ինչ յաւելեալ կամ պակասեցսւցեալ, և ոչ փոփոխեալ ինչ... Յիշելի է 'ի բարին և բնիկ միաբան սրբոյ աթոռոյս Մինաս արքեպիսկոպոսն, որ հարազատօրէն ընթերցեալ զհեղինակն գրքոյս, զխառն սեղիս գրուածոյն պարզեաց. և 'ի յերկարութիւնս տանցն՝ զիւրաքանչիւր բանս գլխազրով անասեաց... Յիշեալիք զհերթաօղն դրոց և կանոնաց և ծաղկանչից, զվարպեա Յարոճթիւնն Վաղարշապատացի » :

X Յովսէփայ Գեղեցկի զրոյցք ընդ Արսնեթայ ամուսնոյ իւրոյ: Յօրինեալ տեառն Իսահակայ ծայրագոյն վարդապետի Անկիւրացւոյ և միաբանի առաքելական սրբոյ Աթոռոյս Երուսաղեմի: Յ' Երուսաղէմ, 'ի գործարանի սրբոց Յակովբեանց, 1849, ՌՄՂԹ: ԵՂ 356 1472

\*Յովսէփ Գեղեցիկ, վիպասանութիւն Պիթոպէ գաղղիացւոյն. Թարգմանեաց 2. Վարդան Եիշմանեան 'ի Մխիթ. ուխտէն: Վէնետիկ, 'ի տպ. սրբոյն Ղազարու, 1857, 1867:

\*Յովսէփ Գեղեցիկ, Թարերգութիւն յերիս արարուածս. երկասիրեց Թովմաս Թերզեան: Վէնետիկ, Ս. Ղազար, 1872:

\*Յովսէփին պատմութիւնը տղայոց և պատանեաց համար չի նուած: Զմիւռնիա, 'ի տպ. Գուլիելմ Կրիֆֆիթի, 1842: — Բ. Տպ. Կ. Պօլիս, 1875:

\*Յովսէփ Դ կաթողիկոսի (Երկայնարագուկ Արղուծեանց) կենսագրութիւն, հանգերձ վիմատիպ կենդանագրութիւն. գրեալ 'ի Յովհաննէ Տէր Աբրահամեանց: Թէոդոսիա, 'ի տպ. Խալիպեան վարժարանին, 1871:

*Յովսէփայ պարմեա տղայոց և պատանեաց համար չի նուած: Զմիւռնիա, 'ի տպ. Գուլիելմ Կրիֆֆիթի, 1842: — Բ. Տպ. Կ. Պօլիս, 1875: ԵՂ 154 11817 պատմութեան*

Յորդորակ. « Յորդորակ առ պաշտօնասիրու-  
թիւն սրբոյ Աստուածածնի: Յորում բացատրին սե-  
փական գերազանցութիւնք նորա առ 'ի արժանա-  
պէս Խանաչել և սիրել զնա և ծառայել նմա: Հա-  
մառօտեալ 'ի գրոց սրբոց՝ աշխատութեամբ աշ-  
կերտաց հոգեւոյս բարեյիշատակ հօր Մխիթարայ  
բարունապետի և Արքայի մեծի: Յաւելեալ 'ի վեր-  
ջոյ և գովեստ ինչ 'ի վերայ սրբոյն Յովսէփայ Աս-  
տուածահօր, 1776. . . . Ի Թրեսաէ, 'ի տպ. Միա-  
բանութեան Հարց Մխիթարեանց: Հրամանաւ և  
արտունութեամբ Կայսերական Հրովարտակին :  
Յառաջարանին մէջ տպագրողք կը ծանուցանեն .  
« . . . Կամեցաք զի առաջին պտուղ տպարանին լինի-  
ցի 'ի պատիւ սրբոյ Աստուածածորն իբր ցոյց երախ-  
տագիտութեան մերոյ առ նա՛ վասն այցելութեանն,  
զոր հաւատամք միջնորդութեամբ նորա արարեալ  
մեզ Աստուծոյ » :

Յորդորակ առ Հայս բնակեալս 'ի հարաւային  
աշխարհս կայսերութեան Ռուսաց 'ի վերայ երկրա-  
գործութեան խոտեղէն բամբակի. 'ի պարօն Յակո-  
բայ Շահան Զրպետեան, վարժապետ հայկական  
լէզուի յարբայական գրատան Փարիզոյ, և անգամ  
Ճեմարանի Թագաւորական ընկերութեան Հնագի-  
տաց Գաղղիոյ: Յամի տեառն 1816 'ի փետրվար 24  
և 'ի Թուին Հայոց ՌՄԿԵ, 'ի Թագաւորական տպա-  
րանին 'ի Փարիզ:

Յորդորակ յաղագս հաստատելոյ Հայկեան ճե-  
մարան 'ի մեծի մայրաքաղաքին Անդղիոյ 'ի Լոնդոն:  
Տպագրեալ 'ի տպարանի Մարդասիրական Ճեմարա-  
նի 'ի Կալկաթա, 'ի 1 հոկտեմբերի, 1825:

Յորդորակ. Տես Նոր տետրակ:

Յորդորակ քարոզեալ 'ի Ժողովի երիցանց և քա-  
րոզաց աւետարանական Հայոց Խարբերդու: Կ.  
Պօլիս, 'ի տպ. Յարութիւն Փափաղեան, 1871:

Յուլիոս կամ Հոգեգաւակ: Տես Մատենա-  
դարան մանկանց:

Յուլիոս Կեսար : Տես Կեսար : — Նափու-  
լէոն Գ :

\*Յուլիք հայրենեացն Հայոց, 'ի Հ. Ղեւոնդէ Մ.  
Ալիշան վարդապետէ Մխիթարեան : Ի Ս. Ղազար  
Վենետկոյ, 1869-1870 :

\*Յունարէն լեզուի և քերականութեան տարերք,  
հանդերձ ընտանեկան խօսակցութեամբք 'ի պէտս  
հայկական ուսումնարանաց : Յօրինեաց Տիմիթրիոս  
Ի. Խ. Չօլաքեան : Կ. Պօլիս, 'ի տպ. Յովհաննու Տէ-  
րոյենց, 1861 :

Յուստինոսի (Ս.) Պատասխանատուութիւնք Ա.  
ուշին և Երկրորդ և Պատմութիւն նորին վկայու-  
թեան, Թարգմանեալ 'ի Հ. Սերովբէ վ. Տէվրիշեան  
'ի Մխիթ. ուխտէն : Վիէննա, 'ի տպ. Մխիթ. 1872 :

Նազարեան (Թորոս), Հաւաքածոյք յընտիր  
մատենագրաց 'ի պէտս ազգային վարժարանաց, յու-  
րում պարունակին հանդերձ ծանօթութեամբք ազ-  
գի ազգի ընտրելագոյն հասուածք 'ի նախնի և յար-  
գի հեղինակաց կամ Թարգմանչաց, արձակ և չա-  
փաւ : Հատոր Ա. և Բ : Տպագրութիւն Ա. Ն. Շահ-  
նազարեան 'ի Խասգիւղ Կոստանդնուպօլսոյ, 1870 :

Նազարեանց (Ստեփաննոս). « Ստեփաննոսի  
Նազարեանց՝ վարդապետի Արեւելեան լեզուագի-  
տութեան՝ յաղագս Փորձառական Հոգեբանութեան  
Ճառ : Ի Մոսկվա, 'ի տպ. Վէլքէմար Կոթիէ Ֆրան-  
սիացւոյ, 1851 » :

— Վարդապետարան կրօնի, « հասարակաց հայա-  
խօսութեամբ : Մասն Ա. որ պարունակում է իւր  
մէջ Ծ. Քրիստոնէական հաւատի ուսումն : ք. Քրիս-  
տոնէական բարոյականութիւն : ք. Սուրբ Պատմա-  
գրութիւն : Մոսկվայի մէջ, Նազարեանց քաջափայլ  
պարոնների տպարանումը, 1853 » :

— Առաջին հոգեդէն կերակոշր հայազգի երախա-  
ների համար : Ս. Նազարեանց վարդապետի աշխա-  
տասիրութիւն : Մոսկուա, 1853 :

— Հանդէս նոր հայաստանընաւ . աշխատասի-  
թիւն Ստեփաննոս վարդապետի Նազարեանց : Առա-  
ջին մասն, 1857 թուին . Մոսկուա : Նոյն գրքի եր-  
կրորդ մասն . Մոսկուա, 1858 :

— Պաշտոն և վիրգիկիա, հանդերձ Հնդկական  
խրճիթով . Թարգմանութիւն Ծրանսիական բնագրից .  
Մոսկուա, 1858 :

— Պատմութիւն Պիդագոգիկայի . և երկու հաս-  
ձառ . տպագրեալ Ներսիսեան դպրոցի տարեկան  
համարատուութեան տեսարակում : Տփլիս, 'ի տպ .  
Ներսիսեան հոգևոր դպրոցի, 1870 :

— Տեսական և գործնական առաջնորդ առաջ լեզուի .  
գործ Ստեփաննոսի Նազարեանց : Տփլիս, 'ի տպ .  
Ներսիսեան հոգևոր դպրոցի, 1871 :

— Հիշխաւիպայր, ամսագիր 1858-1864 : Մոս-  
կուա, 'ի տպ . արևելեան ձեմարանի տեսրց Լա-  
զարեանց :

\* Նախնատեանց Միքայէլի երկու տող : Փարիզ,  
'ի տպար . Արամեան, 1861 : Տես Ղազար Փար-  
պեցի :

\* Նախագիտելիք մանկանց, Թարգմանութիւն  
'ի գաղղիականէ : Կ. Պոլիս, 'ի տպ . Յովհաննու Միւ-  
հէնտիսեան, 1860 :

Նախադուռն վարժուծեան բովանդակիչ հա-  
մառօտ այբբենարանի, հեգ սաղմոսի, խոստովանու-  
թիւն հաւատոյ և ինչ ինչ գիտելեաց քերականու-  
թեան . աշխատասիրեալ յուսուցչէ Աղաբարեան  
Հայոց ուսումնարանի 'ի Կարապետէ Պոպովայ' 'ի  
պէտս համադրի մանկանց այնր վարժարանի . 'ի Մոս-  
կով, 1838 :

Նախակրթութեան հայկական լեզուի (գիրք),  
յորում համառօտիւ բացատրին սկզբունք գիտու-  
թեանց, աշխատասիրուծեամբ Ալէքսանդրի Խու-  
դուբաշեանց . 'ի Սանկտպետերբուրգ, 1838 :

Նախակրթանք հայերէն լեզուի յեթնեակս

*Handwritten note:* Հասցեագրութեամբ Երևանի Գրադարանին  
հասցեաց . աշխատասիրաց Արթուր Ար. Չեղոսի վարժ-  
արանց . վարժարանի . . . Գրադարանի Երևանի

4566 62 232 \* 14410

քառասուն, յօրինեալ 'ի պէտս ազգային դպրոցաց երկասիրեաց Գաբրիէլ Վ. Այվազեան: Մասն առաջին, 1860: Թէոդոսիա, 'ի տպ. Խաչիպեան ուսումնարանի Հայոց: Երկրորդ և Երրորդ, Էջմիածին:

\*Նախակրթարան Ֆրանսերէն լեզուի, 'ի պէտս ազգային դպրոցաց: Երկասիրեաց Խորէն եպիսկոպոս Նար-Պէյ: Պոլիս, տպագրութիւն Արամեան, 1875:

Նախակրթութիւն իտալերէն լեզուի, 'ի պէտս ուսումնասէր համբակաց: Վենետիկ, 'ի տպ. սրբոյն Ղազարու, 1834:

\*Նախանձաւորութիւն, յորդոր յառաջագիմութեան. (Ի Հ. Եղեա վարդապետէ Նահապետեան յԱնտոնեան ուխտէ: Ի Հռովմ, 'ի վանս սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, 1851: - Առաջին երախայրիք տպարանի Անտոնեան ուխտին 'ի Հռովմ):

\*Նախաշաւիղ գիտութեանց և արուեստից: Շարագրեաց Յ. Մկրեան: Կ. Պոլիս, յԱրամեան տպարանի, 1877:

\*Նախաշաւիղ քրիստոնէական հայ պատմութեան, աշխատասիրութիւն Մանտինեանցի: Թիֆլիզ, Կովկասեան գրավաճառանոց:

\*Նախաշաւիղ Օղերեւութարանութեան: Վաղարշապատ, 'ի տպար. սրբոյ կաթողիկէ Էջմիածնի, 1878:

\*Նախապաշարմունք, Նազարեանցի աշխատասիրութիւն: Թիֆլիզ, Կովկասեան գրավաճառանոց:

Նախապատրաստութիւն սրբոյ Պատարագի, և աղօթք գոհութեան զկնի նորա, առ 'ի պէտս ամենայն քահանայից որ պատարագեն: Յաւելեալ և վասն աշխարհականաց աղօթք յառաջ և զկնի խոստովանութեան և հաղորդութեան: Տպագրեալ 'ի



Թրեւոտ, յամբ տեառն 1784. 'ի տպարանի Հարց Մխիթարեանց ։

Ք. Տպ. Թրեւոտ, 1797:

Տես Աղօթամատոյց քահանայից:

Նախասահմանութիւն, կամ վասն Նախասահմանութեան բան 'ի սրբոյն Թովմայէ: Տես Էֆիմէրտէ:

\*Նախնական դասագիրք Թուագիտութեան: Ծարագրեց Պ. Պ. Ստեփան Փափաղեանց: Պօլխ. 'ի տպ. Յովհաննու Միւհէնտիսեան, 1860:

Նամակ գրեալ առ ազգային ոմն: Տես Զալալեանց:

Նամականի առ հայուհիս: Կ. Պօլխ, Գրատուն Յովսեփայ Գալաֆեան:

Նամականի ընտանեկան: Պօլխ, 'ի տպ. Յ. Ռ. Գիւրջեան, 1841:

\*Նանդուզեդցի Արթուր կորտոն Բիմին պատահարները. ազատ Թարգմանութիւն Հ. Եփրեմ վ. Զազրձեան 'ի Մխիթ. ուխտէն: Վիէննա, 'ի տպ. Մխիթարեանց, 1857:

Նարեկացի (Ս. Գրեգոր): Նարեկ աղօթանւտոյց քառածայ դրիւք: « Գիւրջ աղօթեց սրբոյն Գրեգորի Նարեկացւոյ արարեալ: Տպագրեցեալ ներգործարանում սրբոյն Մինասայ զօրավարի ... 'ի տպարանի պարոն կարապետի որդւոյ Աստուածատուր զպրի: Արդեամբք և հոգարարձութեամբ և ծախեւք Տիղանցի Մինասի որդւոյ Ղազար իրիցու. 'ի Թովկանութեան Փրկչին Ռեձ. և 'ի Թվիս Հայոց Ռձժ. մարտի ամսոյ Ե. 'ի կոստանդնուպօլիս »: Յիշատակարանն կ'ըսէ. « ... Ի հայրապետութեան տեառն Նահապետի ... ես աէր Մինաս արհիեպիսկոպոս և պատրիարք սրբոյ Երուսաղեմի որ 'ի վիճակին Հայոց 'ի կանուխ ժամանակաց ունելով փա-

Handwritten notes on the left margin, including a large 'X' at the bottom.

Handwritten notes on the right margin, including a large 'X' at the bottom.

Handwritten notes at the bottom of the page: Կ. Գոլմու պղպարձ արարեալ 1872 59246 17x11

Handwritten notes at the very bottom of the page: Թուրքիայի ամսագիր Գ. կոչմամբ Իսկուսիտ կիս...

ժպտք ընդ աստուածային գրգայս այսմիկ, միշտ և ամենայն ուրեք միտթարէի սովաւ: Իսկ 'ի չուեւն իմ' 'ի սուրբ Երուսաղէմ' 'ի թմկին Բժն գտի անգ և ս զբանս աղօթից սրբոյ Նարեկացւոյն այլ եւս գլուխս ե. որպէս տեսանի 'ի վերջն գրքոյս այսմիկ: Եւ զկնի տմաց 'ի գնալն իմ' 'ի սուրբ աթոռն Ելմիածին' 'ի նորին գրգատանէ, 'ի Սաղմոսավանից, 'ի Խորվիրապէ և 'ի Սեւանու անապատէ ետու բերել զհինգ գիրք Նարեկի և սկսայ սրբագրել զսա բազում զգուշութեամբ, այսինքն զսղաւեցեալսն 'ի գրաց ուղղագրեցի 'ի հնգից օրինակէ: Այլ և վերոյիշեցեալ զհինգ գլուխ բանս նոյնոյ երանելւոյն ընդ գրքոյս 'ի մի առւի շարայարեցի, զի մի արտաքոյ մնալով կորուստնիցի աշխատ երանելւոյն: Եւ 'ի գառնալն իմ' յԵլմիածնէ 'ի Գոստանգինուպօլիս յաղգեցու թեամբ վերնոյն 'ի գործ շարժեալ կամէին սպագրել զսա արք բարեպաշտանք, վասն որոյ 'ի խնդրոյ նոցին շնորհեցաք զօրինակս մեր ... »:

Բ. Տպ. « Գիրք աղօթից սրբոյն Գրեգորի Նարեկացւոյ շոգեկիր հետտորի ... 'ի սպարանի Գրեգորի դարի »: Ճակատէն անմիջապէս ետքը դրուած ծանուցման մէջ տպագրողն կ'ըսէ. « ... Գոյր թէպէտ սուրբ մատեանս այս աղօթից' տպեալ 'ի միջի մերում, սակայն վասն յոյժ պատուականութեանն ոչ էր մնացեալ թէ որ գտանիցէր զնս: Եւ տեսանելով զհոգեծին որգեակն մեր զտիրացու Յարութիւն դեռաբոյս բողբոջն, որ էր հմուտ աստուածաշունչ առից ըստ իւրում կարի' տըւաք իսկոյն պատուէր սմա, զի զբնաբանս ոմանս յոյժ հարկաւորս որք յիշեցեալք են 'ի որբոյն 'ի սուրբ մատեանից, գտեալ զորքանսն դիցէ հանգէպ իւրաքանչիւր տողիցն համարովն հանգերձ 'ի լուսանցսն: Որպէս լուսաւորեալ հոգի Ոսկան վարդապետն սկըսեալ էր և շէր կատարեալ յինչ և իցէ պատճառէ »: Առաջին յիշատակարանն կ'ըսէ. « ... Տպեցաւ սուրբ գիրքս աղօթից ... 'ի բազում լաւ օրինակաց, բազմաշխատ երկամբք սրբագրութեան, զայլ և այլ օրինակսն ընդ միտեանս համեմատելով: Որ և 'ի խնամոցն Աստուծոյ գաաք հին օրինակ մի, սր գեր 'ի վերոյ էր քան զայլսն. յորմէ բազում ինչ սխալանս և պակա.

սուլթիւնս բառից և բանից ուղղեցաք շնորհիւն Աստուծոյ: Որ և եհաս 'ի կատարումն տպեցման 'ի Թուրին Հայոց ՌձՀն, 'ի լրումն տարւոյն, այսինքն 'ի վերջնումն գեկտեմբերի»: Իսկ տպագրողին յիշատակարանն ալ կը յաւելու. « Տպեցաւ սուրբ գիրքս արգեամբ ... 'Իասպար գպրի: Յիշեմիք ... զմահտեսի Գրիգոր գպրիս ... որ բազում աշխատանս կրեցի 'ի շինելն զմանրագիրս սորին, և զայլ ինչ որ պիտուլթիւն տպագրատանս »:

Գ. Տպ. « Գրեք աղօթից, արարեալ սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ Հրեշտակական վարդապետի: Եւ վերստին 'ի լոյս ածեցմամբ տպագրեցեալ ... 'ի Աոստանդնուպօլիս քաղաքի ... 'ի տպարանի հանգուցեալ Աստուածատուրի »: Յիշատակարանն ալ կ'ըսէ. « ... Յաջողեաց մեզ 'ի սկզբանէ մինչև ցվախաձան՝ տպել վերստին և 'ի լոյս ածել զլուսաւորիչ հոգւոց մատեանս այս ցանկալի, 'ի տպարանի Աստուածատուրի. 'ի նորապէս մուտն Հայոց Թուրկանի, հազար երկու հարիւր և չորսերորդի: Արգեամբ և ծախիւք Ակնցի պարոն Միքայէլի ... (յիշեմիք) և զհանգուցեալ հայրն իմ զԱստուածատուր՝ զյոգնաշխատ ծառայն ձեր: Որ 'ի կենդանութեանն պատուէր տուեալ իմումս յեանութեան՝ Թէ ջանաջեր միւսանդամ տպել զսուրբ գիրքն Նարեկ՝ զգուշանալով յամենայն պարագայս նորին »:

Գ. Տպ. 'Իարձեալ 'ի Աոստանդնուպօլիս, 'ի նոյն տպողէ և 'ի նմին տպարանի, յամի 1763: Յէջն 460. « Գրիգորի Նարեկացւոյ Հրեշտակական սրբոյ վարդապետի, և Հայցողին Զրիատրի, Ճգնազգեաց մաքրափայլ հեղինակի, համառօտիւք բան Խրատու վասն ուղիղ Հաւատոյ, իսկ և մաքուր վարուց առաքինութեան. 'ի ինդրոյ նորին հարազատի Վարդանայ Իււանագպրի »: Այս ճառին սկիզբը հետեւեալ ծանօթութիւնն կայ. « ... Ես նուաստագոյն Յակոբ՝ իբր պատրիարքս, զսորին գաղափարն զոր ընկալեալ էի յԱստապատցի Պետրոս լուսաւորեալ հոգի գերզգօն և աստուածաբան վարդապետէն 'ի հնագոյն գրքէ միջէ, ետու 'ի լրումն ըզձից տպել տուողաց սորին »: Տպագրողին յիշատակարանն ալ կ'ըսէ. « ... Ետ կարողութիւն մեզ նուաստիցս՝ հին

գերորդ տպագրութեամբ և բարւոք ուղղագրութեամբ յառաջ ածել և 'ի ըյս բերել զազօթական և զներբողական սուրբ մատեանս Գրիգորի Նարեկացւոյ ... որոյ ... ցանկացող եղեալ յամի ... 1763 ... բարի յիշման արժանի 'ի շրջակայ գիւղիցն Ակնայ՝ Նարեկացի Փիլաւ օղլի մահտեսի Գոսպարի որդի հացագործ պարոն Երամն ... յաւելեալ 'ի սմա և զգիրք իմն փոքրիկ սոյն հեղինակիս, որ կոչի Բան խրատու վասն ուղիղ հաւատոյ » :

Ե. Տպ. ի Կոստանդնուպ., յամի 1774. « Գիրք ազօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ հոգեկիր հռետորի, բաշխեալ յիննսուն և 'ի հինգ բանս՝ հոգեսուն մաղթանաց : Նորապէս սրբագրեալ համեմատութեամբ հնագոյն և ընտիր ընտիր ձեռագիր օրինակաց : Եւ տպագրեալ արդեամբք բարեացապարս ծերունազարդ Պաղտասար Ամիրայի, և իւր հարազատի՝ Մահտեսի Գոսպար Ամիրայի Մուրատեանց ... Յամի տեառն 1774. իսկ 'ի մերումս ՌՄԻԳ. մարտի 7. 'ի Կոստանդնուպօլիս քաղաքի. 'ի ապարանի Աստուածատուրի » : Յառաջաբանն ~~է~~ Թանուցանէ. « ... ի քաղաքաց քաղաքաց Հայաստանեայց և 'ի բուն իսկ 'ի Մոկաց գաւառէ մեծաջան փութով գըտեալ օրինակս ընտիրս՝ հնագոյնս՝ անձեռնամերձս, յորոց զերկուցն՝ սրբոյս իսկ պնդէին լինել ձեռաց գիր, յորս էր որ զմատեանս, և էր որ զտարբերութեանց նոցա զզանազանութիւնս առձեռն բերեալ, մինչև թիւ օրինակացն հնոց և նորոց ժամանել 'ի համար երբեակ տասանց » : Այս տպագրութիւնն է առանց ճառից. ուստի տպագրողք քանի մը տարիէն Երկրորդ հատոր մ'ալ աւելցուցին, այս մակագրով. « Հատոր Երկրորդ Ներբողինաց ճառից Չորեցունց արժանաւորաց գովեստից՝ ասացելոց 'ի սրբոյ հօրէն մերմէ Գրիգորէ Նարեկացւոյ. այսինքն Ապարանից սրբոյ Խաչին, սրբուհւոյ Կուսին Մարիամու Աստուածածնին, Առաքելոցն երկոտասանից և Եօթանասուններկու աշակերտացն Քրիստոսի. սրբոյն Յակովբայ Սքանչեւագործ Մծբնայ Հայրապետին, հանդերձ հետևեցելով փոքր գրկաւ բանիւ Հաւատոյ : Տպագրեցեալ ... 'ի Կոստանդնուպօլիս քաղաքի ... 'ի թուին Հայոց ՌՄԻԳ. ապրիլի 10. 'ի

տպարանի Աստուածատուրի» : Տպագրողին յիշատակարանն ալ կ'ըսէ. « ... Յիշեալէք 'ի տէր զիս զտպագրող սորին՝ ընդ որդւոյ իմում կարասպեաթ՝ ձերումք փոխանակ իմ՝ ծառայի. որ մերովս իսկ արգեամբ տպեցաւ. զի մի ընդհատ 'ի լրմանէն գացի՝ սակս խնդրանաց բազմաց » ... :

Զ. Տպ. Գարձեալ 'ի Կոստանդնուպօլիս, յամի 1782. որ յամենայնի համաձայն է վերը յիշուած շորրորդ տպագրութեան հետ : Իսկ յիշատակարանն կ'ըսէ. « ... Ետ կարողութիւն մեզ նուստիցս՝ եօթներորդ տպագրութեամբ և բարւոք ուղղագրութեամբ յառաջ ածել և 'ի լոյս բերել զգօթական և զներբողական սուրբ մատեանս Գրիգորի Նարեկացւոյ, յամի մարգասէր Փրկչին մերոյ 1782, և 'ի Հայոց Թուականին ՌՄԱ. յեօթներորդում աւուրն նոյեմբերի սկսաւ տպիլ » ... :

Ի. Տպ. Գարձեալ 'ի Կոստանդնուպօլիս. յամի տեառն 1802. որ հինգերորդին հետեողութեամբն եղած է. « 'ի Կոստանդնուպօլիս քաղաքի, 'ի տպարանի Յովհաննիսեան Պօղոսի » :

Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք : Վենետիկ, 'ի տպ. սրբոյն Ղազարու, 1827 - ՌՄՂՁ. « Մատեան ողբերգութեանց : - Յիշատակարան : - Պատմութիւն Ապարանից : - Ներբող 'ի սուրբ Խաչն : - Ներբող 'ի սուրբ Աղայն : - Նորին վերստին 'ի վերայ գրոյ անուան իւրոյ : - Յիշատակագիր պատասխանւոյ սորին ընծայական գրոյ երջանիկ և շնորհնկալ տեառն Ստեփանոսի, յերեսաց նորին հոգիաբուղին վարդապետի : - Ներբողեան գովեստի ասացեալ 'ի համօրէն գունդա Առաքելոցն երկոտասանիցն՝ նախապաաիւ պետութեանց ըն գլխաւորաց, և եւթանասուն և երկուցն սրբազան աշակերտացն Քրիստոսի : - Բան նուիրական գովեստի 'ի մեծ և յերջանիկ հայրապետն 'ի սուրբն Յակոբ եպիսկոպոս և վերագիտող սկզբնատիպ երկնահանգէտ աթոռոյ Մծրին քաղաքի : - Գանձք 'ի դալուստ Հոգւոյն սրբոյ, 'ի սուրբ Եկեղեցի, 'ի սուրբ Խաչն աստուածրնկալ : - Մեղեգի Մննդեան, տալ Յայտնութեան, Յարութիւն. մեղեգի Յարութեան, տալք : - Գրիգորի Նարեկայ վանից վանականի մեկնութիւն Երգոց երգոյն Սողոմոնի » :

«Նարեկեան Զուարթնոյն, — կ'ըսեն հրատարակողք 'ի յառաջարանին, — հոգեշարժ Ոգրերգութեանց մատեան, ինքնագիւտ և յոգնագիժակ ստեղծարանութեամբն Հայկազանցս սիրելի, աւասիկ վերստին ելանէ 'ի լոյս՝ հանգերձ այլովք ամենեքումբք, որ յանուն նորին դրջի մնացուածք են տառից յայտնիք առ մեզ, անեղծք և անթերիք... Չայլ և այլ գունակս ընթերցուածոց օրինակաց աւելորդ վարկաւ ժողովել և յայս տիպ. որ բազում անգամ, այլ և արդ իսկ այլուր տուեալք են 'ի մէջ՝ շատ լիցին»:

«Զնորին զհետ դան Պատմութիւն Ապարանից, Ներթողեանք 'ի փայտն կենաց, և 'ի սուրբ կոյան, յերանելի Առաքեալսն և 'ի սուրբն Յակոբ Մծբնայ, գանձք երեք և ապք զանազան և մեկնութիւն Երգոց երգոյն. յորս յամենեսին երևի այլ և այլ հասակ և կերպարանք ոճոյ Նարեկեան գրչին»:

«Է մերոյս Գրիգորի և այլ գրած վայելուչ 'ի մեկնութիւն յովքեան Ով է գային, զոր չեղև մեզ վրստահելի առ ժամս ընդ սոտին ամեջ 'ի տիպ միով և եթ ընտիր՝ այլ հնոտի օրինակաւ, յուսով սպասեալ՝ զլաւագոյնն հայրենասէր վաստակոցս ընդունել փոխարէնս 'ի հայրասէր մերազանց»:

Բ. Տպ. Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի մատենագրութիւնք: Վենետիկ, 'ի տպ. սրբոյն Ղազարու, յամի 1840 — ՌՄՁԹ:

Նախընթաց տպագրին մեջ եղածներէն զատ՝ աւելցած է նաև «Սրբոյ վարդապետի յօքներանեան մենաւորի Գրիգորի համառօտիւք Բան խրատու վասն ուղիկ հաւատոյ և մաքուր վարուց առաքինութեան՝ 'ի խնդրոյ նորին հարազատի վարդանայ դիւանագործի»։ Այս ճառիս համար 'ի ստորևս իջիցն կը ծանօթաբանեն հրատարակողք. «Զոր թիւզանգացւոց տպագիրք յանուն Նարեկացւոյ մակագրին զճաս զայս՝ յարեցաք ընդ աներկբայ առ 'ի նմանէ մատենագրեալսն, անխախտ պահեալ զվերնագիր օրինակիս մերոյ գրելոյ 'ի Թուխ ՌձԾ: Ի նորին աւուն և Սքրոգեր գերմանացի հայագէտ՝ հատածս այլ և այլ 'ի ճառէ աստի ամէ 'ի հայ քերականութեան իւրօւմ... Այլ թէ անշուշտ նորին երանել»:

ւոյ իցէ մատենագրեալ ճառս, 'ի նախնեաց որ ինչ ցարգ առ մեզ գտանին վէպք, չունիմք ասել հաւաւ տեաւ. և 'ի վարս նորա 'ի Յայսմաւուրս 'ի մեհեկի իմ մի ըստ միովէ թուեալ ամենայն գրութիւնք նորա, զառաջիկայ ճառէդ չիշատակի ինչ բնաւ: Նմին իրի և առ մեզք թուեցաւ ոմանց Գրիգորի Սկեւաւ ցւոյ արարեալ զսա ... Կալցի զայս որպէս և ախորժէ ոք »:

Նարնկոյժ. « Նարեկ աղօթից հարազատ և զգուշաւոր լուծմամբ նորոգ բացայայտեալ, 'ի նպաստ բանասէր աղօթաւորաց: Ընդ նմին առանձին բացախօսութիւն 'ի հատուած ինչ Գումարք խմբից ներբողի սրբուհւոյ Աստուածածնին: Աշխատասիրութեամբ տեառն Հ. Գաբրիելի Աթոռակալ վարդապետի Աւետիքեան Կոստանդնուպօլսեցւոյ՝ յաշակերտութենէ տեառն մեծի Աբբային Մխիթարայ: Տպագրեալ ... յամի տեառն 1801 'ի սեպտ. 10. և 'ի մեր թուին ԲՄԾ. 'ի Վենետիկ, 'ի վնս Ս. Ղազարու »:

« ... Ամենեցուն գրասիրաց ակներև կայ, — կ'ըսէ հմուտ երկասիրողն 'ի յառաջաբանին, — ընդարձակ մատեան զոր 'ի մերում գարու երևեցոյց Յակոբ պատրիարք Նալեան տպագրութեամբ 'ի Կոստանդնուպօլիս յամին 1745. յորում բաց յազօթական բանիցն՝ և զճառս սրբոյ վարդապետին առնու 'ի բացայայտութիւն: ... Սա ինքն 'ի բանս իւր յիշատակէ լուծմունս յանուն Սարգսի քաջարան մեկնչի կաթուղիկեայց. այլ և յիւրում յառաջաբանին ասէ 'ի լրոյ, թէ և Լամբրոնացւոյն ևս արարեալ իցէ լուծմունս, թէպէտև իւր տեսեալ չիք: Ապօքէն բարեբաստիկք ոմանք լինիցիմք, եթէ երկոքին ջահքս բազմապայծառ Սարգիս և Լամբրոնացի՝ զգեղեցիկ նշոյւսըն արձակեալ իցեն 'ի մթին երկիր Նարեկայ ... Այլ զի մի 'ի համբաւոյ իմեքէ ըմբանիցիմք անքննաբար, որպէս առ բազումս 'ի գրոց տեսեալ եզև, յայտ առնեմք թէ յիշատակեալ լուծմունքն՝ ոչ Սարգսի է մեկնչին և ոչ Լամբրոնացւոյն: Վասն զի գտաւ առ մեզ ամբողջօրինակ այնց լուծմանց, գրեալ բոլորագիր 'ի մեր թուին իբր զԾԵ (յամի տեառն 1406). յորում բանքն են նոյն զորս Յակոբ պատրիարքն 'ի մեջ առնու յիւրում մեկնութեանն յա-

նուն Սարգսի . և սակայն մեր օրինակ 'ի ճակատի անդայլով նոր գրչաւ գնէ . « Արարնայ Լախրոնացոյն . և ոչ մի ինչ յայտարարութիւն նշանակի 'ի կարգի լուծմանցն կամ 'ի յիշատակարանին , թէ Սարգսի իցէ արարեալ . . . վասն որոյ իմ կարծիք յայն յօժարեալ են թէ առաջնորդ լուծմանցդ մի 'ի կիլիկեցւոց իցէ 'ի չորեքտասաներորդ դարուն , որպէս բաց յայլեայլ նշանաց՝ զայն ևս նկատեմք 'ի լուծմունս անդ , զի յաստուածաբանական բան ուրեք 'ի կիր առնու զըրոշմունս բացատրութեան , որ 'ի լատինական գրոցն թարգմանելոց առ այնու ժամանակօք ընկալեալ է : Եւ թերեւս այն լուծանող՝ առնուանկից գողով Սարգսի կամ քաղաքակից Լամբրոնացւոյն , համբաւն ընկալաւ և ատրածեաց նոյն լինել ընդ նոսա . . . կամ զի զերկու աղօթս Հոգւոյն սրբոյ , որ 'ի բանն ԼԳ , բացայայտելով Լամբրոնացւոյն 'ի պատարագի գիրան , համբաւն աճեցոյց հըռչակել , թէ զՆարեկն ողջոյն պարզաբանեալ իցէ » :

Բ. ՏԿ . « Նարեկ աղօթից համառօտ և զգուշաւոր լուծմամբք բացայայտեալ միանգամ , և այժմ՝ երկրորդ անգամ՝ յաւելուածով , աշխաստիրութեամբ նորին տեառն Հ . Գաբրիէլի Աւետիքեան աթոռակալ վարդապետի . 'ի Վենետիկ , 'ի վանս սրբոյն Ղազարու , 1827 - ՌՄ 22 » :

Նախընթաց տպագրութեան մէջ գրուած և ասոր մէջ ալ երկրորդուած յառաջաբանին վրայ կը յաւելու աշխատասիրողն . « Որ ինչ յայժմու երկրորդ տպագրութեանս գիտելի : Զհետ հանրական տեղեկութեանցն որ յազագս նարեկեան աղօթիցս մատենի տուան յառաջնումն տպագրութեան , և որ այժմըդ երկրորդեցան սակս միշտ կարեւորն լինելոյ 'ի գիտել և յուշի ունել , կարճառօտ իմն յազագս երկրորդ տպագրութեանս ասել ունիմք , ոչ ինչ այլ փոփոխումն արարեալ մեր յայսմ , բայց զի վերստին խնամով 'ի գրչագիր օրինական մեր հետաքննեցաք զտարբերութիւնսն , և զերևելիսն նշանակեալ ծանուցաք : Այլ առաւել ևս քան զդոյն , յաւելուածս արարաք 'ի լուծմունս անդ՝ ուր ուրեք յառաջնումն համառօտիւք և թ տուեալ էր մեր անսութիւն , և կամ զանց ևս արարեալ » :



Գ. Տպ. Վենետիկ, Սուրբ Ղազար, 1858:

Սրբոյ խորն մերոյ Գրիգորի Նարեկացոյ երկրորդ մատենան Ճառից, յորում Պատմութիւն սրբոյ խաչին Ապարանից, Ներսէզ 'ի սուրբ Թաշն աստուած ընկալ, 'ի սուրբ Աստուածածինն, 'ի սուրբ Առաքեալսն և 'ի սուրբն Յակոբ հայրապետ Մծբնայ, հանգերձ Փանձիւք Հոգւոյն սրբոյ, և Եկեղեցւոյ և Թաշին: Ի հարցափորձ ընարուծիւն օրինակացն, և ըստ տեղեացն առնել տեղեկութիւնս, լրումն նախկի աշխատութեանն հատուցանել կամեցաւ Հ. Գարրիէլ Աւետիքեան Աթոռակալ վարդապետ 'ի Մըխիթարեան միաբանութենէ: Վենետիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու, 1827 - ՌՄՂԶ:

« Զառ 'ի վաղ ժամանակաց գգովելի փափաքումն բանասիրաց, - կ'ըսէ աշխատասիրողն, - յանձն առեալ մեր ամէլ 'ի կատարումն, զհետ Աղօթամատոյց մատենի սրբոյ վարդապետիս մերոյ Գրիգորի 'ի շար արկանել կամեցաք և զնորուն ընդարձակ ճառս ընծայեալս 'ի գովեստ սրբոյ Թաշին և սրբուհւոյ Աստուածածինն, այլովքն հանգերձ որ 'ի սուրբ Առաքեալս, և 'ի մեծն Յակոբ Մծբնայ հայրապետ, զոյք ընդ քանձուցն սկզբնաւորաց 'ի տառից անուան նորս: Այս' երկրորդ մասն կարգեալ Թուհսցի առ նախընծայ մասն Աղօթիցն. յորում Թէ իբր ազութաւոր հոգեաւանդն պատուեցաք զմերս Գրիգոր երանելի, յերկրորդումն մեծարեալ ծանիցի արգարե հեռար ճարասարբան' առաւել քան յառաջնումն խորախօս. որով և բացայայտութեանց յաւէտ եւս կարօտեալ, և 'ի նոյն մեզ կանխագոյն եւս արգեօք փութալի, եթէ առձեռն զհաւատարիմ և զուղղագիր օրինակս ճառիցն դիւրին էր ունել' յընարութիւն վրիպանացն և եկամուտ յաւելուածոց: Ուղղագիր ասեմք օրինակս, որք յանդգոյլ և 'ի չգիտուն գրչաց չիցեն աղաւաղեալ յանյայտութիւն և կամ յեղծումն ասացուածոց: Եւս առաւել հաւատարիմքն հայցելի, յորս ձեռն օտարի կամ օտարաց չիցէ 'ի ներքս արկեալ գողաբար զիւրն ճնունդ մասց, իբր յորգեգիրս տալով զայն բնիկ մատենագրին »:

Հաւաքունն աղօթական բանից սրբոյն Գրիգորի Նարեկացոյ. « Բանք աղօթից սրբոյն Գրիգորի Նա.

*Handwritten notes and signatures at the bottom of the page, including the name 'Ճառից' and various scribbles.*

րեկայ վանից վանականի և հոգեկիր հռետորի. քա-  
ղեալ ընտրանաւ 'ի գրոց նորա, և 'ի փոքր յայտա-  
ղոթամատոյց հաւաքեալ, կարգելով ըստ շաբաթու-  
աւուրց և ըստ պէսպէս պիտոյից հայցուածոց: Տը-  
պեալ արդեամբ Ճուղայեցի Մահտեսի տէր Իգնա-  
տիոսի Զաղապեանց 'ի փառս մեծին Աստուծոյ:  
Յօգուտ և 'ի շահ աղօթաւեր եղբարց. որք զքաղ-  
րարուխ բանից նորա ճաշակս ճաշակեալ փափա-  
քին հանապազ առձեռն ունել 'ի ժամ աղօթից: Յա-  
մի փրկչին 1763 և 'ի Թուին Հայոց ՌԾԹԲ ... 'ի վե-  
նետիկ, 'ի տպարանի Որլանտեան Սահփաննոսի »:

Բ. Տպ. Ի Վենետիկ, յամի 1804. « Աղօթամա-  
տոյց պատկերազարդեալ սրբոյն Գրիգորի Նարե-  
կայ վանից վանականի և հոգեկիր հռետորի: Քա-  
ղեալ ընտրանաւ 'ի գրոց նորա, կարգեալ ըստ ա-  
ւուրց եօթնեկի, և ըստ պէսպէս պիտոյից հայցու-  
ածոց: Յաւելեալ յայսմ երկրորդ տպագրութեան և  
զԳրանձ ամից աէրուհականաց, զՄեղեգիս և զՏաղս  
'ի նորին սրբոյ ասացեալ: Յամի տեառն 1804, 'ի  
Թուականութեանս Հայոց ՌԾԹԳ: Ի Վենետիկ, 'ի  
վանս սրբոյն Ղազարու »:

Միջակադիր տպագրութիւնք Նարնկ գրոց. Ս. Տպ.  
Ի Մարսիլիա, յամի 1673. որով երիցագոյն ժամա-  
նակաւ քան զամենայն տպագրութիւնս Նարեկ  
գրոց. « Գիրք աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկա-  
ցւոյ արարեալ. տպագրեցեալ ներգործարանում  
սրբոյ Էլմիածնի, և սրբոյն Սարգսի զօրավարի: Ի  
հայրապետութեան տեառն Յակօբայ, և 'ի Թագա-  
ւորութեան Քրիստոսապասկի և բարեպաշտի ար-  
քայի Լուգոմիկոսի, վերականգնութեամբ և հոգա-  
բարձութեամբ և ծախիւք Ոսկանայ վարդապետի և  
եպիսկոպոսի Երեանեցւոյ. 'ի Մարսիլիայ. Թուին  
Քրիստոսի, 1763, և ապրիլի 23 »: Ոսկանայ մա-  
հուամբն՝ ինչպէս վերը տեսանք, (Բ. տպ.) անկա-  
տար մնացած է այս տպագրութիւնն, ու միայն եր-  
կու Թերթ հրատարակուած, որոնք և խիստ դժուա-  
րագիւտ են:

Բ. Տպ. Ի Կոստանդնուպօլիս յամի 1790, գա-  
ղափարեալ 'ի հինգերորդ տպագրութենէ, ուստի  
և այն ճակատով, յաւելլով միայն. « Եւ տպագրեալ

հիշել, ոչ թէ օրե եղևայ, առաջիկա քաղաքս... ոչ և քաղ-  
ցաւուն) այլ և նոստողալիս թե. ոչ և բաւ իրարու իս...  
... Այս և օրե մոտ քաղաքս քաղաքս... յայտ Թուրքս  
քաւ հաճեալ իրարու և վերաբաւ ի քաղաք... մեզ  
ի քաղաքս օրե և քաղաքս Արեւիկա... 69 196

արդեամբք Ենորհք Մկրտիչ Ամիրայի Մերիձա-  
նեանց ... տպագրեցաւ ներ մայր գպրատան Հայոց  
յամի տեառն 1790. և 'ի մերուսն ՌՄԼԹ. յուլիսի Ե.  
'ի Կոստանդնուպօլիս քաղաքի, 'ի տպարանի Յով-  
հաննիսի և Պօղոսի » : Նորակերտ գպրատան մէջ  
հաստատուած տպարանին առաջին արգիւնքն էր,  
ինչպէս և նորափոր են գաղափարք և ձեւք ասուի-  
ցըն, մանրագիր, ջանիւք Ենորհք Ամիրայի ընծայեալ  
'ի լոյս, ինչպէս կը ծանուցանէ յետին յիշատակա-  
րանն. « Իբրու նախընծայ և երեսայրի' 'ի նորա-  
տունկ բուրաստանէ գպրատանս, արդեամբք և գո-  
յիւք իւրովք, պատկանաւոր գրիւք, փոքր քանա-  
կութեամբ, գեղեցիկ և նորակերտ գրովք ետ տպել  
... միայն զյիննսուն և հինգ գլուխ զաղօթան » :

Գ. Տպ. Իարձեալ 'ի Կոստանդնուպօլիս յամի  
1807, նոյնպէս հինգերորդ տպագրութեան վրայ ե-  
ղած, 'ի ճակատուն այսպիսի յաւելուած մը կրե-  
լով. « Յաւելեալ և ևս ինչ ինչ 'ի վերայ նոցունց' 'ի  
բանից սրբոյն և յայլմէ, և համեմատեալ նախապէս  
սրբագրեցեալ ընտիր ընտիր օրինակաց : Տպագրե-  
ցեալ ... յարքայանիստ մեծի մայրաքաղաքիս Կոս-  
տանդնուպօլսոյ յամի փրկութեան մերուսմ 1807 և  
ՌՄԾԶ. 'ի տպարանի Յովհաննիսեան Պօղոսի » :

Նարեկ, մեծագիր և պատկերազարդ : Զմիւռնիա,  
'ի տպ. Տէտէեան եղբարց :

Նարեկ, մեծագիր : Փարիզ, 'ի տպար. Արամեան,  
1860 :

Փոքրադիր տպագրութիւնք Նարեկ գրոց.

Ա. Տպ. Ի Վենետիկ, յամի 1789. « Սրբոյ հօրն  
մերոյ Գրիգորի Նարեկացւոյ Գիրք աղօթից որ կոչի  
Նարեկ. տպագրեալ ըստ ընտրեւագոյն օրինակին  
տպելոյ 'ի Կոստանդնուպօլիս յամի տեառն 1774 'ի  
մարտի 10 ... Յամի տեառն 1789, 'ի հոկտեմբերի 1.  
և 'ի Թուականութեանս Հայոց ՌՄԼԸ : Ի Վենետիկ,  
'ի վանս սրբոյն Ղազարու, յանուն Անտոնի Պօռ-  
թոլի » :

Բ. Տպ. Իարձեալ 'ի Վենետիկ, յամի 1794. Թե-  
պէտե առաջնոյն ճակատը և Թուականն կրելով :

Գ. Տպ. Իարձեալ 'ի Վենետիկ, յամի 1807.  
« Սրբոյ Հօրն ... Նարեկ : Տպագրեալ ըստ ընտրե-

լազոյն օրինակաց: Յամի տեառն 1807, և 'ի Թուա-  
կանութեանս Հայոց ՌՄԾԶ: Ի Վենետիկ, 'ի վանս  
սրբոյն Ղազարու, հրամանաւ Մեծաւորաց »:

Նարեկ փոքրագիր և պատկերազարդ: Փարիզ,  
ՍԱրամեան տպարանի, 1860:

Նարեկ, աղօթամատոյց սրբոյց հօրն մերոյ Գրի-  
գորի Նարեկացւոյ: Երուսաղէմ, 'ի տպարանի սըր-  
բոց Յակովբեանց, 1866:

Նարեկ, խոշորագիր: Կ. Պօլիս, 'ի տպ. Յովհան-  
նու Միւհէնտիսեան:

Նարեկ, միջակագիր: Կ. Պօլիս, 'ի տպ. Յովհան-  
նու Միւհէնտիսեան:

Սրբոյն Գրիգորի Նարեկայ վանկից վանականի՝ մա-  
տեան ողբերգութեանց: Վենետիկ, Ս. Ղազար,  
1833, 1841, 1852:

\*ՆԱԼԱՍԱՐԴԵԱՆԿ (Բագարաա) բժշ. Դիֆտերիա  
(Բողազացաւ): Թիֆլիզ, Կովկասեան գրավաճա-  
ռանոց:

Յրիտոյլն. — Սլխատոչիւն և հանգիստ: Ընթեր-  
ցանելի գրքեր մանուկների համար: Թիֆլիզ, Կով-  
կասեան գրավաճառանոց:

X

ՆԱԼՈՂՂՈՒԹԻՒՆ. « Ուսումնականութիւն Նա-  
ռզգութեան յերիս գիրս բաժանեալ: Աշխատա-  
սիրութեամբ տեառն Հ. Ղուկաս վարդապետի Օղու-  
գեալ : Զգուշաւոր քննութեամբ ուղղագրեալ՝ բաղ-  
դատութեամբ ձեռագիր օրինակաց : Յընտրութեան  
'ի հայրապետութիւն ամենայն Հայոց՝ Տեառն Եփ-  
րեմի արքեպիսկոպոսի, առաջնորդին Հայոց Ռու-  
սաստանու : Յամի Տեառն 1810, և 'ի թուականիս  
Հայոց 1259 'ի մայիսի 20 : Արգեամբք և ծախիւք  
պարոն Սարգիս Մատուր ԱղաՎալեանց կոչեցելոյն,  
և 'ի նորին տպարանի որ 'ի Մագրաս » :

Տպագրողն 'ի յառաջաբանին կը ծանուցանէ .  
« ... Գործատունս այս որ եղև նախկին լուսածող  
սորա, ոչ միայն զաւետիս ուրախութեան ազգիս մե-  
րոյ մատուցանէ զտպագրութենէ սորա, այլ և յայս  
առնէ միանգամայն զփոյթն իւր և զհոգ՝ զոր կալաւ  
ըստ կարի իւրում առ ուղղագրութիւն սորուն,  
բաղդատութեամբ երկուց ձեռագիր օրինակաց եւ-  
եթ, զորո միայն կարաց գտանել . մինն որ առաւել  
ընտիր երեւեցաւ (թէ և ուրեք ուրեք խոտորեալ)

դռաք 'ի մէջ բազմաթիւ ձեռագիր հին մատենից պարոն Յարուծիւնի Իսահակեան, 'ի ձեռն հարազատի որդւոյ նորա պարոն Աբրահամ զուարթամիտ պատանեկին, որ ամենայօժար կամօք առձեռնպատրաստ ետ գործաատանս մերոյ զայս գրքոյն 'ի տպագրումն: Սոյնպէս է իմանալ և վասն միւս երկուց ոտանաւորացն՝ Վահրամայ վարդապետի և Ներսէսի Լամբրոնացւոյ, զորս յաջորդաբար կցեցաք ընդսմա. որք թէպէտ յառաջագոյն եւս տպեցեալք, այլ սակայն մինն յորոց թերակատար և զանցառեալ բողորովին. իսկ միւսն թէ և բազմօք ուղղագրեալ, այլ սակայն ոչ պարզեալ գլխովին »:

Որք Եղևնայ, ասացեալ սրբոյ տեառն Ներսէսի Ենորհաւոյ Հայոց կաթողիկոսի. զառաջինն 'ի լոյս ընծայեալ գործագրութեամբ տեառն Յովհաննու վարդապետի Զօհրապեան՝ Կոստանդնուպօլսեցւոյ: Յասիական ընկերութենէն Փարիզու, 1828 — ՌՄՀԷ: Ի Փարիզ, 'ի գործարանի Տօնտէի Տիւբրէ: *Élégie sur la prise d'Édesse par les Musulmans, par Nersès Klaietsi, patriarche d'Arménie; publiée pour la première fois, en arménien, par le D.r J. Zohrab de Constantinople. Ouvrage publié par la Société Asiatique. Paris, librairie Orientale de Dondey-Dupré père et fils, MDCCLXXXVIII.*

« ... Զգաղափար այսր ողբոց Եդեսայ, կ'ըսէ Զօհրապեանն 'ի յառաջաբանին, անգստին 'ի համբակութեան տիոցս ընդօրինակեալ իմ 'ի բրջագրէ եղելոյ 'ի Կիլիկիայ, և յետոյ ուրեմն յայլոց օրինակաց, և յընտրելագունէն գրելոյ յԵզնկայ՝ զտարբերութիւնսն առ նմին նշանակեալ. 'ի հասանելս 'ի Փարիզ՝ դէպ եղև ինձ յարբուծի մատենագարանին դատնել և զերրորդ օրինակ գործոյս. որ և սոյն այս՝ թէպէտև բազմօք վրիպագիր՝ յանձնուա գրէլ գծագրեալ 'ի վերջին ժամանակս, սակայն և այնպէս ոչ սակաւ նպաստ եղև յառաւել ուղղաբանութիւն առաջիկայ տպագրելոյս »:

Հռչակաւոր արևելագէտն Սէն-Մարթէն՝ այս գրոց վրայ հետևեալ տեղեկութիւնները կուտայ տպագրին սկիզբը գրած գաղղիական յառաջաբանութեան մէջ ... « Le mérite réel de ce poème,

l'une des productions les plus remarquables de la littérature arménienne, n'est pas le seul motif qui doive le rendre digne de l'attention de la Société Asiatique de Paris. Le poème se rattache à l'histoire des guerres et des conquêtes que les Français firent dans l'Orient pour la délivrance de la Terre-Sainte... La chute d'Édesse remplit de douleur tous les peuples de l'Europe. Les exhortations des souverains Pontifes, les prédications de S. Bernard, amenèrent une seconde croisade. Notre roi Louis-le-Jeune et l'empereur d'Allemagne Conrad passèrent en Asie pour reconquerir Édesse. Le zèle qui faisait courir aux armes les guerriers de l'Occident, inspirait aussi les poètes de l'Orient. Il a produit le poème élégiaque de Nersès Klaietsi. On voit par la chronique syriaque de Grégoire-Bar-Hebræus, ou Abou'lfaradj, que les poètes syriens s'étaient exercés sur le même sujet ».

Որք Եդեսիոյ սրբոյն Ներսիսի Ծնորհալուոյ : Թիֆլիզ, 'ի տպարանի Ներսիսեան Հոգևոր Դպրոցին, 1829 :

Եդեսիոյ ողբին առաջին կէտը՝ մինչև 1358 տուր Տիւրքիէ հանրածանօթ հայերէնագէտը՝ քննագրով ու գաղղիական Թարգմանութեամբ հրատարակեց իւր Recueil des Croisades, Documents arméniens երկասիրութեան մէջ ( Հատոր Ա. 226-268 ) այսպիսի վերնագրով. Elégie sur la prise d'Edesse. Նայման՝ ուրիշ հայեմէնագէտ մ'ալ՝ սոյն գրքին վրայ կարճ քննադատութիւն մը ըրած է 'ի Jahrbücher der Wissensch-kritik, 1829, n.º 51. Շահան Զրպեաի Թարգմանութեամբ՝ հատուած մը գրած է Միշոյ Խաչակրաց պատմութեան մէջ, Հատոր Բ. 136, չորրորդ տպագրութիւն :

Մեկնութիւն սուրբ աշտարակի ուր ըստ Մատթեոսի, արարեալ 'ի սրբոյն Ներսիսի Ծնորհալուոյ մինչև 'ի համարն 17 հինգերորդ դիտոյն. և անտի աւարտեալ յերանելոյն Յովհաննու Երզնկացւոյ՝ որ և կոչի Մործորեցի : Տպագրեալ ըստ ընտիր օրինակաց վէհափառ հրամանաւ Տեառն Կարապետի արհի-

եպիսոփոսոսի և երանաշնորհ պատրիարքի մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսի, արդեամբ մահատեսի Աբրահամ ամիրայի Ակնեցւոյ յիւրում իսկ տպարանի: Թամի տեառն 1825, մարտի 16. 'ի Հասանփաշայ խանն: Է Գ 656 21 X 29

Յիշատակարանին մէջ կը կարգանք. «... Ակնեցի Թերզեանց հոգեսէր և քաջատոհմ մահատեսի Յովհաննեան ... Աբրահամ ամիրայն յիւրում սեփհական գործարանի՝ եղև արգար արդեամբ իւրով պատճառ տպագրութեան հոգելից մեկնութեան սրբոյ աւետարանին Մատթէոսի, զոր Շնորհալի սրբազան հայրապետն մեր Ներսէս Կլայեցին ունէր արարեալ մինչև 'ի հինգերորդ գլխոյ տասնևեօթներորդ համարն, ուր ասէ Մի համարիք: Եւ 'ի յայնմանէ անտի մինչև ցվախճանն մեկնեալ էր Պլուզ Յովհաննէս վարդապետ՝ անուանեալն Երզնկացի կամ Մործորեցի» : Կը յանձնէ յիշել բաց 'ի բարերար հրատարակողէն և յընտանեաց նորա՝ նաև « զսրբագրող սորին 'ի գործ տպագրութեան՝ մինչև 'ի 56 երեսահամար մեկնութեանս զմեծիմաստ Թագաւոր վարժապետն Առլանեան, յեա որոյ զանարժան ծառայս ծառայիցն Ատողծոյ և զօրհնեալ ազգիս Հայոց անձնընծայ պաշտօնեայս Անդրէաս վարդապետս Ակնեցի՝ որ եմ սրբազան պատրիարքի յետին սպասաւոր, և զընկերակիցն իմ յայս գործ՝ և զհամաձին եղբայրն իմ ըստ հոգւոյ՝ զԱբրահամ վարդապետն Կոստանդինուպօլսեցի » :

Տես Հ ա Լ ա տ ո Վ խ ո ս տ ո Վ ա ն ի մ :

\*Շնորհալի եւ Պարագայ իւր. երկասիրութիւն Հ. Ղեւոնդ Մ. Ալիշան Մխիթարեան վարդապետի: Վէնետիկ, 'ի վանս Մխիթարայ որ 'ի սուրբ Ազգար, 1873:

X

\*Շուշան Շաւարշանայ. շարագրեաց Գարեգին վարդապետ Սրուանձտեանց: Տպագրութիւն Ե. Մ. Տնտեսեան: Կ. Պօլիս, 1875: Է Գ 109

10 X 14

\*Շօէյլ (Սամիսոն). Պատմութիւն Խաչակրութեան և Թագաւորութեան Երուսաղէմայ, 'ի Սամիսոն

X Շօբաբբուրաչու զամուշակի կար իպրայ...ի կամարակոթու թրու ամուշի քաղաքացի, իւրեանց աբրահամ ամիրայի պատրիարքայ, իւրեանց սրբազան պատրիարքի յետին սպասաւոր, և զընկերակիցն իմ յայս գործ՝ և զհամաձին եղբայրն իմ ըստ հոգւոյ՝ զԱբրահամ վարդապետն Կոստանդինուպօլսեցի : Կ. Պօլիս 1901

Շօէյլէ. Թարգմանեաց Հ. Ա. Առաքելեանց. 'ի նը-  
պաստ Ճեմարանի Ս. Էջմիածնի: Ի Վաղարշապատ,  
'ի սպարանի սրբոյ կաթուղիկէ Էջմիածնի, ՌՅԻԳ-  
1874:

Ողբ Հայաստանեայց « (Տետրակ որ կոչի), շա-  
րագրեցեալ 'ի Թագէոս քահանայէ, որդւոյ Տէր  
Անգրէասի Նոր Զուգայեցւոյ, Սօգինեանց կոչեցե-  
լոյ, 'ի վայելուծն մանկանց եկեղեցւոյ ... 'ի Թագա-  
ւորութեան օդոստափայլ տեառն Երկրորդի Հե-  
րակայ արքայի 'ի Թիփլիս, յամի մարդէղութեան  
փրկչին մերոյ 1791, և 'ի Թուականութեանս Հայոց  
1240. 'ի Հնդիկս, մայրաքաղաքն Մազրաս, 'ի սպ.  
Տէր Յարութիւնի Շմաւոնեան Երբազացւոյ »:

Ողբերգութիւն 'ի վերայ մահուան Յուլիոսի Կե-  
սարու, Թարգմանեալ 'ի Յակոբայ Նազար Շամբեան  
յանգղիականէն: Գործ Վոլթեռի գաղղիացւոյ:  
Մասրաս, 1818:

X  
Ողբերգութիւն: Սոչրքն վարդան: — Սոչրքն  
Տրդատ: Յօրինեալ 'ի Պ. Տիգրանայ Ամիրճանեանց,  
յաշակերտէ Ժառանգաւորաց դպրոցի վարադայ:  
Տպագրեալ 'ի սպ. Վասպուրական Արժւոյն 'ի Վան,  
1862: Կ. Տ. 52 173 10 1/2 X 16

Ողբք եւ քառաջանք. « Բան բարառնական ու-  
գեալ դիմառնարար 'ի դիմաց Վաղարշապատու կա-  
թուղիկէին Էջմիածնի: Զքեզ աղաչեմ ով տէր Յի-  
սուս, — Լեր ձեռնտու ինձ լըքելոյս »: Իսկ երկրորդ  
ճակասն. « Ողբք և հառաչանք 'ի դիմաց մօր մերոյ  
սրբոյ Աթուոյն Էջմիածնի: Արարեալ Տեառն Սահ-  
փաննոսի նախագահ Մետրապօլաին Սիւնեաց' որ-  
դւոյ Տարսայիճ իշխանին. 'ի խնդրոյ շնորհազարդ  
սուրբ վարդապետին Խաչատրոյ Կեչառացւոյ, 'ի ԶԻՐ  
Թուականիս մերոյ: Տպագրեալ ... հրամանաւ և ծա-  
խիւք' սուրբ Աթուոյն Էջմիածնի ծայրագոյն Նու-  
րակի' Ռուսաց երկրի ամենայն ազգիս Հայոց' Առա-  
քելաշաւիղ Առաջնորդ Տեառն Յովսեփայ սրբազան



արքեպիսկոպոսի Սանահնեցւոյ Արղուժեանց: Յամի տեառն 1790, յօգոստոսի 26: Ի տպարանի նորին Խարձր Սրբազնութեանն: Ընդ հովանեաւ երկնահանգէտ սուրբ Խաչ վանիցն որ 'ի Նորն Նախիջեւան»: Վերջաբանին մէջ ալ կը ծանուցուի թէ Յովսէփ արքեպիսկոպոս «... Ի Սանկա-Պետրբուրգ մայրաքաղաքէն զտպարանն 'ի Նոր Նախիջեւան փոխարեւեալ՝ զչասաստութիւն ետ 'ի նորահառոյց սուրբ Խաչ վանքն երկնահանգէտ »:

Բ. Տպ. Ողբք և հառաչանք 'ի գիմաց մօրս մերոյ սրբոյ աթոռոյն Էջմիածնի, Տեառն Ստեփաննոսի Սիւնեաց այցելուին, որդւոյ Տարսայիճ իշխանի, ըստ խնդրոյ վարդապետին Խաչատրոյ Կեչառացւոյ, 'ի 2ԻԸ Թուիս մերոյ: Ի տպարանի Արարատեան ընկերութեան 'ի Կալկաթա, 1846:

X Ոսկերերան (Ս. Յովհան). ԽՐՄեկնութիւն սրբոյ Աւետարանին որ ըստ Յովհաննու: Տպագրեցեալ... ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի բազմահաւաք եկեղեցւոյն, 'ի Կոստանդնուպօլիս քաղաքի, 'ի տպարանի Գրիգոր գպրի Մարզուանեցւոյ »: Յ'էջն 957 դրուած է յիշատակարան Կիրակոս վարդապետի որ կը պատմէ զեղանակ թարգմանութեանն և աշխատութեանն 'ի նոյն, ունելով և թուական այսպիսի. « Էր թիւ 'ի սկզբան արարչութեանց 'ի մեզ 8512 ամ. իսկ 'ի կենարար գալստենէն Քրիստոսի ՌձԹ ամ. իսկ 'ի Խոսրովայն Պարսից սկսեալ մերս թիւ ըստ ամաց 5242. իսկ ըստ աւարտման առաջին շրջանին 5218. նորս սկսեալ շար ամաց 17 ամ »: Տպագրողաց յիշատակարանին մէջ ալ կը կարդամք. « ... Եհաս 'ի կատար ապեցման ... 'ի հազարերորդի հարիւրերորդի վացսներորդի և վեցերորդի հայկազնեանս տումարի ... արգեամբք և ծախիւք համագումար եղբարց լուսաւորչածին երամոց ... Յիշեմք զՆերսէս եպիսկոպոսն Եփեսոսի, որ ... ետ մեզ օրինակ մի ընտիր վասն ապեցման, որ էր գրեցեալ 'ի վաղուց հետէ ... 'ի ձեռն ... ուրումն Երեմիա վարդապետի ... (և մեք ունէաք զայլ օրինակ) որ էր գրեցեալ յերկրէն Կիլիկիոյ 'ի սահմանս տանն Արսայ ձեռամբ տէր Ղազար քահանայի »: Էջ 1045.

16421

« Սրբոյն Յովնաննոշ Ոսկերիասնի Կոստանդնուպօլսոյ արքեպիսկոպոսի Հաաընտիր գիրք և Ճառք և ներբողեանք: Թարգմանեալ 'ի յոյն բնագրէ երկասիրուածեամբ Տեառն Հ. Եզիայ վարդապետի Թովմաճանեան Կոստանդնուպօլսեցոյ, 'ի Մխիթարեան միաբանութենէ: Տպագրեալ արդեամբք աստուածասէր Մանուկ ազոյի Կարնեցոյ մահաեսի Աստուածաարեան»: Ի Վենետիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու, ԹՄԿԷ - 1818:

Հատոր Ա. « Առ անկեալն Թէոգորոս, գիրք երկու: - Յաղագս կուսութեան: - Յաղագս քահանայութեան գիրք վեց: - Յերանելին Բաբելաս և ընդգէմ Յուլիանոսի և Հելլենացոցն: Հատոր Բ. Առաջին ճառ յորժամ ձեռնագրեցաւ քահանայ՝ յանձն իւր, և յեպիսկոպոսն և 'ի բազմութիւն անդրժողովրդոցն: - Ներբողեան յամենայն սուրբս որք վկայեցին յընդհանուր աիեզերս: - Ի սուրբ վկայուհին Պեղագիա անախոքացի: - Ի սուրբ մարտիրոսն Իշնատիոս Աստուածազդեաց, արքեպիսկոպոս մեծին Անախոքայ, որ 'ի Հռովմ ածեալ վկայեաց անդանօր, և անդուստ ապա դարձեալ փոխեցաւ յԱնախոք: - Ի սուրբ Մակաբայեցիսն և 'ի մայր նոցա, ճառք երկու: - Ճառք կրկին 'ի սուրբ մարտիրոսսն, և յայն՝ եթէ չէ պարտ քարոզել 'ի շնորհս ունկընդրաց: - Յաղագս սրբոյն Բաբելայ վկային: - Ճառ ներբողական 'ի սուրբ վկայն Ղունկիանոս: - ՅԱնդրիականացն Ճառ Բ. Դ. Ե. Զ. Է. Ը. Թ. ԻԱ: - Ճառ ընդգէմ որոց Թողեալ զեկեղեցիք դիմեցին 'ի ձիրնութացս և 'ի Թատերս: - ՅՍւարոպիոս ներքինի՝ պաարիկ և հիւպատոս: - Ի փոխադրութիւն նշխարաց և յԵւգոքսիա դշխոյն: - Նախ քան զաքսորն: - Ճառք կրկին, յորժամ գարձաւ յառաջին աքսորանաց: - Եթէ որ անձին իւրում չմնասէ, զնա ոչ ոք կարէ մնասել:

Յովնաննոշ Ոսկերիասնի Կոստանդնուպօլսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս Գիրք կրկին: Ի Վենետիկ, 'ի տպար. Ս. Ղազարու, յամի 1826 - ԹՄՂԵ:

Յառաջաբանն կ'ըսէ. «... Մեզ ոչ ինչ ընդհատ գովութեան և զարմանաց է հրաշալի ոճ հայկազն

Թարգմանչիս, իբրև գրիչ ոսկի ոսկեբուղիս՝ բերանոյ 'ի ճահ եկեալ: Չի զհոգի և զմասսս բնագրին յամենայնի անվրէպ պահեալ քան Թէ զխորանս բառից, այնպէս կենդանագրէ զնոսա 'ի հայ բան, մինչև 'ի բնէ հայերէն զսա կարծել շարագրեալ՝ քան Թարգմանածոյ ստացուած. կրկին բախտի յաջողուած յօրինեալ զսա իւրոցն՝ բազմերան Թարգմանչին, զի ընդ այնպիսի աստուածային ճարտարաբանութեան և զայսպիսի գանձ ունիցին և օրինակ հարազատ հայկաբանութեան:

« Բնագիր մատենիս յինսուն ճառս բովանդակի, զորս և համարին քննիչք խօսեալ Ոսկեբերանի ընդաման 390-398 յԱնտիոք քաղաքի, որպէս և յայտնի իսկ ասէ ինքն 'ի յորդորակի եւթն ճառին... »

« Հայ Թարգմանն, որ անշուշտ մի 'ի գլխաւոր աշակերտաց սրբոցն է Սահակայ և Մեսրոպայ, Թուռի ինքն բաժանեալ զմատեանն յերիս գիրս կամ հատորս, և եգեալ առ իւրաքանչիւրն զքանկ ճառից, որ չերևի 'ի յոյն: Առաջին գիրքն՝ ճառք քսան և հինգ, կոչումն առեալ է Երևոյց, վասն զճնունդս Աստուածացն և զՏեառնն սկիզբն ունելոյ. երկրորդըն՝ ճառք քսան և ութ, Կափառնաւոր գիրք, զի սկիզբն առնէ 'ի բանն. « Եւ մտեալ 'ի Կափառնաւոր, մատեաւ առ նա հարիւրապէս մի ». երրորդն՝ Կեսարացոց կամ Փարիսեցոց գիրք վասն անտի սկսանելոյն, Թէ « Ալեալ 'ի կոյմանս Փիլիպպեայ Կեսարեայն հարցանէր զաշակերտսն ». և սորա էին արգեւք ճառք երեսուն և եւթն, եթէ չգոյր և այլ հատոր չորրորդ. քանզի երևի ուրեք և յորջորջումն խաւերդարեան գրոց:

« Առաջիկայ մատեանս ունի տալ անթերի զառաջին և զերկրորդ գիրսն. զի զայսոսիկ միայն յաջողեաց մեզ գտանել և Թափել յամենածախ ժանեաց ժամանակին, մինչև ազգասէր փոյթ հայկազանց կամ սուրբ ժամանակաց յայտնեսցեն զքանկալին զայն զերրորդ մասն: Միայն զհասակոտորս սորա ունիմք 'ի մաի առ ժամս տալ 'ի լոյս յայլ հատոր, զի մի բնաւ անճաշակ մնասցեն փափաքօղք:

« Զհայ Թարգմանութեանս օրինակ համեմատեցաք ընդ յուսին և ընդ այլ գաղափարս, և ընդ

Շնորհալին մեր, 'ի սրբել զնա յաններելի եւեթ վրիպանաց գրչին: Այլ ոչ յոյժ ընդարձակեալ զայդոցիկ դատաստան. զի, որպէս յայտնի վիպէ յիշատակարան գրչին, 'ի չորից ընտիր և ստոյգ օրինակաց ընդօրինակեալ էր մերս, 'ի թուականութեանս Հայոց ԶԷՐ, ըստ կարի կարևոր զգուշութեամբ, զայլ և զայլ ընթերցուածսն 'ի լուսանցս գրոյմելով: Մեք սովորաբար զլուսանցիցն 'ի ծանօթութիւնս նշանակեալ, զծիջինն պահեցաք. իսկ ուր անդէպն թուէր և անկիրթ, զլուսանցիցն առաք 'ի ներքս, և զօրինակին նշանակեցաք 'ի ներքոյ. ուրեք և 'ի յունէն ուղղեցաք 'ի կարգի անդ, զմերն 'ի ստորև միշտ դրոյմեալ. իսկ ուր արգարանայր իւիք մերս, առանց փոխելոյ զայն՝ զոյնն ստորագրեցաք. և այն 'ի կարևորս ինչ եւեթ ... Էր և թուղթ մի 'ի գաղափարէ մերմէ անկեալ, 'ի ճառն ԺԲ երկրորդ դրոյն, զոր համարձակեցաք նորոգ թարգմանութեամբ լնուլ 'ի յունէն» :

Յովնանեռն Ռսկերերանի Կոստանդիանուպոլսի և պիպկոպուսականի յԱւետարանագիրն Մատթէոս, Գիրք երրորդ թերի, և 'ի թուղթսն Պաւղոսի հատուածք: Ի վննեակի, 'ի տպարանի սրբոյն Վաղարու յամի 1826, ՌՄԷԵ:

Ի գլուխ հատորոյն դրուած յայտարարութիւնը կը ծանուցանէ. « Զհատակոտորս երրորդ գրոց Մատթէի մեկնութեանն՝ որպէս 'ի յառաջաբանին խոստացաք, ահա ժողովեմք այսր. զի մի և նշխարք հրաշալւոյ մատենին կորիցեն: Աւաղ զի գրչագիրք ընտիրք չեն մեզ, զի գէթ անեղծ զնշխարսն ունեաք. այլ ո՞ գիտէ, տացէ ժամանակն և հայրենասէր խուզարկուաց փոյթ և զսոցայս հաստատուն օրինակ, և զթերւոյն լրումն:

« Զհետ երրորդ գրոցս յաւելումք և զհատուածս մեկնութեանց սորին սրբոյ 'ի թուղթսն Պաւղոսի, յերից օրինակաց գրեթէ զայս ամենայն ժողովեալ. 'ի կրկին ճառընարաց որ յԵրուսաղէմ քաղաքի և 'ի կողմանս Կիլիկեայ դրեալ են, և 'ի հօտրգիր օրինակէն՝ որ կոյ 'ի մատենադարանն արքունի 'ի Փարիզ, ծաղկաքաղ յորդորակաց ամենայն մեկնութեանցն: Եւ է ընտրելագոյն 'ի սոսա փարիզեանն, թէպէտև

անդերձ 'ի բազմավրէպ գրչին սխալանաց, այլ և ոչ  
սա առաջնում ընտիր օրինակիս հաւասարէ՝ երկուց  
դրոց մատթէոսեան մեկնութեանն. և ոչ ճառընտիր-  
քքն, որք և ուրեք ուրեք քաղուածոյ ունին զճառ-  
սըն, և կամաւոր գրչացն փոփոխմունք 'ի նոսա գու-  
շակին. նմին իրի և ոչ նովին երկիւղածութեամբ ճըշ-  
դեցաք՝ յորս ինչ յայտնի վրիպակ թուէր մեզ »:

Յովհաննէոս Ոսկերերանի Եղոստանդնուպօղսի եպիս-  
կոպոսապետի մեկնութիւն թղթոցն Պաւլոսի: Հա-  
տոր Ա. Մեկնութիւն թղթոցն առ Տիմոթէոս, Տի-  
տոս, Կողոսացիս, Փիլիպեցիս, Եփեսացիս: Ի վեներ-  
տիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու, յամի 1862-Ռ86Ա:

Հատոր Բ. Մեկնութիւն թղթոցն առ Հովմայե-  
ցիս, Հատուածք և ճառք երկրայապանք:

Ի Յառաջարանին կը կարգանք. « ... Մատենա-  
գրութիւնք (Յովհաննէոս Ոսկերերան հայրապետի)  
Ճոխագոյնն յարեւելեան հարս եկեղեցւոյ՝ 'ի հելեն  
բնագրին յերեքասան հատորս բովանդակին. և ըստ  
նմանէ յեա գարուց բազմաց լաաին թարգմանու-  
թիւնն. երանի թէ կիսով չափ կային և առ մեզ, այլ  
պատառիկքն և եթ մնացեալք առ վանականս պահին  
անկորուսա, որպէս նուիրական նշխարք հնութեանց  
ողգիս: Մի էր յայնցանէ և չորեքասան թղթոցն  
Պօղոսի մեկնութիւնն, հրաշալւոյն 'ի գրուածս՝  
մատթէոսեան մեկնութեանն համապատիւ: Ոյր ա-  
զագաւ աշխատութիւն յանձն առեալ տարագնաց  
ուղեւորութեամբ յաշխարհ հեռուոր, և 'ի ձեռն  
հմտից գրագիտաց 'ի Պարսկաստանէ, և 'ի գրատանց  
Սլրոպոյ ուր պատառիկ մի 'ի ցանկալի նշխարացդ  
գտանէր ընդ ժամանակս ժամանակս՝ և այժմ 'ի նո-  
րոյ՝ հաւաքեցաք խնամով առ ողջ ածելոյ զչորեքուս-  
սանեցունց թղթոցն անթերի: Այլ զի անհար եղև  
բարեբաղդութեանդ հանդիպելոյ լիովին, նախա-  
խնամութեանն այլում թերեւս պահեալ զնոյն ժա-  
մանակի, զոր գտաքն՝ յերկուս հատորս ամփոփե-  
ցաք. յառաջնումն զվեցեցուն թղթոցն զանթերի բո-  
վանդակութիւն, և յերկրորդումն զթերիսն հան-  
դերձ հատուկտիր հատուածովք այլոց թղթոցն.  
յաւելեալ և հատածս ինչ մեկնութեանց այլոց գրոց,  
այն է Գործոց, և հին թարգմանութեանն Յոհանն-

նու աւետարանին, մերձ գնելով վերջնոյս մանրագիր  
խաորև՝ և զնոր թարգմանութիւն նորին որ առ Աի-  
լիկեցւովք, առ 'ի տալ պատճառս հայրենասէր իւր  
նամոց փոյթ ունելոյ 'ի գիւտ այլոցն ևս. մնացորդաց  
թէ գուցեն՝ 'ի լրումն բովանդակութեան գործոյն:  
Ի կատարած մատենիս թողաք և զերկրայական  
ճառս, ըստ հմուտ քննարանութեան մեծի առն  
Մոնֆորդնի զատուցեալ յայլոցն. որոց թէպէտ ան-  
կորուստ կան յոյն բնագիրք, այլ ըստ ոճոյն զանա-  
զանութեան ոչ հարազատ դատեալ 'ի նմանէ: Ահեռ  
նոցա յաջորգեն և սակաւք ոմանք 'ի ճառից որք 'ի  
յոյնն 'ի սպառ պակասեալ՝ առ մեզ միայն գտանին,  
զորոց գիտնոց թողումք դատաստան առնել: Ի բաց  
թողաք 'ի սուրբէս և զայլ ճառս յոյժ սակաւս,  
որ ոչ միայն անյիշատակ են 'ի յոյն բնագրին, այլ և  
ինքնին ակներև տեսանի ամենեցուն անհարազատու-  
թիւն նոցա՝ անհմտից ոմանց լինել գործ և ոչ ոս-  
կիարան գրչին:

« Իսկ զհարազատ ճառս զոր Ոսկերերան յայլ և  
այլ գէպս խօսեցեալ է յԱնտիոք և 'ի Բիւզանդիա  
'ի սկզբանէ անտի քահանայութեան իւրոյ մինչև  
ցվախճան, ամփոփեցաք յառանձին հատորի, սա-  
կաւս գտեալ 'ի նոցանէ քան զոր 'ի յոյնն, որ ճոխ  
է յոյժ յոյժ քան զմերն. և չիք ասել թարգմանչի՞ն  
ըստ կամի հաւորնոր արարեալ զայնոսիկ, եթէ այն-  
քան միայն հասին 'ի մեր ձեռս. թէպէտև կարծիք  
գիտնոց են զամենայն մատեան սրբոյ հօրն անթերի  
գարձուցեալ 'ի հայ մերոց թարգմանչաց. այս և եթ  
յայանի տեսանի ոչ 'ի միոյ գրչէ թարգմանեալ և ոչ  
զամենայն ճառ անթերի սււարտեալ, այլ ուրեք ու-  
րեք զեզէեալ 'ի հատուածոց, մանաւանդ յԱնգրիա-  
կանն, զոր ոչ 'ի բուն թարգմանչէն կարծեմ, այլ  
'ի յետին օրինակողացն. որոց և շնորհ ևս ունիմք զժ  
զգատտակ գրչութեանն յանդէպս խնայեալ՝ սակոյն  
խօհեմութեամբ թերեւս 'ի բաց թողեալ է զհա-  
տածնն, զի մնացեալ մասամբքն անայլայլակ կան ի-  
մասաք կապակցութեանն, որպէս ակներև տեսանի 'ի  
բաղգատութենէ ընդ յուսականին: Գիտասցէ հայ-  
րենասէրն զի 'ի թերակատար մատենից նորին սրբոյ  
վարդապետին՝ կան և մեկնութիւնքն Յայեայ և Ե-

գեկիելի, Թերի յոյժ և երկոքեան, զորս անթերի օրինակաց ակնկալեալ Թողումք առ ժամս) :

Յովհաննու Ռսկերերսևի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսի շառք: Ի Վենետիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու, յամի 1861-ԹԾԺ:

Համառօտ յառաջարանին մեջ կը կարգանք. « ԶՃառս Ռսկերերանի զոր յայլևայլ դէպս խօսեցեալ է նորա, պատեհաւս այսու ամբք 'ի լոյս 'ի վայելս հասարակաց, Թէպէտ և յոյժ նուազունս Թուով քան որչափ կան 'ի յոյն բնագրին. և զայն յերկուս կարգս բաժանեցաք ըստ յոյն տպագրին՝ հետևելով հմուտ քննարանութեան Մոնֆորսնի, յառաջնումն զհարազատան և զաներկրայելիսն գասեալ ըստ նորա, և յերկրորդումն զերկրայականսն. յաւելլաք զկնի և զորս յազգի մերում ևեթ գասնէին յանուն սուրբ վարդապետին, յունականին նոցա ցարդ չերևեալ ուրեք և կամ կորուսեալ և Թերեւս 'ի սպառ ընդ անհարազատս դրեալ 'ի գիտնոց. դէպք ժամանակաց և հայրենասիրացն իզձք տացին լրումն ամենայն Թերութեանց 'ի Ճոխութիւն և 'ի Ճշդութիւն ազգային ցանկալի մատենագրութեանց :

« Ի ստորևս ճառիցս իւրաքանչիւր գայէն խնդրողք զԹիւ օրինակաց նոցա, և զմեր ընտրութիւն 'ի նոսա 'ի բաղգատութենէ յունականին » :

Երանկերոյն Յովհաննու Ռսկերերսևի մեկնութիւն Եսայեայ մարդարէի: Վենետիկ, 'ի ապար. սրբոյն Ղազարու, 1880-ԹԾԻԹ:

Յառաջարանն կը ծանուցանէ. « Ի բազում ժամանակաց հետէ իզձ ըեալ մեզ հրատարակութեամբ մատենիս 'ի լոյս ածել և զկարևոր զայս մասն Թարգմանութեան մատենագրութեանց սրբոյ Ռսկերերան հայրապետին, և վասն բազում պատճառաց յերկարեալ ձգեցաւ ցայսօր ժամանակի: Գլուխ պատճառաց յապաղելոյ տպագրութեանս, որպէս և ակնարկեալ է 'ի յառաջարանի մեկնութեան Թղթոցն Պօզոսի, եղեն հանգամանք ձեռագիր օրինակի սորին, որոյ մի ևեթ գողով, և այն լի վրիպակզք և 'ի տեղիս աեղիս պակասաւոր, աայր ակնկալել մեզ նորոգ օրինակաց, որովք մարթ լինէր լրացեալ և ազգագիր

ընծայել զայն 'ի լոյս . մտնաւանգ զի լուեալ իսկ է մեր թէ դասին առ ոմանս յաղգայնոց 'ի պակասեալ կոտորակաց օրինակիս մերոյ . այլ քանզի ցարգ չեղէն մեզ դէպք 'ի ձեռս բերելոյ զնոսին, վասն որոյ լաւ վարկանիմք ընծայել . . . հանդերձ թերուծեամբքն, քան թէ սպասեալ մնալ այլ եւս՝ անստոյգ օրինակաց, որք եթէ հրատարակեսցին 'ի հայրենասէր խնամոց՝ բազում յոյժ դործեն օգուտ, լրացուցանելով զպակասաւոր մատունս սորին, և զանստոյգսն և զտարակուսականս բացայայտելով : . . .

« Մի միայն օրինակ էր առ մեզ գրոցս, և այն ան . թուական՝ առանց ինչ յիշատակարանոց . 'ի սկզբանէ, 'ի միջի և 'ի վերջոյ թերի . . . Եղանակ գրուծեանն՝ որ է միջին անուանեալ երկաթագիր, և արտաքին երեւոյթ մատենին, յօրինեալ 'ի բամբակեայ թղթոյ՝ տան մեզ գուշակել յերկոտասաներորդ դարու գաղափարեալ լինելոյ . . . Ուր ուրեք կարևոր պէտք էին՝ ուղղեցոք զյայտնի վրիպակս օրինակին, 'ի սակաւ տեղիս միայն նշանակելով զվրիպեալսն 'ի ստորև . . . Մարթ էր և 'ի բազում տեղիս գուշակօրէն սրբագրել զվրիպակ թուեցեալս օրինակին և զտարակուսական իմաստս, այլ կամաւ զանց արարաք զոյսու առաւելութեամբ, ընտրելով յաւէտ զճեա դնալ մերոյս վկայեալ հաւատարմութեան 'ի սպագրութիւնս նախնեաց . . .

« Յայսօր ժամանակի առ բանասէրս Եւրոպիայ անծանօթ եկաց մատենագրութիւնս այս սրբոյ Հայրապետին, բայց միայն յեթանեցունց առաջին գրելխոցն և յուծերորդէն մինչև ցհամար մետասաներորդ . որոց յոյն բնագիրն երևի նոյն լինել, զորոյ գիւտն ծանուցանէ և օրինակս մեր յէջ 102, եթէ « Մինչև ցայս վայր գտաւ իւրովք ձեռովք գրեալ երանելոյ Յոհաննու յունարէն » . որով և յայտնապէս աայ մեզ գիտել եթէ ամբողջութիւն գործոյս կորուսեալ էր և առ նախնեօք, և զի հայկական թարգմանութիւն սորին եղեալ էր յառաջ քան զկորուստ բնագրին, ընդ այլ թարգմանութիւնս մատենագրութեանց սրբոյ Հայրապետին, որպէս և հաւանական յոյժ երևի 'ի սեղմ և 'ի հայկաբան ոճոյ գրութեանն, որ բազում ուրեք յիշեցուցանէ մեզ



զտիպս կերպարանաց բանիցն թարգմանչի մեկնութեանն Մատթէի :

« ... Բազում ներքին ընծայութեամբք մարթի հաւաստի ցուցանել զհարազատութիւն հայերէն շարայարուժեանս, այլ առ այս ոչ պակասեն մեզ և արտաքին աւանգութիւնք և վկայութիւնք 'ի նախնեաց մերոց : Որպէս Գաւիթ ոմն վարդապետ յերկատասաներորդ գարու, որ 'ի յորդորանաց Պետրոսի վարդապետի իւրոյ գրեաց զծաղկաբազ մեկնութիւն իւր Եսայեայ, յոլով ուրեք 'ի կարգի բանից Ս. Եփրեմի և Ս. Կիւրղի Աղեքսանդրացւոյ և այլոց սրբոց Հարց, 'ի մէջ բերէ ըստ բառից անգամ և զբանս Ոսկեբերանի 'ի մեկնութենէ աստի Եսայեայ : Սոյնպէս և Գէսրդ վարդապետ Սկեււացի, 'ի վերջ կոչս ԺԳ գարու, 'ի խմբագիր մեկնութեան իւրում Եսայեայ, գրելոյ յաւուրս « արքային Հայոց Հեթմոյ միակեացն կոչեցելոյ » (1289 - 1305) որպէս աւանգեալ է 'ի յիշատակարանին, բազում ուրեք փոքու իւրեք փոփոխութեամբ յառաջ բերէ և զբանս 'ի մեկնութենէ աստի Եսայեայ՝ յանուն Ոսկեբերանի : Գարձեալ 'ի փոքրիկ ծաղկաբազ մեկնութեան Եսայեայ՝ Գրիգորի Տաթեւացւոյ, 'ի վախճան ԺԳ գարու, զոր ժողովեալ է 'ի բանից վարդապետին իւրոյ Յովհաննու Որոտանցւոյ՝ Կախիկ մակնուանեալ վարդապետի, նոյնպէս 'ի ԺԳ գարու, բազում ուրեք ըստ մեկնութեան Ոսկեբերանի ունի զիմաստն, թէպէտև շտրագրութիւնն օտար իցէ 'ի վերջնոյս և ոչ յիշատակիցէ զանուն Ոսկեբերանի :

Երանելոյն Յովնաննու Ոսկեբերանի կոտանդեալ պոյսի կախիկոպոսապետի ներբողեան տասցեալ յաղագս վարուց և նահատակութեան սրբոյն Գրիգորի Հայոց մեծաց հայրապետի 'ի Կոկիսոն Հայոց մինչ յաքսորանս էր, 'ի խնդրոյ հայազին որումն եպիսկոպոսի և վարդապետի համազգւոյ նորին Գիոսկորոս անուն կոչեցելոյ, և այլ եւս յօգնախումբ բազմութեան որք ժողովեալ էին յաւուր յիշատակի մեծահաւակ տօնի նորին սուրբ Լուսաւորչին արևելեան աշխարհին : Հրատարակեալ հանգերձ լատին թարգմանութեամբ 'ի Մխիթարեանց վէնետոկոյ, 'ի Ս. Լազար, 1878 :

Beati Johannis Chrysostomi patriarchæ Constantinopolitani, Oratio panegyrica de vita et laboribus Sancti Gregorii patriarchæ Majoris Armeniæ, Kokisi Armeniæ urbe ab eo exulante habita, rogatu episcopu et doctoris ejusdem nationis et consanguinei, Dioscori nomine, aliorumque multorum qui die festo celeberrimo ipsius sancti partium orientalium Illuminatoris simul convenerant. Cujus originalis textus desideratur, ex antiqua armeniaca versione Mechitaristicæ Congregationis opera in latinam linguam translata. Venetiis, in S. Lazari Insula, anno MDCCCLXXVIII.

Տես Ն երբ որդեան, Ս ու փ երբ:

X

Ռսկերերանի վարք. « Պատմութիւն վարուց, ըս-  
քանչեւեաց և գիսուածոց սրբոյն Յովհաննու Ոսկե-  
բերան հայրապետին Կոստանդնուպօլսոյ. Թարգմա-  
նեցեալ 'ի յունականէ 'ի հայս' 'ի Գրիգորէ կաթո-  
ղիկոսէ Վկայասէր կոչեցելոյ, շուրջ զթուականու-  
թեամբս Հայոց ԵՃ: Տպագրեցեալ աշխատասիրու-  
թեամբ Սարգսի արքեպիսկոպոսի Կոստանդնուպօլ-  
սեցւոյ: Խնգրանօք և արդեամբք Կարուշլացի Նաննից  
Պօղոսին. որ արար յիշատակ զման հոգւոյ հանգու-  
ցեալ կողակցի իւրոյ Տէվլեթին, և որդւոյն Յակոբ  
խոհեմ դարի ... Յամի տետուն 1752, 'ի յունիսի ան,  
ի Վենետիկ, 'ի տպ. Անտօնի Պօռթօլի»: Նախաբան  
ծանօթութեանց մէջ կ'ըսէ. « ... ունելով իմ աստ  
զմի միայն հնագոյն օրինակ ձեռագիր. որոյ տառքն 'ի  
բազում ուրեք եղծեալք էին, և բառքն գրեթէ ան-  
հետացեալք. և ոմանք տեղիք ևս այնպէս շփոթա-  
կան սխալանօք լցեալք էին, որք իբր թէ կարօտա-  
նային մարգարեանալոյ' թէ զինչ արդեօք կամիցին  
ասել, և կամ զօրպիսի իմացումն պարունակեն յին-  
քեանս: Եւ այս պակասութիւնս՝ վշտալի առնէր ինձ  
զաշխատութիւնն իմ առ գործն սրբագրութեան:  
Վասն որոյ ուրեմն որքան կարելի էր միով օրինա-  
կաւ, ջանացի ուղղագրել ըստ տկարիմաց ենթա-  
դատման իմոյ, առանց այլայլելոյ զբունն»: 52 318 1549

Ոսկեգիրք. Հրահանգ խոնարհութեան 'ի գնացս  
կատարելութեան: Մխիթարեան տպագրատուն 'ի

\* 1751 ← ուր 1752 /

Ս. Ղազար, 1878: (Երկասիրութիւն Dom Sans de Sainte Catherine Բենեդիկտեան միանձին):

\* Ոսկի գրքոյի, կամ Գործնական խնարհութիւն: Վիէննա, 'ի տպ. Մխիթարեանց, 1853:

\* Կրթութիւն խոնարհութեան, զոր 'ի լոյս ընծայած էր Պերուսիայ եպիսկոպոս Վսեմ. կարգինալ Փէչչի, հիմա ծայրագոյն քահանայապետ Լեւոն ԺԳ: Թարգմանեց Աղէքսանդր Վ. Պալճեան արքեպիսկոպոս Ակրիդայ, Վիէնն. Մխիթ. ուխտէն: Հոռոմ, 'ի տպարանի Ս. Ժ. Տարածման հաւատոյ, 1883:

\* Ոսկերչեանց Յովհաննէս Մարտիրոսեան, աւագ քահանայ Վաղարշապատեցի. Յիշատակարանք աղգային արգեան պատմութեան վրայ (1777-1811): Կառնկ Հայոց աշխարհի, աղգային և բանասիրական ամսագիր: Տփլիս, 'ի տպ. Համբ. Էնֆիաճեանց և ընկ. 1862:

\* Ոսկի ասեղներ, Գ. Աքիմեանց. մանուկների համար ընթերցանելի գիրք: Թիֆլիզ, Կովկասեան գրավաճառանոց Զաքարիայ Գրիգորեանց:

\* Ոսկի արաղաղ, վիպասանութիւն. հեղինակութիւն Բաքի: Թիֆլիզ, 'ի տպ. Մարտիրոսեան, 1882:

Ոսկի դար Հայաստանի. Երգեալ Յովհաննու Միրզայեան Վանանգեցի վարժապետ քահանայի: Ի Զմիւռնիա, յուսումնարանի սրբոյն Մեսրոպայ, 1841 - ԲՄՂ:

Յառաջաբանին մէջ՝ Հեղինակին ուրիշ երկասիրութեանց վրայ հետևեալ տեղեկութիւնները կը դրանէք. « ... Ի խնդրոյ ուրումն ուսումնական բանասիրի և քաջ լեզուագիտի Պարսկականին և Արաբերէնին, զՓէնտի Ագգար անուանեալ զբարոյակունն՝ 'ի պարսիկ լեզուէ 'ի հայս տաղաչափեաց ըստ բնագրին՝ պարզաբանութեամբ նոյն լեզուագէտ խնդրով. զԵրկաքանչիւրն՝ այսինքն զպարսկերէնն և զթարգմանութիւնն հայոցի գրով 'ի մի գիրս բովանդակեալ, և իւրաքանչիւր տանցն զնշանակու-

✶ Ոսկի գրքի. Գործնական պատմութեան. Հայաստանեան  
էն Վոյտ 3 էջե, յորում կ'ը յիշուած է ի միջի այլոց  
արքայադուխտ Ա. Պարթևոյսի վայրատեալ Լաթի Պաշայ  
... էն նոյն վայրագոյն զաւարտեալ  
հիւսիսե Գառնիկ Լեւ: ... էն նոյն  
... Կառնկ Հայոց աշխարհի ... 1862

Թիւն հանդէպ բնագրին եգեալ, յորում զամենայն հասակս խորշեցուցեալ 'ի մոլութեանց՝ յառաքինի վարս հրաւիրէ։ Զկնի բանաստեղծութիւն իմն 'ի չափմունս ոտից Տեսարան Հայկայ, Սրաւնայ և Արայի անուանեալ։ 'ի սմա նախնեաց մերոց զարիութիւն և զառաքինութիւն գեղեցիկս նկարագրեալ, երգիծանէ զՇամիրամ... եղերերգէ զԱրայէ վասն տարապարս մահուանն՝ զոր պտուղ գեղեցկութեան իւրոյ և ողջախոհութեան ընկալաւ 'ի նոյն Շամիրամէ... Յետ որոց զքերթուածն 'ի հագնէրգ՝ Առփիկական Հայաստանի անուանեալ, զտպեալն 'ի Կոստանդնուպոլս 'ի 1836 թուին... Ի վերջէ զսոյն զՍսկի դարն Հայաստանի շունտին յերկս իւր. յորում զանմեղութիւն նախանձելի դարուն գեղեցիկս նկարագրեալ՝ հաստատէ ասլացուցութեամբ եթէ նախկին խանձարուրք երջանկութեանն այն միկ Հայաստան ելև, ուր անկեցաւ զրախան 'ի բնակութիւն նախածայրին մարգկութեան : Բայց աւսի՞ գիպուածոյս. զի տիրահրաւէր կոչուամն նորին յերջոյն հասարակաց, չարժանացոյց գովանի առնս զտպագրութիւն նորին տեսանել » :

Ողիմպիանու առակք: Տես Մխիթար Գոշ (տպագիր 1842 ամին) :

Որատիոսի Փլակկոսի Արուեստ քերթողական թարգմանեաց 'ի չափս հայկականս Հ. Արսէն Կոմիտաս Բագրատունի վարդապետ Մխիթարեան : Վեներսիկ, 'ի տպ. սրբոյն Ղազարու, 1847 :

\*Որք Մատիլդա բարոյական վէպ երեխանց համար, տպագրեալ 'ի Մոսկուա : (Գրատուն Էնֆիա. Ճեանց 'ի Տփխիս) :

Որբելեան կամ Ուուպելեան Ստեփաննոս. « Պատմութիւն նահանգին Սիռական, արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց : Ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Շահնազարեանց՝ միաբան սրբոյ Էջմիածնի : Փարիզ, 'ի գործատան Կ. Վ. Շահնազարեանց » :

Յառաջարանին մէջ հմուտ և հետաքնին հրատարակողն՝ ընդարձակ տեղեկութիւններ կու ապ Սիւնեաց աշխարհին վրայ « ... Վէշտասան ամօք յառաջագոյն, կ'ըսէ, կարգեալ մեր յառաջնորդութիւն Սիւնեաց՝ բազում խնամօք հոգացայ հեղինակել զձիշտ ստորագրութիւն այնորիկ՝ բաժանեալ 'ի զանազան գլուխս ըստ զանազանութեան նիւթոցն շնչագրութիւն, տեղագրութիւն, հանքաբանութիւն, երկրաբանութիւն, բուսաբանութիւն, պատմութիւն, արձանագրութիւնք, աւանդութիւնք աշխարհին այլովք հանդերձ պարունակէին 'ի նմա: Ո՛ր հայ է որոյ ոչ իցէ լուեալ զգովանի գործս հայրենասիրութեան Իսաիթ բէկի Սիւնեցոյ, որոյ վառեալ նուիրական սիրով ազատութեան ազգին՝ փորձ փորձեաց 'ի սկզբան ութևասաներորդ դարուն առ 'ի ազատել աջակցութեամբ քաջաց ոմանյ զերկիր մեր յօտար լծոյ: Ես եւս հէզ պանդուխտս որ 'ի ժամանակին յայնմիկ կոխէի զերկիրն ոռոգեալ արեամբ քաջարանց, և յանդիման աչացս ունէի զաւերակս Հալիձորոյ, Կապանի, Բաղաբերդի իբրև ցաւագին յիշատակարանս աշխարհաշէն փութոյ մերոց նախնեաց և շիջեալ փառաց նոցա, սիրէի նստել բազում անգամ ընդ հովանեաւ այլևոր բեկնեաց Պեխ գեղջ և լսել զվէպս հարիւրամեայ Ստեփաննոս աւագ քահանային՝ Թոռին գովելոյն Պալայ՝ միոյ յընկերացն 'Իսաիթ: Առ 'ի նմանէ նաև զսոյոգ պատմութիւն քաջագործութեանց Իսաիթ, և եդի 'ի մատենագարանի սրբոյ Էջմիածնի ընդ ձեռն Շահխաթունեան Յովհաննէս եպիսկոպոսի:

« Երկս այս, եթէ մուծեալ էր 'ի տիպ, կարէր լոյս մեծ սփռել 'ի վերայ նահանգին Սիւնեաց ըստ բազում գլխոց, և ուղղել զվրիպակս բազմաց 'ի մատենագրաց՝ ողորմելի իմն հանդիպեցաւ օրհասի: Ահագին զերոյ մի եկուլ զայն և անհետ արար առ յաւիտեան ... Սմին իրի զոր ինչ գրեմ այժմ զՍիսական աշխարհէ՝ 'ի յիշողութենէ եւեթ գրեմ և 'ի խեչերանաց թղթոց որ յանգէտս պահեցան 'ի Հայաստան թղթարանիս՝ չունելով այլ եւս 'ի ձեռին զորեքամեայ երկանցս պտուղ »:

Հեղինակին վրայ ալ գաղղիարէն լեզուով հե-

աւեալ տեղեկութիւններն կու տայ Շահնազարեան .

« ... Nous venons de mettre sous presse une histoire de haute importance ; celle de Stepannos Orbélian, archevêque de Sunik.

« Issu de l'illustre famille d'Orbélian, fils de Tarsaïsch, prince de Sunik, et métropolitte de cette même province de la grande Arménie ; il traite en particulier les généalogies des princes régnants de Haïcasounis et d'Orbélians, et en général l'histoire de l'Arménie, de la Perse et de la Tartarie. Contemporain des invasions des Mongols et des Tartares, qui subjuguèrent sa patrie comme tant d'autres pays, il donne une description complète de cette race féroce qui, partie des bords du lac d'Aral et du mont Altaï, envahit et ravagea l'Asie et l'Europe.

« Stéphanos Orbélian, en sa double qualité de fils du prince régnant, et d'archevêque de Sunik, et ayant par consequence vécu dans les hautes sphères politiques de son temps, nous présente une fidèle description des mœurs, des conquêtes, de l'administration de ces ferores enfants de Tartarie jusqu'alors inconnus.

« C'est lui probablement qui parle le premier de l'invention du papier-monnaie par les Tartares, dont l'usage se repandit, quelques siècles après, chez tous les Européens.

« Cet intéressant ouvrage du XIII<sup>me</sup> siècle non-seulement ne se trouvait dans aucune bibliothèque européenne, mais il n'existait pas davantage dans celle des Arméniens ; le célèbre couvent des Mechitaristes de Venise lui-même n'en possède que des exemplaires incomplets. J'en ai découvert un pourtant dans le siège même de Stepannos Orbélian, et un autre dans la bibliothèque d'Eschmiadzine, d'après lesquels je publie cette première édition.

Բ. Տպ. Երկասիրութեամբ Մկրտչի Էմին : Մասկուա, 'ի սպ. Լազարեան Ճեմարանի արևելեան լեզուաց, 1861 :

Թարգմանութիւն 'ի ռուս 'ի Քերովսէէ Պատկանեան: Փետրպուրկ, 1873:

*Histoire de la Siounie*, par Stépanos Orbélian, traduite de l'arménien par M. Brosset. Saint-Pétersbourg, 1864-1866.

*Stephani Synensis Historia Satraporum Orpelen-sium in Majore Armenia*. Thesaurus epistolicus Lacrozianus. Tomus III.

Excerpta ex libro Stephani Synensis archiepiscopi, scripto sub finem sæculi XIII, cui titulus est: *Historia Satraporum Orbelensium in Majore Armenia*; a M. V. Lacrozio Bayero transmissa.

De la vie et des écrits d'Etienne Orbélian, archevêque de Siounie. — Histoire des Orbélians: Saint-Martin, Mémoires sur l'Arménie, tome II, Paris, 1819.

Listes chronologiques des princes et métropolités de la Siounie, jusqu'à la fin de XIII<sup>me</sup> siècle; par M. Brosset. Mélanges asiatiques, t. IV, 1861.

\*Ո՛վ է մեղաւոր: Հրատարակեաց Յ. Ա. Ա. Տէտր: Կ. Պօլիս, տպագրութիւն Ե. Մ. Տնտեսեան, 1875:

Որ օրհնես զայնոսիկ (աղօթք սրբոյ պատարագին). Թարգմանեալ 'ի բաան և հինգ լեզուս: Վիէննա, 'ի վանս Պաշտպան Ս. Աստուածածնի, 1837:

Որոգայթ փառաց. « Գիրգ անուանեալ Որոգայթ փառաց, վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան: Եարագրեցեալ Յակոբայ Եահածիրեանց Նոր Զուգայեցւոյ առ 'ի օգուտ յազգին Հայոց ... 'ի Թագաւորութեան յոչոստափայլ տեառն երկրորդի Հերակլիոսի 'ի Թիպղիս: Յամի տեառն և Փրկչին յերոյ Յ. Քրիստոսի 1773. և 'ի Թուրին Թուականութեան Հայոց 1222 'ի Հնդիկս և 'ի մայրաքաղաքն Մասարաո: Ի տպարանի նոյն Յակոբայ Եահածիրեանց»: Գրքին ճակատէն անմիջապէս ետքը հետեւեալ ծանօթութիւնն գրուած է. « Սխալանք բոլոր գրքիս առոի և բառի ընթերցողդ 'ի ձայնէ բառից ճանաչի, 'ի պատճառն անծանօթու

Թեան արհեստին շարագրողիս, զի ոչ գիտաց զանա-  
 զանութիւն տառից. այս ինքն գ, Թ, Ծ, Զ, Կ, Ե, Ս, Վ,  
 ա, ց, լ. սորա գանիս մին 'ի տեղի միւսի, գու ինքնդ  
 'ի միաս քո փոխարկէ որն որ արժան է » : Յ'էջն 108  
 սկիզբն է երկրորդ հասորին, զոր ինք կը կոչէ « Նշա-  
 ւակ կամ կարգագրութիւն Հայոց վասն կառավա-  
 րութեան Հայաստանեաց յԱշխարհի » : Յիշատակա-  
 րանին մէջ ալ այսպիսի տեղեկութեան մը կը հան-  
 դիպիմք. « ... Ի սմանէ ապեցաւ ծախիւք մերօք մին  
 հարիւր և տասն հատ. տասն 'ի սմանէ մնալոյ վարձ  
 ծախուց մերոց. մնացեալ մին հարիւր հասն էթէ  
 իշխանք, էթէ հասարակ տնձինք՝ ով ոք որ գտցի,  
 ուրախ վայելում լինի վասն իւր. այլ գինն նորա իւ-  
 րաքանչիւր մի դրքի տասն ոսկի, որում համապա-  
 տասխանի քաւասուն և ուսփի, հատուցանի տնան-  
 կաց և աղքատաց, վասն սիրոյ փրկութեան ազգին  
 Հայոց 'ի լծորդութենէ բարբարոսաց. այս հատու-  
 ցումն ոչ հարկագրեմ, էթէ ոչ աղաչանօք խնդրեմ » :

\*Ուաշինկերն, Հիւսիսային Ամերիկայի միացեալ  
 տերութեանց գահերէց. 'ի Հ. Յարութիւն վ. Եա-  
 դութեան 'ի Միթ. ուխտէն: Վիէննա, 'ի սպ.  
 Միթարեանց, 1855:

Ութ խորհրդոց: Տես Ե Լ ա գ ր:

\*Ութօրեայ կրթութիւն հոգեւոր 'ի պէտս կու-  
 սանաց և բարեպաշտ տնձանց: Աշխատասիրեաց  
 Ստեփան վ. Մելքիսեդեկեան եպիսկոպոս Կարնոյ:  
 Վիէննա, 'ի սպ. Միթարեանց, 1875:

Ուխտանէս եպիսկոպոս. — Հատուած Ա. Պաս-  
 մութիւն Հայրապետաց և Թագաւորաց Հայոց:  
 — Հատուած Բ. Պատմութիւն բաժանման Վրաց 'ի  
 Հայոց: ԲՅԻ. 1871: Ի սպարանի սրբոյ կաթողիկէ  
 Էջմիածնի 'ի Վաղարշապատ:

Յառաջաբանէն կը քաղենք հետագայ տեղեկու-  
 թիւնները. « Ի տասներորդ դարու ծաղկեցաւ Ուխ-  
 տանէս եպիսկոպոս Սեբաստացւոց, որ դրեաց  
 զպատմութիւնս՝ 'ի խնդրոյ Անանիայի վարդապետի  
 Նարեկայ վանից առաջնորդի:



« Այս սահմանը ընծայել սա տեղեկութիւնս կարեւորս որ վասն անցից անցելոց բաժանման Վրաց 'ի մէնջ յաւուրս Մովսիսի Բ և Աբրահամու Ա կաթողիկոսացոյ վեցերորդ գարու . . . Այլ ցաւելմբ զի ոչ յաջողեցաք գէթ այլուստ գնանել զամբողջ աշխատութիւնս Աւետանիոսի : Մի ժայն օրինակ գոյր 'ի Մատենադարանի Մայր Աթոռոյս՝ բոլորագրով օրինակեալ 'ի ԺԱ կամ 'ի ԺԲ գարու . 'ի վերջն պակասին թերթք, որով կիսաա մնայ կոնգակն շրջաբերական Աբրահամու Ա կաթողիկոսի և շարունակութիւն պատմութեան . և ոչ գիտեմք, պատահմամբ էին անկեալ՝ եթէ գիտութեամբ հասեալ 'ի բաց բարձեալ 'ի թշնամեաց :

« Ի ճակատին խորագիր ունի այսպէս . « Զպատմութիւնս յերիս հաստատած, զոր ասացեալ է անուն Աւետանիոսի (Սեբաստացւոց) եպիսկոպոսի՝ 'ի խնդրոյ հաււրն Անանիայի Նարեկավանաց առաջնորդի և նախաշար վարդապետի . հատուածն առաջին՝ յազգս թագաւորաց և հայրապետաց մերոց . և երկրորդն՝ վասն բաժանման Վրաց, և երրորդն՝ յազգս մկրտութեան ազգին այնմիկ Մադն կոչեցեալս : Աստի յայսմանէ և 'ի գրութենէն մատենագրիս ախնդրողն բացայայտ երևին, զի զերիս հատուածս պարտ էր ունել պատմութեանս Աւետանիոսի, յորոց առաջինն ամբողջ, երկրորդն՝ մասամբ ինչ թերի գրասանի 'ի մեզ, իսկ երրորդն՝ 'ի սպառ անհետացեալ . յորում մարթ էին լինել տեղեկութեանց՝ արժանի ուշադրութեան բանախոյզ հնասիրաց՝ յազգս մկրտութեան Մադն կոչեցեալ ազգի և երկրի նոցա և այլոց՝ որպէս գրէ Աւետանէս յառաջին գլուխ Ա հատուածի 'ի թղթին առ Անանիա վարդապետ :

« Համարք զլիսոց սորա էին խառն և պակաս ըստ մեծի մասին, գրչութիւնն բազմաշփոթ, զորս լրացուցաք յարմարելով ըստ կարգին : . . . Փութացաք ընծայել 'ի լոյս՝ զոր 'ի ձեռին էր, 'ի վայելս մերոց և օտարաց, յանձնելով բանասիրաց ազգիս, զի եթէ գտանիցեն զամբողջն մատենագրութեանս՝ յանկեան ուրեք կամ 'ի վանորայս ինչ, ջան 'ի գործ արկցեն և զնոյն արձանացուցանել 'ի տիպ :

« Երկնչելով մեր 'ի ժանեաց ժամանակին, զոր ինչ

պիտանի մասնադրական զմանաւանդ պատմական երկք վաստակոց մերոց նախնեաց գտանին 'ի Մանե-կադարանի Մայր Աթառոյս, թէ և իցեն թերիք և պակասք, իղձք ևն մեզ ասլ 'ի լոյս, զի մի 'ի սպառանհետացին յայնպէս յինչ :

*Histoire en trois parties, composée par l'évêque Ter-Oukhtanès, à la prière d'Ananie, Supérieur du Couvent de Narek et Vartabed de premier rang; par M. Brosset. Saint-Pétersbourg, 1870.*

*Études sur l'historien arménien Oukhtanès (X<sup>me</sup> siècle), par M. Brosset. Mélanges asiatiques, tome vi.*

*Histoire de la scission religieuse entre les Géorgiens et les Arméniens, depuis la fin du V<sup>me</sup> siècle. Dans les Additions et Eclaircissements à l'histoire de la Géorgie, par M. Brosset. Saint-Pétersbourg, 1851. Addition V.*

\* Աւխտ հայրենասիրի (Գ. Մուրասեանց) : Տըպեալ յառաքելական աթոռն Յ. Յակովբեանց յԵրուսաղէմ, 1868 — ԳժԺԷ :

Ուղերծ. « Ուղերձ վարդապետաց Հայոց Իսրայան սրբոյն Ղազարու որ 'ի վենեաիկ, առ Բարձրասպաիւ արքայազունս Եւզինէոս իշխան փոխարքայ և Օդոսակ Ամալիա փոխարքայուհի » 'ի հայ և յիտալական լեզուս :

\* Ուղերծ Կոստանդնուպոլսոյ կաթողիկէոս Հայոց, առ մերձակայ ազգային սիւնհոգոսն Կունմարելի 'ի Գերերջանիկ կաթողիկոսէ Կիլիկիոյ, և առ համօրէն Արհիապաաիւ Արքեպիսկոպոսունս, Գեր. Եպիսկոպոսունս և Յարգոյամեծար Վարդապետս : Կ. Պօլիս, տպագրութիւն Արամեան, 1869 :

Ուղեւճուճ. « Աւղ և ծուծ Աստուածարանն թեան, ըստ սահմանադրութեան Աստուածաշունչ գրոց և սրբազան ժողովոց, նս և ըստ հաճոյից հարց վարդապետաց մեկնաբանեալ Յորուճ իւրաքանչիւր ինչ՝ որ կամ առ յիճմանալ զհորհուրդս հաւատոյ

Ճշմարտութեամբ և ուղղութեամբ, և առ 'ի յամենայն մոլորութեանց բաժանել, կամ առ 'ի ըստ արժանւոյն կատարել և մասակարարել զխորհուրդս եկեղեցւոյ. կամ առ 'ի ուղղել զմարդկային գործս ըստ աստուածային օրինաց, նկատիլ կարէ, դիւրին և համառօտ կերպիւ մեկնի: Եւրագրեալ 'ի Լուգովիկոս Աբելին եպիսկոպոսէ և աստուածաբան վարդապետէ Փարիզեցւոյ, 'ի դաղմատացւոց լեզու: Եւ թարգմանութեամբ 'ի լոյս ածեալ 'ի Հայոց բարբառ աշխատութեամբ և Զանիւք ումեմն հանգուցեալ Թիֆլիզեցի Պետրոս վարդապետի: Ընչիւք և ծախիւք Սահաթճի պարոն Պետրոսի որդի ազնուամեծար և բարեպաշտ Սահաթճի պարոն Մկրտչին: Իսկ սրբագրութեամբ և իբր նորոգ թարգմանութեամբ Դ. Մ. վ. Կ. 'ի վենեաիկ, յամի տեառն 1748. 'ի տպ. Անտօնի Պոլթօլի »:

\*Ուղղագրութիւն լեզուիս Հայոց. յօրինեաց 'ի պէտս ազգային վարժարանաց Քաբրիէլ եպիսկոպոս Այվազեանց: Թէոգոսիա, 'ի տպ. Խաչիպեան ուսումնարանին, 1869: Տպագրեալ արդեամբք Աշտարակի Տիգրանեան, վերատեսչի Խաչիպեան ուսումնարանի ազգիս Հայոց որ 'ի Թէոգոսիա:

\*Ուղղախօսութիւն արդի հայ լեզուին, յօրինւ ված ուսմընական խորհրդածութեամբ: Կ. Պօլիս, Յ. Միւհէնախեան տպարան, 1853:

Ուղղեցոյց քրիստոնէական ուղղափառ վարդապետութեան. յօրինեալ 'ի Մատթէոսէ Առաջնոյ կաթողիկոսէ ամենայն Հայոց: Մոսկուա, 1861:

Ումպը գրասիրութեան. շարագրեց Ա. Կ. Տէտէեան: Զմիւռնիա, 'ի տպ. Տէտէեան եղբարց:

Ուսողութիւն: Տեո խոնարհագոյն ուսողութիւն:

\*Ուսումնարանի առողջապահական հարցեր բժ. Ժիչ Ա. Բարայեանցի երկասիրութիւն: Թիֆլիզ,

Կովկասեան գրավաճառանոց Զաքարիայ Գրիգորեանց :

\*Ուսումն ազգային դաստիարակութեան , գաստիարակաց համար . շարագրեց Հ. Պօղոս Վ. Յովնանեան 'ի Մխիթ. ուխտէն : Վիեննա , 'ի տպար. Մխիթարեանց , 1862 :

Ուսումն բարուց . գործ Փրանկիսկոսի Սուաէի , Թարգմանեաց յիտալական լեզուէ Յովհաննէս Տէր Կարոպետեանց Զամուռնեանց Պրուսացի : Երուսաղէմ , 'ի տպ. առաքելական աթոռոյ սրբոց Յակովբեանց , 1857 : էջ 500 11 X 19

Ուսումն համաքարբառ աւետարանի տեառն մերոյ . 'ի Ներսէս արքեպիսկոպոսէ Վարժապետեան պատրիարքէ Հայոց Կոստանդնուպօլսոյ : Յ'Արմաշ , 'ի տպ. Զ. Ս. Աստուածածնի վանաց , 1875 - ՌՅԻ : Գ 52733 15 X 20

\*Ուսումն մայրենի լեզուի Աղայեանցի : Թիֆլիզ , Կովկասեան գրավաճառանոց Զաքարիայ Գրիգորեանց :

Ուսումն մայրենի լեզուի ծնողաց համար : Թիֆլիզ , Կովկասեան գրավաճառանոց Զաքարիայ Գրիգորեանց :

\*Ուսումն տրամաբանութեան . գաղղիարէն լեզուէ Թարգմանեց Մելքոն Պ. Պ. Փափազեանց : Երուսաղէմ , 'ի տպար. առաքելական աթոռոյ սրբոց Յակովբեանց , 1869 :

\*Ուրուագիծ՝ ոգւոյ և ընթացից Մխիթարեան միաբանութեան : Փարիզ , յԱրամեան տպարանի 1858 :

Ուրսուլլա կոմս , վիպասանութիւն : Մոսկուա , (Գրատուն Էնֆիւռնեանց , 'ի Տիխիս) :

Չամչեան ( Հ. Մեթայէլ Վ. ) : Տես Խրախնան :

← Պատմ. պատգամ . Պ. Շաքարեանց . Գ. Կոստանդնուպօլսոյ . Պ. Յովնանեանց ( 1870 թ . 160 ) 15 X 24

Հրահանգ եօթնեկի:  
 Մեկնութիւն սաղմոսաց:  
 Նուազարան օրհնութեանց:  
 Պատկեր տօնից:  
 Պատմութիւն Հայոց:  
 Սեղան խնկոց:  
 Քերականութիւն հայ լեզուի:

\*Չերազ Մինաս, Գրիչ և Մուր. Առաջին հատոր:  
 Ի Պօլիս, Արամեան տպագրութիւն, 1881.

Գրական փորձեր: Տաղեր, Ճառեր, Առածներ,  
 Եածակներ, Գրագատումներ. Արգոսի խոհերը: Կ.  
 Պօլիս, Արամեան տպագրութիւն, 1872, 1874.

Ազգային դաստիարակչքիւն. Վարժապետական  
 Ժողովի մէջ խօսուած ճառեր: Կ. Պօլիս, Արամեան  
 տպագրութիւն, 1872:

Թե՛ ինչ շահնցանք Պերլիկի վեհաժողովէն: Կ. Պօլիս,  
 տպագրութիւն Տնտեսեան, 1878:

Հայաստան և Խոսայիս: Կ. Պօլիս, Արամեան տը-  
 պագրութիւն, 1878:

X

\*Չէզոք կամ լողջային արգի վիճակին վրայ չեւ-  
 րագրութիւն մը: Գրեց Կահոսեան Մանուկ վար-  
 ժապետ Կիւրբեհնցի: Կ. Պօլիս, 1868: 52 55

10 X 13

\*Չէսթերֆիլտ. Խրատք առ որդիւն. Թարգմանեաց  
 Հ. Ա. Գուրգենեան, 'ի Միթ. ուխտէն: Վեներեիկ,  
 Ս. Ղազար, 1871:

\*Չորս եղանակք տարւոյն. Ստեփան քահանայ  
 Մանգինեանցի աշխատասիրութիւն: Թիֆլիզ, Գրա-  
 տուն Ինֆիւանեանց:

\*Չորս օրիորդ կամ Ուսումնասէրք և Ուսումնա-  
 տեացք: Թատերական խաղ մը: Յօրինեաց Ներսէս  
 Ս. Մէլզպուրեան. « Առ պարկեշտասուն և ու-  
 սումնապերձ երկոտասան աշակերտուհիս առաջին  
 դասու Ս. Վառվառեա վարժարանի »): Կ. Պօլիս,  
 տպագրութիւն Քիւրքձեան, 1862:

\*Չորք եղբարք. Պատմութիւն որ կը ցուցնէ թէ

մարդոյս երջանկութիւնը ինչպէս կրկնայ: Թարգմանեաց 'ի գաղղիականէ Յովհաննէս Պրուսացի Տէր Կարապետեան Չամուռաճեանց: Կ. Պօլիս, 'ի տպար. Նոյեան Աղաւնւոյ, 1853:

Չորք խոկմունք. « Չորք խոկմունք յաղաքս յաւիտենականութեան: Եարագրեալ 'ի Յակոբ վարդապետէ 'ի կարգէն Յիսուսեանց: Ի Հռոմ, 'ի տպարանի սուրբ Ժողովոյն. յամի տեսան Ռեճժժ. հրամանաւ մեծաւորաց »:

\*Պալէրմոցի վարդուհին, վէպ բարոյական. Թարգմանեաց Գ. Չափրասաճեան: Չմիւսնիա, 'ի տպ. Տէտէեան եղբարց:

Պալմեան ( Աղեբոսանգր արքեպիսկոպոս ) : Տես Աթոռ սրբոյն Պետրոսի:  
Աշխարհագրութիւն ուսումնական:  
Դիւրիմաց պատասխանիք:  
Ընդհանուր տեսութիւն երկրագրնտոյ:  
Մոլորութիւնք բողոքականութեան:  
Պատմ. կաթուղ. վարդ. 'ի Հայս:  
Վայելչագրութիւն:

Պաղեստին պոսակեալ քերթուած Գերապատիւ Տեսան Ռիշինալգայ Երրեան եպիսկոպոսի Կաղկաթայ. 'ի հայած Մեսրոպ Պաւլութեան Թարգմանեաց սարկաւազ սրբոյ Էջմիածնի... Կաղկաթայ 'ի տպարանի եպիսկոպոսական ճեմարանի, 1830:

Palestine, a Prize Poem, recited in the theatre, Oxford, in the year 1803, by the late Reginald Heber, D. D. Lord Bishop of Calcutta; translated in the armenian rhyme by Mesrope David, deacon of the Armenian Church. Printed at Bishop's College, 1830.

Պաղտասար դպիր: Տես Եահաւէտ:

Պաղեստինյի վարդապետը . թուովն Գ. Չափրայ  
Տեսեր ի պոլսոս Ասորաւելի վարդապետաւելի Գ. Պօլ  
Արեւմտեալ խաւս Աթոռ Յարիթ. 24 1871  
Digitized by Google  
4511

Տաղարան:  
Ֆանկգիրք:  
Քերականութիւն:

Պամպուլիոս քոմետիա երեք գործողութիւնով.  
Սիւլիւզի աշխատասիրութիւն: Ռոտտով (Դունի  
վրայ): տպարան Յովհաննու Տէր-Աբրահամեան,  
1881:

Պայմանագրութիւն Արարատեան առևտրա-  
կան ընկերութեան: Զմիւռնիա:

Պայրըն (լորտ): Երկիր և երկիր. «Սրբազան ող-  
բերդ: Մենքոյ գրքին սա մասին վրայ հիմնեալ. «Յւ-  
եղև զի որդիք Աստուծոյ տեսին զի գասերք մարգ-  
կան դեղեցիկք էին, և առին իւրեանց 'ի կնութիւն  
զայնոսիկ 'ի նոցանէ որք հաճոյ թուեցան ինքեանց»,  
'ի լորտ Պայրընէ: Թարգմանեաց 'ի գաղիականէ  
Դոմնի Գարրիէլէան Աշակերտուհի Ագապեան վար-  
ժարանի»: Աստանդնուարօլիս, 1874:

— Իտալիա: Վենետիկ, 'ի տպարանի սրբոյն Ղա-  
զարու, 1865, 1872: Lord Byron. Child-Harold's  
pilgrimage. Canto the fourth. Venice, in the island  
of S. Lazarus.

— Հատուածք քերթուածոց և քարգնանուրիւնք:  
Lord Byron's Armenian Exercises and Poetry.  
Venice, in the island of S. Lazarus, 1855, 1870.

\*Պանդուխտ կամ կեանք Աղուանցուց: Գրեց Յ.  
Գուրգէն: Կ. Պօլիս, 'ի տպ. Յովհաննու Միւհէն-  
տիսեան, 1864:

Պանդուխտ վանցին, գրեց Արիստակէս վար-  
դապետ Տէր Սարգսէնց: Կ. Պօլիս, 'ի տպ. Ի. Յ.  
Քիւրքճեան, 1876:

\*Պաշտպանութիւն ազգային իրաւանց, 'ի տա-  
տասխանի Հովուականի Տեառն Աստոն վարդապետի  
Հասունեան: Կ. Պօլիս, 'ի տպար. Միւհէնտիսեան,  
1854:

\*Պաշտպանութիւն Հայաստանեայց կաթողիկէ և առաքելական սուրբ Եկեղեցւոյ 'ի պատասխանի Արոս սրբոյն Պետրոսի առաքելապետի գրոց. յօրինեաց վարդապետ ոմն սուրբ Էջմիածնի: Զմիւռնիա, 'ի տպարանի Տէսէեան եղբարց, 1854:

X Պաշտօն աստուածային. « Պաշտօն աստուածային փրկածիկան, անպատուժ և ահաւոր խորհրդոյ սուրբ Պատարագին, կամ Արիւնեայ Քրիստոսի փըրկագործ չարչարանացն. որք յ'անարիւն խորհուրդ Պատարագին պատկերանան: Այս սրբազան խորհրդոյ արարողութեանն կարճ 'ի կարծոյ մեկնութիւն, և համառօտ խնդրուածք: Եօթնօրեայ ժամաւ կարգ պաշտօն վասն ամենայն առանձին 'ի Քրիստոս հաւատացեալ անձանց: Երկասիրութեամբ ու մեծ վանանդեան Ղուկասու 'նաստ և յետեալ դպրի 'ի լացիական լեզուէ Թարգմանեցեալ: Տպւիւք Թօմայ եռամեծ վարդապետին, յ'Ամսդէլօտամ, 1704 »: I 6. 1854  
59 184

\*Պաշտօն փառաբանութեան Սուրբ Աստուածածնին, 'ի Հ. Իգնատիոս վարդապետէ Փափազեան, 'ի Մխիթարեան միաբանութենէ: Վենետիկ, Ս. Ղազար, 1818, 1860:

Պաշտպանութիւն քրիստոնէական հաւատոց: Տես Զրէյսիսիոս:

\*Պապ և Աւետարան. Ատենախօսութիւն Մանսինեօր Եթրոսմայէրի 'ի Վատիկանեան ժողովի. Թարգմանեաց Զենօր Մարրլեան: Կ. Պօլիս, 1871:

\*Պապ, քերթուած Վ. Հիւկոյի. գաղղիարենէ Թարգմանեց Կ. Յ. Սըվաճեան: Կ. Պօլիս, 1879:

\*Պապականք և Բրողէստանք կամ Պապականներուն ու Բաողէստանդներուն մէջ եղած գլխաւոր տարբերութիւններն: Կ. Պօլիս, 'ի տպ. Զըրլըլի, 1848:

\*Պապիկեան (Հ. Հմայեակ Վ.): « Թուրքանոռ »



րիւն (համառօտ) 'ի պէտս ազգային դպրոցոց. երկասիրեաց Ն. Հմայեակ վ. Պապիկեան 'ի Մխիթ. ուխտէն : 'ի վէննեաիկ. 'ի Մխիթարեան տպարանի, 1883.

Տես Գրահաշիւ կամ Ալճէպրա :

Թուարանութիւն :

Տարերք չափաբերութեան :

\*Պապին գլխաւորութիւնը հնութեանց համեմատ փորձուած : Ս. Կ. Չ. Կ. Պօլիս, տպագրութիւն Արամեան, 1866 :

\*Պապութիւն (հերձուածող), կամ Հռովմ'ի յարաբերութեան ընդ այլևայլ եկեղեցիս. գործ կէթէ աբթայի գազդեացւոյ, թարգմանեալ 'ի միաբանից Չարխափան սուրբ Աստուածածնի վանաց : Արմաշ, 'ի տպ. Չարխափան սուրբ Աստուածածնի, 1873 :

Պատասխանական գիրք սրբոյն Աթանասիոսի հարցմանցն սրբոյն Կիւրղի Երուսաղեմացւոյ : Կ. Պօլիս, (անթուական) :

\*Պատասխանի կարեւոր հարցման նորին Բրիտանական վեհափառութեան վեհափայլ Գեսպանին թէ « Լուսաւորչական Հայերն՝ Բողոքականներն իրենց հետ քրիստոնեայ կը համարին (Սըր Հէնրի Պուլլըր առ սրբազան պատրիարքն Հայոց) » : Ի Կ. Պօլիս, 'ի Ղալաթիա, 'ի տպ. Յովհաննու Միւհէնտիսեան, 1860 :

Պատասխանիք առ անիրաւ զրպարտութիւնս իմաստակի ուրումն ընգդէմ նոր Բերականութեան գրաբառ լեզուիս Հայոց ապելոյ աստ 'ի նախընթաց ամի : Հրամանաւ մեծաւորաց տպագրեալ 'ի Մոսկով 'ի 1828 ամի տեառն, և 'ի մեր ՌՄՀԷ թուականիս. 'ի գործարանի Օգոստեայ Սեմէնի :

\*Պատասխանի առ բանս Տեորակին անուանելոյ. « Ճշմարտութիւն Կոստանդնուսոյւոյ Հռովմեական Հայոց Նախագահ Հասուն Գերապոյժանին հետ ու

Հաստատութիւնս Աղբայ աւերարարութեանց աստ  
Հաստատութիւնս վ. Գրաբարութեան, Յարստոյս աստ  
« սրբոյն Յ. վ. Գրաբարութեան »  
« սրբոյն Աղբայ աւերարարութեանց »  
« Եւրոպայի աստ 1867 թ. 37 1682 »

նեցած գատին վրայօք» : (Ն. Տէր Անդրէաս Աղեք-  
սանգրեան, Կանոնիկոս և Ատենագպիր կաթողիկո-  
սական), 1854. 'ի Լիբանան, 'ի վնս Արաբոստան  
սրբոց Կուսին, 'ի կաթողիկոսարանն Հայոց ուղղա-  
փառաց : Տպագրեալ 'ի Ղալաթիա Կոստանդնուպօլ-  
սոյ, 'ի տպ. սրբոյն Բենեդիկտոսի, 1854 :

Պատասխանի վերջնական արևելեայց առ արևմը-  
տեայց : Risposta finale degli Orientali agli Occiden-  
tali. Կ. Պօլիս, 1873 :

Պատասխան՝ Սուբիաս Գաղանձեան եպիսկոպո-  
սին՝ Արևմտեայց առ Արևելեայց վերջնական պա-  
տասխանին : Գաղղիարէն բնագրէն թարգմանուած :  
Կ. Պօլիս, 'ի տպ. Մետայր հագրգէք լրագրին, 1873 :

Պատասխան Հռովմէական Հայոց կողմանէ՝ Հա-  
սունեան եպիսկոպոսէն խրհուած թուղթ հոյժակալսն  
տեարակին : Կ. Պօլիս, 'ի տպ. Յովհաննու Միւհէն-  
տիսեան, 1850 :

— Աւետարանական քրիստոնէից գէմ հրաա-  
րակուած առաջին յայտարարութեան : Զփուանիա,  
'ի տպ. Գուլիելմ Կրիֆֆիթի, 1846 :

— Հաղորդութեան շառին առաջին տետրակին :  
Զփուանիա, 'ի տպ. Գուլիելմ Կրիֆֆիթի, 1846 :

— Մեղու լրագրին 160 թուոյն մէկ հատուածին :  
Թէոքոսիա, 'ի տպարանի Թալիպեան ռուսացիարանի  
ազգիս Հայոց, 1862 :

— Յայտարարութեան Բահարեան Տեառն Յով-  
հաննու վարդապետի՝ կաթողիկոսական Գործա-  
կալի, 'ի միաբանութենէ Անտոնեան վարդապետաց  
որ 'ի Պօլիս : Տպ. Յ. Միւհէնտիսեան, 1852 :

— Թիրոյ Հասունեան արքեպիսկոպոսի : Կ. Պօլիս,  
Միւհէնտիսեան տպարան, 1854 :

— Ընդդէմ Տետրակին Հ. Ռէմքոնց Պուզէլլե  
լափին կրօնաւորին : Գրեց Տ. Հ. Թ. Սաւալանեան :  
Երուսաղէմ, 'ի տպ. սրբոց Յակովբեանց, 1865 :

— 1865ին Տեղեկագրութեան Պ. Մարկոսի Ալա-  
բեկեան : Գրեց Թիֆլիզցի հայ ոմն : Կ. Պօլիս, 'ի տպ.  
Արամեան, 1861 :

Պատասխանատուութիւնը. « Յահաննիսի վար-  
դապետի Կոստանդնուպօլսեցւոյ Պատասխանա-

տրուծիւնք թղթոյ ուրումն ընդգիմագրականի գրեցելոյ յեզրարց ոմանց հայկազունեաց: Յամի տեառն 1687. 'ի Վենետիկ քաղաքի առ Նաքոմոյ Մօրէթթի: Վերջին իջին մէջ (49) կ'ըսէ. « Զայս սոսիկ գրեցի առ եզրարսք իմ խնդրելով զնետրումն յանդգնութեան իմոյ. զի եմ ձեր ամենեցուն ծառայ նուաստ Յոհաննէս Հոլով: Ողջք լերուք »:

Պատարագ նուէր աղօթից: Կաշկածա, 'ի տպ. Մարգասիրական Ճեմարանի, 1845:

Պատարագամատոյց: Տես Խորհրդատետտըր:

Պատարագ կամ Պատարագամատոյց աշխարհականաց, « որ պարունակէ զգործունէագունեղս և զլերմեռանգագունեղս աղօթս զանազան Պատարագաց: Շարագրեցեալ Ռւմանօրէն 'ի Հայր Մարտինոսէ Գոթեմնոյ Գորուչինէ: Եւ անտի թարգմանեցեալ 'ի հայկական բարբառ 'ի Թէոդորոս վարդապետէ Մէտիաչցւոյ, և յ'Աւսքելական Միսսիճանքէ: Վերահայեցողութեամբ տեառն Սարգսի արքեպիսկոպոսի Կոստանդնուպօլսեցւոյ... Յամի տեառն 1752. 'ի Վենետիկ, 'ի տպ. Անտոնի Պօռթօլի »:

\*Պատժական օրինագիրք Օսմանեան տէրութեան, հայ թարգմանութեամբ: Կ. Պօլիս, 'ի տպ. Միւհէնտիսեան, 1865:

Պատկանեան (Քերովբէ րեստէն).

Ղեռնդեայ երիցոռ Պատմութեանն Արաբաց թարգմանութիւն 'ի ռուս: Փետրպօլրկ, 1862:

Մաղաքիայ Սքեղայի Պատմութեան աղգին Նետողաց թարգմանութիւն 'ի ռուս: Փետրպօլրկ, 1871:

Միսիքարայ Սյրիականցոյ Ժամանակագրութեան թարգմանութիւն 'ի ռուս: Փետրպօլրկ, 1869:

Մոսիսի կաղանկայտուացոյ Պատմութեան Աղուանից թարգմ. 'ի ռուս: Փետրպօլրկ, 1861:

Պատմութիւն իյսանոքիւսն Սասանեանց, քա-

ղեալ 'ի պատմագրաց Հայոց 'ի ռուս բարբառ :  
Փեթրպուրկ, 1863: Essai d'une Histoire de la dy-  
nastie des Sassanides, d'après les renseignements  
fournis par les Historiens Arméniens. Traduit du  
russe par M. Ev. Prud'homme.

Պատմութիւն Մողոլաց, քաղեալ 'ի պատմագրաց  
Հայոց (ց'ժԳ գար) . 'ի ռուս բարբառ : Փեթր. 1873 :

Պատմութիւն Մողոլաց (յ'ժԳ գարէ ց'ժԻ) 'ի  
ռուս բարբառ : Փեթրպուրկ, 1874 :

Սերեոսի եպիսկոպոսի 'ի Հերակլն. Թարգմանու-  
թիւն 'ի ռուս : Փեթրպուրկ, 1862 :

Հետազոտութիւնք 'ի վերայ գաւառական լեզուաց  
Հայաստանի, 'ի ռուս և 'ի գերմանական լեզուս :  
Փեթրպուրկ, (1865, 1871, 1875) :

Տես Աշխարհացոյց Է դարու :

Անանիա Շիրակացի :

Մխիթար Այրիվանեցի .

Մխիթար Արեւղայ :

Սերբէոս :

Բիւզանդ. (Էջ 117) . « Փաւստոսի Բուզանդա-  
ցոյ Պատմութիւն Հայոց ... 'ի լոյսած Գ. Պ. Ս. Պէ-  
\* Ռոտովը կամ Չարուծիւն զգաստացեալ, վէպք. գաղղիարենէ թարգմանեց Յովհ. Գ. Խորասանձեան: Կ. Պօլիս, 'ի տպ. Յ. Միւհէնտիսեան, 1855:

X

Ռոտորիկ վէց. « Կրթութիւն կատարելութեան և կրօնաւորականի առաքինութեան: Ետրագրեցեալ 'ի Հ. Ալփոնսոս քահանայէ Յիսուսեան կարգին: Եւ թարգմանեցեալ 'ի հայկական բարբառ 'ի Պետրոսէ վարդապետէ Թիֆլիզեցւոյ 'ի վալնջուց ժամանակաց: Եւ յանձնարարութեամբ նորին սրբագրեցեալ մեծաւ աշխատութեամբ 'ի Միխիթարայ վարդապետէ Սեբաստացւոյ, արբայ հայր կոչեցելոյ: Եւ արւպագրեցեալ ... յամի աեառն 1741, գեկտ. 6 'ի վէ. նետիկ, 'ի տպարանի Անտօնի Պօթօլի»:

այս

Մասն Բ. « Կրթութիւն ... յամի աեառն 1742, յուլիսի 18. 'ի վէնետիկ: (Ճառք Խոնարհութեան և Համակերպութեան):

Ճառ յարագս Հանսկերպոսքեան ընդ կառնացն Աւտոնոյ. « Ի գրուածոց Հօր Ալփոնսոսի Ռօտորիկ վէցի 'ի Յիսուսեան կարգէ, նորոգ թարգմանութեամբ ուրոյն տպագրեալ: Ըստ ջերմեանդն յորդորանոց ուրումն բարեպաշտի: Ի վէնետիկ, 'ի վանս սրբոյն 'Լազարու, 1823 »: Տես Հռոդերիկ:

Ռօլէն. Պատմութիւն Հռովմական, 'ի հիմնարկութենէ Հռովմայ մինչև 'ի պատերազմն Ագտիոնի այսինքն մինչև 'ի վախճան հասարակապետութեան: Արարեալ Ռօլէնի Գաղղիացւոյ. թարգմանեալ յիտալական բարբառոյ տեառն Հ. Վրթանէս վարդապետի Ասկէրեան 'ի Միխիթարեան Միաբանութենէ: Եւ զգուշաւոր քննութեամբ բաղդատեալ ընդ գաղղիական բնագրին, յաւելմամբ ծանօթութեանցն 'ի Հ. Մանուէլ վարդապետէ Չախլախեան: Տպագրեալ հրամանաւ Արհիպատիւ Տեառն Տեառն Ստեփաննոսի վարդապետի Ագոնց արբայի և արքեպիսկոպոսի: Արդեամբք և ծախիւք պարոն Ալէքսանդրի Ռաֆայէլի 'Լարամեան, յերախտագէտ յիշատակ մեծապատիւ ազգասէր Հօր իւրոյ Աղայ Եղվարդի Ռաֆայէլի 'Լարամեան, որ երբեմն վաճառական 'ի Մատրաս 'ի Հնդիկս: (Հատորք վէց):

1816, յապրիլի 5 ՌՄԿԷ. 'ի Վենետիկ, 'ի վանս սըր-  
բոյն Ղազարու:

Ռոյինի Գաղղիացոյ Հնախօսութիւն 'ի վերայ Ե-  
գիպտացոց, Կարբէգոնացոց, Ասորեստանեայց, Բա-  
բելացոց, Մարաց և Պարսից, Մակեդոնացոց և Յու-  
նաց: Թարգմանեալ 'ի դարձիական բնագրէ 'ի ձեռն  
երկուց հարազատաց՝ Հ. Գէորգեայ և Հ. Եդուար-  
դայ Հիւրմիւզեանց, 'ի Մխիթարեան միաբանից:  
Տպագրեալ յառաջնորդութեան Գերյարգոյ Տեառն  
Սուքիասայ վարդապետի Սոմալեան ընդհանրական  
արքայի: Արդեամբք և ծախիւք պարոն Աղեքսանդրի  
Ռաֆայէի Ղարամեան, յերախտագէտ յիշատակ  
մեծապատիւ ազգասէր Հօրիւրոյ Աղայ Եգվարդի  
Ռաֆայէի Ղարամեան, որ երբեմն վաճառական 'ի  
Մասարաս 'ի Հնդիկս: (Հատորք վեց): Ի Վենետիկ,  
'ի վանս սրբոյն Ղազարու, 1825, յապրիլի 5 ՌՄՀԳ:

\*Ռոյինի Խորհրդածոյնքիւնները գաստիարակու-  
թեան վրայ: Զմիւռնիա, 'ի տպարանի եղբարց Տէ-  
տէեան, 1859:

\*Ռօպէնսոն. Պատմութիւն Ռոպէնսոնի Քսիւ-  
զօէ, Տէֆօէ անգլիացոյ և Թարգմանեց Հ. Մինաս  
Վ. Բժշկեան Տրասպիզոնցի, 'ի Մխիթ. ուխտէ: Վե-  
նետիկ, 'ի տպ. սրբոյն Ղազարու, 1818...:

Ռօրինգօսի պատմութիւնը: Թիֆլիզ, Կովկասեան  
գրավաճառանոց Զաքարիայ Գրիգորեանց:

Ռօպէնսօն գերմանացի կամ Փոքրիկ Ճոնաւորը-  
Շմիտի գործերէն Թարգմանած, գաղղիարէն նոր  
Թարգմանել սկսողներու համար բաղդատութեան  
դիւրին գիրք մը: Կ. Պօլիս, 'ի տպ. Յ. Միւհէնտի-  
սեան, 1850:

Սալեզացի. «Ներածումն առ Ջերմեռանդ կեանն,  
սրբոյն Յրանչիսկոսի Սալեզացոյ. Թարգմանեցեալ  
իտալիանականէ 'ի հայս: Ի Ղուկասու վարդապետէ  
Խարբերթացոյ: Յարմարագրեցեալ և տպագրու-  
թեամբ 'ի լոյս ածեցեալ 'ի Սարգսէ արքեպիսկոպո-  
սէ Կոստանդնուպօլսեցոյ... 'ի Վենետիկ յամի  
տեառն 1748. 'ի մարտի 12. 'ի տպ. Անտօնի Պօռ-

Թօլի» : Յ'էջն 428 տպագրել տուողին վերջաբանն կը տեսնենք , ուստի կը քաղենք հետևեալներն .  
 « ... Մինչ էի ես 'ի բնիկն իմ Կոստանդնուպոլիս , առ ժամայն 'ի Թարգմանիչն սորին ... Զանացող եղէ տպագրութեանն ... և մինչ գծուարութիւն իմն գտանիւր անդ առ 'ի տպագրել զնորապէս Թարգմանեցեալ գրեանս , այնու լուռ լեալ չորհոց հանէի ... բայց մինչ դէպ եղև ինձ ժամանակ ի՛նչ նժդեհանալ յայսոսիկ կողմունս ... ձեռնամուխ եղէ նախապէս ... տպագրել զգերազանցագոյն գիրքն Օրինակաց և նմանութեանց , որ վասն գոլոյն մեծագոյն գործ , այնու հազիւ թէ մինչև ցայժմ կարաց հասանիլ տպագրութիւնն նորին ցառ կէսն . սակայն 'ի ինդրելն յինէն բարեբարոյից ոժանց (զայս գիրս) ... Թողեալ առ ժամանակ մի զնոյն գիրքն Օրինակաց , սկսայ յառաջեցուցանել զսոյնս » :

Տես Աստուածասէր :



Սահմանք կամ Սահմանաց գիրք : Այս անուանով հրատարակուած են մէկ քանի երկասիրութիւնք .

Ա. « Գիրք Սահմանաց Իաւթի Անյաղթ փիլիսոփայի և Աստուածաբան վարդապետի : Տպեցեալ կամաք և գոյիւք վեհազան Առաջնորդի Կոստանդնուպոլսոյ տեսուն Յօհաննիսի սրբազան և աստուածաբան վարդապետի » : Յիշատակարանն Կ'ըսէ .  
 « ... Տպեցաւ սուրբ գիրքս 'ի տպարանի Կարապետի որդի մահաեսի Աստուածատուրի 'ի Կոստանդնուպոլիս ... Յիշեալիք զերջանիկ եպիսկոպոսն Թրակիոյ՝ զտէր Աբրահամ ... վարդապետն ... որ ես գիրք մի ընտիր գրուածովք լինել օրինակ տպեցմանս ... Ընկալցի ևս մասն բարեաց Պաշտօցի տէր Կարապետ , ... որ և նա ևս ետ հին օրինակ մի մագաղաթեայ » : Տպագրութեան Թուականն ալ կը յիշատակուի . « ... Տպեալ 'ի մեր Թուականի , — Զաղար հարիւր և ութսունի » :

Բ. Արեւն դարի : Տես :

Գ. Գործակցաց Թովմայի Վանաեղեցոյ . « Յոգնագիմի Աստուածաբանական , Բարոյական և Քաղաքական իրողութեանց սահմանք : Երկասիրու-



Թեամբ մեղուաջան արանց 'ի մի վայր՝ ըստ կարգի Այբուբենիցն հաւաքեցեալք: Ի լոյս ածեալ տպիւք և արգեամբք առաքելաշաւիղ թօմայ եռամեծ վարգապետի վանանդեցոյ: Որ հրահանգից վարժարանի. — Չէ աակաւին ներկուռ բանի. — Կամ 'ի հանգէս Ֆելոսոֆի — Ջանձն իմաստիւք կըրթեալ չունի, — Ջայս սահմանաց Թ'ի միտս ունի, — Մեծի ուսման ժառանգ լինի: Յամի տեառն 1704, յ'Ամրս տէլգամ»: Գրքին վերջն ալ հայագիր տառերով կը յաւելու. « Ֆինիս կորօնատ օպուս »:

Սալիուկի Թէոդոր, վկայ հայկազն. նուագերգու-Թիւն 'ի չափս հայկականս. յօրինեաց Հ. Մինաս Նուրիխան, 'ի Մխիթարեան ուխտէն: Վենետիկ, Ս. Ղազար, 1882:

*Saint Théodore le Salahounien, martyr arménien, par le P. Léon M. Alishan; trad. en français ( du texte arménien ) par M. J. Hékimian, élève du collège Arménien Moorat. Venise, St. Lazare, 1872.*

Սալուստիոսի Կայիոսի պատմութիւն Կատիլի նեան դաւակնցութեան և Յուդուրթեան պատերազմին. Թարգմանեաց Հ. Աբրահամ Վ. Ճարեան 'ի Մխիթ. ուխտէն: Վենետիկ, Ս. Ղազար, 1856:

Սահակայ Հայոց կաթողիկոսի ասացեալ յԱրմաւենեացն օր, որ է Ղոգոմեան: Տես Յովհաննու իմաստասիրի Մատենագրութիւնք:

Սահակ Պարթեւ կամ Հայրապետ Մշոյ. ողբերգութիւն, գրաբար և աշխարհաբար՝ շարագրեաց Ս. Ս. Տարօնացի: Կ. Պօլիս, 1860:

\*Սահմանադրութիւն և առաջին պատրիարք սահմանադրական. քերթուած Ն. Ս. Մէզպուրեան: Կ. Պօլիս, 1863:

\*Սահմանադրական. ճշմարտութիւններ, ու



... Hieronymus Priulius... Marc'Anton armeno Abaghar. M. D. LXXV. Պատկերներուն տակն ալ հետեւեալ տեղեկութիւնը կայ. « Ի թվականիս Հայոց Ռ. Ժ. Գ. ամին ես Թոխատցի Աբգար դպիրս թնգրեցի զայս նոր գիրս 'ի Հռոմ' 'ի Պետրոս (Պիոս) փափուն. և երես հրաման շինելու. բարեխօսութեամբ այս կարսինալաց և այս եպիսկոպոսիս. և իմ գրայթիս Սուլդանշայ որդոյս: Եւ եկեալ 'ի գեղեցիկ նաւայհանկիտ մայրաքաղաքն սր կոչի Վանատիկ, 'ի Թագաւորութեանն Ելերեմնն Թուռին. և շինեցաք զայս նոր գիրս, և զայս փոքր մեկնիչս սաղմոսաց »: Յիշատակարանն ալ կ'ըսէ. « Փառք ամբաժանելի... կազմեցաւ սուրբ երգարանս Գաւթիլաւ և յրձտիր օրինակէ Գառնեցոյ վարդապետի... 'ի Թուականիս Հայոց ՌԺԵ, մայիս ԺԷ, աւրն ուրբաթ, ԺՁ Ժամն... Առ ռոս Մեղքիսեդեկ եպիսկոպոսին, 'ի մայրաքաղաքն 'ի Վանատիկ. ընդ հովանեաւ սուրբ Մարկոս աւետարանչին. 'ի Հայոց հոգեւորանն: Ի Ժամանակ Սիմֆիի... Յիշեցէք 'ի մաքրափայլ աղաւթս ձեր զաշխատողքս սորայ զառաջինք և զմիջինք. և զվերջինքն. և Աստուած յիշէ զձեզ իւր միւսանկամ գալուստն... Ամենն թճէր Թուխտ է և ամենն կոխած է. և իսկի գրչի գիր չկայ 'ի գիրքս. բաւ է »:

Բ. Տպ. Տէրղնցի Յովհաննէս քահանայի ձեռքով 'ի Վենետիկ: Ի ներքոյ պատկերին. « Տէր Յովանէս Տէրղնցին և որդին Խաչատուրն. ծառայք Աստուծոյ և յեշողացս. ՌԱԶ »: Յիշատակարանն. « Փառք ամենասուրբ Երրորդ. ... Աւարտեցաւ գիրս ձեռամբ անէր Յովանէս Տէրղնցոյս և որդւոյ իմոյ Խաչատուրին 'ի Թվին ՌԱԶ, 'ի մայրաքաղաքն Վենետիկ, ընդ հովանեաւ Մարկոս աւետարանչին, 'ի Թագաւորութեան Պաթրուալ Զիթօնին. 'ի պատրիարքութեան Զւան Թուրիզանոյն, 'ի բանատուն Զուան Ալբէր. Թին, ձեռնասուր խոճայ Եսայուսուն, և հոգեոր որդւոյն իմոյ Ստեփանոսին, և այլ Զողեցոյց. զոր Տէր Աստուած. տացէ ըստ սրտից իւրոց: Այլ զՎարապետ Բաղեցին յիշեցէք 'ի Քրիստոս, որ բազում օգնութիւն հասոյց մեզ: Այլ և զերեսս արկանեմք ոտից ձերոց մերամանծեալ և արտասուլից հա.

ուչմամբ հայցեմք և մաղթեմք 'ի ձէնը, զի մի ոգոր-  
մայիւ արժանի առնէք զկենակից իմ զինախափաշէն,  
և զմայրն իմ զՄարիամն, և զհայրն իմ զԵսանէսն զգո-  
խեալքն առ Աստուած. և յիշողացն և յիշեցելոցս  
Աստուած ողորմեսցի յիւր միւսանգամ գալուստն.  
ամէն:

Այս է տաղ և յիշատակարան 'ի վերայ անուան:  
Տամես զերես ձեր սասց ունկն զնել այսուիկ բանին,  
Որ ես պատմիմ քոքր մի զանցս իմ, զեզեալս իմս ի զոյն տաղի:  
Երբ որ եղէ սարի գերիս 'ի Համբիթ մայրաքաղաքին  
Մնաց երկու աղջկանք և աղայ մի եօթն ամի.  
Բախճան և են ստեցեալն տարակուսիլ ես իմ անձին  
Եհան զիս յիմ որբերացն ան 'ի Հոսմ յերկիրն լատին:  
Յորժամ կամեցայ յետ գառնալ՝ զի վերջ արի զիմ առաջին  
Գրասն ուր ճանապարհք շքա միամիտ յիմ ճանապարհին:  
Որայ վկայ է տէր Աստուած որ ծածկատես ամէն գաղտնին  
Զի Քնաս ինչ ալ գործեցի՝ զի արժանի լինի բանաին.  
Վասն իմ մեղացն որ յառաջ կայր որ ինչ գործեալ յիմ երկրին  
Փութանակի անտի հասան մի ըստ միով կա...  
.....

Գ. Տպ. « Սաղմոս 'ի Դաւիթ. կազմեցաւ 'ի մայ-  
րաքաղաքն Վանատիկ աւգնականութեամբ պա-  
տուական բժշկապետին Յովսեփու Արամատարիոսին  
և Անգեղոս Պէլիսէլոս աթինացւոյն. Թվին Հայոց  
մեծաց ՌՂԱ »: Յ'էջն 370. « Պայծառ ընդերցողաց ող-  
ջոյն և ծանուցում... Վատարեցաւ սպագրական  
սուրբ երգարանս ... զոր և ես նուստս յոգի Յո-  
հաննէսս Անկիււրացիս ... եգայ 'ի մտի իմոյ զարու-  
եստ սպագրութեան օգնականութեամբ Հոգոյն սըր-  
բոյ ... Դիմեցայ յուսով և փափաքանոք 'ի Հոսմ  
քաղաք. և անգ ք ամ բազում աշխատութեամբ և  
բազում նեղութեամբ, և բազում չարչարանաւք,  
զոր չէ հնար 'ի գիր արկանել զոր ծածկագէտ ստեղ-  
ծաւղն իմ գիտէ: Եւ հանի զպողպատն և զկազա-  
պարքն զծապիկքն և զծաղկագրերն բազում աշխա-  
տութեամբ: Եւ յետոյ եկեալ հասա 'ի Վենետիկ,  
սկսայ 'ի գործ արկանել: Զոր և նկարեցաւ տաղա-  
գրական երգարանս Դաւթի 'ի Թվականիս Հայոց  
ՌՂԱ. 'ի ժամանակիս իշխանաց իշխանի պայծառա-  
գոյն Փրանկիսկոս Էրիցո գուճին. մեծաւորաց հրա-

մանաւ և բրվիչէճով. ձեռամբ իմոյ նուաաստ Անկիւ-  
րացի Թարգմանիչ Յօհաննէսին որ Ճիւղաննի Մօլթ-  
նօ կոչի, 'ի լաւ յընտիր աւերինակէ Գառնեցոյ, և  
յայլ ընտիր վարդապետաց ստուգած և վկայեած  
օրինակէ. ... յիշեցէք ... ազաւթս ձեր զնուաստ  
Անկիւրացի Յօհաննէս՝ որ պատճառ եղէ թէ՛ գրին և  
թէ տպագրելոյն. և զպատուական այրն Յովսէփ  
Արօմաթարիօն որ ոսկով և արծաթով՝ օգնեաց ինձ.  
... 'ի տպագրատունն Սալիգագա՛ռ » : Այս յիշա-  
տակարանէս զամ՝ յ'էջն 218. « Չաշխատօղս 'ի սմա  
զնուաստ Անկիւրացի Յովհաննէս Թարգմանիչս յի-  
շեցէք 'ի տէր. որ է ամ բազում աշխատութեամբ  
ինքն մինակ զայ չափս 'ի յայտ և 'ի կատարելութիւն  
եհան » :

Դ. Տպ. « Սաղմոս 'ի Դաւթ. տպագրեցաւ Սաղ-  
մոսարանս 'ի կազմարանն Քարմատանենց տէր Յովա-  
նէսին. թվին մարգեղութենէն Տեառն ՌՁձԺՁ. և  
Հայոց մեծաց ՌԿԵԻՆ. գեկտեմբեր ամսոյ ԺԷ » : Յի-  
շատակարանն. « Ամենակարող զօրութեամբն Աս-  
տուծոյ կազմեցաւ նոր տպագիրս երկիրն Իլախաց 'ի  
քաղաքս Լէվ կոչեցեալ. ընդ հովանեաւ ննջման սուրբ  
Աստուածածնին, ձեռամբ յօգնամեղ Քարմատա-  
նիենց Յովանէս իրիցու, զոր հոգս առեալ մեծաւ  
աշխատութեամբ և բազում ծախիւք տարի մի բոլոր  
արուեստաւորաց հետ դատեցայ մինչև գիրն 'ի  
գլուխ հանի. և նոր կազմարան սահմանեցի և վասն  
փորձի նախ զերգան Դաւթի մարգարէին տպագրե-  
ցի 'ի օգուտ և 'ի շահ աստուածասէր աղօթօղաց մե-  
րասեռ ազանց. զոր եթէ հաճելի լիցի կամաց ձերոց  
տեառն փառք : Արդ եղև զրաւ սորին Թվականու-  
թեան Հայոց մեծաց ՌԿԵԻՆ. ամսեանն գեկտեմ-  
բերի ԺԷ. և 'ի (Փրկչին) ՌՁձԺՁ ամի. 'ի հայրապե-  
տութեանն Էջմիածնայ սուրբ յաթոռոյն կենդանի  
նահատակին՝ տեառն տէր Մելքիսեդեկ կաթուղիկո-  
սին. այլ և Կիրիկեցո գաւառին տէր Յովհանէս քաջ  
բարունապետին. 'ի սոցին ժամանակս հանդիպեցաւ  
տառ սորին. այլ և 'ի Թագաւորութեանն քրիստո-  
նէից Լէհ ազգին բարեպաշտ արքային Զիկմունտին.  
զոր տէր ինքն անսասան պահեցէ ... » :

Ե. Տպ. « Սաղմոս Դաւթի մարգարէի որ և Սաղ-

մասարան յորջորջի » : Ի Յառաջաբանին Կարապետ վարդապետ Անդրիանեցի հետևեալ տեղեկութիւնները կու տայ . « ... Զեռնարկեցինք տպել զերգս Սաղմոսաց , ... յիշեալիք ... նախ զՄարեցի Մատթէոս սարկաւազն , որ հանգուցեալ է առ Աստուած . որ էր նօտար Փիլիպպոսի ճգնազգեսց կաթուղիկոսի ... Որ բաղում ջանիւք և երկամբք քանդակել ետ և նորակերտեաց , զազնիւ և զպատուական գիրս զայս . հրամանաւ և կամօք երիցս երանեալ կաթուղիկոսին Յակօբայ : Իսկ զկերպ և զօրինակ տառին առեալ էր յերջանիկ ըստունապետէն Մօսիսէ , նաև զգաղափար Սաղմոսարանիս ... Ներեսլիք և ինձ , անպիտան և անարհեստ Կարապետի Անդրիանացւոյ ... զի անհմտութեամբ ձեռնամուխ եղէ սրբագրութեան այսմ աստուածային մատենիս ... Զբարկիզն էառ տպաւորութեան Սաղմոսս Դաւթի 'ի թուականութեան կենարար Փրկչին Յիսուսիս ՌՈԿ և ժիակի . իսկ 'ի Հայոց թուին ՌՃ և մետասանին . յամենանն սահմոյ ութերորդի , և գեկտեմբերի երեքտասանին . 'ի հայրապետութեան տեառն Յակօբայ սրբամնեալ կաթուղիկոսին սուրբ Էջմիածնի . 'ի յերկրին Օլանգայ , 'ի քաղաքին Ամսգէրտամայ ներտպագրարսնում Ս . Էջմիածնի և Ս . Սարգսի . հոգաբարձութեամբ և ծախիւք վերոգրեալ Ղլճենց Աւետիսին Երևանեցւոյ » : Յ'էջն 744 յիշատակարան . « ... Կատարեցաւ ... յամի Քրիստոսի Ռ և Ո և Կ և Բ . և 'ի թուարբերութեան հայկական սեռիս Ռ և Ճ և մետասանին . 'ի ծովապաա քաղաքիս , որ կոչի Ամսգէրտամ ... Յեթնեցորդում ամի գիտապետութեան ... տեառն Յակօբայ երորդի սրբամնեալ կաթուղիկոսին Զուղայեցւոյ ... Եւ արգ ազալեմ զձեզ յիշել ... զտէր Ոսկանի ըստունեաց պետի զեղբայրն զԹէոդորոսի որդի զԵրևանեցի Ղլճենց Աւետիսն : Որ եղև պատճառ յորգորելով զՄատթէոս սարկաւազն , ընծայել զայս անուակերտ և ըզձայի տպագրարանս սուրբ Էջմիածնի և սուրբ Սարգսի : Քանզի Մատթէոսն 'ի հիւանդութեան իւրում , կոչեալ զվերոգրեալ Աւետիսն և խնդրէր 'ի նմանէ եօթն հարիւր հնգետասան մարտիլ փոխ . զի տայէ պարտապանացն իւրոց . որք յոյժ վշտացու

ցեսլ էին զնա. և տպեմք ասէ երկու հազար սաղմոսարանս, և հազար և երկու հարիւր Յիսուս որդիս. և վաճառեալ և զշահն նորա արասցուք երկու բաժինս, ինձ և քեզ: Իսկ թէ մեայց՝ գու՛ ՚ի գործ արկեալ զտպարանն մինչև վճարեսցես զպարտան իմ, և զքոյն ևս առցես հանգերձ շահիւքն. և աէր եղիցի ընդ քեզ: Եւ զայս ոչ էառ յանձն Աւետիան ասելով. եթէ աացես զտպարանդ յիշատակ սուրբ Էլմիածնին և սուրբ Սարգսին, լինիմ քեզ ընկեր, և տամ զփողս, և ևս աշխատիմ անձամբս ՚ի տպարանիս որքան և կենդանի իցեմ. և զարգիւնս դրամին իմոյ բաշխեմ վերոգրեալ սրբոյն. և յետ մահուան իմոյ զբովանդակն: Որոյ հաւանեալ Մաթէոսն. և յօժար սրաիւ արար կտակ՝ զի յետ մահուան իւրոյ և վճարման պարտուց երկոցունցն՝ ասցի տպագրատունն վերոգրեալ մեհաստանիցն. և ինքն չէ ևս աւարտեալ զՅիսուս որդիսն հանգեալ ՚ի Քրիստոս: Զորոյ զթերին լցեալ Աւետիան, և սկսեալ բազմանօք և փափագմամբ տպել երկու հազար և եօթն հարիւր քեղասպաճոյճ և գովելի սաղմոսարանս... Հուսկ յետոյ հայցեցէք և վասն իմ... որդւոյս տէր Յովհաննիսի Կարապետի կրօնաւորի Անդրիանեցւոյ... և ներեսլիք սխալանաց իմոց, զի անծանօթ էի տպական արուեստիս... վասն այսորիկ... մեծաւ աշխատութեամբ հազիւ կարացի այսքան յայտ ածել... օժանդակութեամբ վերոգրեալ Աւետիան... Յերկուց հանդիսացեալ օրինակաց սրբագրեցաւ. մինն յառաջնոյ ասացելոյն. և միւսն ՚ի Կեսարացւոյ տէր Խաչատրոյ բաբունապետի տպեալ յԱտենւոյն. սակս որոյ զբառս ոմանք եգինք առնութեր ՚ի լուսանցսն... նոյնպէս և զառաս հէրրայեցւոցն հանգերձ անուամբն իւրեանց ՚ի լուսանցս Անբժացն... Իարձեալ յիշեսլիք ՚ի տէր զԱմասիացի Խուտապաշխի որդի Մինասն՝ մարն իւրով Մարիամաւ. որ ես մեզ ինն հարիւր մառչիլ փոխ. որով զհազար և երկու հարիւր Յիսուս որդիսն կազմեալ յզեցինք նաւով յ՚Իզմիւռնիայ: Այլ և յիշեսլիք զհանձարեզ արուեստաւորն զՄուռնաիք Քրիստօֆլուն. որ է ազգաւ ալաման. որ և բազմահար ջանիւ կերպացոյց զպողովատեայ և զպղնձի աիպ տառիցս): Վերջին

յիշատակարանին մէջ ձեռնտուք տպագրութեան կը յիշատակուին Զուղայեցի Եահրիման և Միրզէնց Յովհան. « ... սա ձեռնտու եղև եւ ետ մեզ հազար և եօթնհարիւր մտչիլ. որով աւարտեցինք զերկու հազար և եօթնհարիւր սաղմոսարանսն » :

Զ. Տպ. յԱմսգերտամ. « Արդ սկիզբն էառ տը պագրութիւն աստուածայնոյ տառիս ՌՌԿ և Դ Թըււոյն Գրիստոսի. յապրիլի ամսոյ միոյն. իսկ 'ի Հայոց Թուականի Ռ և Ճ և երից (ՌՃԺԳ), 'ի մարտի ամսոյ քսան և երկուց. 'ի հովուապետութեան տեառն Յակոբայ սրբազան կաթուղիկոսի վերաբաղմողի յաթոռ Գրիգորի սրբոյ Լուսաւորչի որ 'ի Ս. Էջմիածնի: Ներ իւրում տպարանում որ հաստատեալ եղև 'ի նախանշանակեալ Մատթէոսէ սարկաւազէ. յերկրիս Հոլանտիս 'ի քաղաքիս յԱմսգերտամի. որ կոչի աշխարհ Զլամէնկի. սպասաւորութեամբ և սրբագրութեամբ անարհեստ և անիմաստ և անպիտան կարապետի Անգրիանացւոյ և բանի սպասաւորի. աշակերտի մեծիր բունապետի տեառն Ոսկանի Երևանեցւոյ » : (Մեր ձեռքն հասած օրինակն պակասաւոր է) :

Է. Տպ. Ի Վենետիկ. « Գիրք Սաղմոսաց Գաւթի, գազափարեցեալ 'ի յօրինակէ մեծին Խաչարոյ վարդապետին և տպագրեցեալ 'ի Թուին Հայոց, հազար հարիւր երեսուն և երրորդ ամին. 'ի պէաս Հայկազունեաց բարեսիրաց, և 'ի փառս ամենասուրբ Երրորդութեան, ամեն. 'ի Վենետիկ քաղաքի » : Յիշատակարանն. « Տպագրեցաւ վայելչատիպ Երգարանս Գաւթի 'ի հայրապետութեան սրբազան կաթուղիկոսին Հայոց տեառն Յիւզաբուարդեամբք և գոյիւք Ոսկանայ Ագուլեցւոյ որդւոյ Մարտիրոսի 'ի յղբօսանս հայկազունեաց » :

Ը. Տպ. Ի Մարսիլիա. « Գիրք Սաղմոսաց Գաւթի: Ի հայրապետութեան տեառն Ալեկսանգրի Զուղայեցւոյ կաթուղիկոսի ամենից Հայոց: Ի Մարտիլիայ քաղաքի. և Թուարերութեան Հայոց ՌՃԺԳ. յունուարի ամսոյ Ի. և 'ի Թվին Փրկչին 1710 » :

Թ. Տպ. յԱմսգերտամ, որ կրկին ճակատ ունի. առաջնոյն մէջ. « Կացից յազօթս հոգևով. կացից յազօթս. և մտօք: Սաղմոս ասացից հոգևով, սաղմոս



ասացից և մտքը: — Հոգևորն սրբորով Դաւիթ շար-  
ժեալ, — Ըզտասնադին մատամբ հարեալ, — Հա-  
րիւր յիսուն սաղմոսն երգեալ, — Զանճառելի խոր-  
հուրգս ցուցեալ: — Որում Դուհաս աստ ծառա-  
յեալ, — Զնորին բաժաին մատուռակեալ: Իսկ  
յերկրորդին. « Գիրք Սաղմոսաց, տպագրեցեալ 'ի  
հայրապետութեան տեառն Աղեքսանդրի ամենայն  
Հայոց կաթողիկոսին Էջմիածնի. յամի Տեառն 1714.  
'ի մեր Թուին 1163. Ըն տպարանում Դուհասու-  
գարի Վանանդեցւոյ. յԱմսգրտամ »: Յիշատակա-  
րանն. « ... Յաւարտ հասուցաք ... յամի Տեառն  
1715 և 'ի Թուին Հայոց 1164. յիշեցէք ... զպարոն  
Ստեփաննոսն՝ որ գորով ինքն անզաւակ, կամեցաւ  
յ'անջինջ յիշատակ անձին իւրոյ 'ի լոյս ածել ծա-  
խիւքն իւրովք զայս հոգեշահ երգարանս Դաւթի ...  
յիշեցէք ... զնորահասակ Մարկոսն ... (որ) ընդ  
վերոյ պարոն Ստեփաննոսին ... ծախիւքն իւրովք  
ետուն տպել 1500 Սաղմոսարանս. հազարն 'ի սա-  
կի պարոն Ստեփաննոսին. իսկ հինգհարիւրն 'ի սա-  
կի Մարկոսին ... (յիշեալէք) զհարտգատ մատակա-  
րար գործարանիս զԴուհասս Նուրիջանեան ... զի  
որբացեալ 'ի լուսահոգի հաւուն իմոյ Թոմայ Եւա-  
փայլ եպիսկոպոսէն 'ի աէր հանգուցելոյ ... , և հի-  
քոյս կաակաւ նորին 'ի ժառանգութիւն ժամանեալ  
տպարանս ... կամեցաք հետեւել ըստ օրինակին զոր  
վերոյ պարոն Ստեփաննոսն ետ մեզ. որպէս և ըստ  
սորին կամացն ևս 'ի բաց Թողաք Բանք Սաղմոսիս և  
պատուակիս » :

Ժ. Տպ. Ի Վենետիկ. « Սաղմոս Դաւթի որ և  
կոչի Սաղմոսարան: Տպագրեցեալ 'ի Վենետիկ, յա-  
մի տեառն 1733, 'ի տպ. Անգոնի Պոլթօլի, հրամա-  
նաւ մեծաւորաց » :

ԺԱ. Տպ. Ի Վենետիկ. « Սաղմոս Դաւթի, տը-  
պեցեալ աշխատութեամբ Սարգսի արքեպիսկոպոսի  
Կոստանդնուպօլսեցւոյ ... յամի 1748, 'ի մայիսի 2,  
'ի Վենետիկ » :

ԺԲ. Տպ. Ի Վենետիկ. « Սաղմոս Դաւթի, որ  
կոչի Սաղմոսարան. տպագրեալ 'ի Վենետիկ յամի  
տեառն 1755, 'ի տպարանի Անգոնի Պոլթօլի, հրա-  
մանաւ մեծաւորաց » :

Տպագրութիւն Կոստանդնուպօլսոյ. « Սաղմոս և րանեղի մարգարէին Դաւթի. տպագրեցեալ... 'ի Թուականիս 1187, յունվարի Թ » : Յիշատակարանն. « ... Տպագրեցեալ եղև Սաղմոսարանս ... 'ի հայրապետութեան տեառն Ղազարու սրբազան կաթողիկոսին. և 'ի գիտողութեան երկուց ակադեմիոյն՝ սրբայն Երուսաղեմի և Կոստանդնուպօլսոյ տեառն Գրիգորի և Յօհաննիսի աստուածաբան վարդապետացն. 'ի Թուականիս ՌՃԶԻ ... յիշեսցիք 'ի Քրիստոս զբազմամեղ Աստուածատուրս զտպօղ սորին » :

Տպ. Կ. Պօլսոյ. « Սաղմոս երջանիկ մարգարէին Դաւթի. տպագրեցեալ 'ի հայրապետութեան տեառն Ղազարու սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց : 'ի Թուականիս 1194, յունվարի Թ » :

Տպ. Կ. Պօլսոյ. « Սաղմոս Դաւթի, որ կոչի Սաղմոսարան. յորում յաճախակի գուշակի զանօրէնութենէ խոստանեցելոյ Մեսիայի Փրկչին մերոյ Քրիստոսի : Ասացեալ 'ի Դաւթայ յերջանիկ մարգարէէ՝ յորգւոյն Յեսսեայ : Ընծայեալ հանուրց փափագողաց մերազնեայց՝ տպագրութեամբ, 'ի Կոստանդնուպօլսոյ քաղաքի ... 'ի տպարանի Աստուածատուրի » : Յիշատակարանին մէջ. « ... Յիշեսցիք ... զՅակօբն գաղատացի, որ ... փորագրեաց զափայն կանոնական և փառքական, նաև զգիրսն ձագաձեական, առ 'ի լինել յիշատակ մերումս տրպագրատան » :

Տպ. Կ. Պօլսոյ. « Սաղմոս երջանիկ մարգարէին Դաւթի, տպագրեցեալ ... 'ի Թուականիս 1214 յունվարի Ժ » : Յիշատակարանն. « ... Տպագրեցեալ եղև Սաղմոսարանս ... 'ի պատրիարքութեան Կոստանդնուպօլսոյ տեառն Գրիգորի ... յիշեսցիք 'ի Քրիստոս զհանգուցեալ հայրն իմ՝ զԱստուածատուր, ընդ նմին և զիս զորդի նորին՝ զՅօհանէս յեանեալ գպիրս » :

Տպ. Վնենտկոյ. « Սաղմոս Դաւթի որ և կոչի Սաղմոսարան. տպագրեցեալ 'ի Վնենտիկ, յամի տեառն 1771. 'ի տպարանի Անտօնի Պօլթօլի. հրամանաւ մեծաւորաց » :

Սաղմոս գրոց հին տպագրութիւն մ'ալ հասած է մեր ձեռքը, որուն առաջին Թերթը պակաս ըլլա-

լով՝ չէնք կրնար որոշել ապագրութեան արին: Հրա-  
 տարակութեան քաղաքն է Կոստանդնուպօլիս, և  
 ապագրոյն Յովհաննէս որդի Աստուածատրոյ, ինչ-  
 պէս կը ծանուցանէ յիշատակարանն: Անշուշտ զայս  
 կ'ականարկեն Նախիջևան քաղաքը հրատարակուած  
 Սաղմոս գրոց յիշատակարանին հետևեալ խօսքերն.  
 « ... Զի 'ի վաղուց հետէ լուեալ է մեր՝ թէ գոյ սաղ-  
 մոս իմն ապեցեալ 'ի վաղ ժամանակաց. յորում կայ  
 եգեալ յ'ակիղբն ամենայն արէլուից խորագիր խճո-  
 ղեալ սուրբ մօք ... որ էր ապեցեալ 'ի հայրապե-  
 տութեան հանուրցս Հայոց տեառն Աստուածատրոյ՝  
 ... առեալ օրինակեցաք, և եգաք 'ի գլուխս ամե-  
 նայն փոխից սոյն սաղմոսին՝ որ 'ի մէջ յառաջին  
 ապեցեալ սաղմոսին տեսանք. և այժմ՝ երկրորդա-  
 պէս եղև ապեցեալ հանգերձ տանուարիւքն » :

X  
 Տպ. Վենետիոյ. « Սաղմոսարան Դաւթի մարգա-  
 ղէի. ապեալ յամի տեառն 1786 ... 'ի Վենետիկ,  
 'ի սպ. Յովհաննու Փիացեան. հրամանաւ մեծաւօ-  
 րաց » : Ռ. Մ. Ե. Գ. 367 13420 9

Տպ. Թրեքստի. « Սաղմոս Դաւթի, որ և կոչի Սաղ-  
 մոսարան. ապեալ յամի տեառն 1787 'ի Թրեքստ. 'ի  
 ապարանի Հարց Մխիթարեանց » :

Տպ. Վենետիոյ. « Սաղմոս Դաւթի, ապեալ ըստ  
 ընտիր օրինակաց. յամի տեառն 1789 ... 'ի Վենե-  
 տիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու, յանուն Անտօնի  
 Պօթօլի » :

X  
 Տպ. Նախիջևանի. « Սաղմոս Դաւթի որ և կոչի  
 Սաղմոսարան: Տպագրեալ ... սուրբ աթոռոյն Էջ-  
 միածնի ծայրագոյն Նուիրակի՝ Ռուսաց երկրի ամե-  
 նայն ազգիս Հայոց՝ առաքելաշաւիղ Առաջնորդի  
 տեառն Յովսէփայ սրբազան արքեպիսկոպոսի Սա-  
 նահնեցոյ Արղութեանց: Արդեամբ և ծախիւք՝ 'ի  
 Սուրաթ բնակեալ Աղաբաբեան բարեպաշտ պարոն  
 Սաեփաննոսին, և կենակցի նորին մեծախառն  
 Հռիփսիմէ տիկնոջն. յամի տեառն 1791 ... 'ի սպա-  
 րանի նորին բարձր Արքազնութեանն. ընդ հովա-  
 նեաւ երկնահանդէս սուրբ Թաք վանիցն, որ 'ի նորն  
 Նախիջևան » :

Տպ. Վենետիոյ. « Սաղմոս Դաւթի, ապեալ ըստ  
 ընտիր օրինակաց. յամի տեառն 1807, ՌՄՁԶ ... 'ի  
 Վենետիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու » :

« Կայ յամի տեառն » Շ. Մանուկ յայտնաւոր, այսպէս զ  
 Ք. Գեղ. ք. Բարսեղ Գեղ. ըստ մտաւոր յայտն  
 - ի յայտնաւոր յայտնաւորաց. ի յայտնաւոր սրբաւոր տեառ  
 տեառն հայոց հովիտոյ զպարտ յամի տե 1786 ի զ  
 սպ. յայտնաւոր սրբաւորաց ըստ մտաւոր - ԵՁՅԼ

Փոքրադիր սահմանք. Տպագր. Լիվոնոյ. « Գիրք  
և սաղմոսք Իսլ.թի, որ և Սաղմոսարան կոչի. սպա-  
գրեալ եղև 'ի հայրապետութեան Հայոց տէր Փի-  
լիպպոսի սրբազան կաթողիկոսի. հրամանաւ և  
կամօք երջանիկ Խաչատուր վարդապետին կեսարա-  
ցոյ. ձեռամբ և հոգացողութեամբ նուստ Յով-  
հաննէս վարդապետի Ջուղացոյ յիւրում տպարա-  
նի զոր կայացոյց յԽոտլիս. 'ի վայելուչ քաղաքն և  
'ի նաւահանգիստն 'ի Լիվոնայ. 'ի թվ. Ռ.Ղ. 106 ա-  
րուութեամբ վերակացուաց » : Ի միւս էջն. « Յիսուսի  
Քրիստոսի ծառայ Յովհաննէս Ջուղացի. շնորհօքն  
Աստուծոյ վարդապետ և սպասաւոր սուրբ Էլմիած-  
նի որ 'ի թվ. Ռ.Ձ. » և 'ի հանդիպոյ հեռեւեալ ընծայա-  
գրութիւնն կամ ողջունագիր առ Խաչատուր վար-  
դապետ կեսարացի առաջնորդ վանիցն Ջուղայու.  
« ... Արդ ըստ հրամանի և ըստ կամաց սուրբ հորդ  
իմոյ ... 'ի թվ. Ռ.Ձ և ը բաժանեալ 'ի սուրբ ուխ-  
տէդ, գիմեցի յարևմուտս սակս լրութեան տպա-  
գրութեանս. և 'ի սպառուածս ամի միոյ՝ որ ընդ ծով  
և ընդ ցամաք՝ հասի յԽոտլիայ 'ի գեղազարդ քա-  
ղաքն 'ի Վենետիկ. և վերահասու եղեալ գործաւ-  
նութեանց, ընթացայ 'ի Հռոմ. և անդ սկիզբն ա-  
րարի նորագոյն գրոց և տպոց. և աւարտեալ մասն  
ինչ 'ի գործոցս՝ առի զարհեստաւորս և գիմեցի 'ի  
Լիվոնայ. և անդ զանդի կայեալ մեծաւ ջանիւ և  
բարի գիտաւորութեամբ, տիւ և գիշեր անգադար  
աշխատելով՝ լրումն տուաք տպագրութեանս. յեր-  
կարելով յաշխատութիւնս՝ բաց 'ի ճանապարհէն,  
երեք տմ և վեց ամիս, անմեխթար յամենայն կող-  
մանց : Եւ շնորհօք ամենազօրին Աստուծոյ, և աղօ-  
թիւք տեսնող իմոյ աւարտեցաք զտպագրութիւնս  
անթերի և անպակաս կատարելութեամբ. որք են  
տիպք զանազանք՝ ըստ զանազան քանակութեան և  
որակութեան, մեծ և փոքր՝ ութիւք որոշեալք.  
ընդ որոց է և նիւթ երգոց և շարականաց, և այլ  
գործիք բաշումք, զարդարիւք տպագրութեանս.  
օրով ամենայն ինչ կարելի է տպիլ, յորոց իբր միջին  
կերպ է այս ... իբրև զփորձ տպեցաք զսա յոյժ ըշ-  
տապմամբ. զի յաւուրս ութսունն աւարտեցաք զսա.  
հազար և յիսուն հատ թուով 'ի միասին. միայն և

առանց ուրուք ձեռնատուի ... 'ի Լիվոնայ, 'ի Թվ. ՌլԳ մայիս Ժ» : Իսկ 'ի վերջ գրոցն. « Ծնորհօք ամենազօրին Աստուծոյ՝ արտկայացաւ տիպք տպագրութեանս. ձեռամբ Յովհաննէս վարդապետի Զուղացւոյ, 'ի Թվ. ՌլԳ 'ի մայիսի ամսոյ Ժ » :

Տպագր. Մարտիրոս. « Գիրք Սաղմոսաց Դաւթի, տպեցեալ 'ի տպարանի սրբոյ Էջմիածնի, և սրբոյն Սարգսի զօրավարի: Արդեամբք և ծախիւք Սողմոնի քեռորդւոյ տեառն Ոսկանայ արքիեպիսկոպոսի Երևանեցւոյ հանգուցելոյ առ Քրիստոս: Յամի տեառն 1677. յունվարի ամսոյ 'ի տասնևութ. 'ի Մարտիլիոյ » : Յիշատակարանն կ'ըսէ. « ... Աշխատութեամբ Տեառն Ոսկանի արքիեպիսկոպոսի հանգուցելոյ 'ի Քրիստոս: Արդեամբք և ծախիւք երկց պարտատիրաց ... » :

Տպագր. Վենետկոյ. « Գիրք Սաղմոսաց Դաւթի, տպագրեցեալ 'ի տպարանի Միքայէլի Պարպօնի. արդեամբք և ծախիւք Ծոօթեցի Սիմոնի որդի Կարապետին. և մատակարարութեամբ Յովհաննիսի վարդապետի: Ի Թվի Փրկչի 1682, ապրիլի ամսոյ 23, 'ի Վենետիկ քաղաքի » : Ի յիշատակարանին « ... 'ի Թուրի Փրկչին մերոյ 1682 'ի 30 յունիսի. և 'ի Թուրին Հայոց ՌՃԱ 'ի Ինոյնոյ ամսոյ 'ի Վենետիկ քաղաքի 'ի յօրինակէ տեառն Ոսկանայ վարդապետի հանգուցելոյ 'ի Քրիստոս ... » :

Տպագր. Ամսրեքտամի. « Գիրք Սաղմոսաց . 'ի լոյս ածեալ հայցմամբ խնգրոյ և ծախիւք Զուղայեցի լուսահոգի խոճայ Քանանի որդւոյ Թարխանին, Աւետքին և Սարհադին ընկերացն Աւետքի որդւոյ Զաքարիային, Եազուրի որդւոյ Մկրտումին, և Աւետքի որդւոյ Ղազարիոսին ... Յամի տեառն մերոյ 1713. և 'ի Հայոց Թուրին 1162. 'ի տպարանի Ղուկասու գպրի. յ'Ամսարգամ » :

Տպագր. Վենետկոյ. « Փոքրիկ Սաղմոսարան, 'ի լոյս ածեցեալ 'ի յօգուտ ուսումնասիրաց, ընչիւք և գոյիւք ամենապայծառ խոջայ Սարհաթի որդւոյ լուսահոգի պարօն Մուրաթին ... 'ի Վենետիկ, յամի տեառն 1712. Թուրին Հայոց 1161. յունիս 28. 'ի տպարանի Անտոնիոսի Պօլթօլի » : Յիշատակարանն կ'ըսէ. « ... 'ի սաղմոսարանէ 'ի լոյս ածեցելոյ Ըա-

նիւք Ոսկանայ արհիեպիսկոպոսապատիւ վարդապետի Երևանեցւոյ օրինակեցեալ» :

Տպագր. վիճակոյ. « Սաղմոս Դաւթի, որ և կոչի Սաղմոսարան : Տպեցեալ... յամի տեառն 1742. 'ի վենետիկ, 'ի ապարանի Անտօնի Պօռթօլի » :

Տպագր. վիճակոյ. « Սաղմոս Դաւթի, որ և կոչի Սաղմոսարան. տպեալ յամի տեառն 1755, մարտ. 'ի վենետիկ, 'ի տպ. Անտօնի Պօռթօլի » :

Տպ. վիճակոյ. « Սաղմոս Դաւթի որ և կոչի Սաղմոսարան : Տպեալ... յամի տեառն 1759. 'ի վենետիկ, 'ի տպ. Անտօնի Պօռթօլի » :

Տպ. վիճակոյ. « Սաղմոս ... յամի տեառն 1770, 'ի վենետիկ, 'ի տպ. Անտօնի Պօռթօլի » :

Տպ. վիճակոյ. « Սաղմոս Դաւթի ... յամի տեառն 1793. 'ի վենետիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու, յանոն Անտօնի Պօռթօլի » :

Տպ. վիճակոյ. « Սաղմոս Դաւթի, տպագրեալ յամի տեառն 1805. 'ի Թուրին Հայոց ՌՄԾԴ. 'ի վենետիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու » : Նորագոյն տպագրութիւնք 'ի վենետիկ, 1820, 21, 1842, 1853, 65, 69) :

Սաղմոս Դաւթի. Զմիւռնիա, 'ի տպ. Գուլբեկմ կրիֆֆիթի, 1841 :

» » Աշխարհաբար : Զմիւռնիա, 'ի տպ. Գ. կրիֆֆիթի, 1843 :

» » Արարատեան լեզուաւ : Զմիւռնիա, 'ի տպ. Գ. կրիֆֆիթի, 1843 :

» » Քառածալ՝ խոշորագիր : Երուսաղէմ, 'ի տպ. սրբոց Յակովբեանց, 1868 :

» » Քառածալ՝ խոշորագիր : Երուսաղէմ, 'ի տպ. սրբոց Յակովբեանց, 1869 :

» » Ութածալ, 'ի միջակ գիրս : Երուսաղէմ, 'ի տպ. սրբոց Յակովբեանց, 1873 :

» » Փոքրագիր : Երուսաղէմ՝ 'ի տպ. սրբոց Յակովբեանց, 1870-74 :

» » Միջակագիր : Վիեննա, 'ի տպ. Մխիթարեանց, 1852, 1865 :

» » Յ. Դոբս. Յարկոյեանցի յարկոյեանցի Ն. Ա. Վոստր. 1861 62 63 (պայմանաւոր) 11x17

ուստի (ան. Բիւրոյի) 1866 և 1867 թվականներին Վոստրի 11x17 Google

X

Սաղմուս Դաւրի. Փոքրապիւր, պատկերազարդ: Փարիզ, Արամեան տպ. 1858, 1864:

Ասոնցմէ զատ՝ պիտի գտնուին ուրիշ տպագրութիւնք Սաղմուս գրոց, որք մեզի անծանօթ են:

Սաղմուսաց մասն կամ Հեգերէն. « Սաղմուս երջանիկ մարգարէին Դաւթի. որոյ առաջին կանոնն եւեթ տպեցաւ, բաժանելով զվանկսն: Եւ այս յազգս դիւրաւ հեգելոյ մանկանց. տպագրեցեալ 'ի տպարանի Աստուածատուրի »:

Տպ. 'ի Նախիջիւան. « Սաղմուս Դաւթի, որոշեալ յատուկ կանոնն առաջին՝ և շարագասեալ հեգելով. 'ի յօգուտ և 'ի դիւրութիւն դեռավարժից մանկանց... Տպագրեալ հրամանաւ և ծախիւք տեառն Յովսեփայ սրբազան արքեպիսկոպոսի Սանահնեցւոյ Արղութեանց և առաքելաշաւիղ առաջնորդի ամենայն ազգիս Հայոց, որք են ընդ տէրութեամբ յողթողացն Ռուսաց: Յամի տեառն 1790, 'ի յուլիսի 30. 'ի տպարանի նորին բարձր սրբազնութեանն. ընդ հովանեաւ երկնահանգէտ սուրբ Խաչ վանիցն, որ 'ի նորն Նախիջեան »: Տես Հեգերէն:

X

\*Սամուէլ րաբբի « գործ ոսկեղինիկ, աշխարհիկ լեզուաւ և հրէական կարուկ ոճով շարագրուած. յորումնայն ինքն Սամուէլ րաբբին իւր քահանայապետին նամակներ ուղղելով՝ Հին ուխտի և Օրինաց արդէն խափսնուամ, Քրիստոսի յաշխարհ գալն, Նոր Օրինաց և ուխտի հաստատութիւնն, Հրէից ազգի հազարաւոր տարիներ ցիր և ցան թափառումն մարգարէական և պատմական ապացոյցներով կը հաստատէ. թարգմանեց Մելքիսեդէկ պիւր »: Երուսաղէմ, 'ի տպ. արոց Յակովբեանց, 1867:

Սամուէլ Երէց կամ Անեցի. « Ժամանակագրութիւն Սամուէլի քահանայի Անեցւոյ, հաւաքմունք 'ի գրոց պատմագրոց, յալազս դիւտի ժամանակաց անցելոց, մինչև 'ի ներկայս ծայրաքաղաքարեալ »: (Կ'1179 թուականութիւն Քրիստոսի): Հայ բնագիրն ամբողջ՝ գեռ հրատարակուած չէ:

1860  
25  
14 X 17

Սամուէլ Երէց կամ Անեցի  
1860 52 255 15 X 9  
+ Աստուծոց զուրթի հայտնեցում. Սոսնէ  
տե գործարք, Նիւնբուրգ, 1860

*Samuelis presbyteris* Aniensis temporum usque ad suam ætatem ratio e libris historicorum summam collecta. Opus ex haicanis quinque codicibus ab Joh. Zohrabo diligenter excerptum atque emendatum. Joh. Zohrabus et Ang. Majus nunc primum conjunctis curis latinitate donatum notisque illustratum ediderunt. Mediolani, regiis typis, 1818; Romæ; 1839.

*Samuel d'Ani*. Tables Chronologiques. Brosset. Collection d'historiens arméniens. Tome II, St.-Pétersbourg, 1876. (pages 339-484). Les pages à gauche renferment les annotations et commentaires de M. Brosset, en regard de la traduction du texte des Tables, publié sur les pages à droite.

*Samuel d'Ani*. Revue général de sa Chronologie, par M. Brosset. Mélanges Asiatiques, t. vi, 741-798. — Bulletin de l'Académie, mai, 1873. Tome XVIII, numéro 4, p. 402-434. Description des manuscrits de Samuel d'Ani, p. 434-442.

*Extrait de la Chronique de Samuël d'Ani*. Dulaurier, Recueil des historiens des Croisades. Documents arméniens. Բնագիր և Թարգմանութիւն: Tableaux chronologiques. Trad. par M. F. Brosset. St.-Pétersbourg, 1875.

Սայեաթ - նովայ, լուս դցած աշխատասիրութենով Գեորգայ Ախվերդեան: Մոսկվա, 'ի տպարանի Վլադիմիրայ Գոտիէ, 1852:

\*Սանդուխտ, ողբերգութիւն 'ի հինգ արարուածս. հեղինակութիւն Թովմաս Թերզիեան: Կ. Պոլիս, 'ի տպ. Թադէոս Տիվիթճեան:

Բ. Տպ. Վենետիկ, Ս. Ղազար, 1871:

Սանդուխտ ողբերգութիւն հայկական. հեղինակութիւն Թովմաս Թերզեանի. Թարգմանեց 'ի գաղղիարէն Օր. Մաթիլտ Բ Ֆերուհեան: (Հայ և գաղղ.): Նրուսադէմ, 'ի տպ. սրբոց Յակովբեանց, 1881:

Սանդուխտ դժխոյ. ողբերգական բանաստեղ.



Ծուծիւն Գաբրիելի Մերունոյ Պատկանեան :  
Զմիւռնիա, 'ի տպ. Տէտէեան եղբարց, 1870:

Սանդուխտ դուստր Սանտրկոյ արքային Հա-  
յոց, Գաբր. Մեր. Պատկանեան: (Դոստով, (Դոնի  
վրայ), 'ի տպ. Յովհաննու Տէր Աբրահամեան:

\*Սապատողն Յակոբ. վիպասանութիւն: Կ. Պօ-  
լիս, Գաղաֆեան գրատուն:

Սապէթա սէվի. « Տետրակս այս որ կոչի Սա-  
պէթայի սէվու համբաւեալ 'ի Հրէից ոմն խարեբայ  
Սապէթայ անուն կամէր կրկին մոլորել զմոլորեալ-  
սն » : (Անթուական, Թուի Սարգսեան տպագրու-  
թիւն 'ի Պօլիս):

\*Սարաֆեան. Մեթոա շարագրութեան ըսա Լա-  
րուսի: Կ. Պօլիս, 1879:

Սարգիս Ենորիալի. « Գիրք մեկնութեան եօթն  
Թղթոց կաթուղիկէից, արարեալ սրբոյ վարդապե-  
տին Սարգսի Հայոց իմաստասիրի, և կոչի Սարգիս  
գիրք: Տպեցեալ ... արգեամբք Ղափանցի մահտեսի  
Շահնազարին. Թուին Հայոց 1192 'ի Կոստանդնու-  
պօլիս » : Յ'էջն յառաջաբանն Կարապետ վարդապե-  
տի Գիտնական' վասն մեկնութեանս կաթուղիկէայց.  
նոյնպէս յ'էջն 848' նոյն անձին երկասիրած համա-  
ռօտ բովանդակութիւնը՝ Սարգսի գրքին, որոյ սկըզ-  
բնատառք յօդն զայս բան. « Կարապետի անար-  
ժան գրչի՝ արարեալ զցանկ Սարգիս գրոցս » : Յետոյ  
ուրիշ ցանկ մ'ալ նիւթոց և իմաստից 'ի Պաղտասար  
գպրէ, այսպիսի համառօտ ակնարկութեամբ. « Զաշ-  
խատող սակաւուք ցանկիս և սրբագրօղ օրինակի  
սուրբ մատենիս զՊաղտասար գպրի Կեսարացի և  
Բիւզանդեցի ... յիշել աղաչեմ » : Ի վերջ գրոցն  
յիշատակարան տպագրողին. « ... Յաւարտ հանեալ  
զտպօւմն գրքոյս այսորիկ 'ի Թվին ՌՁԳ, մայիսի  
ԺՔ Ժ. 'ի տպարանի Աբրահամ գպրի: Որ և տպեց-  
ման սորին ունեաք օրինակ մի գրեալ 'ի Թվին ՌՁԲ.  
և 'ի Թվին ՌՁՁ բերեալ եղև գիրք մի ևս 'ի Մշու

Handwritten notes in Armenian script, including the number 31X21 and other illegible text.

Աւար ... Զորեպոսց Գաղաթի Եւստ ...  
Եւստ ... Կարապետ ... 1663 69 37 15X  
Աւար Գաղաթ

սուրբ Կարապետէն, հրամանաւ նորին առաջնորդի տեսան Մինասայ սրբազան եպիսկոպոսի. ձեռամբ հարազատի սրբոյ ուխտին մահտեսի Յովակիին, որ բազում աշխատանօք զգիւրքն զայն մեծագիր երեւր 'ի Կոստանդնուպօլիս. զոր ընդ մերոյ օրինակին համեմատեալ ուղարկեցաք դարձեալ 'ի տեղն ... Փառք և աստ երիս գիրքս. որոց մինն էր սրբազան հօրս մերոյ՝ տեղւոյս վերագիտողի. և միւսն Աստուածամօր տիրացու Մանուէլին, և այլ միւսն՝ սուրբ Գէորգայ տիրացու Մարգարին: Յորոցս ամենից սրբագրեցեալ ապեցաւ գիրքս այս 'ի տպարանի տիրացու Աբրահամին 'ի Կոստանդնուպօլիս »:

Մարգիս Շնորհաշոյ Կաթողիկեայց Թղթերուն մեկնութենէն աշխարհաբար Թարգմանուած ծաղկաբաղ հատուածք: Կ. Պօլիս, 'ի տպ. Յ. Միւհէն ախեսան, 1861:

\*Սարգսեանց (Սարգիս): Ագուլեցւոց բարբառք. (Զօկերի լեզուն): Լեզուաբանական հետազօտութիւն: - Մասն Ա. - Մոսկվա, 1883:

Ա. Ագուլիսը, նորա բնակիչները և լեզուն: - Բ. Տառերը, նոցա արտասանութիւնը և փոփոխումը: - Գ. Քերականութիւն: - Դ. (Վերջաբան տեսութիւն):

Սերերիանոսի Եմեսացւոյ Գարաղացւոց եպիսկոպոսի ճառք հնգգետասան: Վենետիկ, 'ի սպարանի սրբոյն Ղազարու. յամի 1830, ԲՄՀԹ:

Յառաջաբանն. « Սերերիանոսս այս, որ և Սեւերիանոս, որպէս Թուի Եմեսացի էր և Գարաղացւոց եպիսկոպոս, և երբեմն 'ի պայծառ բեմս յունական եկեղեցեաց Կոստանդնուպօլսի՝ երկրորդ յետ սըրբոյ Ոսկեբերանին և բազում անգամ նորին իսկ փախանակ՝ գովութեամբ ողջունելոյ գտեալ արժանի: Վասն որոյ և մեք ոչինչ խղճեցաք յետ նորա տալ զսա 'ի վայելս մերազնեայց. յուսացեալ թէ որպէս արգիւնական նախնիքն իբրև ցանկալւոյ իմիք կարտեւելով յեղին զսա 'ի հայ բան, ոչ ինչ ընդհատ է որդիք այնպիսի հարցն՝ ընթերցասիրութեամբ նոցին պիտոյից ելցեն 'ի խնդիր, նաև աւելի էւս ... Ամբ »

Ճ

ինչ յառաջ տուեալ մեր զսա 'ի մերոց աստի մամլոց  
և մերով լատին թարգմանութեամբ 'ի վայելումն  
հնախոյզ գրասիրաց Եւրոպիոյ, որք անձաշակ կա-  
յին ցայնժամ առ 'ի չգոյէ յունակտն օրինակաց,  
ոչ եւս այնուհետև իրաւունս դատեալ եղև զրկել  
վմերազգիսն:

« Մինչ չև էր մեր տուեալ զսա Եւրոպեանց, ե-  
րեք միայն 'ի ճառից աստի ծանօթ էին նոցա. եօթնե-  
րորդն և երեքտասաներորդն խառնեալ 'ի գիրս Ոս-  
կեբերանին, և տասներորդն սրբոյն Բարսպի կարծե-  
ցեալ և այնպէս 'ի նորայսն ամեալ: Կէսք ևս կար-  
ծեօք վարէին՝ թէ այլոց ոմանց կրտսերագունից  
բանք իցեն, և ոչ վաւերական վաղեմի հօր: Բայց  
սոքա փաշաման 'ի թարգմանութենէս մերմէ վաղվա-  
ղակի կրիցեն, յոսկեղէն ժամանակացն հայկաբա-  
նութենէն, ուր ամենայն տիպք կերպարանաց խօ-  
սից զհինգերորդ դարուն տան մեզ յայսնի նշանա-  
կըս. թող զի և յեաինք ոմանք 'ի մերոցն առ ութ  
դարուն և առ տասն՝ ուրեք ուրեք 'ի գիրս իւրեանց  
սորա բանիւք պաշտեցան. զոր օրինակ իմաստա-  
սէրն Յովհան Օձնեցի և Գրիգոր Նարեկացի. և զի  
գրչագիր նախագաղափար ճառիցս ունէր թուական  
930, յորմէ մերս օրինակեալ է 'ի 1673:

« Ի գրչագրի աստ մերում տասն միայն էին ճառք  
կարգաւ. զայլս 'ի ճառընարաց ժողովեցաք 'ի մի-  
սակայն և այնպէս այս հնգետասան ճառք ոչ բովան-  
դակեն զոմենայն գիրս Սեբեթիանոսի զառ 'ի հարցն  
թարգմանեալս:

Ա. Ի մեծի աւուր ճրագալուցին, երանելոյն Սե-  
բեթիանու Եմեսու եպիսկոպոսին խօսեցեալ յԵրու-  
սաղէմ վասն հաւատոց և 'ի հօրէ ծննդեան: - Բ. Ի  
Տնօրէնութիւն Փրկչին: - Գ. Վասն կրօնից և միջը-  
տուութեան, և զՄովսէս և զԱհարան և զերկոտասան  
ականցն առ լանջն բերելոյ, և այլ ևս երկուց ա-  
կանցն օրինակս բերեալ: - Դ. Վասն առաքելոցն՝ 'ի  
կրօնս: - Ե. Խօսք վասն Զատկի, Կաթարոսաց՝ որ  
կոչին Անարապք, և վասն խոհակերաց: - Զ. Ի բանն՝  
թէ Գարուծիւնք բացան: - Է. Սրբոյն Սեբեթիանո-  
սի ասացեալ 'ի նոյն կրօնս: - Ը. Ի սուրբ վկայն յԱ-  
կակ մարտիրոս: Աւր. և ամ զՅուսէփ յօրինակ Գրիս

տոսի: - թ. Ի բանն աւետարանին որ ասէ. Հայր, և  
Թէ հնար ինչ իցէ, անցցէ յինէն բաժակս այս: - ծ.  
Ի հրաւիրեալսն 'ի մկրտութիւն: - ծԱ. Ի գալուստ  
տեառն յովանակաւ յԵրուսաղէմ: - ծԲ. Երրորդ  
կիրակէի՝ երանելոյն Սեբերիանոսի եպիսկոպոսի  
ասացեալ յաւետարանի մեկնութենէ: - ծԳ. Ի Թը-  
զենին որ ցամաքեցաւ: - ծԴ. Ի չարչարանս Քրիս-  
տոսի: - ծԵ. Ի խորհուրդ մասնութեան »:

Սեբերիանոսի կամ Սեւերիանոսի Եմեսացոյ Գա-  
բաղացոց եպիսկոպոսի ճառք. 'ի հին Թարգմանու-  
թենէն եղելոյ 'ի յոյն բնագրէ 'ի ձեռն սրբոց Թարգ-  
մանչաց մերոց յեղեալ 'ի լատին բարբառ 'ի ձեռն Հ.  
Մկրտիչ Աթոռակալ վարդապետի Մխիթարեան  
Աւգերեանց, տպագրեալ... 'ի Վենետիկ, 'ի վանս  
սրբոյն Ղազարու, յամի 1827, ՌՄՀԶ:

Severiani sive Seberiani Gabalorum episcopi  
Emesensis Homiliae nunc primum editae, ex anti-  
qua versione armena in latinum sermonem tran-  
slatae per P. J. Baptistam Aucher vic. gen. Congr.  
Mechitaristarum et socium Acad. Rom. Archeolo-  
giae, atque Athenaei Venetiarum. Venetiis, typis  
Cœnobii PP. Armenorum in Insula S. Lazari,  
MDCCCXXVII. Superiorum permissu.

Լատին Թարգմանիչն՝ 'ի վերջ գրոցն. « Յայս վայր  
'ի լոյս ընծայեցաք՝ զոր միանգամ ունէաք պատրաս-  
տական զճառս ընտիրս Սեբերիանոսի 'ի գրատան  
վանաց մերոց՝ որ 'ի Վենետիկ, յուխտիս սրբոյն Ղա-  
զարու, կրկնակի տպագրութեամբ. մի՛ հայերէն  
հանդերձ լատին Թարգմանութեամբ 'ի պէտս ու-  
սումնասիրաց Եւրոպացոց, և միւս ևս՝ լոկ հայե-  
րէն՝ 'ի պէտս բանասիրաց ազգայնոց. որով և երկա-  
սիրութիւն սրբոց Թարգմանչաց մերոց արձանացի  
յարեւելս և յարեմուտս առ հասարակ: Իցէ Թէ և  
այլ բաղմասպատիկ գործք նախնեաց 'ի վեր երևես-  
ցին, և 'ի լոյս ընծայեսցին 'ի մէնջ յօգուտ հաս-  
րակաց: Արպէս և այլ ևս ճառք նախալիշատակեալ  
մատենագրի անշուշտ գտանին յայլևայլ խորչս հա-  
յաստան աշխարհի իբրև 'ի դիպահորջ, զորս ժամա-  
նակն զոյգ ընդ փութոյ գրասիրաց 'ի վեր հանցէ:  
Սպասեմք և յաւուրս յայտոսիկ զքանի մի ճառս

նորին ընդունել 'ի բարեկամաց՝ մտաւորաց և հեռաւորաց. որ եթէ փութով հասցեն, յարեմք 'ի շարաւաղիկայս հաւաքման մերոյ. ապա թէ ոչ, այլում պատեհութեան ժամու թողեալ լիցի » :



**Սերէոս.** « Պատմութիւն Սերէոսի 'ի Հերակլն. ընծայեալ 'ի լոյս ... 'ի Կոստանդնուպօլիս 'ի տպարանի Յովհաննու Միւհէնտիսեան », 1851-ՌՅԱ. էջ 239

Բանասէր հրատարակողն թաղէոս Մ. Միհրդաւ տեանց՝ 'ի յառաջարանին կը ծանուցանէ վանն ձեռագիր օրինակացն. « Գրագք զերկուս օրինակս. օրինակի միոյն չգոյր յիշատակարան, և էր թերի. որ էր բոլորգրով հին թուղթ բամպակեայ. և թուի թէ 'ի վեշտասաներորդ դարու գրեալ իցէ. բայց ամենայն մասամբ մաքուր գրութիւն 'ի հմուտ գրչէ. կայր ևս 'ի միջի նորին աղօթք հրաշազան յօրինուածով արարեալն սրբոյն Յակովբայ Մծբնացւոյ վանն մահտարածի ... և գոյր 'ի վերջն յիշատակարան. « Արգ գրեցաւ ... թուին Ռծի 'ի սուրբ և տիեզերական ուխտս Մարմաշինու վանաց, ձեռամբ յոգնամեղ և անարդիւն գրչի տէր Յուսիկ կոչեցելոյ » : Եւ էր դրոշմեալ 'ի ճակատն « Պատմագիրք Սերէոսի 'ի Հերակլն » :

« Եւ 'ի միւս օրինակն՝ զոր արարաք մեզ բնագիր, զոր ընկալեալ էաք 'ի սրբոյ վեհէն, որպէս տեսցի 'ի ստորև, որ էր գրեալ Ռծի թուոյն 'ի Բաղէշ 'ի վանն Յովհաննու Կարապետի, եղեալ էր 'ի վերջն յիշատակարան ... և 'ի սկիզբն Սերէոս Եպիսկոպոսի 'ի Հերակլն » ... :

« Մոյն մատեան տենչալի 'ի ձեռս իմ անկեալ 'ի 1850 ամի Փրկչին 'ի գնալն մերում 'ի Տիխիս ... առ վեհափառ սրբազան կաթուղիկոսն ամենայն Հայոց տէր Ներսէս Ե. և տեսեալ իմ զսա առ նորին վեհափառութեան որ օրինակեալն էր 'ի բնագրէն որ 'ի սուրբ Էջմիածին՝ ինդրեցի. և վեհափառութիւնն շնորհեաց մեզ. և յետոյ 'ի գնալն մերում 'ի սուրբ Աթոռն՝ բաղդատեցաք ընդ բնագրին » ... :

**Բ. Տպ.** « Պատմութիւն Սերէոսի Եպիսկոպոսի 'ի Հերակլն, և սկիզբն նորագիւտ պատմութեան Մխիթարայ Անեցւոյ ... 'ի լոյս ամ Գ. Պ. Ս. Պե.

տերըուրդ, 'ի տպարանի Կայսերական Ճեմարանին գիտութեանց, 1879: Նորին վեհափառութեան Տ. Տ. Գէորգայ Դ. Հայրապետի, կաթողիկոսի և ծայրագոյն պատրիարքի Հայաստանեայց առաքելական սուրբ Աթոռոյն Էջմիածնի, հզաւր հովանաւորի համազգային լուսաւորութեան ամենախոնարհաբար նշխրէ 'ի լոյս ածողն »: Յառաջբանն կ'ըսէ. « Նորոս այս տպագիր Պատմութեան Սերեոսի 'ի Հերակլն աւրարաւ յետ մանրակրկիտ բաղդատութեան տպագրելոյն 'ի Կոստանդնուպոլիս ընդ նորագոյն գրչագիր օրինակի Կայսերական Ճեմարանին գիտութեանց 'ի Ս. Պետերբուրգ: Ի գնալն մեր յամենանն սեպտեմբերի 'ի սուրբ Էջմիածին բազում ջանիւ 'ի խընգիր ելեալ բնագրի պատմութեանս զորմէ ասէ Պ. Միհրդատեանն 'ի յառաջբանի իւրում թէ « զօրինակն մեր բաղդատեցաք ընդ բնագրին որ 'ի սուրբ Էջմիածին » ոչ գտաք զայն 'ի հռչակաւոր մատենագարանի սրբոյ Աթոռոյս, զորմէ ճառել ունիմք յայլում 'նուագի, և ոչ զայլ հնագոյն օրինակն, զոր յիշատակէ հրատարակիչն սակաւ ինչ յետոյ 'ի նոյն կանխաբանութեան: Աւստի հարկ եղև մեզ զնոր տպագրութիւնս այս առանց ընդ հնագոյն օրինակաց բաղդատութեան 'ի լոյս ընծայել, ուրեք ուրեք միայն զթերութիւնս գրչաց և զվրիպակս ընթերցուածոց ուղղելով 'ի վերայ նորագոյն գրչագրի և 'ի վերայ մասանց ինչ Սերեոսի որ 'ի փոխ առեալ յայլ պատմագրոց մերոց յերկասիրութիւնս նոցա հասին յաւուրս մեր ... Այլ և այնպէս տեսցեն ընթերցողք զինչ ինչ տարբերութիւնս 'ի մէջ երկուց հրատարակութեանց, անմուաց ունելով զարդիւնս առաջին տպագրողի մատենիս ... Յանկացողք առաւելագոյն պատմական ծանօթութեանց և տեղեկութեանց զբովանդակութենէ մատենիս գացին զայնս 'ի ուռութարգմանութեան մերում սոյն հեղինակութեան, զոր հրատարակեալ է մեր 'ի Ս. Պետերբուրգ յամին 1862:

« Այլ և յօդեցաք 'ի վերջ գրոցս զսկիզբն տակաւին ընդ կորուսեալն համարելոյ պատմութեան Մխիթարայ Անեզոյ, զոր բաղդին բերմամբ յաղղեաց մեզ դասնել 'ի մատենագարանի Տ. Սարգսի սրբազան արքեպիսկոպոսի 'ի Տփխիս »:

Բաց 'ի յիշուած ոռու Թարգմանութենէն՝ հետա-  
գայ մասնական Թարգմանութիւնք եւրոպական լե-  
զուններով:

Zur Geschichte Armeniens und der ersten Krei-  
ge der Araber. Aus dem Armenischen der Sebeos,  
von D.r H. Hübschmann.

*Le Pseudo-Agathange. Histoire ancienne de l'Ar-  
menie. Collection des Historiens Anciens et Mo-  
dernes de l'Arménie, publiée en français par Vic-  
tor Langlois. Paris, librairie de Firmin Didot,  
frères, fils et Comp. MDCCLXVII. (tome 1).*

*Dulaurier, Ed. Recherches sur la Chronologie  
arménienne. Paris, 1860.*

Սեթեան (Հ. Եփրեմ Վ.) Պատմութիւն վարուց  
Ստեփանոսի Ագոնց Գիւնէր, արքեպիսկոպոսի Սիւ-  
նեաց և ընդհանրական արքայի Մխիթարեան ուխ-  
տին: Վենեաիկ, 'ի սպ. սրբոյն Ղազարու, 1825:

Տես Իրաւագիտութիւն:

Ճարտասանութիւն:

Պատմութիւն Հայոց:

Պատմութիւն հին եւ նոր կտակ:

Պատմութիւն չորրից ինքնակա-  
լութեանց:

X Սեղան խնկոց. երկասիրեալ 'ի Հ. Միքայէլ  
վարդապետէ Չամչեանց, յաշակերտութենէ Մխի-  
թարայ մեծի արքայի: Վենեաիկ, 'ի սպարանի սրբ-  
ոյն Ղազարու, 1817: ? Գուշ 1416 - ու՛՛՛՛:

\*Սենեկալի առանձնակեացը կամ Սէնթ Ա-  
մանտցի Լիւսիլ: Գաղղիարենէ Թարգմանեց Յ. Գ.  
Սըվաճեան: Կ. Պօլիս, 'ի սպ. Յ. Միւհէնտիսեան,  
1859:

\*Սէկիւր. Սէկիւրայ քահանայի խորհրդածու-  
թիւնք Յիսուսի Քրիստոսի վարուց և վարդապետու-  
թեան վրայ: Թարգմանեց Հ. Վահան Պոյաճեան 'ի  
Մխիթ. ուխտէն: Վենեաիկ, 'ի սպ. սրբոյն Ղազա-  
րու, 1860:

— Համառօտ և րնտանեկան պատասխանիր, կրօնից դէժ շատ անգամ լսուած առարկութեանց: Վէնետիկ, 'ի սպ. սրբոյն Ղազարու, 1855:

**Սենեկա.** Ղուկիտսի Աննէոսի Սենեկայ ճառք ի մաստասիրականք. թարգմանեալք 'ի Հ. Մկրտիչ Աթոռակալ վարդապետէ Ագգերեան 'ի Մխիթ. ուխտէն: Տպագրեալ 'ի Վէնետիկ, 'ի վանս սրբոյն Ղազարու, 1849, ՌՄՂԸ: Ի խնգրոյ մեծապատիւ Յովհաննու Ամիրայի Տաաեան, 'ի յիշատակ բարեաց աստուածասէր հօր իւրոյ Մահաեսի Առաքել Ամիրայի Տատ Զատայեան:

Յաղագս Բարկուծեան առ Նովատոս: — Յաղագս Մխիթարուծեան առ մայր իւր Հելլիա: — Յաղագս Մխիթարուծեան առ Մարկիա տիկին: — Յաղագս Մխիթարուծեան առ Պողոթիոս: — Յաղագս Նախահամուծեան: — Յաղագս Անգորրուծեան հոգւոյ: — Յաղագս Անասանուծեան իմաստնոյ: — Յաղագս Գիծուծեան առ Ներոն կայսր: — Յաղագս Կարճուծեան կենաց առ Պաւլինոս: — Յաղագս Երջանիկ կենաց առ Գաղիոն եղբայր իւր: — Յաղագս Աւանձնուծեան իմաստնոյ: — Յաղագս Բարերարուծեանց առ Երուկիոս Լիպերալիս:

**Սենտքերիմայ արքային Արծրունւոյ գաղթակա նուծիւն 'ի Վասպուրականէ:** Ողբերգ թատերական: Յօրինեաց Մանուէլ Արտամետեանց՝ գասասու Վարդայ ժառանգաւորաց վարժարանին: Ի սպարանի Արծրունոյ Վասպուրականի 'ի Վան 'ի Վարագ, 1860, Ռ8թ:

\*Սէպիլ աղայոց համար: Գրեց Գալուստ Կոստանդեան: Զմիւռնիա, 'ի սպ. Տէտէեան եղբարց, 1856:

\*Սէպիլ աղայոց համար կամ Հատընաիր ծաղկաքաղ երեքլեզուեան գազզ. հայերէն և տաճկ: Երկասիրեաց Սարգիս Վահան Տողրամաճեան: Կ. Պօլիս, 1867: 54 160. 0 \ 13



\*Սէվիլի սափրիչը, կատակերգութիւն. հեղինակ Պոմարշէ գաղղիացի. բնագրէն թարգմանեց Մ. Մամուրեան: Զմիւռնիա, 'ի տպար. Տէտէեան եղբարց, 1863:

\*Սէր, տասնօրեայ հանդէս ուսմանց, քաղաքականութեան և գեղեցիկ գայրութեանց: Խմբագիր և տէր Ա. Ճէվա հիրձեան: Կ. Պօլիս, Միւհէնտիսեան և Արևելեան տպարան 1860 - 1863:

\*Սէրը բժիշկ է. կատակերգութիւն Մոլիերի. գաղղիարենէ թարգմանեց Տ. Յ. Տէտէեան: Զմիւռնիա, 'ի տպ. Տէտէեան եղբարց, 1870:

\*Սէր հայրենեաց, թատերգութիւն երկու արարուածով: Ռոստով (Իոնի վրայ). 'ի տպ. Յ. Տէր-Աբրահամեան:

\*Սեւանայ վանից պատմութիւն: Գրեաց Մանուէլ վարդապետ Կիւմիւշեանացի, Վաղարշապատ, 'ի տպ. կաթողիկէ Ս. Էջմիածնի, 1871:

Սիմէոն Ապարանցի. « Սիմէոն վարդապետի Ապարանացւոյ Վիպասանութիւն սակս Պահլաւունեացն զարմի և Մամիկոնեանցն սեռի », 1870-ՌՅԺԹ. 'ի տպարանի սրբոյ կաթողիկէ Էջմիածնի 'ի Վաղարշապատ: Յառաջաբանն կ'ըսէ. « Ի դարուն վեշտասաներորդի ծաղկեցաւ Սիմէոն վարդապետն Ապարանցի 'ի միաբանութենէ սուրբ վանացն Մեծոփոյ. և չէ ևս լրացեալ այնր դարուն ' գրեաց զյառաջակայս վիպասանութիւն ' օտիւք չափեալ »:

« Սակաւուց ոմանց մերաջնեայ բանասիրաց ծանօթ հռչակի անուն վիպասանութեանս այսորիկ սակս Պահլաւունեացն զարմի և Մամիկոնեանցն սեռի. զոր նոյն Սիմէոն վարդապետն Ապարանցի համառօտեաց 'ի պատմութենէ Փարպեցւոյն ' Լազարայ ' յաւելլով այլուստ և զիրս ինչ : ...

« Ի վիպասանութեանս յայմիկ պարունակին ' նախ օտանաւոր համառօտութիւն պատմութեան ' Լազարայ Փարպեցւոյ ' առաւել սակս Պահլաւունեացն զար



րիւր վաթսուն և հինգ, 1765, Ռ24Ե. իսկ ըստ Հա-  
յոցս թուականի, հազար երկու հարիւր տասն և  
չորս: Ի վաղարշապատ, 'ի սպարանի սրբոյ կաթու-  
ղիկէ Էջմիածնի, ՌԵԻԳ-1873:

\*Սիլվիոյ Փէլլիքոյ. Յաղագս մարդկային պար-  
տոց. Թարգմանեց Հ. Գաբրիէլ վ. Այվազովսքի:  
Վենետիկ, 'ի սպ. սրբոյն Ղաղարու, 1853: 1954  
Բանտք իմ. Թարգմանեց Կ. Ս. Իւթիւճեան: Կ.  
Պօլիս, 'ի սպ. Մասիս լրագրոյ, 1861:  
Բ. Տպ. Կ. Պօլիս, սպ. Արամեան, 1867:

Սիրաք: Տես Իմաստու թիւն Յետուայ:

\*Սիրաք եւ Սամուէլ. բարի հօր կրթական դա-  
սեր: Գրեց Խրիմեան հայրիկ: Կ. Պօլիս, սպագրու-  
թիւն Յովսէփայ Գավաֆեան, 1878:

\*Սիրուն գրօսարան. Թարգմանութիւն Գրիգոր  
վարդապետի Կոստանդնուպոլսեցւոյ. « Հետաքրք-  
րաշարժ փոքրիկ գրքոյն, որ կը պարունակէ իր մէջ  
տասն հիւթաւոր գոյական կամ ըմպելեաց գիմառ-  
նական բանախօսութիւններն, բարոյական, մարդե-  
ւ հրահանգիչ եղանակաւ »: Երուսաղէմ, 'ի սպ.  
սրբոց Յակովբեանց, 1875:

Սիւ (Էօփէն): Տես Գաղտնիք Փարիզու: -  
Թափառական Հրէայ:

\*Սիօն ամառգիր ազգային, բանասիրական, գրա-  
դիտական, կրօնական, բարոյական և ժամանակա-  
գրական. 1866-1877: Երուսաղէմ, 'ի սպ. առաքե-  
լական ուխտի սրբոց Յակովբեանց:

\*Սիւալացոյց որ 1872 տարւոյն օրացոյցներուն  
բազմաթիւ սիւանները կ'ուղղէ, հաւաքեալ 'ի Տէր  
Երեմիա քահանայէ Խասգիւղի: Կ. Պօլիս, 'ի սպ. Յ.  
Միւհէնտիսեան, 1872:

\*Սկզբունք աստեղագիտութեան, պատկերա-

Քո Արոյ իրարէր քանչարաւ փոխարեայ կեկեւտու Էթ  
հար ետտ իրոյարաւ Թիւրքոյցի տերաւի քայտի.

էջ 231 17 չ 11 ուս յարաւ 4 « Բուլուս ուս  
Ստարտիտիւ իրարաւ 4 Էն Ետ Ետ Ի Կոյ. Ը. Ը. Ը.



Թեան կամ համառօտութիւն սրբազան պատմութեան և կրօնագիտութեան: Մոսկով, 'ի տպ. Օգոստեայ Սեմենի, 1833:

Սմբատ պատմիչ. Ա. Տպ. « Սմբատայ Սպարապետի եղբոր Հէթմոյ առաջնոյ արքայի Հայոց Պատմութիւն Յունաց 'ի Կոստանդնուպօլիս և Հայոց մեծաց ըստ կարգի ժամանակաց: Յիշատակ հոգւոյ պայծառափայլ կոմսի և ասպետի հրամանատար կարգի սրբոյն Յովհաննու Երուսաղէմացւոյ Տեառն Յովհաննու Լազարեանց և եղբոր նորա Տեառն Յովակիմայ Լազարեանց Հիմնադրաց Ճեմարանի Արևելեան շէշուաց 'ի Մոսկուա նուիրեալ 'ի նշանակ երախտագիտութեան յՈսկանայ Գէորգեան Յովհաննիսեանց Երևանեցւոյ դաստիարակեցոյ 'ի նմին Ճեմարանի»: Ի Մոսկուա, 'ի տպարանի Վլադիմիրայ Գոթթէ, 1856:

Հրատարակողն 'ի Յատաջարանին. « Պատմարանս այս անուամբ և եթէ քր ծանուցեալ բազմաց 'ի մերոց մատենագրաց, դուցէ և ամենեցուն... արդ յերևան գայ նա և իւրովն գրաւորական երկասիրութեամբ, Պատմութեամբս ասեմ...»

« Ի բուն բանից հեղինակիս ցուցանի, թէ է նա Սմբատ Սպարապետ Գունդաստապլն կոչեցեալ՝ եղբայր Հէթմոյ Ա արքային Հայոց, այն որ յամի Տեառն 1246 կամ 1248 'ի նմին իսկ 'ի Հէթմոյ իբրև դեսպան առաքեցաւ առ Գիւրջ կամ Գայուկ խան թաթարաց՝ 'ի նորոգել ընդ նմա զգաշն խաղաղութեան... Եւ զայս պատմէ նա ինքն Սմբատ պարզ բանիւ յասելն, (յեր. 115)»։ « Ի թուիս ՈՂԷ գընացի ես Սմբատ Գունդուստապլս 'ի թաթարն. և 'ի թուին ՈՂԹ դարձայ առ իմեղայրն Հէթում թաթաւորն»: Նա ինքն ուրեք ուրեք յընթացս պատմութեանն ծանօթս տայ սակաւուք և զայլոց գործոց իւրոյ...»

« Հայեցով և յայլ հատուածս ինչ բանից որ 'ի մատենիս՝ տեղեկանամք, նախ՝ թէ եկաց նա առ ժամանակք երկուց թաթաւորաց մերոց, Հէթմոյ Ա և Լեւոնի Գ... երկրորդ թէ էր մի 'ի մտերմագոյն սիրելեաց նախայիշատակեալ արքային մերոյ Լեւոնի:

և մեծարոյ յոյժ յաչս նորա. որպէս և ինքն իսկ խոստովանի ասելովն. (յեր. 98). « Էր արքայն Լեւոն իմաստուն և հանձարեղ, զուարթ տեսով, և առատասիրտ 'ի հեռաւորս և 'ի մերձաւորս, 'ի մեծամեծս և 'ի փոքունս 'ի վաներս և յեկեղեցիս, յիշխանս և յաւմիկս ... Ուր իմանայր թէ գոյ այր իմաստուն, և գիտուն, և աջող 'ի գործ կամ 'ի զինուորութիւն, կամ 'ի խօսս և 'ի պատասխանիս, յղէր և կոչէր խոստմամբ և հանգուցանէր պարգևք. յորոց մի էս եմ Սմբատ՝ Սպարապետ՝ Թարգմանող տառիս » : ...

« Թէ քանի ամաց էր նա 'ի մեռանելն, այս ոչ նշանակի ճշդիւ ... այլ զի 'ի մատենի աստ տեսանի ուրոյն ժամանակ ծննդեան նորա նշանակեալ, ըստ որում ասի (յեր. 106). « Ի Թուին Հայոց ՈՒՅԷ ծնաւ Սմբատ Գունդուստայլն՝ Թարգմանող պատմութեանս » յոյսմանէ ինքնին 'ի յայտ դայ՝ թէ էր նա 'ի մեռանելն 66 կամ 67 ամաց :

« Որովհետև ըստ վերագրելոցս՝ մահ Պատմաբանիս եղև յամի տեառն 1275, երևի թէ ցայնվայր և եթ կարաց նա հասուցանել զպատմութիւն իւր՝ սկսեալ 'ի Թուականէն Հայոց ն, ցԶԻԳ. այն է յամէ տեառն 935. ց1275: Իսկ որ ինչ յետ այնորիկ պատմի ցԹուականն Հայոց ԶԶ և այսր եւս, Թուի ընել շարունակութիւն յայլմէ ումեքէ ...

« Տպագրութիւն մատենիս եղև ըստ միոյ եւեթ գրչագիր օրինակի՝ զոր ունէի 'ի ձեռին: Ուստի և չհամարձակելով առանց բաղդատութեան ընդ այլում օրինակի՝ ըստ մտի ինչ առնել ուղղագրութիւնս, ուչ եգի պահել յամենայնի զհարազատութիւնն րնագրին ... միայն զյայտնի տառասխալս գրչի և զկէտագրութիւնսն ուղղել ըստ կարի ոչ ինչ խզճեցի ... » :

Բ. Տպ. Տարեգիրք արարեալ Սմբատայ սպարապետի Հայոց, որդւոյ Կոստանդեայ կոմսին Կոռիկոսոյ: Ի լոյս ընծայեաց հանդերձ ծանօթութեամբք Կարապետ վարդապետ Եանազարեանց՝ միաբան սրբոյ Էջմիածնի: Փարիզ, 'ի Գործատան Կ. Վ. Եանազարեանց: Paris, imprimé par E. Thunot et Compagnie.

Շահնազարեան վարդապետն 'ի Յառաջաբանին .  
« Տարեգիրք Սմառայ սպարապետի կամ գունդ-  
ստապի արքայութեանն Կիլիկիոյ յետ 'ի խաւարի  
տնգիտութեան մնալոյ գրեթէ դարս վեց՝ տեսանէ  
արդ կրկնակի զլոյս 'ի ձեռն տարագրութեան , նախ  
'ի Մոսկվա և ապա 'ի Փարիզ . . .

« Պարոն Ռսկան Յովհաննիսեանց խոստովանի 'ի  
յառաջաբանի իւրում ունիլ զմի ևեթ օրինակ 'ի ձե-  
ռին 'ի հրատարակելն զիւր Սմբատ . որ և երևեցաւ  
մեզ օրինակեալ 'ի գաղափարէ եղելոյ 'ի մատենա-  
դարանի սրբոյ Էջմիածնի . իսկ մեք , բաց ունելոյ  
զհաւասարն այնորիկ . . . ստոցաք ապա նաև զեր-  
կորդ իմն օրինակ ևս ուղղադոյն գրչութեամբ քան  
չառաջինն . . . զորս համեմատեցաք ընդ երրորդ իմն  
օրինակի պատուելի Քալուստ վարժապետի Տէր Պօ-  
ղոսեան Սամաթիացոյ » :

Քաղզիարէն լեզուով գրուած համառօտ յառա-  
ջաբանին մէջ նոյն հրատարակողն . . . « Nous offrons  
aujourd'hui au lecteur les œuvres du Connétable  
Sembatt, comte de Coricosse.

Issu d'une noble famille arménienne, alliée à la  
branche régnante de Rubin, et appelée elle-même  
à regner sur l'Arménie, Sembatt fut incontestable-  
ment un des meilleurs annalistes de l'histoire  
du moyen-âge.

Comme Connétable, il connut à fond la cour  
royale de l'Arménie. Comme Maréchal, il prit une  
part active aux événements politiques de son pays.  
Il fut un allié précieux pour les Croisés occiden-  
taux, et combattit avec les Français, les Alle-  
mands et les Anglais, pour la défense du Chri-  
stianisme contre les Sarrasins.

Après avoir visité plus d'une fois la cour des  
successeurs de Genghis Khan et d'autres pays  
jusqu'alors inconnus, il entreprit son histoire a-  
nalytique des événements politiques de l'Arménie,  
depuis l'an 400 (959 de l'ère chrétienne) jusqu'en  
